

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ

ԽՐԱՏՆԵՐ

«ԳԱՆՁԱՍԱՐ» ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԴՏՀ 23/28
ԳՄԴ 86.37
Վ 301

Նուիրում է Հայաստանում
քրիստոնէութիւնը պետական կրօն
հռչակելու 1700-ամեակին

Աշխարհաբարի վերածեց
տ. Շահէ քհն. հայրապետեանը

Խմբագիրներ՝
տ. Մեսրոպ քհն. Արամեան,
Մարթա Արաբեան

Վ 301 *Այգեկցի Վարդան*
Խրատներ. - Եր.: Գանձասար, 1999. - 216 էջ

Ներկայացուում են ԺԲ-ԺԳ դդ. հայ նշանաւոր վարդապետ Վարդան Այգեկցու՝ Պաղտին իշխանին ուղղուած խրատական ճառերը: Խրատաշարում արծարծուած են հոգեւոր կեանքին առնչուող բազմաթիւ խնդիրներ՝ աղօթասիրութիւն, պահեցողութիւն, մեղքերի դէմ պայքար, աղքատասիրութիւն եւ այլն: Գերիշխող թեմաներից է վախճանաբանութիւնը՝ որպէս քրիստոնէական կեանքի հիմնական սպասում: Քննութեան են առնուած նաեւ հոգեւոր կեանքի համար վտանգաւոր այնպիսի երեւոյթներ, ինչպիսիք են կախարդութիւնը, թովչութիւնը, աղանդաւորութիւնը եւ այլն: Խրատներն ունեն զարմանալի այժմէական անդրադարձներ եւ կարող են օգտակար լինել բոլոր նրանց, ովքեր փորձում են հաստատուել քրիստոնէական կեանքի մէջ եւ հաղորդակից լինել Հայ Եկեղեցու հարուստ հոգեւոր աւանդներին:

Վ $\frac{0403000000}{846\ (01)\ 99}$ 99 *ԳՄԴ 86.37*

ISBN 99930-70-00-9

«Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1999

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՒԻ

ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

ԽՈՐԵՆ ԴՈՎԼԱԹԵԱՆԻ

ՆԱԽԱԲԱՆ

Վարդան Այգեկցին ԺԲ - ԺԳ դդ. հայ արդիւնաւոր աստուածաբան մատենագիրներից է, որի վաստակը տակաւին ամբողջութեամբ յայտնի չէ հայ գրականութեան պատմութեանը: Նա յայտնի է եղել որպէս առակագիր, կրոնա-բարոյական քարոզների եւ ճառերի հեղինակ[1], ինչպէս նաեւ «Արմատ հաւատոյ» դաւանաբանական գործի կազմող ու ստեղծող, որի հեղինակային ճշտման համար հայագիտութիւնը պարտական է Յակոբ Անասեանին[2], հեղինակ է նաեւ բազում աղօթքների ու մաղթանքների[3]:

Նա ծնուել է Մարաթայում, որը գտնւում էր Ասորիքի Դլուք (Կիլիկեան ուղղագրութեամբ՝ Տլուք) գաւառում: Այս շրջանում կային Մարաթա անունով մէկից աւելի բնակավայրեր. Վարդանն էր «ի Մարաթոյ Վերնոյ»[4]

Ինչպէս իր յիշատակարաններից մէկում ինքը՝ Այգեկցին է նշում, յիշեալ Մարաթան իր «բնիկ ժառանգութիւնն էր»: Բնիկ ժառանգութիւն ասելով պէտք է հասկանալ ոչ թէ այն սեփականութիւնը, որ հայ հոգեւորականը ժառանգում է նոյնպէս հոգեւոր կոչում ունեցող իր նախնիներից, ինչպէս հակուած էր կարծելու Ն.Մառը, այլ սովորական իմաստով՝ հայրենի տուն՝ հայրենական կալուածք, ինչպէս էր, օրինակ, նոյն Դլուք գաւառում գտնուող

---

[1] *Հ.Յ. Տաշեան, «Ժողովածոյք առակաց Վարդանայ. Նիւթեր պատմութեան Հայոց միջնադարեան մատենագրութեան ըստ հայագէտ Ն. Մառի» Վիեննա, 1900*

[2] *Յակոբ Ա Անասեան, «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ», բնագրեր «Վասն անհրաւ բամբասողաց եկեղեցւոյս Հայաստանեայց», արտատպուած «Բազմավէպի» 1968 թ. 7-12 բացառիկէն, Վենետիկ 1969:Ինչպէս նաեւ հեղինակի մէկ տասնեակին մօտեցող յօդուածները նուիրուած «Արմատ հաւատոյին»:*

[3] *Գիրք աղօթից արարեալ Վարդանայ Վարդապետին, Կոստանդնուպոլիս, 1734:*

[4] *Մաշտոցի անուան Մատենադարան (այսուհետեւ = Մ.Մ) թիվ. 8356, 151 բ:*

Ծովք դղեակը Գրիգոր Պահլաւունի եւ Ներսէս Շնորհալի եղբայրների համար[5]: Չի բացառւում, որ Այգեկցին նաեւ հոգեւոր հովիւ եղած լինի իր բնիկ ժառանգութեան տարածքում, որտեղի բնակիչներին նա անուանում էր «հոգեւոր որդեակք իմ»:

Նա ուսանել է Արքակաղինում, այնուհետեւ՝ 1210 թվին, գնացել եւ հաստատուել է Սեւ կամ Սուրբ լեռների վրայ գտնուող Այգեկ վանքում:

Ցայտնի է, որ նրա գործերի մի մասը գրուել է նրա՝ Այգեկում եղած ժամանակ, իսկ մեծ մասի գրութեան ժամանակն անյայտ է:

Իր կեանքի նախաայգեկեան շրջանում էլ նա ունեցել է մատենագրական եւ հանրային լայն ու արդիւնաւէտ գործունէութիւն: Դրա վկայութիւնն է «Արմատ հաւատոն», որն աւարտել է 1205 թուականին:

Վարդան Այգեկցու կենսագրութեանը վերաբերող տեղեկութիւնները մինչեւ այժմ սկսւում էին միայն 1212 թուականից, երբ նա Այգեկի անապատում աւարտել է խրատների իր այն ուրոյն խմբագրութիւնը, որ կազմել էր թագաւորազն իշխան Պաղտինի պատուէրով: Այս Պաղտինը հաւանաբար Ընկուզուտի բերդակալն էր, որը յիշատակւում է 1198 թուականին Լեւոն Բ-ի թագաւորութեան հանդէսին ներկայ եղող իշխանների թւում[6]:

Այգեկցու խրատների յիշեալ խմբագրութեան լաւագոյն օրինակներից է Մաշտոցի անուան Մատենադարանի N9266 ձեռագիրը, որը հէմք է ծառայել ներկայ թարգմանութեան համար: Թարգմանութիւնն իրականացնելիս նկատի ենք ունեցել նաեւ ՄՄ

[5] Հմմտ. Հ.Ղ. Ալիշան, «Շնորհալի եւ պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 95— 97: Բաբգէն ծ.վ. Կիւլեսերեան, «Ծովք, Ծովք— Տլուք եւ Հոոմ Կլայ», Վիեննա, 1904, էջ 13-16 եւ 41-44: Յ. Ս. Անասեան «Վարդան Այգեկցին որպէս համերաշխութեան գաղափարախօս», Էջմիածին 1969, Է-Ը, էջ 52:

[6] Հմմտ. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 11:

N /1880 (Երուսաղէմ, 1768 թ., 116ա-187ա) եւ N 638(Կ. Պոլիս, 1771 թ., 8ա—96բ) ձեռագրերը, որոնք մանրազնին բաղդատուել են հիմքի հետ:

N 9266 ձեռագիրը ընդօրինակուած է ԺԷ դարում, Կոստանդնուպոլսի Սուրբ Գեւորգ Զօրավար եկեղեցում. «Արդ գրացաւ սայ Վարդանգիրքս ի քաղաքն Բուզանդիա, որ է մայրաքաղաք[ն] [Կոստ] անդինուպա[ւ]լիս, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգեայ Զաւրաւորին»: Գրիչը չի նշում իր անունը, այլ միայն գրում է. «Անիմաստ եւ անարժան սուտ դպիր անուամբ միայն կոչեցեալ...»: Ստացողն է Ամիրը: Յիշեալ ճառերից բացի ձեռագիրը պարունակում է նաեւ Քօսայ Բասնեցու եւ Մարտիրոս Արզրումեցու տաղերը: Ճառերում սուրբգրային եւ հայրախօսական գրականութիւնից արուած մէջբերումները յաճախ ուղղակիօրէն չեն համապատասխանում բնագրերին: Այս առիթով հեղինակը յիշատակարանում գրում է. «Եւ որո[շ] չափ հասու եղեւ միտք մեր, ողորմութեամբ Աստուծոյ ժողովեցաք յօրինացն Աստուծոյ եւ եդալ ի սմա: Եւ այս յոյժ ծանր եղեւ մեզ, զի երկու ամ է, որ ի [թափառ]ումն աշխարհի էաք եւ ոչ յընթերցոյն գրոց, քանզի բուռն է կարիք մարմնոյ, յորժամ պակասէ: Զի հալածական եղաք ի բնիկ ժառանկութենէ մերմէ ի յերկրէն Կիւրիսոյ եւ ի գաւառէն Տլքոյ եւ եկայք յԱյգեկս, եւ Աստուած ի բարի յաջողեաց զամենայն գործս մեր եւ զպէտս մարմնոյ»:

Այստեղ է, որ հեղինակը սկսում եւ աւարտին է հասցնում իր գործը. «Իսկ ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի զսա: Եւ յորժամ սկըսաք ի սա եւ կատարեցուք զսա՝ յաստուածաբնակ ցանկալի անապատս յԱյգեկս ընդ հովանեաւ աստուածընկալ եւ հրաշազան սրբոցս՝ Սուրբ Սիոնի եւ Սուրբ Կարապետի»[7]:

Երկու տարի թափառական լինելով՝ Այգեկցին չի կարողացել

[7] ՄՄ9266,200բ—201ա:

համապատասխան գրականութիւն ընթերցել եւ ինչ էլ որ կարողացել է, «ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի», - վկայում է նա:

Վարդանի այս գիրքն սկսւում է «Ուղիղ դաւանութիւն Սրբոյ Երրորդութեանն գոհացողական բանիւ աղաչանք-աղերսանօք հանդերձ յաջողել զգործս մեր անթերի եւ կատարեալ ուղղութեամբ հասանիլ առ նա» ներածականով, որին յաջորդում են իշխանի եւ Վարդանի՝ միմեանց յղած նամակները, ապա սկսւում է բուն գիրքը, որը բաղկացած է քսանի հասնող խրատական ճառերից: Գիրքն աւարտւում է ամբողջ աշխարհի համար Աստծուն ուղղուած աղօթքով եւ յիշատակարանով:

Խօսելով ճառերի լեզուական առանձնայատկութեան մասին, կարելի է նկատել, որ եթէ «Արմատ հաւատոյ» երկը շարադրուած է դասական գրաբարով՝ քաղուած լինելով Սուրբ Գրքից եւ հայրաբանական գրականութիւնից, ապա խրատաշարը, որն Այգեկցին գրել է Պաղտին իշխանի պատուէրով եւ հովանաւորութեամբ, շարադրել է «ռամկօրէն» լեզուով: Կիլիկիայի հայկական թագաւորութեան պալատական շրջանակների աւանդական մի սովորութեան համաձայն ամէն օր մի հոգեւորական ներկայացել է պալատ եւ «ռամկօրէն» զրուցել թագաւորների եւ իշխանների հետ՝ դաստիարակի, գուցէ եւ խոստովանահօր ու պետական խորհրդատուի հանգամանքով: 13-րդ դարում Կիլիկիայում եղած դոմինիկեան միաբանութեան անդամ Բուրկարդուս դե Սանտե-Մոնտեն իր «Ուղեգրութեան» մէջ այս մասին արձանագրել է հետեւեալը «... թագաւորական տան անդամները, իշխանները եւ բոլոր ազնուականները սիրով են լսում Աստուծոյ խօսքը: Դրա համար է, որ ամէն օր ժամը 3-ին մի վարդապետ կամ վանական գալիս է թագաւորի ու իշխաններից իւրաքանչիւրի ամրոցը, դրանց միշտ մօտենում է իշխանն ինքը մենակ կամ զաւակների ու տնեցիների հետ միասին: Վանականները դնում են առաջները որեւէ գիրք եւ

կարդում նրանց ներկայութեամբ ռամկօրէն (in vulgari), որովհետեւ ուրիշ լեզու չգիտեն, կամ թէ բացատրում նրանց դոցա բնագիրը, եւ եթէ աշխարհականները որեւէ տեղ կասկած ունեն, առաջադրում են հարցեր եւ ստանում վանականներից դրանց մեկնաբանութիւնը սրբոց ցուցմունքների համաձայն»[8]:

Սրա մասին է վկայում նաեւ ներկայացուող խրատաշարը:

Պէտք է նկատել, որ դոմինիկեան միաբանութեան ներկայացուցիչը միտումնաւոր կամ սխալ է ընկալել տուեալ երեւոյթը հայ թագաւորի եւ իշխանների մասին ասելով, թէ՝ «Ուրիշ լեզու չգիտեն»: Այս մասին առաւել յստակ պատկերացում ենք կազմում՝ կարդալով Վարդան Այգեկցու խրատաշարի հետեւեալ տողերը. «Եւ զայս ամենայն քաջ գիտեն ամենեքեան եւ ուսեալք են յաստուածեղէն Գրոց մեծամեծք եւ փոքունք, բայց մեք կրկին յիշեցուցանեմք ոչ խրթին թաքուն եւ ծածուկ բանիւ, սեթեւեթել զբառսն ճարտասան իմաստիւք, որ լսողացն անաւգուտ լինի, որք պէտս ունին: Այլ պարզ եւ յստակ բանիւ պատմեսցուք, որ զտգէտք եւ գեղջուկ ռամիկք, յորժամ լուիցեն, իմանան եւ աւգտեսցին ի սմանէ, քանզի Աստուած ընդ այս ուրախանայ եւ բերկրեալ ցնծայ»[9]

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հեղինակը նպատակ ունէր Աստուածային գիտութեան լոյսը հասցնել նաեւ «տգէտք եւ գեղջուկ» ժողովրդին: Մէկ այլ տեղում նա դիմում է իշխանին՝ ասելով. «Անմեղադիր լեր, զի գեղջուկ բառով եւ բանիւ գրեցաք զսա: Գիտեմ, որ դու իմաստուն ես եւ զնուրբն կամիս եւ զուղ[ղ]ուկ բանն եւ խորինն, բայց ես կարի պարզեցի զբառ սորա, որպէսզի տգէտքն լսիցեն եւ աւգտեսցին ի սմանէ, եւ զի մի՝ ձանձրասցին լսողքն»[10]: Ելնելով քսանմէկ ճառերի հարուստ եւ բազմա-

[8] «Արարատ», 1914, նոյեմբեր, էջ 1016:

[9] ՄՄ N 1880 119բ: Սոյն հատուածը բացակայում է N 9266 ձեռագրում:

[10] ՄՄ N 9266, 189ա:

զան բովանդակութիւնից, արծարծուած հարցերի բնոյթից ու արժէքից՝ կարելի է հեշտութեամբ եզրակացնել, թէ այս ճառերը որքան հետաքրքիր եւ օգտակար են եղել:

Ճառերում յիշատակւում են Գրիգոր Ասաուածաբանի, Կղեմէս հայրապետի, Բարսեղ Կեսարացու, Կիսլրիանոսի, Դիոնեսիոս Աղեքսանդրացու եւ այլոց անունները: Պատմահայր Խորենացու «Պատմութիւնից» էլ է Այգեկցին անում բազում մէջբերումներ՝ չյիշելով հեղինակին:

Նա քաջ ծանօթ է պարականոն գրքերին, որոնցից բազում մէջբերումներ է անում: Անտիկ գործիչներից Այգեկցին յիշում է Պիւթագորասի, Տիմոթեենեսի, Արիստոտէլի, Կղիտարքոսի, Թէոդիմոսի անունները:

Սակայն յղումների հիմնական աղբիւրը Սուրբ Գիրքն է, որից նա կատարում է բազում ուղղակի եւ անուղղակի մէջբերումներ:

Այս ամէնով հանդերձ Այգեկցին ներկայանում է որպէս ինքնատիպ մի հեղինակ, որը հարազատ է առաքելական աւանդութեանն ու կանոններին եւ մնում է Հայ Եկեղեցու հաւատարիմ զինուորն ու մեծ ջատագովը:

ՇԱՀԷ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

* * *

Ներկայացուող աշխարհաբար թարգմանութիւնն իրականացնելիս որոշակիօրէն յղկուել են բնագրին բնորոշ լեզուաոճական խրթնութիւնները: Անշուշտ, լիակատար քննական բնագրի առկայութեան դէպքում հնարաւոր կլինէր աւելի կատարեալ թարգմանաթիւն ունենալ որը, յուսանք, կիրագործուի մօտ ապագայում: Քննական բնագիրը պատրաստելիս պէտք է նաեւ նկատի անենալ ոչ միայն այս խրատաշարի ամբողջական խմբագրութիւնները, այլ նաեւ առանձին ճառերի մեզ հասած բազմաթիւ ընդօրինակութիւնները:

ԽԿ.

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՂ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ՝ ՄԵՐ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾԻՆ ՍԱՏԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. Սուրբ Երրորդութեան ուղիղ դաւանութիւն գոհաբանական խօսքով եւ աղաչանք-աղերսանքով՝ մեր գործերի յաջողութեան եւ անթերի ու կատարեալ ուղղութեամբ [նպատակին] հասնելու համար

Մեր այս հոգեւոր ձեռնարկութեան սկզբում ամէն բանից առաջ կատարեալ հաւատով, անթերի մտքով, անկեղծ սիրով, գոհացական երգով եւ քաղցր ձայնով օրհնենք, փառաւորենք եւ բարեբանենք բոլորի կողմից օրհնուած եւ ամենաբարի, համագոյ եւ անբաժանելի Ամենասուրբ Երրորդութեանը՝ բոլոր ստեղծուածների Արարչին ու Ստեղծողին, անմատոյց Լոյսին, ամէն մի մտքից գերազանց Ճառագայթին, ուր չկայ նուաստութիւն ու մեծութիւն, ծերութիւն ու մանկութիւն, աւագութիւն ու կրտսերութիւն, այլ Երեք կատարեալ Անձեր՝ միացած Մի անբաժանելի Բնութեան մէջ, մի կամք եւ մի Աստուածութիւն, մի թագաւորութիւն եւ մի զօրութիւն:

Անսկիզբ եւ անպատճառ Հայրը ծնեց իր անսկիզբ Բանին՝ մշտնջենաւոր եւ անբաժան Որդուն, ըստ այն խօսքի. ***«Իմ որովայնից*** *(այսինքն՝ սրտիս էութիւնից ու բնութիւնից)* ***արուսեակից առաջ ծնեցի Քեզ»***[1]*, Որն էլ պատկերն ու կերպարանքն է աներեւոյթ Հայր Աստուծոյ, ամէն բանով նման եւ հաւասար Իր Ծնողին:*

Սուրբ Հոգին բխումն է Հայր Աստծու էութիւնից ու բնութիւնից եւ ըստ Գրքի. ***«Նրա բերանի Հոգին է»***[2]*, մշտնջենաւոր է,*

անսկիզբ, ամէն ինչում եւ ամբողջովին հաւասար Հօրը եւ Որդուն:

Եւ է ճշմարիտ Հայր Աստուած, Որը [չի գոյացել] որեւէ մէկից, եւ Միածին Որդին, Որը ծնուած է Հօրից եւ այլ ոչ մէկից, եւ Ճշմարիտ Հոգին, Որը ելնում է Հօրից եւ տրւում է Որդու միջոցով, Որոնց էլ երկրպագելով՝ պաղատում ենք, որ Իրենց անպատմելի շնորհների վտակները բխեցնեն մեր հոգուց ու մտքից, որ անբան իմաստակներին անգամ բանական է դարձնում՝ ըստ Տիրոջ բարձրագոյն հրամանի, որ ասում է. ***«Ով ինձ հաւատում է, նրա ներսից [կենդանի ջրերի] գետեր պիտի բխեն»***[3]*:*

Նաեւ փափագելով աղերսենք լոյսի Հօրը՝ կրկնելով մարգարէի խօսքը. ***«Մեր հոգեւոր ձեռնարկութեան գործերը ուղղի՛ր եւ յաջողեցրո՛ւ»***[4] *եւ ամէն ժամ պահապան ու օգնակա՛ն եղիր մեր տկարութեանը, ո՛վ անբաժանելի Սուրբ Երրորդութիւն, որպէսզի Քո ուղիղ դաւանութեամբ բարի եւ մաքուր վարքով ապրենք աշխարհում եւ ննջենք գերեզմանում, իսկ վերջին օրը արթնանանք Քո զօրութեամբ եւ արժանանանք դասուելու սուրբերիդ երամին, նաեւ անմարմինների բանակի հետ՝ անսպառ ուրախութիւններին եւ անլռելի ձայնով օրհնենք համագոյ եւ անբաժանելի Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Բ. Թագաւորազն եւ քրիստոսակիր մեծ իշխան պարոն Պաղտինի նամակը՝ ուղղված ի պատասխան գերիմաստ Վարդան վարդապետի թղթի

Սուրբ եւ արդիւնաւոր Վարդան վարդապետի քրիստոսակիր անձին եւ Քրիստոսից յետոյ մեր յոյսին.

ո՛վ երբայր, ես՝ Պաղտինս, ընթերցեցի պատուական ու ողջունաբեր նամակդ, եւ շատ ուրախացանք քո բարի ու հոգեշահ խրատներով, որ ուղարկել ես մեզ բարի գործերի համար, եւ յօժա-

*րութեամբ ընդունեցինք, իբրեւ Աստուծոյ հրամաններ: Եւ այնպէս ուրախացանք, կարծես ողջացած տեսանք մեր հարազատ ննջեցեալներին՝ սուրբ քահանայ Բարսեղին, մեծ իշխան Սմբատին եւ մեր պանծալի նախնի աստուածահաճոյ Բարսեղ եպիսկոպոսին: Առաւել ուրախացանք գրքի համար, որ առաքեցիր մեզ, որովհետեւ այն հաւատի արմատ է եւ ամբողջովին Սուրբ Երրորդութեան գանձարան, որով լուսաւորուեցինք հոգով ու մարմնով եւ աւելի յստակ իմացանք մեծ եւ աստուածային խորհուրդների մասին: Նաեւ ա՛յս իմացիր, որ Աստծուց ձեզ պէս ընտրեալ գիտնականներին ուղղուած մեծ հրաման կայ, որ անընդհատ յիշեցնէք մեզ Աստուծոյ պատուիրանները, որպէսզի երկրաւոր հոգսերը եւ իշխանութեան զբաղուածութիւնը չխաբեն մեզ, եւ կարողանանք մնալ արդարութեան շաւիղներում եւ հոգ տանել Աստուծոյ իրաւունքների համար: Եւ մարգասէր Աստծուց հայցում ենք, որ ձեր սուրբ աղօթքներով ձեր խրատական խօսքերը շահեկան դարձնի մեր լսելիքին՝ ըստ Իր լուսաւորող պատգամների. «**Սերմանուեց լաւ ու պարարտ հողի վրայ եւ բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուեց**»[5]:*

Աղաչո՛ւմ եմ ձեզ, որ մեզ եւ մեր ննջեցեալներին անմոռաց պահէք ձեր մաքրափայլ աղօթքներում եւ մեզնից անպակաս անէք ձեր բարի ու հոգեշահ խրատները: Նաեւ առաքէք մեզ Աստուծոյ օրէնքները գրաւոր, որպէսզի լինեն մեզ մօտ եւ լուսաւորեն մեր հոգին ու միտքը, եւ Քրիստոսն էանայ մեր մէջ:

Գ. Նոյն Վարդանի թուղթը. գովաբանական խօսք
իշխանի խոնարհութեան մասին

Ո՛վ բարձրապատիւ, մեծագահ եւ թագաւորազն, Աստծուց մեզ ընձիւղուած պանծալի բողբոջ, աստուածազօր Պաղտի՛ն իշխան, ես՝ հոգս Վարդան, լցուեցի անճառելի ցնծութեամբ ու գոհութիւն վերառաքեցի Աստծուն, որ շնորհել է քեզ հեզ ու խոնարհ հոգի՝ ուրախանալու Աստուծոյ օրէնքներն ու բարձրագոյն հրամանները լսելիս, որ փոքր-ինչ յիշեցրի ձեզ գրաւոր կերպով:

*Քո իսկ նամակից ճանաչեցի հեզութիւնդ, որ կատարեալ ես հոգեւոր իմաստութեամբ, քաջատեղեակ Աստուծոյ օրէնքներին, գիտես Նրա կամքը, կարող ես ուրիշներին ուսուցանել եւ կարիք չունես մեզնից կամ մէկ ուրիշից սովորելու, որովհետեւ Եսայի աստուածաբան մարգարէն ասում է. «**Լցուեց երկիրը Տիրոջ գիտութեամբ, նման առատ ջրերին, որ լցրեցին համատարած ծովը**»[6]: Եւ եթէ հինգ կամ եօթ տարեկան երեխաներն անգամ գիտեն Աստուծոյ հրամանները, ապա ուր մնաց, թէ ծերերը կամ ձեզ նման իմաստուն իշխանները: Նաեւ տեսնում ենք, որ արժանաւոր եւ անարժան տեղերում լսւում ու քարոզուելով աւետարանւում են Աստուծոյ օրէնքները, այնքան որ աստուածգիտութիւնը առատացաւ եւ տարածուեց աշխարհի չորս կողմերում: Իսկ հիմա քեզ համար կատարուեց այն գիրը, որ ասում է. «**Բացատրի՛ր պատճառը իմաստունին, եւ նա աւելի իմաստուն կլինի, եւ խրատի՛ր արդարին, եւ նա կսիրի քեզ**»[7]:*

Որքա՜ն բարի է մարդու համար, որ ստացել է [Աստուծոյ] գիտութիւնը եւ պահում է այն: Յիրաւի մեր Տէր Յիսուս Քրիստոսը գովաբանեց խոնարհութիւնը, որն Ինքն իրագործեց եւ նոյնն էլ մեզ հրամայեց անել: Դու էլ ձգտեցիր նմանուել նրան, ով քաջատեղեակ եւ հմուտ է Նրա անեղական բարիքներին ու երանութեանը, ով խոնարհութիւնը գանձած է պահում երկնքում: Դրա համար էլ դու հեզութեամբ այն յանձն առար, որովհետեւ խոնարհ եւ ընդունելի խօսքերդ, որ կային հեգահայեաց քո հրովարտակում, արթնացրին ինձ աշխարհիկ դեգերումների քնից, իսկ քո աստուածային խնդրանքը, որ հրամայեցիր Աստուծոյ օրէնքները գրաւոր յանձնել ձեզ, հարստացրեց ինձ աստուածային հոգեւոր գանձով:

Քանզի նախքան քո խոնարհ եւ վեհ նամակն ստանալը՝ գիշերային քնի անուրջներում տեսայ, որ կանաչասաղարթ վարդենիների բողբոջած ծայրերից լուսափայլ մարգարիտներ էի հաւաքում ու ծրարելով՝ պահում: Եւ սա թոյլ տուեց մոռանալ մեր տգիտութիւնը, որովհետեւ մեր կարողութիւնը յոյժ անբաւարար ու անպատշաճ էր՝ ձեռնարկելու այս աստուածային գործը, որովհետեւ չունեմ կատարեալ գիտութեան կարողութիւն ու հանճարի իմաստութիւն: Բայց դարձեալ Աստծուն վստահեցի եւ Նրա խնամածութեանն ապաւինեցի՝ գրի առնելու Աստուծոյ օրէնքները, որոնց դուք էլ քաջատեղեակ էք, եւ յանձնելու ձեր մեծագահ իշխանութեանը, որ դրանք մնան ձեզ մօտ ի շահ ձեր անձի եւ յօգուտ ունկնդիրների: Սակայն մի՛ ձանձրացէք Տէր Աստուծոյ օրէնքները կրկին լսելուց՝ ասելով. «Քաջածանօթ եմ Աստուծոյ պատուիրաններին. ինչի՞ համար դրանք լսեմ»: Արդ, ստոյգ իմացի՛ր, որ չար սատանան է դրդում խորհելու ու ասելու նման բաներ, որ խաւարով լցնի մեր հոգին, որովհետեւ լաւ գիտի, թէ որքան աւելի շատ լսենք Աստուծոյ հրամանները, այնքան աւելի կլուսաւորուենք հոգով:

Թէպէտեւ մէկն է արեգակը, բայց ամէն օր ցանկութիւն ունենք տեսնելու արեւածագը՝ բնաւ չձանձրանալով նրանից: Այդպէս էլ պէտք է միշտ ցանկանանք լսել Տէր Աստուծոյ օրէնքները, որոնք ամփոփուած են աստուածեղէն Գրքերում: Քանզի գրասէրը աստուածասէր է կոչւում եւ է: Յիրաւի գրուած է. **«Երանելի է այն այրը, որի շուրթերից չի հեռանում Աստուծոյ օրէնքը»**[8], որովհետեւ Աստուած Ինքն էլ չի հեռանում նրանից: Գրուած է նաեւ. **«Քո պատուիրանները սիրեցի առաւել, քան Արաբիայի ոսկին եւ տպազիոնը»**[9]: Դարձեալ՝ **«Քո խօսքերն ինձ համար քաղցր են առաւել, քան մեղրախորիսխը»**[10]: Ինչպէս նաեւ՝ **«Քո խօսքերն իմաստնացնում եւ լուսաւորում են երիտասարդներին»**[11]: Իսկ Տէրն Աւետարանում գոչում է. **«Այն խօսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է եւ կեանք»**[12]: Եւ գիտես, որ կան աստուածային պատգամներ, թէ՝ **«Միայն հացով չէ, որ ապրում է մարդը, այլ ամէն խօսքով, որ ելնում է Աստուծոյ բերանից»**[13]. Նաեւ բոլոր Աստուածաշունչ Կտակարաններն Աստուծոյ բերանի խօսքերն են:

Լսել եմ, որ գրասէր ես, ո՛վ աստուածասէր Պաղտին իշխան, եւ աղաչում եմ, որ չձանձրանաս հոգեպատում գրքերի խօսքերն ունկնդրելիս, որովհետեւ երանելի է նա, ով սիրում է Աստուծոյ Գրքերը, որովհետեւ նրա մէջ է բնակւում Սուրբ Երրորդութիւնը: Երանելի է այն մարդը, ով սիրով ու մեծ ցանկութեամբ է ընթերցում աստուածեղէն Գրքերը, որովհետեւ նրա շուրջը պարում են հրեշտակները, նրան շրջապատում են առաքեալներն ու մարգարէները, հայրապետներն ու բոլոր սուրբերը, եւ նա միշտ խօսում է նրանց հետ Գրքերի միջոցով, իր աչքի առաջ տեսնում է բոլոր արդարների երանութիւնն ու հանդերձեալ աշխարհը: Եւ եթէ դու էլ այդ աստիճան գրասէր լինես, ո՛վ քրիստոսասէր իշխան, ապա քո իսկ բարեգործութեամբ երկար ժամանակ կպահպանուես Աստուծոյ Աջով, հոգով եւ մարմնով բազում տարիներ խաղաղ կապրես աշխարհում, ինչպէս նաեւ կգովաբանուես Աստուծոյ եւ մարդկանց կողմից աշխարհից հեռանալու՝ վախճանիդ օրը, իսկ ահաւոր դատաստանին ահագնահայեաց Դատաւորի առաջ աջակողմեան դասում քո ողջ ննջեցեալների հետ միասին կարժանանաս լուսաւոր ու անճառելի բրաբիոններին եւ անթառամ պսակներին արքունի հայրական տան բարի ծառաների հետ, որտեղ անսպառ հարսանիք եւ զանազան օթեւաններ [են պատրաստուած] նրանց համար, ովքեր մաքրուեցին հոգով եւ առանց ախտերի դուրս եկան աշխարհից: Նրանք նախապէս կապուած էին եւ կրկին անխզելի կապով միացան անստուեր լոյս Յիսուս Քրիստոսին, Որն անեղ ու աներեւոյթ Աստուծոյ պատկերն ու կերպարանքն է, երեսի լոյսն ու զօրութիւնը, Որը միշտ փառաւորուած է Հօր անսահման կատարե-

լութեան եւ Սուրբ Հոգու անհասանելի մեծութեան հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դ. Վերին Երուսաղէմի եւ արդարների անճառելի խնդութեան ու հանգստի մասին

Բե՛ր քո աստուածապատկեր միտքը, ո՛վ աստուածանման իշխան, եւ Հոգու սիրով անխզելիօրէն կապի՛ր աստուածային խօսքերին: Բարձրացի՛ր հոգովդ աշխարհիկ դեգերումներից, արագօրէն զարթնի՛ր իշխանութեան խաբուսիկ փառքի քնից, որովհետեւ Դաւիթ մարգարէն մեծ ցաւով գոչում է եւ ասում. ***«Մեծութիւնն ու փափկութիւնը ես լոյս էի կարծում, սակայն այն խաւար էր թշուառիս շուրջը, որը չգիտէի»***[14]*:*

Արդ, ե՛կ հոգու թեւերով մեղուի պէս հանդարտ թռչենք դէպի աստուածեղէն Գրքերի մարգագետինները, որոնք գտնւում են Աստուծոյ Հոգու ջրերի դալար վայրերում, այնտեղից քաղենք աստուածային խօսքերի նուրբ ծաղիկները, կապենք մեր մտքի բազուկներին ու թեւերին, բերենք դնենք Աստուծոյ մեղուանոցներում եւ ամբարենք մարդկանց մտքի բջիջներում՝ ի շահ մեր անձերի եւ յօգուտ Ադամի ողջ սերունդների, որպէսզի ամենքս դառնանք Աստուծոյ մեղուանոցներ, մեր Կենարարի քաղցրահամ խորիսխը բերողներ:

Բայց նախ պէտք է իմանալ հետեւեալը. թէ հանդերձեալ կեանքը, որը պիտի գայ, առաւել մօտ է, քան անցած ժամանակը, որը մեզնից առաջ էր: Որովհետեւ կրճատուեց ժամանակը, եւ ժամանող Դատաւորը հասաւ մեր դռանը: Դրա համար պէտք է սկզբում քննենք այն, որ պիտի գայ, եւ ուր պիտի գնանք այստեղից, այսինքն՝ թէ ինչ են հանդերձեալ աշխարհն ու մշտնջենաւոր հանգիստը, որ պահուած են Աստուծոյ ընտրեալների համար: Եւ ապա

այնտեղից ետ գանք եւ քիչ-քիչ քննենք մինչեւ մեր ժամանակը, որում ապրում ենք:

Առաջին գիրքը, որ առաքեցի ձեզ, իր մէջ ամփոփում է հաւատքի հաստատումն ու Հայաստանեայց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցու կարգը: Իսկ այս աստուածաբնակ գրքոյկում գրի կառնենք շատից քիչը, որ սովորեցինք աստուածային Գրքերից.

Հանդերձեալ աշխարհի եւ անսպառ կեանքի մասին, ինչպէս նաեւ՝

Հոգիների մասին, թէ ինչպիսիք են,
բարի գործերի մասին, թէ որոնք են,
դժոխքի մասին, թէ ինչ է,
չար գործերի մասին, թէ որքան են,
տասը կատարեալ թուերի մասին,
Տիրոջ գալստեան ու Նրա դատաստանի մասին,
Նեռի ու դառը ժամանակների մասին,
ծուլութեան ու մեր ժամանակներում մեղքերի յանդգնութեան մասին,
աղօթքի մասին ի պէտս աշխարհի:

Չնայած այս ամէնը լաւ գիտեն եւ ուսանել են աստուածային Գրքերից բոլորը՝ ե՛ւ մեծերը, ե՛ւ փոքրերը, սակայն մենք կրկին կյիշեցնենք [այն] ոչ թէ խրթին, թաքուն ու ծածուկ խօսքերով, բառերը ճարտասանական իմաստներով պաճուճելով, այլ պարզ ու յստակ խօսքերով պիտի պատմենք, որ անօգուտ չլինի լսողներին, որոնք դրանց կարիքն ունեն, որ երբ տգէտ չինականներն ու գեղջուկները լսեն, հասկանան ու օգուտ ունենան սրանից, որովհետեւ Աստուած նման դէպքում է ուրախանում եւ ցնծում բերկրելով:

Արդ, ժամանակն է արագաթեւ արծուի պէս բարձրանալ վեր՝ դէպի օդի վերին շերտերը: Ելնենք անձրեւի, կարկուտի եւ ամպերի շարժման գօտիների, մոլորակ աստղերի եւ կենդանակերպերի ընթացքի խորանների միջով, արեգակի շրջանի, լուսնի շաւղի ու

խաւարամած օդի միջով մինչեւ արեգակից վեր գտնուող ջրային կամարը, որն օվկիանոսից բարձրացաւ Արարչի հրամանով եւ պրկուած է ինչպէս խորանաձեւ մի փեղկ: Այն վարագոյր է հանդիսանում ընդդէմ հրեղէն եթերի, որպէսզի վերին հուրը չայրի ու չմոխրացնի բոլոր արարածներին: Եւ վեր բարձրանալով ջրային կամարից, որ սարերի պէս դէզ-դէզ կուտակուած են բարձունքում, մտնենք հրեղէն եթեր ու բարձրանանք լուսեղէն երկինք:

Այնտեղ կտեսնենք Աստուծոյ երկնաւոր անմարմին հրաբուն անթիւ զօրքերի դասերը: Եկէք շրջենք նրանց միջեւ, ընթանանք նրանց փողոցներով ու դիտենք նրանց հրապարակները, խորաններն ու կայեանները, ինչպէս նաեւ քննելով՝ ճանաչենք նրանց կարգերն ու օրհնուած փառաբանութիւնները:

Ահա՛, սիրելի՛ս, [մտքով] բարձրացանք երկինք եւ մտանք անճառելիների մօտ: Արդ, մի պահ միտքդ պահիր այստեղ եւ նայիր երկրաւոր կեանքի ունայն զբաղմունքներին. ապա միայն կարող ես տեսնել, թէ որտեղ են երանութիւնները:

Արդ, սա է հոգեղէն հրեղէնների բնակարանը, սա է Աստուծոյ անմարմին զօրքերի գաւառը, սա է երանելիների երկիրը, սա է Վերին Երուսաղէմը, սա է Աստուծոյ բարձրագոյն լեռը՝ ամուր Սիոնը, եւ Վերին ու Նոր Երուսաղէմը, այսինքն՝ Սուրբ Քաղաքը, որը ցանկալի է բոլոր ընտրեալ սուրբերին: Այնտեղ է բազմաչարչար ու կատարեալ սուրբերի բնակարանը:

Նա է մայրը Պետրոսի ու Պողոսի, ինչպէս նաեւ նրանց, ովքեր նմանուողներ կլինեն նրանց:

Արդ, անմարմինների դասերը, որոնք բնակւում են Աստուծոյ Վերին քաղաքում՝ Նոր Սիոնում, գրքերում եօթ դաս նշուեցին, սակայն այլ տեղերում ինը դաս սահմանուեցին: Ոմանք ասացին, թէ գոհարների պէս շարուած՝ կամարաձեւ շրջապատում են Աստուծոյ աթոռը՝ մէկը միւսից յետոյ եւ մէկը միւսից աւելի հեռու:

Մէկ ուրիշն էլ ասաց, թէ սանդուղքի աստիճանների նման մէկը միւսից բարձր է, իսկ ամենավերեւում՝ անմատչելի լոյսի խորանում, հաստատուած է Աստուծոյ անձեռակերտ եւ սոսկալի աթոռը:

Անմարմինների զօրքերը բաժանուած են երեք խորանների մէջ, ամէն մի խորանում երեք դասեր են: Առաջին խորանում են գտնւում սերովբէները, քերովբէները եւ բազմաչեայ աթոռները, որոնց վրայ բազմում է բարձունքների զարմանագործ Թագաւորը, նրանք մէկը միւսից առաւել մօտ են Աստծուն: Միջին խորանում են գտնւում տէրութիւնները, զօրութիւնները եւ իշխանութիւնները՝ մէկը միւսից աւելի խոնարհ: Վերջին խորանում են գտնւում պետութիւնները, հրեշտակապետներն ու հրեշտակները:

Հրեշտակների ստորին դասերը առաւել մօտ են մարդկանց, քան միւս անմարմին զուարթունները: Ինչպէս երկնքի լուսատուների, այնպէս էլ երկնային զօրքերի մէջ կան մեծեր եւ փոքրեր: Հրեշտակները մարդկանց են հասցնում Աստուծոյ հրամանները. ինչպէս գործում էին մարգարէների, առաքեալների դասի եւ բոլոր սուրբերի հետ, ուր առաքում էր նրանց Աստուած, այդպէս է նաեւ այժմ: Ըստ Գրքերի՝ նրանցից Աստուծոյ հրամանով Ադամի սերունդների համար պահապաններ կան: Եւ մարդու կողմից գործուած ամէն մի արարք՝ թէ՛ չար եւ թէ՛ բարի, ամէն օր արեւամուտին հրեշտակը, ակնթարթօրէն բարձրանալով երկինք, պատմում է Աստուծոյ առաջ՝ գրած ներկայացնելով մարդու ամէնօրեայ գործերը, խօսքերն ու խորհուրդները, եւ դարձեալ գալիս է պահպանելու մարդուն: Դրա համար էլ Տէրը բարձրագոյն հրամանով նշեց. ***«Ինչպէս լսեմ, այնպէս կդատեմ ձեզ»***[15]*: Եւ՝* ***«Մի՛ արհամարհէք աղքատներից որեւէ մէկին, որ ձեզնից նուաստ են թւում, որովհետեւ նրանց հրեշտակները մշտապէս տեսնում են Իմ Հօր երեսը, որ երկնքում է»***[16]*: Հրեշտակներն են, որ միշտ յորդորում են մարդկանց ամենայն բարիք գործելու, ինչպէս օրինակ՝ գիշերը կողդ*

խթելով՝ արթնացնում են աղօթքի: Նրանք զղջում են արթնացնում մեր հոգում եւ մեր աչքերից բխեցնում Աստուծոյ շնորհների ջերմ արտասուքը, ինչպէս նաեւ յիշեցնում անճառելի հանգստի ու անտանելի չարչարանքների մասին, յիշեցնում են մեր գործած բոլոր չարիքները, որ արտասուելով ապաշխարենք: Նաեւ ջանում են ամէն ինչով եւ ամէն ինչում օգնել մարդկանց: Նրանք տրտմում են մեղքը տեսնելիս, ուրախանում բարու հետ միասին, փարւում են արդարներին, իսկ մեղաւորներից փախչում են՝ ըստ Գրքերի:

Ինչպէս որ մեծապատիւ իշխաններն աւելի մօտ են թագաւորին, քան միւսները, նմանապէս էլ սերովբէներն աւելի մօտ են Աստուածութեան լոյսին, որը փայլատակում է Երրորդութեան աթոռի շուրջը: Եւ Երրորդութեան լոյսն ու նախախնամութիւնը ծագում են նախ սերովբէներին եւ ապա միայն ըստ կարգի անցնում միւսներին, ինչպէս պատուհանի ապակու միջով անցնող լոյսը, այն նոյնպէս անցնելով՝ իջնում է անգունդները եւ նախախնամելով՝ անասանելի պահում արարածներին:

Սերովբէների օրհնաբանական երգն է. ***«Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, զօրութիւնների Տէ՛ր»***[17]*, միջին խորանինը՝ «Օրհնեալ է Տիրոջ փառքն իր տեղում», իսկ ներքեւի խորանի օրհնաբանութիւնն է՝ «Ալելուիա»: Եւ այնքան քաղցրահունչ ու զարմանալի է նրանց երգը, որ եթէ հողեղէններից մէկը լսի այն, իսկոյն շունչը կկտրուի: Ինչպէս մի իմաստուն աստղերի մասին ասաց. «Օդում ընթանալիս այնպիսի քաղցր ձայն էին արձակում, որ եթէ մէկը լսէր, շնչասպառ կլինէր»:*

Եւ Աստուած հրեշտակապետներին պահապաններ կարգեց աշխարհի եւ տարերքների՝ օդի եւ ամպերի, ծովի եւ գետերի, աղբիւրների եւ վտակների, լեռների եւ դաշտերի, թռչունների եւ ձկների, անասունների եւ մարդկանց վրայ: Եւ երբ Աստուած մեղքերի պատճառով բարկանում է աշխարհի վրայ, հրամայում է

հրեշտակապետին՝ արհաւիրք բերել աշխարհին՝ լինի մարդկանց կամ անասունների տարաժամ մահ, երաշտ, բոյսերի ու պտուղների, ձկների, գետերի ու աղբիւրների նուազութիւն եւ այլ պատահարներ, որոնք լինում են աշխարհում, նման այն թագաւորին, որն իր գործակալների միջոցով է կատարել տալիս իր հրամանները: Ըստ Յովհաննէս աւետարանչի, որն ասում է. ***«Աստուծոյ աթոռից հրաման ելաւ, որն ահա տեսայ, եւ հրեշտակապետը քանդեց կնիքներից մէկն ու սկաւառակից, որն իր ձեռքին էր, հրախառն ցասում հեղեց երկրի վրայ. ցամաքեցին աղբիւրներն ու գետերը, պակասեցին ծովի ձկները»***[18]***:*** *Այսպէ՛ս էլ իմացիր՝ բոլոր նեղութիւնները, որ մեղքերի պատճառով գալիս են աշխարհի վրայ, տարերքները պահպանող հրեշտակապետների ձեռքով են կատարւում:*

Նրանք անքուն աչքով ու անլռելի բարբառով օրհնաբանում են Աստուածութեանը: Աստուծոյ աթոռի բուրմունքը եւ աթոռը շրջապատող փառքերի լոյսն է նրանց կերակուրն ու ըմպելիքը, ուրախութիւնն ու հանգիստը, որ աշակերտները տեսան եւ հոտոտեցին Թաբոր լեռան վրայ, եւ զարմանալի անուշահոտութիւնից նրանց պատեց ցանկալի մի թմրութիւն:

Հրեղէնների բազմութիւններին թիւ ու հաշիւ չկայ, ինչպէս նաեւ չկայ լեզու, որ կարողանայ մեզ պատմել նրանց կայեանների, յարկերի կամ գաւառի մասին, որովհետեւ նրանց մէջ է բնակւում Աստուած:

Սիրելի՛ս, ահա այն խորանը, որի սիւները չշարժուեցին եւ չեն շարժուի, եւ պիղծերն ու անմաքուրները չեն կարող ոտք դնել Նրա աստուածակոխ հրապարակներն ու փողոցները: Արդ, սա է ցանկալի բարձրագոյն Սիոնը, սա է Նոր Երուսաղէմը, սա է անմահների քաղաքը, սա է մաքրազարդ կատարեալ անդրանիկների ժողովարանը: Այս մասին է գրում աւետարանիչը. «Նայեցի բարձունքներին, եւ ահա Սիոն լեռան վրայ՝ Գառան առջեւ, կային լուսա-

զարդ պատմուճաններով քառասուն հազար կոյսեր, որ աղաղակելով գոչում էին. **«Օրհնեալ ես Դու, Աստուծո՛յ Գառ, որ յանուն մեզ զոհուեցիր խաչի վրայ եւ Քո իսկ արիւնով ժողովեցիր մեզ բոլոր ազգերի ու ժողովուրդների, սերունդների ու լեզուների միջից եւ մեզ Քո մեծութեան պաշտօնեաներ ու փառաբանիչներ կարգեցիր»**[19]: Տեսայ նաեւ Աստուծոյ քաղաքը Վերին Երուսաղէմում եւ Աստուածութեան անձեռակերտ աթոռը. բարձրագոյն էր նրա պարիսպը եւ կառուցուած լուսաւոր պատուական ակներից՝ զմրուխտից, տպազիոնից, յասպիսից եւ բիւրեղից, որոնք Աստծուն հաճելի սուրբերն ու ընտրեալների դասերն են: Այն տասներկու դուռ ունէր, ամէն դռան փեղկը՝ մէկական լուսաւոր մարգարիտ, որոնք առաքեալների ու մարգարէների դասերն են: Որովհետեւ նրանք եղան աւետեաց կեանքի դռներ եւ քարոզիչներ, եւ արդարները նրանց միջոցով մտան Վերին Երուսաղէմ: Քաղաքի կենտրոնում էր Աստուածութեան անձեռակերտ աթոռը, որի վրայ բազմած էր զարմանագործ Աստուած: Եւ Աստուած էր այդ քաղաքի լոյսը, շէնը եւ յարկը: Եւ ահա տեսայ, որ Աստուծոյ աթոռից սառնորակ գետ էր բխում. դա կենդանարար Սուրբ Հոգին էր: Գետը հոսում էր քաղաքի հրապարակների ու փողոցների միջով, եւ նրա այս ու այն ափին կային կենդանի ծառեր, որոնք արդարների դասերն էին, որ ներծծում էին կենդանարար Սուրբ Հոգու շնորհները եւ ասում էին. **«Ահա անցան աշխարհի առաջին ճեւերն ու գործերը, եւ սկսուեց նորը, որը մշտնջենաւոր կեանքն է, արդարների աննկարագրելի հանգիստն ու Հօր լոյսի անմահութեան առագաստը»**[20]: Օ՜ երանելի կեանք ու անճառելի ցնծութիւն, որ առաջին խորանին յաջորդող միջին խորանն է, ուր արդարների դասերն են մտնում՝ ժառանգելով այն, ըստ այն խօսքի. «Լցրէ՛ք ընկածների տեղերը»: Այնտեղ չկայ աղաղակ ու տրտմութիւն,

վիշտ ու նեղութիւն, ցաւ ու հեծութիւն, սուգ ու արտասուք[21], որովհետեւ չկան մարմնական կարիքներ, ոչ էլ ախտեր եւ մեղքերի տեսակներ, այլ տիրում են միայն զարմանալի ուրախութիւնն ու անբաժանելի բերկրանքը: Սա հեզերի երկիրն է, սգաւորների մխիթարութիւնը, նեղուածների հանգիստն ու քաղցածների կերակուրը, սա ողորմածների գանձարանն է, սա աղքատների ու խոնարհների արքայութիւնն է ու անհաս թագաւորութիւնը: Բոլոր արդարները տեսան այն հեռուից, սիրով կապուեցին, մեծ փափագով յոյժ ցանկացան եւ իրենց այս աշխարհի պանդուխտներ ու նժդեհներ անուանեցին: Եւ բոլոր ժամանակներում հոգու տենչանքով կանչում էին ու ասում. «Ո՜վ Տէր, երբ եմ գալու», եւ՝ «Հաւատում եմ, որ կտեսնեմ», նաեւ՝ «Հանի՛ր այս բանտից» եւ՝ **«Ազատի՛ր ծառայիդ»**[22] եւ նման շատ այլ խօսքեր: Արդ, այն կեանքի համար սպանուեց Աբէլն ու գովաբանուեց: Այդ քաղաքի համար ընտրուեց Սէթն ու մխիթարուեց: Այս խորհրդին էր, որ հաւատաց Ենովսը եւ սփոփեց ինքն իրեն, նաեւ Ադամից յետոյ եօթերորդը՝ Ենովքը, այս լուսազարդ խորանների սիրոյ համար սրբուեց, նուիրուեց, հաճելի եղաւ [Աստծուն] եւ ժառանգեց այն, ինչի մասին խորհեց: Ի սէր անճառելի առագաստի Նոյը հինգ հարիւր տարի կուսութեամբ նահատակուելով՝ նուիրուեց [Տիրոջը]: Այն քաղաքում բնակուելու համար Աբրահամն ու Ղովտը պանդխտեցին, Իսահակը մեծ յոյսով նուիրաբերուեց, Յակոբը տոկաց հալածանքին, Յովսէփը քաջարիութեամբ ողջախոհ դարձաւ, Մովսէսը դիմացաւ դժուարութիւններին ու վախճանուեց, Յեսուն կուսութեամբ համբերեց. պատերազմելով կռուեց դէջ ախտերի, ասես ահագին առիւծագլուխ վիշապի դէմ: Նոյն կերպ ջանացին նաեւ Եղիան ու Յովհաննէսը. յանուն երանական եւ անսպառ հարսանիքի՝ թունալից, մորմոքող ու վրնջացող ախտերն հալածեցին եւ կապելով՝ սանձեցին, դատաւորները չարչարուեցին, Սամուէլը

համբերեց, Դաւիթը, Եզեկիան ու Յովսիան մաքրութեամբ աղօթեցին, Եսայի մարգարէն սղոցուեց, Երեմիան քարկոծուեց, Եղիան հալածուեց, Եղիսէն հաճելի եղաւ Աստծուն, Յովհաննէսը գլխատուեց: Եւ որպէսզի մենք էլ հաղորդակից լինենք անճառելի կեանքին ու անեզր բարիքներին, Հօր Բանը եւ բարձունքների Տէրը, ամէնի Ստեղծողը խոնարհուեց եւ ծնուեց կոյս եւ սուրբ արգանդից, բոլորին Կերակրողը եւ Մաքուրը կերակրուեց Կոյսի մաքուր կաթով, արարածների մէջ Անբաւելին ծարաւած պատուեց խանձարուրում, ահաւորներից Ահաւորը չարչարուեց, Սոսկալին թքի արժանացաւ, կիզող Հուրը մերկ խաչ բարձրացաւ, Կենսատուն մարմնով մեռաւ, Անբովանդակելին պատանուեց կտաւով, ամփոփուեց եւ ծածկուեց գերեզմանում: Ինքը ոչնչի կարիք չունէր. այս ամէնը մեզ համար կամովին տնօրինեց: Յարութիւն առաւ, համբարձուեց ու անմահ հարսանիք խոստացաւ մեզ: Սուրբ առաքեալներն ու բոլոր ընտրեալներն, այս տեսնելով, իմացան եւ լսեցին Քրիստոսից եւ իրենց մարմինները սպանեցին չարչարանքով. Պետրոսն ու Անդրեասը խաչուեցին, Ստեփանոսը առաջինը քարկոծուելով սպանուեց, Պօղոսը գլխատուեց, Մատթէոսը ողջակիզուեց, Թովմասը, Թադէոսն ու միւս [առաքեալները] սրով կամ դանահարուելով վախճանուեցին, Տիմոթէոսը քարկոծուեց, Իգնատիոսը մանր աղացուեց, եօթանասուն աշակերտները որպէս կախարդներ հայհոյուեցին ու վախճանուեցին դառը մահով: Հայրապետները նեղութիւններ կրեցին ու չարաչար խոշտանգուեցին, վարդապետներն ու քահանաներն անսահման տառապանքներով մաշուեցին, մարտիրոսները զանազան կտտանքներով անբան արարածների պէս կոտորուեցին, քերթուելով՝ քերուեցին ու դառնատեսիլ հրով կիզուելով՝ պատարագուեցին, սուրբ կոյսերն ու քաջ մենակեացները պատերազմեցին բազմագլուխ ախտերի դէմ:

Արդ, այս ամէնը նրանք կամովին յանձն առան անվախճան

կեանքի ու անպատմելի հանգստի համար, որովհետեւ այն բարիքների Տէրն ու Առաջնորդը պարզ ու բացայայտ ձայնեց. **«Դե վե՛ր կացէք, գնանք այստեղից»**[23], եւ՝ **«Դուք այս աշխարհից չէք, որովհետեւ այլ աշխարհից էք եկել ու յայտնուել»**[24]: Բայց անճառելի հանգիստը, անվախճան կեանքն ու զարմանալի ճոխութիւնը, որն Աստուած տալու է սուրբերին արքայութեան մէջ, աստուածատես Մովսէս մարգարէն նմանեցրեց մեղրի ու համեղ կաթի՝ ասելով. **«Երկիրն, ուր մտնելու էք, կաթ ու մեղր է բխում»**[25]: Նաեւ սուրբ առաքեալներին հետեւող Երենիոսը ցանկացաւ երկրաւորներիս այլաբանօրէն ցոյց տալ սուրբերի անքննելի խոնարհութիւնը հանդերձեալ կեանքում. «Քանզի,- ասաց,- լցուած է քաղցրահամ ողկոյզներով, հասուն ու համեղ նշով եւ անսպառ առատութեամբ»: Այս մասին է խօսում մեր Տէրը. **«Որտեղ ես եմ, այնտեղ էլ Իմ պաշտօնեան կլինի»**[26], եւ՝ **«Փոխադրուեցիք մահուանից կեանք»**[27], նաեւ՝ **«Կտեսնէք Իմ փառքը»**[28], եւ՝ **«Իմ Հայրը կսիրի ու կմեծարի ձեզ»**[29], եւ՝ **«Ես գօտի կկապեմ քո մէջքին եւ կպատուեմ քեզ»**[30], այսինքն՝ կուսուցանեմ, թէ ինչպիսին է Իմ Հօր եւ Հոգու խորհուրդը: Մեր կենարար Տէրն այս ամէնը բարի կատարեց: Ինչ որ այժմ, ինչպէս առաքեալն է ասում, քիչ գիտենք[31], այն ժամանակ դէմ-յանդիման կտեսնենք: Եւ միայն այդ ժամանակ կլինի արդարների ուրախութիւնն ու ցնծութիւնը, որովհետեւ նորոգուելով՝ կկենդանանան Աստուածութեան բուրմունքից եւ սերովբէների հետ միասին կերգեն: Քանզի այն, ինչ աչքը չի տեսել, ականջը չի լսել ու մարդու սրտի մէջ չի ընկել (որովհետեւ աշխարհում չկայ այդպիսի բարիք), այն է պատրաստել Աստուած նրանց համար, ովքեր սիրեցին Իրեն[31ա]: Բայց հատուցումը կլինի ըստ գործերի, որ սուրբերը կատարեցին աշխարհում: Նրանք, ինչպէս աստղերը երկնքում, մէկը միւսից պայծառ են, եւ թւում է, թէ սրանք են նրանց բազում օթեվանները, կամ այն է, որ այժմ կասեմ: Արդ,

Վերին Երուսաղէմը բնակատեղին է կատարեալ բարեգործների, որոնք հարիւրաւորներն են: Դրախտը հանգստավայրն է կոյսերի, որոնք ունեն ողորմութեան իւղը եւ հոգու եւ մարմնի խոնարհութիւն. սրանք վաթսունաւորներն են: Եւ աշխարհը նորոգուելով կդրախտանայ եւ կլինի այն ամուսնացածների հանգստավայրը, որոնք միայն որդեծնութեան նպատակով պարկեշտութեամբ մնացին աշխարհում, որոնք նաեւ մնացած գործերում էին առաքինի. սրանք երեսունաւորներն են:

Նախնիների կողմից գրուած է, թէ ծերունիները, որոնք կոյս Յովհաննէս աւետարանչի մօտ էին, լսեցին, թէ ինչպէս ասաց իրենց. «Կար ժամանակ, երբ մեր Տէրը խօսում էր արդարների անճառելի հանգստի մասին եւ մարմնաւորներիս օրինակներ էր ցոյց տալիս ու պատմում յոյժ զարմանալի բարիքների մասին, որ լինելու էր հանդերձեալում: Սակայն Յուդա Իսկարիովտացին թերահաւատ գտնուեց Տիրոջ խօսքերի նկատմամբ, եւ Տէրն ասաց նրան. «Նրա համար չես հաւատում Իմ անսուտ խօսքերին, որովհետեւ չես կամենում յօժարամիտ ժառանգորդ լինել ճշմարիտ բարիքների, որ խոստանում եմ ձեզ»»:

Սակայն իմացի՛ր նաեւ այս, ո՛վ քրիստոսասէր Պաղտին իշխան, որ Յովնաթանի նման, որ Դաւթի նկատմամբ [լցուած էր] բարի ցանկութեամբ ու հոգեխառն սիրով, կապեցիր իմ միտքը. որ թէպէտեւ արքայութեան մէջ մեծ ու փոքր է հանգիստը, որ Աստուած տալիս է սուրբերին ըստ նրանց թափած քրտինքի, բայց լի է այնքան անասելի բերկրանքով, որ եթէ մէկը դոյզն-ինչ արժանանում է դրանց, անգամ օվկիանոս ծովից վերցրած մի կաթիլի կամ անհուն անձրեւի մի շիթի չափ, այնպէս է ցնծում եւ ուրախութեամբ զուարճանում, որ մտքում համարում է, թէ Աստուծոյ [պարգեւած] բովանդակ հանգիստն ու ողջ ուրախութիւնները, նաեւ ընտրեալ արդարների բոլոր փառքերն իրեն տրուեցին: Որովհետեւ

այնտեղ չկայ նախանձ ու չարակնութիւն, մախանք ու ատելութիւն, մահ կամ որեւէ մէկից երկիւղ եւ մարմնական կարիքներ: Եւ ըստ առաքելական խօսքի. **«Անյայտանում, ընկղմւում ու ծածկւում է այս ապականացու ու մահկանացու մարմինը Աստուծոյ այն կեանքում»**[32], նաեւ ըստ Գրքի. «**Այնժամ Աստուած բնակւում է նրանց մէջ»**[33]. [Աստուած] միշտ յայտնւում է արդարներին ըստ նրանց արժանաւորութեան, որքանով որ կարողացան մաքրել իրենց միտքը: Ինչպէս հայելին, որն յղկուելով որքան սրբւում է, [այնքան] աւելի պայծառ է ցոյց տալիս մարդկային պատկերն ու տեսքը, նոյն կերպ էլ Աստուած էր երեւում մարգարէներին, որովհետեւ նրանք իրենց մտքի մաքրութեամբ արժանի եղան աստուածտեսութեան: Այստեղ է, որ կատարւում է ընտրեալներին ուղղուած տէրունական խոստումը՝ **«Երանի՜ նրանց, որ մաքուր են սրտով, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն»**[34] ըստ իրենց կարողութեան: Եւ [Աստուած] կմխիթարի նրանց ու գգուելով կհամբուրի, ինչպէս մայրն իր մանկանը, եւ կկատարուի գրուածը, որն ասում է. **«Աստուծոյ խորանն այն ժամանակ կլինի մարդկանց մէջ. նրանք կդառնան նրա ժողովուրդը, իսկ Նա՝ նրանց Աստուածը»**[35]: Իսկ նրանք այն անվախճան կեանքում կթագաւորեն Նրա հետ անսահման ժամանակներ, ըստ այն խօսքի. «Տեսայ, որ ննջեցեալները յարութիւն առան երկրի հողից, եւ Բարձրեալի կողմից թագաւորութիւն տրուեց սուրբերին, եւ նրանք, մշտնջենաւոր կենդանութեամբ Աստուծոյ հետ թագաւորելով, կվայելեն հանգստութեամբ եւ կմիանան լուսեղէնների զօրքին», եւ ըստ Տիրոջ բարձրագոյն հրամանի. **«Կլինեն ինչպէս հրեշտակները երկնքում»**[36] արքայութեան մէջ, ամէն ինչում լիացած, առանց ախտի եւ կլուսափայլեն աւելի պայծառ, քան արեգակը: Եւ ինչպէս գրուած է. «Սիրով ու անձկալի գորովով առաջին արդարը կճանաչի վերջին արդարին» (իսկ սա առաւել է, քան որդիական ու եղբայրական սէրը, որ

ունենք այս մարմնաւոր կեանքում), ինչպէս Յովհաննէսը ճանաչեց մեր Տիրոջը Յորդանան գետում, եւ կամ ինչպէս Տիրոջ առաքեալ-ները ճանաչեցին Մովսէսին ու Եղիային Թաբոր լեռան վրայ:

Եւ լուսափայլ աղաւնիների նման երամ-երամ կբարձրանան Հօր լոյսի անմահական առագաստը ու պարելով կցնծան անվախ-ճան հարսանիքում: Ճախրելով լուսաւոր ու թեթեւ մարմնով՝ կշրջեն սերովբէների ու փայլակնացայտ բազմաչեայ քերովբէների միջեւ եւ, մեծ համարձակութեամբ թեւածելով, կգնան նրանց լուսափայլ հրապարակներն ու փողոցները եւ ճառագայթարձակ լոյսով կփայլեն, պարելով կխառնուեն նրանց անթիւ բազմութիւն-ների խմբերին: Եւ նրանք ուրախութեամբ կցնծան, յոյժ կգովեն արդարների բոլոր դասերին եւ բաղձալի սիրով կհամբուրեն նրանց՝ ինչպէս հուրը հրի հետ միանալով ու բաժանուելով: Եւ կասեն սուրբերին. «Դուք իրապէս արժանի էք երանութեան, որով-հետեւ արհամարհեցիք անցաւորը եւ սիրեցիք այս մշտնջենաւո-րը»: Եւ աւետելով նրանց՝ կասեն. «Ուրախացէ՛ք մեզ հետ, մե՛ր սիրելիներ, ցնծալով խայտացէ՛ք, գործակիցնե՛ր ու երբայրնե՛ր, որովհետեւ այժմ արձակուեցիք կապանքից արձակուածի պէս եւ նմանուեցիք կանաչագեղ սէզի վրայ գտնուող լուսակէզ գառնուկ-ների: Ահա՛, սիրելինե՛ր, այժմ եղանք մի Եկեղեցի եւ Աստուծոյ մի ժողովուրդ, ինչպէս նախկինում, երբ ձեր հայր Ադամը լուսազարդ կերպարանքով գտնուում էր դրախտում եւ դեռ չէր խաբուել օձից: Հիմա անահ ու աներկիւղ ցնծալով՝ ծա՛փ զարկէք, որովհետեւ չկան խաբող օձն ու պատրող կինը, չկայ նաեւ մէկը, որ զարհուրեցնի կամ սարսափեցնի ձեզ: Ուստի ցնծացէ՛ք խնդալով ու լցուէ՛ք բազում բերկրանքներով, որովհետեւ ձերն է այս անախտ ու պայ-ծառաթագ սուրբ հարսանիքը, եւ անսահման է այս վայելքը: Ձեզ են պատկանում Հօր առագաստներն ու լուսաւոր անուշաբոյր խորանները: Ձերն են պայծառ բրաբիոնները, որոնք գտնուում էին արքայական տանը՝ կազմուած ձեր իսկ ճգնութեամբ ու քրտինքով: Ձերն են զարմանագործ հարսնարանի զանազան բազմոցներն ու հանգստեան գահերը՝ պաճուճուած մարգարտաշար զարդերով ու ընդելուզուած հրաշակերպ յօրինուած տասներկու ակնաքարերով, որոնք Ահարոնի վակասի վրայ էին, եւ որոնք դուք ինքներդ կեր-տեցիք վշտերով ու տառապանքներով: Այդ դուք էք սուրբ եւ ճշմարիտ հարսները, որ սուրբ սիրով կապուեցիք ձեր Քրիստոս Փեսային ու գիշերով գնացիք Նրան ընդառաջ եւ Նրա հետ մտաք Նրա խորանները: Ցիրաւի սիրեց ձեզ գթութեամբ ու չարչարուեց ձեզ համար: Ցիրաւի պսակեց ձեզ ու համբուրեց ձեր մաքուր երեսներն Իր աստուածային բերանով եւ Իր ահաւոր գրկում կգգուի ու կհանգստացնի ձեզ անախտ, աստուածային անկո-ղիններում:

Ահա՛, սիրելինե՛ր, կարճ տեւեց ձեր տառապանքը, քրտինքը, չարչարանքն ու համբերութիւնը, որ կրեցիք աշխարհում, սակայն անբաւ են բարիքները, անհատնում՝ ցնծութիւնն ու հանգիստը, որ ստացաք: Արդ, աներկիւղ ժամանեցէք, քանզի անսպառ, մշտնջե-նաւոր եւ աննախանձ է Տէրը, որ տուեց ձեզ նախապէս խոստա-ցած Իր պարգեւները»: Ընտրեալ արդարներն անմարմիններից կլսեն այս ամէնը եւ կտեսնեն անսահման բարիքները: Այն ժամա-նակ ձայնելով կհաւաքուեն նրանց անթիւ գնդերը, կհիանան սքանչանալով ու զարմացած կաղաղակեն՝ ասելով. «Օրհնեա՛լ ես, արդարադատ ու իրաւարար Տէր, որ հանգիստ տուեցիր Քո տառապեալներին: Բայց, աւա՛ղ, նայեցինք աշխարհի գործերին ու ոտք դրեցինք նրա սուտ եւ մեղքերով լցուած վայելքների մէջ: Եւ մեր սակաւ վաստակի եւ քրտինքի փոխարէն մեզ պարգեւեցիր այս անհաս ու անհատնում ուրախութիւնները: Եթէ ճշմարտապէս ուսանէինք այս, ապա կատէինք աշխարհն ու չարչարանքով կսպանէինք այս մարմինը՝ սանձելով նրա բոլոր ազտերն ու

ցանկութիւնները: Ծանօթ էինք Քո խոստմանն ու բարիքներին, սակայն չէինք ակնկալում այս ամէնը, որ շնորհեցիր մեզ: Հաւատում էինք քո խոստմանը, որովհետեւ մեծ է, բայց ո՞վ կսպասէր այս անճառելի, անեզր ու երանելի հանգստին, որ վեր է ստեղծուածների մտքից եւ անտեսանելի՝ բոլորին»: Եւ արդ, այսուհետ չկան մարմնական աղտեր ու հոգսեր, եւ միշտ անլռելի երգով աննինջ օրհնաբանութիւն են մատուցում Աստուածութեանը, եւ ժամ առ ժամ անսպառ աճում է նրանց սէրն ու ցանկութիւնն առ Աստուած: Եւ որովհետեւ Աստուած անհատնելի ու անճառելի սէր է, նրանք էլ սիրեցին Նրան, եւ մշտապէս աճում է Աստուածութեան հանդէպ նրանց սէրը, իսկ Աստուածութեան սէրն ու գութն էլ յաւէրժ նրանց վրայ է:

Եւ արդ, Աստուծոյ շնորհով գիտենալով այս ամէնը՝ ատենք աշխարհը, որովհետեւ այն սուտ է, սպանենք մարմնական աղտերն ու պիղծ ցանկութիւնները, անեզրական բարիքների յիշատակն անջնջելի պահենք մեր մտքում ու սկիզբ դնենք բարի գործերի՝ ըստ մեր կարողութեան: Եւ արդարութեան գործերով սիրենք բարձրեալ Աստծուն, որ Նա էլ մեզ սիրի այս աշխարհից ելնելուց յետոյ եւ արժանացնի երկնային արքայութեանը մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրութեամբ, Որ օրհնեալ է Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե. Հոգիների մասին, թէ ինչպէս են ապրում, եւ կամ ինչպիսին է նրանց հանգիստը

Ահաւասիկ մի փոքր քննեցինք, [թէ ինչպիսին է] արդարների հանգիստը, որ նրանց համար պահուած է արքայութեան մէջ, որն էլ պիտի ժառանգեն աշխարհի վախճանին: Ե՛կ այժմ տեսնենք, թէ

ինչպէս են ապրում ննջեցեալների հոգիները, եւ կամ ինչպիսին է նրանց վիճակը, որովհետեւ բազում սուրբ հայրեր շատ բաներ ասացին այստեղից գնացածների մասին: Եւ արդ, երբ ինչ-որ դիպուածից, որոգայթից, կամ էլ պէս-պէս ցաւերից մարդ յանկարծամահ է լինում, նրա պահապան հրեշտակը վերցնում է նրա հոգին եւ բարձրանում երկինք, ուր համբարձուեց մեր Տէրը եւ մեզ համար ճանապարհ հարթեց, որը նախօրօք փակել էր Ադամը: Իսկ արեգակից վերեւ՝ մինչեւ ջրամած կամարը, դառնագոյն խաւար է. այնտեղ բնակւում են չարատեսիլ դեւերը: Եթէ [ննջեցեալի] հոգում նրանք տեսնում են մեղքերի նշան կամ գիր, որոնք գործել տուեցին մարդուն, գալիս են ընդառաջ եւ ջանում են հոգին յափշտակել հրեշտակից՝ յոյժ նեղելով նրան: Իսկ հրեշտակը թոյլ է տալիս, որ փոքր-ինչ նեղեն՝ ասելով. «Ինչո՞ւ գործեցիր դրանց կամքով», իսկ յետոյ սաստում է հրէ գաւազանով, որից հալածւում են դեւերը: Հրեշտակը մեղապարտի հոգուց՝ ինչպէս թունաւոր, շարաւակոյտ, թարախակալած, ժանտահոտ մարմնից, գարշում է եւ տրտում դէմքով նայում նրան, իսկ արդարի հոգին վերցնում է ուրախ կերպարանքով եւ զուարթերես համբուրում նրան, ինչպէս մայրը՝ մանկանը: Եւ հրեշտակների գնդերը ընդառաջ են գալիս: Գալիս են նաեւ դեւերը եւ իրենց լիրը չարութեամբ ջանում են նեղել արդարների հոգիները, թէպէտեւ նրանց մէջ չեն տեսնում իրենց նշանները: Բայց հրեշտակի կողմից գանահարուելով՝ տրտում հալածւում են: Եւ այս սոսկալի ու անծանօթ ճանապարհի նեղութիւնների ու տառապանքների պատճառով, որոնք պատահում են հրից եւ դեւերի խաւարից վեր գնացողներին, որովհետեւ ահազդու է ճանապարհը ու անընտել, Աստուածածինն արտասուելով աղօթեց եւ հրեշտակին, որն աւանդել էր կամենում նրա մաքուր հոգին, ասաց. «Զեմ գայ քեզ հետ, մինչեւ չգայ Նա, Ով ստեղծեց ինձ՝ Յիսուս Քրիստոսը, Որն ինձնից մարմնացաւ»:

Նաեւ կոյս Յովհաննէսը՝ Քրիստոսի սիրելի աշակերտն ու սուրբ աւետարանիչը, բազում պաղատանքներով ու արտասուքով աղօթք մատուցեց Աստծուն, որ իրեն փրկի նեղ ու դառը ճանապարհից՝ ասելով այսպէս. «Թող ընդարմանան չարի իշխանները, հալածուի հուրը, վերանայ խաւարը» եւ այլն:

Ապա վա՜յ մեզ՝ եղկելիներիս. ի՜նչ է վիճակուելու մեզ՝ մեղքերով շաղախուածներիս: Քանզի եթէ սուրբերն անգամ երկնչեցին, զարհուրեցին, ինչպէս դժոխքից, ու աղօթեցին Աստծուն նեղ ու դառնատեսիլ ճանապարհի համար, ապա տե՛ս, թէ մեզ որքան է պէտք արտասուքներով պաղատել Աստծուն:

Եւ տանելով հոգուն՝ երկրպագել են տալիս Աստուածութեան աթոռին եւ արդարներին քիչ հեռու են դասում մեղաւորներից: Եւ նրանք Աստուծոյ հրամանի մէջ են՝ ըստ Գրքի. **«Արդարների հոգիները Աստուծոյ ձեռքին են, եւ չարը չի մօտենայ նրանց»**[37]: Թէպէտ նրանք մարդկանց աչքում մեռած համարուեցին, սակայն անասելի խաղաղութեան մէջ են՝ ըստ Տիրոջ հրամանի, որ ասում է. **«Մահուանից կեանք տեղափոխուեցիք»**[38]:

Եւ երբ հոգին բաժանւում է մարմնից, ինչպէս չար կապանքից, եօթնապատիկ իմաստնանում ու թեթեւանում է, որովհետեւ ազատուեց: Եւ անհոգ է, անխռով ու աներկիւղ, զարմանալի հանգստութեան, խաղաղութեան եւ անզբաղ զգայութեան մէջ, ինչպէս ասացին երանելի մանուկները, որոնք Եփեսոսում յարութիւն առան մեռելներից: Ուրեմն յիրաւի Յովհաննէս աւետարանիչը արդարի մահն առաջին յարութիւն կոչեց: Որովհետեւ նա, ով վախճանւում է հաւատով ու բարի վարքով, համարւում է, թէ հոգին յարութիւն առաւ, որովհետեւ ազատուեց մարմնական ախտերից, թեթեւացաւ ու անհոգ եղաւ մեղքերի ահից: Եւ այն պահին, երբ հոգին դուրս է գալիս մարմնից, գիտակցում է, որ ազատագրուեց, տեսնում է հրեշտակներին ու ճանապարհը: Նաեւ

իմանում է, որ կան ազգեր ու նրանց [պահապան] հրեշտակներ, տեսնում ու իմանում է նաեւ, թէ ինչ է ժառանգելու վերջին օրը, սակայն չի կարողանում իմանալ, թէ ինչպէս են աշխարհում կենդանի ապրողները, որովհետեւ չի կարող վերադառնալ աշխարհ ըստ Գրքի. **«Հոգին, որը դուրս է գալիս մարմնից, այլեւս չի վերադառնում»**[39]: Սուրբ հայրերի բազում քննութիւններից սովորեցինք, որոնք ասացին. «Աստուծոյ սիրելի մեծագոյն ընտրեալ սուրբերից մէկն անգամ չի կարող վերադառնալ մեզ մօտ»: Իսկ Աստուած, որ խոստացաւ ու սիրում է նրանց, լսում է մարդկանց, որոնք սուրբերի միջոցով աղաչում են Իրեն, եւ փրկում նրանց սուրբերի բարեխօսութեամբ: Եւ Իր ողորմութիւնն ու նախախնամութիւնը, կամ էլ հրեշտակին սուրբերի նմանութեամբ երեւեցնում ու, արագ հասնելով, օգնում է նրանց, ովքեր խնդրում ու աղաչում են Նրան: Աստուած այս անում է ի պատիւ սուրբերի, նրանց կրած չարչարանքների համար, որոնք սիրեցին Իրեն: Եւ սա աշխարհի համար մեծագոյն շահ ու օգուտ է: Թող մեզ վկայ լինի սուրբ եւ մեծ հայրապետ Նիկողայոսը. երբ նա դեռ մարմնով ապրում էր այս աշխարհում, շատ անգամ էր երեւում տարբեր երկրներում եւ օգնում ծովում կամ ցամաքում իրենից օգնութիւն հայցողներին, սակայն ինքը չէր իմանում եւ չէր էլ շարժւում իր բնակավայրից: Ահա՜, սիրելի՜, յայտնի է, որ Աստուած նրա աղօթքներով լսում էր խնդրողներին եւ հրեշտակին կամ իր նախախնամութիւնը նրա կերպարանքով երեւեցնում ու փրկում էր նրանց: Այժմ էլ՝ ըստ Յովհաննէսի. **«Կան սուրբերի հոգիներ, որոնք Աստուծոյ սեղանի հովանու ներքոյ են»**[40]: Մի՛ խաբուիր, մինչեւ Քրիստոսի Գալուստը ո՛չ արդարները պսակ ունեն, եւ ո՛չ էլ մեղաւորները՝ տանջանք, բայց կան մարդիկ, որոնք տգիտաբար ասում են, թէ՝ ունեն: Բայց այժմ էլ սուրբերը տեսնում են այն պատիւը, որն իրենց տալու է Աստուած, եւ պաղատում են նրան. «Տո՛ւր մեր վարձը եւ անօրէն-

ներից ա՛ռ մեր վրէժը»: Իսկ Աստուած, ուղարկելով մխիթարութեան լուսազարդ պատմուճանը, ասում է նրանց. «Համբերէ՛ք մի փոքր, մինչեւ դան ձեր ծառայակիցները, եւ հասնի վախճանը, որպէսզի նրանց ու ձեզ միաժամանակ պսակազարդ փառաւորեմ ըստ ձեր վաստակի, որովհետեւ այս է Ինձ հաճելի, եւ Իմ ընտրեալների թիւը չի լրացել»: Եւ այս մասին ստոյգ իմացաւ անճառելիների տեսնող Պօղոսը եւ ասաց. «Առաջին արդարները մեծ հաւատով եւ հաստատուն յոյսով իրենց քրտինքով վաստակեցին, սակայն չստացան աւետիս, այսինքն՝ հատուցում: Եւ Աստուծոյ կողմից այս է, որ լաւագոյն է համարւում, որ առանց մեզ չհասան լրումին, այսինքն՝ պսակին», ինչպէս որդեսէր հայրը, որն համեղ խորտիկներ է պատրաստել իր որդիների համար եւ չի դնում սեղանին, երբ հանդից վերադառնում են որդիներից մէկը կամ երկուսը, այլ սպասում է, մինչեւ բոլորը հաւաքուեն, ապա միայն սեղանին է դնում անուշահամ կերակուրները բոլորի առջեւ:

Իսկ մեղաւորները տեսնում են դառը տանջանքներ, որոնք պահուած են նրանց համար, եւ արտասուելով՝ պաղատում են Աստծուն եւ ասում. «Մի՛ կանգնեցրու հանդիսաւոր Ատեանում եւ մի՛ իրագործիր խորհրդաւոր դատաստանը, այլ ների՛ր մեզ, Մարդասէ՛ր»: Մինչ այդ արդարները ցնծում են եւ համարում, թէ ստացել են իրենց հատուցումը, որովհետեւ տեսնում են բարի պսակն ու գիտեն, որ Աստուած այն կտայ իրենց: Մեղաւորները ցաւագին դողում են տանջանքների ահաւոր սպառնալիքներից եւ չարաչար ու անմխիթար սուգով արտասուահեղ կոծում են նախքան այն ստանալը, որովհետեւ տեսնում են բազմակերպ տանջանքներն ու գիտեն, որ դրանք պահուած են իրենց համար: Ինչպէս այն թագաւորը, որ երկու մշակի նետեց միեւնոյն բանտը եւ երեկոյեան մարդ ուղարկեց եւ յայտնեց. «Առաւօտեան՝ արեգակի ծագելուն պէս, ձեզնից մէկին չարաչար կսպանեմ սրատելով, իսկ միւսին թագաւորութեանս հաւասար պատուի կարժանացնեմ»: Թւում է՝ նրանցից մէկը մինչ առաւօտ մահուան ահից բազում անգամ կմեռնի եւ կհամարի, թէ ինքը մեռած է, եւ մեծ ողբով կպաղատի Աստծուն, որ չծագի արեգակը, որն իրեն մահ է բերելու: Իսկ միւսը կցնծայ ողջ գիշեր, եւ սաստիկ խնդութիւնից քուն չի մերձենայ նրան, եւ կհամարի, թէ արդէն պատուի է արժանացել թագաւորի հետ եւ պաղատանքով անընդհատ ընկնելով Աստուծոյ առաջ՝ կաղաչի, որ հալածուի գիշերուայ խաւարը, ու արագօրէն ծագի արեգակը՝ բարի աւետաբերն ակնկալուող թագաւորութեան: Ահա՛ ճշմարիտ մի օրինակ արդարների ու մեղաւորների մասին:

Սակայն, ո՛վ քրիստոսասէր իշխան, նաեւ ա՛յս իմացիր, եւ ստոյգ այդպէ՛ս է, որովհետեւ կան շատ մարդիկ, ովքեր սուրբ Պատարագով եւ աղքատներին տրուող ողորմութեամբ, ինչպէս նաեւ սուրբերի աղաչանքներով իրենց ննջեցեալներին հանում են դժոխքից, որովհետեւ Աստուած անոխակալ է եւ ողորմած եւ սովոր է այլոց աղերսներով փրկել ուրիշներին, ինչպէս մօր աղերսներով փրկեց դստերը եւ բերողների հաւատքով անդամալոյծին բժշկելով՝ առողջացրեց:

Ահա՛ տեսնում ենք, որ իշխանների կամ թագաւորների բանտից մահապարտներն աղաչանքներով ու փրկագնով ազատւում են: Արդ, եթէ մարդ արարածը լսում է աղաչանքներն ու ողորմում է, ապա Աստուած որքան աւելի է լսում աղաչանքները՝ [մատուցուած] սուրբ Պատարագի եւ աղքատներին ողորմութիւն տալու միջոցով: Եւ քաղցր գթութեամբ ողորմում է եւ ազատում հոգին դժոխքից ու տանջանքներից:

Դրա համար եւ դու, ո՛վ քրիստոսասէր իշխան, անմոռաց յիշի՛ր քո ննջեցեալներին եւ խնա՛մք տար նրանց ողորմութեամբ ու Պատարագներով, որովհետեւ ննջեցեալների ակնկալութիւնն ու յոյսն Աստուած է, ինչպէս եւ մեր, որովհետեւ չկայ որեւէ մարդ, որ

կարողանայ առանց մեղքի դուրս գալ այս աշխարհից: Քանի որ ննջեցեալները մինչեւ եօթ սերունդ մնում են՝ պաղատելով Աստծուն եւ ակնկալելով, որ իրենց ազգից յայտնուի բարի, սուրբ եւ ողորմած մի մարդ կամ սուրբ քահանայ, որը կկանայ Պատարագներով եւ ողորմութեամբ ազատել իրենց տանջանքների սպառնալիքներից, որոնք պատրաստուած են իրենց համար: Իսկ ննջեցեալների յիշատակը, որը կատարում ենք ողորմութեամբ, Պատարագով եւ աղօթքով, հրեշտակը տանում է եւ դնում ննջեցեալների առաջ, որից նրանք յոյժ զուարճանում եւ ուրախանում են: Թող մեզ վկայ լինի այն մանուկը, որը մնաց Կղեմէս հայրապետի գերեզմանում, եւ երբ ժողովուրդը կատարեց տօնը եւ գնաց, ծովը ծածկեց եկեղեցին ու մանկանը: Մանկան մայրը կիրակի եւ շաբաթ օրերին քահանային տանում էր նաշիհ, գինի եւ ձէթ, որպէսզի Պատարագի ժամանակ ննջեցեալների հետ միասին յիշատակի մանկանը: Իսկ մանկան պահապան հրեշտակը գալիս, քահանայի ձեռքից վերցնում էր այդ ամէնը եւ տանում դնում երեխայի առաջ: Նա էլ վերցնելով՝ ուտում, խմում եւ բաւարարւում էր այսքանով մինչեւ յաջորդ շաբաթ:

Բայց ննջեցեալների յիշատակը արժան չէ կատարել զրկանքներից, տուգանքից, առեւտրից եւ կամ էլ գողութիւնից ստացուած միջոցներով. աւելի լաւ է այդպիսի բան չանել, որովհետեւ Աստուած կբարկանայ, չի ողորմի եւ չի ընդունի ընծան: Այլ պէտք է կատարել արդար վաստակից կամ սեփական իրաւացի ու արդար հասոյթից, որը մուտք է գործում գաւառից ու շէնից: Եւ Աստուած մէկին հարիւրապատիկ կպարգեւի ու շատ կուրախանայ, թէպէտեւ քո ննջեցեալներն են եւ ոչ թէ՝ օտար:

Քանզի գիտեմ, երբ տեղից տեղ էի շրջում մեր երկրում, հանդիպեցի բարեսէր կրօնաւորների, որոնք անյիշատակ ու ընդհանուր ննջեցեալներին բազում ծախսերով յիշատակում էին Պատարագներով ու ողորմութեամբ: Եւ Աստուած մեծ ուրախութեամբ ընդունում է այն եւ մէկի փոխարէն հարիւրը պարգեւում: Ինչպէս որ հոգին մեծ է, քան մարմինը, նմանապէս էլ առաւել է վարձքը նրա, ով ողորմութիւն է անում հոգու համար եւ ոչ թէ մարմնի: Եւ արդ, այս իմանալով՝ անմոռաց յիշենք ննջեցեալներին, որքան որ մեր կարողութիւնն է, որովհետեւ Աստուած ուրիշների միջոցով էլ մեզ համար կպատրաստի: Եւ Աստուած թող ծագեցնի Իր փառքի ու գիտութեան լոյսը քո հոգում, որ հոգ տանես քո եւ քո ննջեցեալների հոգիների համար, նաեւ ատես աշխարհի վայելքներն ու սիրես Աստուծոյ փառքը, անմոռաց պահես քո աչքերի առջեւ Աստծուն ու Նրա ահազդու Ատեանը, արդարների հանգիստն ու մեղաւորների տանջանքները, ինչպէս նաեւ բարին գործես այս կեանքում եւ հասնես երկնքի անճառ արքայութեանը Աստուծոյ բոլոր սիրելիների հետ քո ննջեցեալներով հանդերձ մեր Քրիստոս Աստուծոյ շնորհներով, Ով օրհնեալ է միշտ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զ. Բարի գործերի մասին, թէ որոնք են եւ որքան

Որովհետեւ փոքր-ինչ քննեցինք Վերին Երուսաղէմի եւ հոգիների կեանքի մասին աստուածային Գրքերում ամփոփուածը, թէ նրանք ինչպէս են մնում մինչեւ հասարակաց յարութեան օրը, այժմ հասել է ժամանակը, ո՛վ վսեմափայլ քրիստոսազօր իշխան, որ քննենք նաեւ, թէ ինչ են բարի [գործերը], որոնց մասին ասուած է Սուրբ Գրքում, եւ որոնք արքայութեան են արժանացնում դրանք գործողին, որպէսզի պահպանուի խօսքիս ամբողջական կարգը: Թէպէտեւ բոլորը՝ թէ՛ ծերերն ու երեխաները եւ թէ՛ քարոզողներն ու վարդապետները, ծանօթ են Աստուծոյ օրէնքներին եւ Նրա բարի պատուիրաններին:

Արդ, առաջին բարին Աստուած է՝ անսկիզբ ու անվախճան, որ ոչէից գոյացրեց բոլոր արարածներին: Բոլորն էլ բարի են աստուածային Գրքերի վկայութեամբ. **«Տրուած բարիքներն ու կատարեալ պարգեւները ի վերուստ են իջնում՝ լոյսի Հօրից»**[41]: Եւ՝ «Ողորմութեան շնորհիւ ստեղծեց բոլոր գոյացութիւնները»: Դրա համար էլ մարգարէները, նահապետներն ու սուրբ առաքեալները, որքան հասու եղան Հոգով, բարի անուններ ասացին Աստուծոյ մասին՝ արդար, ողորմած, հեզ, երկայնամիտ, քաղցր, բարերար, սուրբ, յստակ, ճշմարիտ, ստոյգ, գթած, Տէր, համբերող, կամարար, իշխան, Սաբաովթ, եւ այլ բազում բարի անուններով Սուրբ Գրքերում կոչեցին Աստծուն: Եւ մեր իսկ օգտի համար ասուեց այս, որ ճանաչենք մեր Արարչին ու Նրա ողորմած կամքը: Բայց ինչպէս Ինքն անճառ է, այնպէս էլ անհաս են Նրա բարիքները: Իսկ մեր իմացած ու գործած բարիքները Աստուծոյ բարիքների համեմատութեամբ այնպիսին են, ինչպէս չարը՝ բարու, կամ էլ խաւարը՝ լոյսի հանդէպ, որոնք վկայուած են Սուրբ Գրքերում: Իսկ այժմ ոչ թէ քննենք Անճառելին, այլ մեր կարողութեան չափով տեսնենք, թէ որոնք են այն բարիքները, որ գովաբանւում են Սուրբ Գրքերում: Արդ, առաջին եւ բարձրագոյն բարին այն է, որ մարդը հաւատայ, թէ Աստուած ստոյգ ճշմարիտ Աստուած է, Արարիչ բոլոր ստեղծուածների, անսկիզբ է, անվախճան ու ամէն ինչում անճառելի, սրանից յետոյ ակնկալի յարութիւն, դատաստան եւ բարու եւ չարի հատուցում: Եւ սրանից յետոյ միայն, եթէ բարիք գործի, այն կընդունի Աստուած, որովհետեւ առանց հաւատքի գործերը անօգուտ են մարդու համար, ինչպէս առանց հիմքի ոչ ոք չի կարող աշտարակ կառուցել, նաեւ աստուածային Գրքի վկայութեամբ. **«Հաւատն առանց գործերի մեռած է»**[42]: Որովհետեւ դեւերը նոյնպէս հաւատում ու սարսում են Աստծուց: Ինչպէս մեր Տէրն է ասում. «Շատերն Ինձ կասեն այն օրը. **«Տէ՛ր, Քո անունով դեւեր հանեցինք, մարգարէացանք ու քարոզեցինք», իսկ Ես կասեմ նրանց. «Հեռացէ՛ք Ինձնից, որովհետեւ չեմ ճանաչում ձեզ բարի գործերում»»**[43]:

Եւ արդարեւ, մարդը ճանաչւում է բարի գործերով, եթէ նա հաւատք ունի եւ աստուածապաշտ է: Իսկ երբ մէկը անյոյս մնում է մեղքերի մէջ եւ չարիք գործում, նրան բոլորն անաստուած են կոչում:

Դրա համար մենք պէտք է անկեղծօրէն հաւատանք Աստծուն, որ ստոյգ ճշմարիտ Աստուած է եւ բոլորի Դատաւորը: Եւ այսուհետեւ քաջութեամբ ջանանք առաքինութեան բոլոր գործերում, որպէսզի յետոյ կարողանանք երկու թեւերով, այսինքն՝ հաւատով ու բարեգործութեամբ, բարձրանալ եւ ելնել առ Աստուած: Քանզի արծիւը չի կարող մի թեւով երկինք բարձրանալ: Այդպէս էլ մարդս է կոչւում արծիւ թագաւորական, որովհետեւ պատկերակից է Աստծուն ու հոգով՝ հաւասար հրեշտակներին: Ուստի ամուր լինենք սուրբ հաւատքի եւ առաքինութեան գործերի մէջ: Եւ մեր հոգին, որ թագաւորական արծիւն է, մաքուր պահենք հաւատքով ու գործերով, որպէսզի կարողանանք երկու թեւով բարձրանալ առ Աստուած ու արժանանալ Աստուծոյ անբաւ բարիքներին Սուրբ Հոգու շնորհներով, Որն օրհնուած է Հօր եւ Որդու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Է. Աղօթքի մասին, որովհետեւ յոյժ ընդունելի է Աստծուն

Արդ, արիութեամբ եւ առանց ծուլութեան արուող աղօթքն անսահման բարիք է Աստուծոյ առջեւ, որովհետեւ գրուած է. «Դատաստանի օրը ծոյլերի ու պղերգների առջեւ կփակուի Աստուծոյ առագաստի դուռը»: Մեզ վկայութիւն թող լինի այն, որ բազում սուրբեր, բնակուելով լեռներում ու ծերպերում, որեւէ

բարի գործ չարեցին, այլ միայն աղօթքով ու սրբութեամբ մտան լոյսի առագաստ: Նաեւ առաջին մարդուն՝ Ադամին աղօթքի համար չափ չդրուեց, այլ միայն պահքի, որովհետեւ յայտնի է, որ Ադամն անդադար աղօթքի մէջ էր, ինչպէս անմարմինները, որովհետեւ Արարիչն Իր օրհնութեան ու փառաբանութեան համար ստեղծեց հրեշտակների զօրքերին, նոյնպէս էլ առաջին մարդուն, որ յայտնի լինէր Իր անսահման մեծութիւնն ու ողորմութիւնը. եւ Նրա թագաւորութիւնը ստեղծուածների կողմից օրհնաբանելով՝ գովւում ու փառաւորելով՝ երկրպագւում էր: Որովհետեւ առաջին մարդը դասակից էր հրեշտակներին, տեսնում էր Աստուծոյ փառքը, կառչած էր մնում Նրա յիշատակութիւնից եւ կենաց դրախտում երկրպագելով փառաբանում էր Նրա Աստուածութիւնը: Մեզ եւս անհրաժեշտ է անդադար աղօթել, որովհետեւ մեր Տէրը սահմանեց՝ ասելով. **«Արթո՛ւն կացէք եւ ամենայն ժամ աղօթեցէ՛ք»**[44]: Եւ կրկին Աւետարանում գրուած է. **«Յիսուսը բարձրացաւ լեռը՝ աղօթելու»**[45]: Նա ոչնչի կարիք չունէր, այլ մեզ համար էր անում այդ, որ սովորենք Իրենից: Առաքեալն ասում է. **«Յաճա՛խ աղօթեցէք»**[46], իսկ մարգարէն գոչում է. **«Գիշերուայ մէջ արթնացայ ու օրհնեցի Քեզ, Տէ՛ր, որովհետեւ արդարադատ ես»**[47]: Աղօթքն այնպիսի բարիք է, որ մարդուն կցորդ ու հաւասար է դարձնում հրեշտակներին:

Աստուած խիստ հարկադրանքով մեզնից փառաբանութիւն եւ երկրպագութիւն է պահանջում, ինչպէս թագաւորները՝ իրենց զօրքերից: Յիրաւի, ամէն բարեգործութիւնից առաջ մեզնից, ինչպէս նաեւ բոլորից, խնդրում է աղօթք եւ երկրպագութիւն: Տե՛ս, թէ որքան մեծ է աղօթքի օգուտը, որովհետեւ Աստծուն ուղղուած աղօթքի միջոցով, սուրբերի բարեխօսութեամբ շատ որոգայթներ ու պատուհասներ են խափանւում: Դեւերն էլ են հալածւում աղօթքով. ինչպէս Տէրն է պատուիրում. **«Աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չընկնէք»**[48]: Սուրբերի վարքերից երեւում է, որ բոլորն էլ աղօթեցին: Սակայն ժամանակը չի բաւականացնի՝ հերթով ցոյց տալու, թէ որ սուրբն ինչ աղօթք արեց, որովհետեւ նրանք շատ են, բայց յիշելով մի քանիսին՝ կճանաչենք նաեւ մնացածներին:

Եւ այսպէս՝ Մովսէսն աղօթեց Սինա լեռան վրայ, Դանիէլը, Եզեկիէլն ու երեք մանուկները՝ Բաբելոնում: Աբրահամը, Իսահակը, Յակոբը, Սամուէլը, Դաւիթը, Եզեկիան, Եղիան եւ մնացած մարգարէներն ու բարի թագաւորները նոյնպէս աղօթեցին: Յայտնի է, որ առաքեալները, ինչպէս նաեւ հայրապետներն ու բոլոր մարտիրոսները, աղօթում էին անդադար, իսկ հրեշտակները մեծ ցանկութեամբ միանում էին նրանց՝ Աստծուն ուղղած օրհնաբանութիւններին:

Այս էլ իմանանք, որ նա, ով աղօթելիս մարմնաւոր փառք, մեծութիւն կամ հարստութիւն է խնդրում Աստծուց, այնպիսին բարկացնում է Աստծուն եւ չի հաշտեցնում: Նա նման է այն ապուշ կտրած խելագարին, որը գնաց ողորմած թագաւորի մօտ եւ, արհամարհելով պայծառ ոսկին ու լուսաւոր մարգարիտը, ժահահոտ աղբ խնդրեց նրանից: Այս պատճառով էլ Տէրն ասաց. **«Աղօթելիս հեթանոսների պէս շատախօս մի՛ եղէք»**[49]: Քանզի նրանք յարութեան յոյս չունեն եւ այս կեանքի մասին են միայն հոգում ու խնդրում: Իսկ դուք արքայութիւն փնտրէք, որովհետեւ երկնաւոր Հայրը գիտի ձեր մարմնաւոր պէտքերը եւ ձեզ համար կպատրաստի կերակուր, զգեստ եւ անհրաժեշտ ամէն բան:

Աղօթելու մէջ կայ նաեւ այլ մեծագոյն խորհուրդ: Այսպէս, ով փարթամանում է՝ իր ունեցուածքը միայն իր մարմնի կարիքների համար ծախսելով, չունենալով սէր ու ողորմութիւն, այսպիսին կդատուի անողորմների հետ: Նմանապէս Աստուծոյ կողմից պիտի դատապարտուի նա, ով միայն իր համար է աղօթում, ինչպէս նաեւ պիտի պատժուի նա, ով գիտութիւն ունի եւ չի ուսուցանում ուրիշներին, չի խրատում տգէտներին, այլ միայն ինքն իրեն է ուղ-

ղում դէպի բարին: Չկայ մի բարիք, որ կարողանայ ուրախացնել Աստծուն այնպէս, ինչպէս այն, որ ընդհանուրին են բարիք գործում, որովհետեւ Աստուած Ինքն էլ բարեգործն է բոլորի՝ մեծամեծերի եւ փոքրերի, արդարների եւ մեղաւորների՝ [պարգեւելով] օդ, լոյս, անձրեւ ու ջուր, ինչպէս նաեւ սուրբ Աւազանի շնորհներ ու հաւատք: Նմանապէս Աստուած կամենում եւ ուրախանում է, երբ մենք աղօթում ենք ամբողջ աշխարհի համար՝ արդարների ու մեղաւորների, կենդանիների ու ննջեցեալների, հեռաւորների ու մերձաւորների, առաւել եւս նրանց համար, ովքեր չարիք են կամենում կամ գործում մեր նկատմամբ: Աղօթքի միջոցով հանենք քէնն ու ոխը մեր մտքից եւ յետոյ միայն Աստծուց մեր յանցանքների թողութիւն խնդրենք: Արդ, սա է ընդունելի եւ Աստուծոյ կամքին հաճելի աղօթքը: Ով ըստ իր կարողութեան այսպէս է անում, ինչպէս եւ նա, ով ողորմած է եւ իմաստուն խրատով մեղքերից հեռացնում է մեղաւոր ու տգէտ մարդուն, նմանւում է Աստծուն: Եւ արդ, մեծ յոյս է ներշնչում աղօթքի վիճակը, որովհետեւ աղօթքով մարդ զրուցում է Աստուծոյ հետ եւ հաւասարւում հրեշտակներին: Առաւել եւս այն ժամանակ, երբ ջերմ, արծաթափայլ արտասուքը բխելով՝ իջնում, լուանում է աչքերն ու մորուքը եւ միեւնոյն ժամանակ ջնջում մարդու ներսում եղած մեղքերի շարաւը: Եւ սիրտն սկսում է փղձկալ, ճմլուել եւ բորբոքուել Աստուծոյ սիրոյ կրակով: Ապա միտքը, համբառնալով առ Աստուած, տեսնում է հանդերձեալ աշխարհն ու արդարների հանգիստը, յիշում է մարդկային ցեղի կործանումը, երբ զրկուեցինք հայրենի ժառանգութիւնից, մտաբերում է նաեւ իր անձի մեղքերն ու յանցանքները, նաեւ բոլոր մեղքերը, որոնք գործւում են աշխարհում: Սիրելի՛, ահա երկրորդ Աւազանը, ահա աղօթքի քաղցր ճաշակումն ու ցանկալի թմրութիւնը. այն նման է սերովբէների թմրութեանն ու քաղցր ճաշակմանը, որն ունենում են Աստուածութեան բուրմունքից: Ո՞վ կդիմանա այն երանելի պահին, երբ Աստուծոյ այս շնորհներից մի նշոյլ հանդիպի կամ պատահի իրեն: Երկինքն իր լուսատուներով եւ աշխարհն իր բարիքներով չեն կարող հաւասարուել այդ վայրկեանին: Ուստի, աղաչո՛ւմ եմ՝ չծուլանանք, այլ արիաբար աղօթենք միշտ՝ օր ու գիշեր, քուն թէ արթուն, քայլելիս թէ նստած ժամանակ, առաւօտեան թէ երեկոյեան, աշխատելիս թէ հանգստանալիս, այսինքն՝ միշտ օրհնենք եւ փառաբանենք Աստծուն, որովհետեւ, ո՞վ գիտէ, գուցէ աստուածային այդ շնորհներից մեզ էլ պատահի մի ցանկալի պահ, երբ ջերմ արտասուքը կլուանայ մեր հոգու վէրքերի թարախը եւ լոյսի իւղ կդառնայ մեր լապտերներում:

Բայց դարձեալ՝ առաւել եւս ճանաչենք այն բարձրագոյն խորհուրդը, երբ Պատարագի ժամանակ սուրբ հացը, բարձրանալով Սեղան, ճշմարտապէս դառնում է Աստուծոյ Մարմին, իսկ գինին՝ սուրբ Արիւն: Այնժամ առաւելապէս պէտք է զգուշանալ, քաջանալ եւ արիութեամբ աղօթել Աստուծոյ Որդու՝ խաչի վրայ անմահ զենման առջեւ, որը տեղի է ունենում սուրբ Պատարագի ժամանակ: Պէտք է բանալ հոգու աչքերը, տեսնել եւ իմանալ, որ հացն ու գինին, որ դրուած են քահանայի առջեւ՝ սուրբ սեղանի վրայ, այն Մարմինն է, Որն անճառելի կերպով անչափօթ միացաւ Կոյսի որովայնում Բան Աստուծոյ հետ, Աստուածացաւ, եւ Բան Աստուած նոյն Մարմնով խաչ բարձրացաւ մարդկային ցեղի համար, տարածեց աշխարհաստեղծ Իր բազուկները եւ խոցուեց աստուածային կողից, «Էլի՛, էլի՛»[50],- ձայնեց Հօրը, եւ աշխարհի հիմքերը դողացին, սարսեցին ու թաքնուեցին սանդարամետները, եւ ննջեցեալները, յարութիւն առնելով, մտան Երուսաղէմ եւ իրենց ծանօթներին ասացին. «Աւա՜ղ եւ վա՛յ Երուսաղէմի հիմքերին, որովհետեւ յաւիտեան Անմահին խաչեցիք»:

Արդ, այս ամէնն աչքիդ առջե՛ւ ունեցիր եւ արթո՛ւն պահիր

խորհուրդներդ, ընդունի՛ր, թէ այսօր այդ Օրն է, եկեղեցին Երուսաղէմն է, բեմը՝ Գողգոթան, այս քառանկիւն սեղանը՝ քառաթեւ սուրբ խաչը, հացն ու գինին, որ դրուած են բաժակի մէջ, Ինքը՝ Աստուած է՝ մարմնով խաչի վրայ: Ով առանց երկբայելու հաւատայ այս ամէնին, Աստուած կընակուի նրա մէջ, իսկ նա՝ Աստուծոյ մէջ: Եւ այդժամ Պատարագի սուրբ խորհուրդի առջեւ ով հոգեւոր որեւէ խնդրանքով դիմի, առաւել շատ կստանայ Աստծուց եւ Նրա խաչելութեան շնորհներից, քան բազում ժամանակ աղօթելով: Պէտք է ներկա՛յ լինել մինչեւ սուրբ Պատարագի աւարտը, նաեւ մասնակցե՛լ այն աղօթքներին, որոնք կատարւում են գիշերային սուրբ ժամերգութեան ժամանակ:

Սակայն մարդասպան ու գող սատանան, իմանալով, թէ ինչ անճառելի պարգեւներ է տալիս մեզ Աստուած Պատարագի միջոցին արուող աղօթքներով, ջանում է ձանձրացնել, ծուլացնել եւ թոյլ չտալ մեզ գնալ այնտեղ աղօթելու: Եւ այդ կարճ ժամանակահատուածում գրգռում ու յորդորում է մեզ մարմնական զբաղուածութեան ու անպէտք գործերի, որպէսզի զրկի Աստուծոյ Որդու զենման անճառելի խորհրդից եւ արհամարհել տայ Քրիստոսի խաչելութիւնը:

Գրուած է նաեւ. «Նզովեա՛լ է այնպիսին, ով չափահաս է տարիքով եւ առողջ է մարմնով եւ շաբաթ կամ կիրակի օրերին Պատարագի արձակումից առաջ կերակուր է ճաշակում»: Մեծագոյն չարիք է նաեւ, երբ առանց անհրաժեշտութան, սոսկ ծուլութեան պատճառով են այդպէս անում: Արդ, որքան հնարաւոր է, դիմանանք Պատարագի ժամանակ եւ աղօթենք խաչեալին, որպէսզի որեւէ այլ գործի եւ կամ փոքր-ինչ շահի պատճառով չզրկուենք աստուածային սուրբ եւ անմահ զենման անասելի բարիքներից: Աստուածային Գրքերն ասում են. «Մահացածների ոսկորներն, ինչպէս նաեւ Աստուծոյ ձեռքում գտնուող հոգիները, սուրբ

Պատարագի ընթացքում ներծծելով Քրիստոսի անապական Արեան ցողը, դալարում են»: Ահա՛ պատճառն այս է, որ աղօթում ու աղաչում եմ՝ չծուլանանք եւ Պատարագի աւարտից շուտ չհեռանանք, որպէսզի չզրկուենք Աստուծոյ անսահման շնորհներից: Այլապէս կգայ մեր կեանքի թշնամի սատանան եւ տագնապեցնելով՝ նեղսրտութեան մէջ կդցի, թոյլ չի տայ մեզ փոքր-ինչ համբերել ու արժանանալ Աստուծոյ անբաւ պարգեւներին:

Ասւում է, թէ՝ «Ինչպէս այն մարդը, որ սերմանում է ցորեն, հնձելով՝ հաւաքում, իսկ յետոյ խելագարուած այրում հրով, նոյնպէս էլ գիշերային պաշտամունքն իզուր անցաւ, որովհետեւ տանը մնաց առանց որեւէ լուրջ պատճառի, չգնաց Պատարագի եւ դեգերեց մինչեւ արարողութեան աւարտը»: Անճառելիների տեսնող Պօղոսն ասում է. ***«եթէ մէկն արհամարհէր Մովսիսական օրէնքը, ապա մահուան կդատապարտուէր կրակով կամ քարկոծմամբ»***[51]*: Իսկ հիմա ինչպիսի՞ պատժի է արժանի նա, ով արհամարհում է Աստուծոյ Որդուն, թէպէտ այդ քամահրանքը տգիտութիւնից է: Քանզի եթէ իմաստութեամբ խորհէր ու գիտութեամբ ճանաչէր, թէ Ո՞վ է պատարագւում, կամ ի՞նչ պատճառով է զենւում Անմահը, ապա այդ կարճ ժամանակամիջոցում թոյլ մարմնով ու մեղկ խորհրդով չէր մնայ չար զբաղմունքի մէջ ու չէր զրկուի Աստուծոյ շնորհներից: Իսկ սա առաւել չար մեղք է: Շատերը կան, որ պարապ ու անգործ են եւ չեն յաճախում [Պատարագի], շատերն էլ գալիս են, եւ երբ քահանան ընթերցում է Աւետարանը, դուրս են գալիս՝ կարծելով, թէ աւարտուեց Պատարագի արարողութիւնը, չիմանալով սակայն, որ քահանան դեռեւս Պատարագի խորհուրդի մէջ չի էլ մտել: Եւ երբ ասւում է «Հաւատամքը», առանց որեւէ լուրջ պատճառի թիկունք են դարձնում խաչեալին: Ապա քահանան սկսում է խորհուրդի կատարումը, իսկ նա ունայն հեռանում է՝ կարծելով, թէ մասնակցեց աղօթքների եւ Աստուծոյ Որդու զեն-*

ման ճաշակմանը: Եւ դրանից յետոյ քահանան շրջւում է եւ խաչակնքում եկեղեցում եւ եկեղեցու դռան մօտ՝ գաւիթում հաւաքուած ժողովրդին եւ աղաչում մարմնով խաչուած Աստծուն, որ եկեղեցում գտնուողներին հաղորդակից դարձնի Իր Խաչի չարչարանքներին եւ դռան մօտ աղօթողների խնդրանքները կատարի: Իսկ նա, ով աւելի վաղ հեռացաւ եւ փոքր-ինչ չհամբերեց, զրկուեց այս բարիքներից: Յիրաւի մեր կենարար Տէրն ու Առաջնորդն ասաց. ***«Ով մինչեւ վերջ համբերի, նա կապրի»***[52]*:*

Արդ, եթէ արքան կամ իշխանը որեւէ գործով զբաղուած կամ կանգնած լինեն, ոչ թէ նստած, ո՞վ կհամարձակուի նրանց ներկայութեամբ անամօթաբար նստել:

Ահա՛ քեզ օրինակներ, ո՛վ ողորմելի թշուառական, յիմար եւ անմի՛տ մարդ, որովհետեւ Քրիստոս խաչւում է քեզ համար, իսկ դու նստած ես անհոգ. անմահ Թագաւորը՝ մարմնացեալ Աստուած, չարչարւում է, եւ լոյսի Ճառագայթը կենսագործում է արարածներին, իսկ դու կամաւոր նստած ես խաւարում: Բոցեղէն սերովբէներն ու բազմաչեայ քերովբէները սարսափած դողում են եւ պար բռնած՝ քաղցր ձայնով փառաւորում սուրբ սեղանի վրայ մարմնաւորուած Աստծուն, իսկ դու երազ կամ ստուեր ես համարում ահագին Խորհուրդը:

Ո՞վ կարող է ասել չար վիշապի խաբէութեան չափի մասին, կամ՝ թէ քանի-քանի մեղքերով է կամենում յիմարացնել ու զրկել մեզ անճառելի եւ երանելի կեանքից: Եւ արդ, հայելով՝ խղճանք մեր անձը եւ բացենք մեր հոգու աչքը՝ ըստ առաքեալի խօսքի. «Բարի վարքով հաշտուենք Աստուծոյ հետ»: Աղօթենք անդադար, որովհետեւ սա է անուշահոտ խունկը, որ ծխւում է Աստուծոյ առաջ ոսկէ բուրվառով, որն էլ հաճելի է Աստծուն: Աղօթքով միշտ բախենք Արարչի գթառատութեան դուռը, եւ Նա կբացի Իր անմահ առագաստի դուռը: Աղօթքը սանդուղք է երկրից մինչեւ

երկինք, լոյս է խաւար ճանապարհին, մնայուն պաշար է մշտնջենաւոր կեանքի համար: Ուստի ջանա՛նք սուրբ մտքով արիաբար աղօթել այս կեանքում, որպէսզի սրանից յետոյ արժանանանք անպատում բարիքներին ու յաւիտենական կեանքին մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրութեամբ, Որով եւ Որի հետ էլ օրհնեալ է ամենակալ Հայրը, կենդանարար ու ազատող Սուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ը. Պահեցողութեան մասին, թէ որքան բարի եւ ընդունելի է Աստծուն

Եւ արդ, մարդկանցից ո՞վ կարող է իմանալ եւ ճառել, թէ որքա՛ն բարի է պահքը Ադամի որդիների համար, եթէ սիրում են այն: Միայն Աստծուն է յայտնի այն մեծութիւնն ու շահը, որ պահքից լինելու էր մարդուն: Այս պատճառով էր, որ Ադամին տուեց առաջին պատուիրանը՝ ասելով. ***«Մի՛ ճաշակիր ծառի պտղից»***[53]*: Քանզի դրախտում Ադամը հրեշտակների պէս սակաւապէտ էր, եւ նրա կենակիցը պահքն էր: Բայց Ադամը չհաւատաց Աստուծոյ պատուիրանին, որովհետեւ չգիտէր, թէ որքան բարի բան է պահքը, եւ ճաշակելով պտուղը՝ արտաքսուեց կենաց դրախտից: Եւ միայն Ադամից յետոյ եօթերորդը՝ Ենովքը, իր նախաստեղծ հօրից լսելով. «Ուտելիքն ինձ զրկեց լուսեղէն փառքերից ու դրախտից», զարմացաւ եւ որդեծնութիւնից յետոյ երկու հարիւր տարի իրեն հեռու պահեց մրգերից ու այլ ցանկալի կերակուրներից, ինչպէս նաեւ ընդհանրապէս չհամարձակուեց նայել երկինք եւ Ադամի փոխարէն մտաւ դրախտ: Այս պատճառով էլ աստուածային Գրքերով մեզ հրամայուեց պնդութեամբ պահել, որ մտնենք երկնքի երանութիւնը, որից զրկուեց Ադամը կերակուրի պատճառով: Բայց նրանք, ովքեր ծառայ են փորին ու որովայնին, տէրունական ու*

առաքելական խօսքն ընդունում են ի կորուստ իրենց անձերի, որովհետեւ չգիտեն, թէ Տէրն ինչ հանգամանքներում ասաց. ***«Կերակուրը չէ, որ պղծում է մարդուն»***[54], *իսկ առաքեալն էլ ասաց.* ***«Ուտելիքը չէ, որ մեզ կանգնեցնելու է Աստուծոյ առջեւ»***[55]*: Եւ այս խօսքերով կործանում են շատերին, որովհետեւ ըստ լսելիքի եւ ախորժակի մորմոքի հեշտութեամբ քարոզելով՝ ընկղմում են տգէտներին ու որովայնամոլներին առասպելախառն զրոյցների մէջ: Այսպիսի որովայնապաշտների մասին է գրում սուրբ առաքեալը.* ***«Ողբալով դիմում եմ Քրիստոսի Խաչի թշնամիներին, որոնք աստուածացրին որովայնը ու իրենց փառքն համարեցին որովայնի արտաթորանքը եւ ամօթի գարշահոտութիւնը»***[56]*: Եւ առաքեալը դիմում է որովայնամոլներին ու հեշտաքարոզ վարդապետներին, որոնք հեշտութեամբ թիւրում էին այն ամէնը, ինչ լուսաւորում էին սուրբ առաքեալները՝ անուանելով նրանց* ***«շներ ու չար մշակներ»***[57]*:*

Անսահման չարիք է որովայնամոլութիւնը: Նայի՛ր եւ տե՛ս, ո՛վ մարդ, թէ ինչպէս կործանուեց Ադամը, եւ մի՛ հեշտացիր եւ մի՛ կործանիր ուրիշներին: Մի՞թէ դու աւելին գիտես Աստծուց, որ Ադամին ասաց. ***«Մի՛ կեր»***[58], *կամ աւելի ես ուսանել, քան բոլոր սուրբերը, որոնք պատուիրեցին մեզ պահել քաջութեամբ:*

Արդ, սուրբ մարգարէները պահեցին եւ արժանացան հրեշտակների տեսութեանը: Յանուն Աստուծոյ պահեցին նաեւ առաքեալները եւ ապա արբեցին Սուրբ Հոգու բխումով: Հետեւի՛ր Եղիային, Մովսէսին եւ Յովհաննէսին, թէ նրանք ինչպէս տեսան Աստծուն՝ ուտելո՞վ, թէ՞ պահելով: Սովորիր հայրապետների, մարտիրոսների եւ միանձանց վարքից, որովհետեւ պահքն էր նրանց պարիսպն ու ամրութիւնը: Եւ այս բանը քաջ գիտեն ամենքը: Իսկ ով նայելով տէրունական խօսքին, թէ՝ ***«Կերակուրը չի պղծում մարդուն»***[59] *կամ առաքեալի ասածին, թէ՝* ***«Կերակուրը չէ, որ մարդուն կկանգնեցնի Աստուծոյ առջեւ»***[60]*, սակայն չընկալելով խօսքերի իմաստը, թէ ինչ նպատակով ասուեցին, միայն խօսքի արտաքին կողմին է նայում, տգիտաբար քարոզում է եւ ասում.* ***«Կերակուրը չի պղծում մարդուն»***[61]*՝ վկայաբերելով Քրիստոսի խօսքը, թող ուտի մուկ, մեռելոտի, զազրատեսակ աղբ եւ համարի, թէ ինքը Աստուծոյ անարատ ծառան է, որովհետեւ ունի սիրտ եւ հաստատուն հաւատք եւ չի խորշում կերակուրներից: Այդ դէպքում առաքեալն ինչո՞ւ գրեց.* ***«Բազում անգամ եղայ պահքի մէջ»***[62]*, եւ Նիկիայի նոր սուրբ ժողովում եւ այլուր [ինչո՞ւ ասուեց]. «Ով պարարտ կերակուր ուտի աղուհացի եւ միւս խորհրդաւոր պահքերի օրերին, նզովեա՛լ լինի»: Արդ, մի՞թէ բոլոր սուրբերը խելագարուել էին կամ չէին գիտակցում, թէ ինչ են պատուիրում մեզ Գրքերով: Քա՛ւ լիցի, որովհետեւ Աստծուց սովորեցին պահքի շահը, որը սահմանուեց Ադամի համար: Եւ ով չլսի պահքերին վերաբերուող հրամանները, կարժանանայ այն բանին, ինչին արժանացաւ նրա մայր Եւան: Արդ, ինչպէս ծառերն ու բոյսերը, որոնք ջրերի եզրերին են, կանաչագեղ, սաղարթախիտ եւ առատ են պտուղներով, նոյնպէս էլ մարմինը, երբ չափից աւելի կերակուրներով ու ըմպելիքներով պարարտանալով՝ փքւում է գիրութեամբ, չարաչար աճեցնում է պիղծ ախտեր, մորմոքուելով գրգռւում է եւ առանց երկիւղելու շաղախւում աղտեղութեամբ: Եւ ոչ միայն մտաբերում է կանանց, որը բնութեան օրէնքով է նախատեսուած, այլեւ ձեռնամուխ է լինում տղամարդկանց եւ անասունների հետ զուգաւորուելու ախտին, որովհետեւ սա պոռնկական չար դեւի գործն է: Սակայն ինչպէս բոյսերն ու ծառերը ջրի պակասից ցամաքում ու չորանում են, նմանապէս էլ մարմինը, որ պարսպուած է պահքով, նրա ախտերը, մշտապէս նուազելով, ցամաքում են եւ անուժ դառնում, թէպէտեւ մշտապէս յորդորւում են պոռնկական դեւի կողմից:*

Արդ, արբեցողների տունը դեւերի բնակարան ու հանգստա-

վայր է, որովհետեւ այնտեղ անառակ կանայք լկտիաբար պարում են եւ վատթար երգերով խնջոյք անում: Իսկ պահեցողների տունը հրեշտակների տուն է եւ սուրբերի հանգստարան, որովհետեւ այնտեղ սաղմոսերգութիւններով փառաւորւում է Աստուած: Ըստ Աստուծոյ բարձրագոյն հրամանի՝ պահքը դեւերի հալածիչն է: Պահքը Աստուծոյ կոչականն է եւ հրեշտակների ցնծութիւնը: Պահքը մեղքերի լուացումն է եւ բարեպաշտութիւն սերմանողը: Պահքը հոգու պայծառ ջահն է, լուսաւոր կանթեղը, մարմնի առողջութիւնն ու երկարակեցութիւնը՝ վկայուած բժիշկների եւ փորձուած բոլոր մարդկանց կողմից: Պահքը Աստծուց մեզ պարգեւուած հոգեւոր սուր եւ երբէք չբթացող զէնք է՝ ընդդէմ թշնամու: Պահքը հրեշտակների գործն է եւ Եկեղեցու պանծանքը: Պահքը ամուր աշտարակ եւ լուսաւոր սանդուղք է՝ առ Աստուած բարձրանալու համար: Պահքը լայնատարած կամուրջ է, նաեւ ճանապարհի ելք՝ դէպի երկինք տանող: Պահքն ընտրուած է Աստծու, գովուած եւ վկայուած բոլոր սուրբերի կողմից:

Ուստի, սիրելինե՛րս, մեզ պէտք է պնդութեամբ պահք պահել. նմանուելով մեր սուրբ հայրերին՝ սպանե՛նք որովայնն ու մեր իսկ մարմնի մեղքերի անդամները: Սակայն պահոց կերակուրն էլ պարկեշտութեամբ պէտք է գործածուի, որովհետեւ շատ կերակուրը նեղում է որովայնը, որը ծանրացած հեծում ու շրջւում է այս ու այն կողմ: Գրուած է. «Մի՛ պարարտացրու որովայնդ, [այլ] միայն հացով ու ջրով [բաւարարուիր]»: Իսկ Աստուածաբանն ասում է. «Ուտելիս խնայի՛ր հացը», ինչպէս նաեւ՝ «Շատ փայտ մի՛ դիզիր կրակի վրայ եւ շատ կերակուր մի՛ պատրաստիր գազանի համար, որը մարմինդ է, որ զօրանալով՝ պատառ-պատառ չանի հոգիդ եւ ցանկութեան հրով չայրի քեզ»: Աստուած մարդուն հրամայեց բաւականանալ պտուղներով, սերմերով ու բանջարեղէնով, սակայն, երբ գործուեց յանցանքը, մարդիկ մեծ ջանքերով ու բազում հնարներով ստեղծեցին համեղ կերակուրներ: Արդ, երբ անասունը գիրանում է, սկսում է պոզահարել իր տիրոջը, որովհետեւ բազմացել են նրա ցանկութիւնները: Իսկ մարդու ճարպոտելն ու գիրանալը ստիպում են, որ ախտը բռնադատի նրան, եւ նա անասուններից աւելի վատթար տնկի պոզերն Աստուծոյ դէմ: Այս է պատճառը, որ մարգարէն գրում է. «Մի՛ եղէք ձիու պէս իգասէր ու աղտեղի»[63]: Դրա համար էլ, երբ Աստուած կամենում է խրատել մարդկանց, որոնք լիանում ու գիրանում են բազում կերակուրներից, որ հողն Աստուծոյ հրամանով պարգեւում է նրանց, բերում է երաշտ, սով, սննդի նուազութիւն ու այլեւայլ պատուհասներ, որպէսզի մարդիկ քաղցելով՝ ակամայից դառնան ու յիշեն իրենց Արարչին: Նոյի ապրած դարաշրջանում սոդոմցիների մօտ կերակուրների առատութիւնն ու պարարտութիւնն էր, որ այնչափ աճեցրեց ու ծաղկեցրեց ախտը: Ահա՛ այստեղի՛ց ճանաչիր պահքի անսահման շնորհներն ու մեծութիւնը, որովհետեւ եթէ նախաստեղծ մարդը պահէր եւ չճաշակէր պտղից, դրախտում կլինէր որդեծնութիւնը պարկեշտութեամբ եւ մարդու կամքով, որովհետեւ նրան չէր բռնադատի ախտը, ինչպէս այժմ, այլ Աստուծոյ օրհնութեան համար կամովին եւ ոչ ակամայ իր անձի փոխարէն կծնէր զաւակներ եւ, ապաշխարելով անմահ կդառնար, այնտեղից կվերափոխուէր անմարմինների անճառելի կեանքը, այսինքն՝ ընկած հրեշտակների տեղը՝ մօտ սերովբէների խորանին: Նաեւ կուսութիւնը յօժար կամքով, առանց ջանքի կպահէր դրախտում, որովհետեւ նրան չէր բռնադատի ախտը, ինչպէս հիմա, որ մորմոքում, հեշտութեամբ բորբոքում եւ, ցանկութեան հրով բոցավառելով, այրում է երիկամները՝ յորդորուելով պոռնկութեան դեւից, վկայութեամբ Գրքի, թէ՝ **«Հուր վառուեց իմ խորհուրդներում»**[64]:

Ասածս, որ եթէ մարդիկ սնուէին դրախտում, կբարձրանային երկինք, վկայում են կոյսերից՝ Եղիան, իսկ ամուսնացածներից՝

Ենովքը: Որովհետեւ Ենովքը ծնեց որդիներ, եւ ապաշխարելով՝ անմահ [երկինք] վերափոխուեց, իսկ Եղիան կուսութեամբ ճգնեց եւ անմահ երկինք բարձրացաւ: Նոյնը քննելով՝ Գամիրքի սիւն Բարսեղը վկայում, իսկ մեծն Գրիգոր Աստուածաբանը գոչում է՝ ասելով. «Եթէ մնացած լինէինք դրախտում այնպէս, ինչպէս Աստուած մեզ ստեղծեց, ապա աստուածացած կլինէինք եւ Աստծուն մերձեցած»:

Արդ, որ բազմահնար է բանսարկուն եւ խաբող, տե՛ս եւ ճանաչի՛ր առաջին մարդու անկումից, որովհետեւ սատանան բնական գեղեցկութիւնից առաւել էր պտուղը փայլեցնում կոյս Եւայի աչքի առջեւ, լկում էր նրա որովայնը եւ նեղում ցանկութեամբ, մինչեւ որ սա վերցրեց, կերաւ եւ զրկուեց փառքից: Այսպէս որովայնամոլութեամբ եւ արբեցութեամբ բանսարկուն նեղում է ամէն մէկին. առաւել է գեղեցկացնում կերակուրները, քան հարկաւոր է բնական քաղցն յագեցնելու համար, լկում է որովայնն ու նեղում է մարդուն քաղցրահամ կերակուրների եւ ըմպելիքների ցանկութեամբ՝ դարձնելով անժուժկալ, որովհետեւ սատանան ունի կերակուրների ցանկութիւն, բայց մարմին չունի, որի միջոցով կերակրուի: Նա գալիս է իր շնական դեւերով, մեր մէջ սերմանում է որովայնամոլութիւն եւ ուրախութեամբ կերակրւում նրա հիւթերից: Այսպէս գալիս եւ կերակրւում է ամէն [տեսակ] աղտեղութեամբ ու մեղքերով, որոնք մենք մարմնով գործում ենք աշխարհում: Եւ այս անսահման չարիքը, որը գործել է տալիս սատանան, քաջ ծանօթ էր անճառելիների տեսնող Պօղոսին, որն այդ մասին ասում է. **«Կերակուրը՝ պորտից եւ պորտը՝ կերակուրից»**[65], իսկ Աստուած կխափանի թէ՛ այս եւ թէ՛ այն:

Եւ արդ, որովհետեւ այսքան մեծ կործանման հասցրեց պտղի ճաշակումը, եւ այսպիսի մեծ բարիքների առիթ է պահքը, Աստուծոյ սիրելինե՛ր, եկէք ջանանք քաջութեա՛մբ պահել եւ ամենայն ժամ նրանո՛վ պսակենք մեր ճակատը, այն որպէս առաջին պարիսպ

կանգնեցնենք ընդդէմ պոռնկութեան չար դեւի եւ նրանո՛վ հալածենք չարիքն ու մարմնական բոլոր ախտերը: Անսասա՛ն լինենք պահքի խորհուրդի ժամանակ՝ այս կեանքում չարչարելով եւ ցամաքեցնելով մեր մարմինը, հեռանալով ցանկալի կերակուրներից եւ չափաւորը մեզ բաւարար համարելով, որպէսզի անխոնջ կենցաղավարութեամբ եւ հրեշտականման կեանքով ապրենք այս աշխարհում, իսկ հանդերձեալում, որ գալու է, արժանանանք անպակաս լիութեանը եւ անճառ միութեանը, մշտնջենաւոր ուրախութեանը եւ անկարօտ կեանքին բոլոր ընտրեալ արդարների հետ ամենակալ Հօր շնորհներով ու ողորմութեամբ, Միածին Որդու գթասիրութեամբ եւ Սուրբ Հոգու խնամքով եւ առաջնորդութեամբ, որ օրհնուած եւ փառաւորուած են այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Թ. Աղքատութեան եւ խոնարհութեան մասին

Կամաւոր աղքատութիւնը շատ գովելի է: Տէրը Աւետարանում երանելի է համարում նրանց, ովքեր հեռանում են աշխարհից եւ նրա բոլոր ախտերից եւ նմանւում են անինչք եւ անվարձ Աստուծոյ Որդուն: Ինչպէս վկայուած է Գրքում, շատերը դարձան կամաւոր աղքատներ: Եւ որովհետեւ ծանր է աղքատութեան բեռն ու լուծը, ինչպէս երկաթէ հնոց, այս պատճառով է ասւում, թէ աւելի լաւ է աղքատանալ, քան աղքատներին կերակրել: Բայց բոլոր աղքատներին չէ, որ Տէրը երանելի է համարում, այլ կամաւոր աղքատներին եւ նրան, ով հեռանում է բոլոր մեղքերից: Որովհետեւ շատ աղքատներ կան, որ գարշելի մեղքերով աներկիւղ ապրում են աշխարհում եւ աղքատացել են անյագ շնութեան, անառակ արբեցութեան պատճառով եւ կամ էլ գողեր ու աւազակներ էին, եւ իշխանների ու թագաւորի գործակալները կողոպտեցին նրանց, եւ նրանք մնացին մեղքերի մէջ առանց զղջումի: Ահա՛ եղկելիներ եւ

ոչ թէ երանելիներ: Որովհետեւ շատերն են, որ սաստիկ տանջւում են այստեղ, իսկ այնտեղ աւելի շատ պիտի տանջուեն: Նոյնպէս եւ ոչ բոլոր մեծատուններն են, որ պիտի տանջուեն, թէպէտ Տէրն ասում է. **«Վա՜յ ձեզ, մեծատուննե՛ր, որովհետեւ ձեր մխիթարութիւնն ընդունեցիք»**[66], եւ դարձեալ, թէ՝ **«Մեծահարուստը դժուարութեամբ կմտնի արքայութիւն»**[67]: Սակայն շատ մեծատուններ կմտնեն Աստուծոյ արքայութիւն, եթէ լինեն բարեսէր, ողորմած, անկաշառ, իրաւադատ, խոնարհ, չզրկեն ուրիշներին, գողերին ընկեր չդառնան ու չչնանան, լինեն խնամող հայր որբերին եւ այրիներին եւ բոլոր նրանց, ովքեր գտնւում են իրենց հովանաւորութեան ներքոյ: Դարձեալ ասւում է, թէ Տէրը երանի տուեց այն աղքատին, որը խոնարհ է հոգով, որովհետեւ անեզրական է այն բարիքը, որ խոնարհութիւնից է լինում, քանզի Աստուծոյ գործն է՝ ըստ այնմ, թէ՝ **«Մեզ համար աղքատացաւ»**[68], այսինքն՝ Մեծատունը խոնարհուելով՝ ծնուեց Կոյսից, լուաց աշակերտների ոտքերը եւ նոյն խոնարհութիւնը սովորեցրեց մեզ, որ այդպէս վարուենք մեր եղբայրների հետ: Ինչպէս նաեւ Իր անբաւ խոնարհութիւնը դրեց ընդդէմ սատանայի անմիտ հպարտութեան, քանզի հպարտը նման է սատանային, իսկ խոնարհը նման է Աստծուն, որի համար էլ Տէրն ասում է. **«Ով խոնարհուի, կբարձրանայ»**[69], ինչպէս Ինքը խոնարհուեց հայրական աթոռից: Իսկ ով հպարտանայ բարձրամտութեամբ, ինչպէս սատանան, նրա նման կիջնի դժոխքի յատակը: Եւ դարձեալ ասւում է, թէ ճշմարիտ եւ Աստծուն հաճելի խոնարհութիւնն այն է, որ երբ անտեղի բամբասում են մէկին, դատապարտում ու ասում. «Մեղքեր ես գործել», նա յանձն է առնում յօժարութեամբ եւ հաւանութիւն է տալիս ուրախութեամբ:

Դարձեալ՝ հեզութիւնը չափազանց մօտ եւ կցորդ է խոնարհութեանը, որովհետեւ հեզ է կոչւում նա, ով համբերում է եղբօր դառը բարկութեանը: Այսպիսիք էին Մովսէսն ու Դաւիթը, որոնք

հեզ կոչուեցին: Ինչպէս նաեւ Տէրն ասաց. **«Հեզ** (այսինքն՝ խոնարհ) **եմ սրտով»**[70]: Նաեւ ներողամիտն ու համբերողն են կոչւում հեզ իրենց խոնարհամտութեամբ, որն իրագործեց Տէրը, նաեւ՝ Նրա բոլոր սուրբերը: Արտաքին իմաստասէրներից մէկի վկայութեամբ՝ հեզը նա է, ով համբերում է բամբասանքներին ու արհամարհանքներին, չի վիճում, հանդարտ է եւ քաղցր վարքով, արհամարհում է մահը, հաստատուն է ու հանգիստ: Յիրաւի Տիրոջ կողմից երանութիւն տրուեց նրան, որովհետեւ այստեղ գովւում է մարդկանց կողմից, իսկ այն կեանքում կժառանգի անմահների երկիրը: Ասածս վերաբերում է նաեւ բարւոք սգաւորութեանը, որը մարմնի կամ ունեցուածքի յափշտակման ու հարազատի մահուան համար չէ, որովհետեւ Տէրն երանելի է համարում այնպիսի սուգը, որը մեղքերի քաւութեան համար է, երբ [մարդը] դառն արտասուքով եւ բազմակոծ ապաշխարանքով յիշում է իր մեղքերը, ինչպէս Դաւիթը, Մանասէն եւ Պետրոսը, եւ յոյժ մղկտալով՝ սգում է, երբ տեսնում է սուրբ Աւազանի ծնունդներից որեւէ մէկին մեղքից կործանուելիս: Դարձեալ՝ մտաբերելով նախաստեղծի անկումը՝ լալիս է չարաչար մեծ սգով, թէ մարդը չարի խաբէութեամբ ինչպիսի մեծ փառքերից զրկուեց եւ ընկաւ այս անսահման տառապանքների գիրկը: Արդ, այս բարիքներին մերձ ու եղբայր է խաղաղութեան գործը, որը բարձրագոյն բարիք է. Տիրոջ կողմից [երանելի համարուեց խաղաղարարը]: Եւ սա ստոյգ Աստուծոյ գործն է, որովհետեւ խաչի վրայ Իր իսկ արիւնով խաղաղութիւն կնքեց Հօր եւ մարդկային ցեղի միջեւ: Այս էր, որ երգում էին հրեշտակների անմարմին դասերը. «Փա՜ռք Աստուծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրայ խաղաղութիւն»: Արդ, ամէն ոք, ով խաղաղարար եւ խաղաղասէր է, Աստուծոյ որդի է կոչւում, որովհետեւ Աստուծոյ Որդու գործն է կատարում, իսկ նա, ով խռովարար է, խռովասէր, մարդկանց զրդում է խռովութեան ու ցաւագին կռուի, սատանա-

յի որդի է, որովհետեւ սատանայի գործն է կատարում:

Եւ որ անբաւ բարիք է խաղաղութիւնը, նայի՛ր եւ տե՛ս, որ թագաւորները, որոնք ունեն աշխարհի բոլոր բարիքները, սակայն խաղաղութիւն չունեն, չեն կարողանում խնդալ ուրախութեամբ: Բայց նախ մարդ իր հոգում եւ մարմնում պէտք է հաստատի խաղաղութիւն եւ ապա միայն կկարողանայ տալ այլոց: Նախ մարմինը պէտք է դարձնել հոգուն ծառայ, իսկ հոգին՝ տէր ու թագաւոր մարմնին: Զափի մէջ պահել մարմինը սակաւ կերակուրներով ու պարկեշտ զգեստներով՝ միայն որպէս գրաստ հոգու բեռնակրութեան համար, որպէսզի կարող լինի բարին վաստակել հոգու պէտքերի համար: Զպէտք է գիրացնել մարմինը, բազում ախտերով իշխան դարձնել տիրապատկեր հոգուն եւ ինքն իրեն միշտ խռովել: Արդ, ով այսպէս է անում, նա է խաղաղարարը, որին երանի տրուեց Աստուծոյ բերանով: Եւ նա այնժամ միայն կարող է այլոց խաղաղութիւն պարգեւել՝ հեռացնելով չար խռովութիւնը, որի շնորհիւ ըստ իր կարողութեան կկոչուի Աստուծոյ որդի:

Արդ, խաղաղութեանը գալիս եւ միանում են անոխակալութիւնն ու անյիշաչարութիւնը, որոնք նոյնպէս Աստուծոյ գործերն են, որ Ինքը կատարեց եւ ապա մեզ սովորեցրեց կատարել: Քանզի մեր նախաստեղծ հայր Ադամն ու նրա որդիները անչափ մեղքեր գործեցին Աստուծոյ առջեւ, որովհետեւ թողեցին Նրան ու Նրա հրամանները եւ հաւատացին թշնամուն՝ սատանային, եւ նրա խօսքերը պաշտեցին: Սակայն Տէրը ոխ չպահեց եւ չյիշեց մարդկային ցեղի չար մեղքերը, այլ հէնց նրանց համար խոնարհուեց անճառելի փառքից եւ մարմնաւորուեց, մարդկանց որդիների գործած չարիքների փոխարէն բարին հատուցեց՝ խաչով ու չարչարանքներով ազատելով մեզ պատուիրանազանցութեան անէծքներից: Նոյնը մեզ պատուիրեց անել եւ պահանջում է մեզնից, որ երբ մէկը չար խորհի կամ գործի մեր հանդէպ, մենք բարին հատուցենք

նրան, որպէսզի ըստ մեր կարողութեան նմանուենք Աստուծոյ Որդուն: Ահա՛ [սա է] անեզրական երանութիւնն ու ամենայն գովութեան արժանին: Իսկ եթէ միշտ յիշում ենք մեր եղբայրների չար գործերը, կուտակուած ոխը մթերելով՝ պահում եւ ուռճացնում, հնարաւորութեան դէպքում վրէժ լուծում եւ չարի փոխարէն չար հատուցում, ահա, սիրելինե՛րս, գործակից եղանք բանսարկուին, որովհետեւ կատարեցինք նրա կամքը, քանզի չարն էլ, ոխը մթերած պահելով Աստուծոյ եւ մարդկանց հանդէպ, Ադամին դուրս հանեց դրախտից:

Ապա տե՛ս, ո՛վ մարդ, թէ որքան մեծ չարիք է, երբ որեւէ մէկը բարու փոխարէն չար է հատուցում: Եւ արդ, ամէն ոք թող ճշմարտապէս ճանաչի եւ մտապահի, որ ոխակալը եթէ անգամ կատարի բոլոր տեսակի բարեգործութիւնները եւ մահու չափ ճգնի, իզուր կլինեն նրա վաստակն ու քրտինքը եւ անընդունելի՝ Աստծուն: Այս է վկայում նաեւ Բան Աստուծոյ խօսքն ու հրամանը, երբ ասում է. «Եթէ չներէք ձեր սրտում եղբօր յանցանքները եւ չքերէք ոխը ձեր հոգուց, Իմ երկնաւոր Հայրը չի թողնի ձեր յանցանքները դատաստանի Օրը»[71]: Նոյն խորհրդով է գրում նաեւ առաքեալը. **«Արեւը թող մայր չմտնի ձեր բարկութեան վրայ»**[72], որպէսզի չար սատանան չմիանայ ձեզ հետ ձեր անկողնում եւ անչափ չարիքներ խորհել չտայ ձեզ ողջ գիշեր: Դա է պատճառը, որ Տէրը հրամայեց թողնել պատարագը սեղանի վրայ եւ գնալ հաշտուել եղբօր հետ: Տեսնո՞ւմ ես՝ որքան ահաւոր խօսքեր է մէջ բերում, որ ջանաս եւ նախքան Պատարագին մասնակցելը հաշտուես եղբօրդ հետ: Արդ, մեղանչե՞ց ընկերդ քո հանդէպ փոքր-ինչ, չէ՞ որ դու էլ Աստուծոյ հանդէպ ես բազում մեղքեր գործել. եթէ ներես եղբօրդ փոքրիկ յանցանքը, ապա Աստուած էլ կթողնի քո բազմապատիկ մեղքերը:

Դո՛ւ գիտես: Դատաստանն այսօր Աստուած քո ձեռքն է տուել, եւ եթէ դու քո ծառայակցի հարիւրը չես զիջում, այլ ջանում ես

խեղդել նրան, քո Տէրն էլ չի թողնի քո հինգ հարիւրն ու հազարը: Դու կամենում ես աստուածանալ եւ վրէ՞ժ լուծել եւ չե՞ս հաւատում, թէ Աստուած Ինքը կարող է վրէժ առնել: Դու՝ իբրեւ մարդ, կարող ես ընդամէնը մի փոքր վրէժխնդիր լինել, բայց եթէ թողնես Աստծուն, ապա Նա՝ իբրեւ Ամենաբարձրեալ, կարող է վրէժ առնել թէ՛ այստեղ եւ թէ՛ հանդերձեալ կեանքում:

Մի՛ բամբասիր եւ որեւէ մէկից վրէժ մի՛ լուծիր: Մի՛ յափշտակիր Աստուծոյ դատավարութեան աթոռը, որովհետեւ Աստուած ասաց. ***«Իմն է վրէժխնդրութիւնը, քանզի ես եմ հատուցում»[73]:*** *Նաեւ մարգարէն ասաց.* ***«Վրէժխնդիր է Աստուած, երբ կատարում է զրկուածների իրաւունքները»[74]:*** *Ինչպէս նաեւ առաքեալն ասում է.* ***«Զարի փոխարէն չար մի՛ հատուցէք, այլ բարու միջոցով յաղթէք չարին: Իսկ եթէ քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան»[75]:*** *Արդ, այս բաներն ըստ մեր կարողութեան կատարելն է, որ մեզ նմանեցնում է Աստծուն: Դրա համար, աղաչո՛ւմ եմ ձեզ, թողնենք այլոց մեղքերը, որ Աստուած էլ մերը թողնի:*

*Վերը նշածներիս փառակիցն ու խորհրդակիցը արդարադատութիւնն է, որը մարդուն նմանեցնում է Աստծուն՝ ըստ Փրկչի հրամանի, որ ասում է. «Ինչպէս լսեմ, այնպէս էլ կդատեմ, եւ Իմ դատաստանն արդար է, որովհետեւ դատաստանի Օրը չեմ ամաչի ու չեմ պատկառի մեծամեծերից, նաեւ չեմ ողորմի աղքատին, այլ ըստ գործերի կհատուցեմ»[76]: Դրա համար էլ դատաւորը կամ իշխանը, ով կոչուած է մարդկանց առաջ օրէնքն իրագործելու, պէտք է նմանուի Աստծուն եւ ոչ թէ խեղաթիւրի դատաստանի իրաւունքները՝ կաշառք վերցնելով, որովհետեւ գրուած է. «Հուր է կաշառքը, եւ վա՛յ դատաւորին, որն այն իր հանդերձի քղանցքում կծրարի, որովհետեւ կայրի նրան ահռելի դատաստանի օրը»: Նոյն խորհրդով է գոչում Դաւիթն ու ասում. «**Նա, ով իրաւունքի դէմ կաշառք չի վերցնում, չի սասանուի տիեզերական հրապարակում»[77]:** Որովհետեւ դատաւորը չպէտք է ամաչի մեծամեծերից եւ կամ խղճահարուելով՝ ողորմի աղքատին, այլ պէտք է արդար դատի՝ ըստ Աստուծոյ կամքի:*

Սակայն ագահութիւնն է, որ կործանում է դատաւորներին եւ դարձնում կաշառառու եւ յաւիտենական հրի ժառանգորդ: Արդ, չարագոյն եւ պատառող գազան է այս ախտը, որ առաջնորդներին ու գիտնականներին աւելի է կործանում, քան ռամիկ եւ անուս մարդկանց:

Ամբակում մարգարէն դեռ իր ժամանակ տեսաւ այս ախտը եւ ձայնեց առ Աստուած. ***«Ինչո՞ւ այսպէս ստեղծեցիր մարդկանց, որ մեծամեծերը կուլ են տալիս փոքրերին ծովի ձկների նման: Քանզի տեսայ, որ դատաւորը կաշառքի ուժով թիւրեց օրէնքը, իսկ Դու ներում ես, որն էլ ինձ ցաւալի է: Արդ, յայտնի՛ր ինձ Քո խորհուրդները»[78]:*** *Եւ Աստուած պատասխանեց նրան. «Թէպէտեւ կարողանաս անձրեւի անթիւ կաթիլներն ու ծովի աւազը հաշուել, որն անհնար է, Իմ խորհուրդները չես կարող իմանալ, որովհետեւ ապագայում պահել եմ մի օր, երբ պիտի դատեմ բոլորին»:*

Կրկի՛ն տես այս չարագոյն ախտի պղծութիւնը, որովհետեւ գալիս են իշխաններ, առաջնորդներ ու պատուաւոր այրեր եւ իմաստուն խօսքերով խնդրում են դատաւորին, բայց նա չի լսում նրանց: Յետոյ գալիս են ոսկին ու արծաթը, որոնք ոչ ձայն ունեն եւ ոչ էլ խօսում են, սակայն լուռ, իրենց պայծառութեամբ յոյժ խոցում եւ կակղացնում են դատաւորի սիրտը: Եւ նա, հաւանելով, լսում է անբաններին առաւել, քան բանականներին:

Ուստի, աղաչո՛ւմ եմ, զգաստացէ՛ք, իշխանե՛ր եւ դատաւորնե՛ր, եւ կաշառակերութեամբ մի՛ գանձէք գեհենի հուրը ձեր անձերի համար:

Արդ, ասածներիս, ինչպէս խնամքով շարուած մարգարտաշարի, գալիս միանում է նաեւ սրբութիւնը, որն Աստուծոյ անկողոպտելի

գանձն է՝ այնքան մեծագոյն, որ [այն ունեցողին] երանի տուեց Տէրը՝ յոյժ գովելով. **«Երանի՜ նրանց, որոնք սուրբ են սրտով, որովհետեւ նրանք կտեսնեն Աստծուն»**[79]:

Սուրբ է կոչւում նա, ով չգիտի, թէ իր հոգում կայ խղճմտելու որեւէ բան, ով չունի ոչ միայն մարմնական, այլ նաեւ հոգեկան որեւէ բիծ՝ մախանք, կամ այլ բան: Իսկ երբ պատահում է՝ չարի խաբէութեամբ նա որեւէ մեղքի մէջ է ընկնում (որովհետեւ մարմինը դիւրակործան է), քաջութեամբ ջանում է եւ սրբելով՝ լուանում զղջումով, ապաշխարանքով, խոստովանութեամբ եւ ջերմ արտասուքով, որը երկրորդ Աւազանն է, Աստծուց մեզ շնորհուած մեծ եւ անբաւ պարգեւ, որի միջոցով սրբւում, մաքրւում է սիրտը եւ արժանանում Աստծուն տեսնելու տիեզերական Ատեանում՝ ըստ իր սրբութեան կարողութեան:

Եւ արդ, ինչպէս թագուհու թագին ագուցուած տպազիոն քարը կապուտակ եւ ծիրանակերպ գոյների միջեւ վայելչապէս համապատասխանում է խորհրդիս զօրութեանը, այնպէս էլ ասածիս անբաժանելիօրէն միանում է պայծառ եւ պատուական կուսութիւնը, որը ցանկալի է հրեշտակներին եւ զարմանալի գործ, պարծանքի անուն է երկրի վրայ եւ Աստուծոյ հետ ճշմարիտ կապ՝ երկնքում, ահարկու՝ դեւերի գնդերի եւ անհաւատալի՝ վաւաշոտ ախտաբոյծ անօրէնների համար: Եւ այնքան մեծ եւ գերագոյն կերպով է փառաւորուած երկնքում եւ երկրի վրայ, որ նաեւ Աստուած Կոյսից մարմնով աշխարհ եկաւ՝ մարդկանց [փրկելու] համար: Հօր անճառելի Բանը իջնելով՝ մտաւ Աստուածածին կոյս Մարիամի մաքուր որովայնը, Անբովանդակելին թաղանթապատ ծրարուեց Դաւթի դստեր երանական որովայնում եւ, ակնթարթօրէն վերցնելով Կոյսի արիւնը, իր Աստուածութեան հրով ձեւաւորեց եւ քառասուն օրում ստեղծեց Մանկանը՝ անշփոթ եւ անբաժանելի կերպով միացնելով Աստուածութիւնը մարդկութեանը. Բանը մարմին եղաւ

Աստուածածնի որովայնում՝ հաւասար [մնալով] Հօրը եւ [բազմած] փառքի Աթոռին:

Դրա համար էլ, հաւատացեալնե՛ր, եկէ՛ք երկրպագենք կոյս Մարիամին, որովհետեւ նրա արգանդը առաւել սուրբ եւ բարձր եղաւ, քան քերովբէական աթոռները:

Եւ արդ, որովհետեւ յոյժ ծանր է այս իրողութիւնը եւ բնականից դուրս, դրա համար էլ Տէրը սահման եւ օրէնք չդրեց, այլ ասաց. **«Ով կարող է տանել, թող նա տանի»**[80]: Որովհետեւ Ինքն էր մարդկութեան ստեղծողը եւ գիտէր այդ ծանրութիւնը: Եւ երբ թուարկեց ներքինիների երեք կարգերը, «այն է,- ասաց,-գովելի, որ երկնքի արքայութեան համար է»: Ով ճնշում է իր անձը եւ կուսութեամբ նահատակւում ընդդէմ պոռնկական դեւի եւ վաւաշոտ հրաբորբոք ախտի, նա մարտիրոսութիւնից շատ աւելի մեծ սխրանք է գործում, որովհետեւ չափ չկայ պատերազմի օրերին: Այս նկատելով՝ աստուածընկալ սուրբ Պօղոս առաքեալը գրեց. **«Տիրոջ կողմից կոյսերի համար հրաման չունեմ նրանց համար սահման դնելու, բայց ով սիրում եւ պահում է սա, ես յոյժ գովում եմ նրան, որովհետեւ Աստծունն է հոգում եւ ոչ թէ աշխարհինը»**[81]:

Արդ, հնուց ի վեր սկիզբ դրուեց կուսութեանը: Եւ նահապետները յոյժ ցանկացան նրա պայծառ փառքին, բայց որովհետեւ կաթնակերներ էին, քչերը մտան այդ ծանր լծի տակ, որովհետեւ փափկամարմիններ էին եւ դժուարանում էին մտնել այդ մեծագոյն ու տեւական պատերազմի մէջ: Իսկ նոր ժամանակներում շատերը ցանկացան նրա գեղեցիկ եւ լուսաւոր անունը, եւ անթիւ հոգիներ կամաւոր մտան կուսութեան հանդէս եւ յանձն առան այդ ծանր լուծը Խաչի խորհուրդի դառը վաստակով, որովհետեւ դառնութիւն ճաշակած այրեր էին եւ հաստատուն սիրով իրենց Տիրոջ հետ բեւեռուեցին խաչին:

Հնում Յեսուն, Եղիան ու Յովհաննէսը կուսութեամբ նահատակուեցին, Դանիէլն ու երեք մանուկները Բաբելոնի թագաւորի կողմից ներքինիներ դարձան, մեծ Նոյը եւ ցանկալի Յովսէփը կին ունէին, բայց զսպուած էին ողջախոհութեամբ եւ Գրքերում կոյսերին հաւասար փառաւորուեցին:

Իսկ նոր ժամանակներում ծաղկեց եւ յայտնի դարձաւ կուսութեան պսակը, եւ ոչ ոք չի կարող հաշուել նրանց թիւը, ովքեր պահեցին այն, որովհետեւ Տէրը ծնուեց Կոյսից, եւ շատերը քաջալերուելով՝ մտան կուսութեան նեղ ճանապարհը. առաքեալներից Զեբեդէոսի որդիներ Յովհաննէսն ու Յակոբոսը, ինչպէս նաեւ Թովմասն ու միւս Յակոբոսը ապրեցին կուսութեամբ: Ապա առաքեալներին հետեւողները եւ անթիւ միանձինք քաջալերուեցին եւ սիրով պահեցին այն, որովհետեւ խաչի վրայ ծաղկեց կուսութեան պտուղը:

Եւ ապա, որպէս խաչներ գրոհելով դէպի երկնաւոր աղը, նրանցից շատերը սրանով բարձրացան անմարմինների բանակը: Նրանց ազգականներն, այս տեսնելով եւ իմանալով, յորդորուեցին բարի նախանձով եւ իրենց ցանկասէր ու ախտակիր մարմնով մտան կուսութեան ասպարէզը:

Կանանցից շատերն էլ սուրբ կուսութեամբ առաւել բարձրացան, քան տղամարդիկ, որովհետեւ սպանեցին մարմնական ցանկութիւնները եւ սանձեցին վաւաշոտ ախտը, որը կար նրանց բնութեան մէջ, որովհետեւ սիրեցին Քրիստոս Փեսային եւ ցանկացան Նրա սուրբ եւ պայծառ առագաստը: Եւ նրանցից շատերը փառաբանուեցին այնքան, որ հրեշտակներն անգամ զարմացան, որովհետեւ նրանք մեծ փափագով ցանկացան Քրիստոսին եւ կուսութեամբ հեղեցին իրենց արիւնը Նրա համար:

Աստուծոյ Բանի՝ Յիսուս Քրիստոսի կոյս վկաներ եւ քարոզիչներ դարձան Փիլիպոսի չորս դուստրերը, զարմանալի Թեկղը,

սքանչելի Սանդուխտը եւ մեր բարձրահամբաւ եւ բեղմնաւոր մայրը՝ հրեշտակներին ցանկալի սուրբ Հռիփսիմէն, նրա ընկերները, Վառվառան եւ Յուլիան, Փեփրոնիան եւ Եւպրաքսիան եւ անհաշիւ ուրիշներ: Եւ ստեղծուեցին կանանց ու տղամարդկանց վանքեր ու մենաստաններ: Եւ կուսութիւնը, որպէս ընդհանրական սովորութիւն, այնքան առատացաւ, որ համարուեց մի հեշտ ու անտանջանք գործ: Իսկ մեզ մօտ վերջին ժամանակներս շատերն անխորհուրդ եւ անտեղի են տրւում այս գործին, որովհետեւ յոյժ ցանկալի է կուսութեան համբաւը, եւ առանց քննելու կամենում են կուսական մարմնով հեշտութեամբ վայելել, ուտել ու խմել՝ աստուածացնելով որովայնը: Իսկ վերջում, չկարողանալով դիմանալ, կործանւում են չարաչար ախտից եւ դուրս գալիս միաբանութեան ուխտից, որը կնքեցին Աստուծոյ հետ, եւ կուսութեան փոխարէն իրենց անձերում այնպիսի զազրատեսակ ախտեր են կրում, որոնք ոչ ոք չի կարող պատմել բերանով:

Բայց կոյսը դեռեւս նա չէ, ով միայն չի խառնակւում կանանց վաւաշոտ մարմնին եւ իր անձը հեռու է պահում այլ զազրատեսակ խառնակութիւններից, այլ սուրբ Գրքերում նա է կոչւում կոյս եւ է, որ պայծառ եւ մաքուր կուսութեան հետ ունի նաեւ ողորմութիւն, որ չխաւարի յիմար կոյսերի հետ միասին. ունի նաեւ անոխակալութիւն եւ խոնարհութիւն, պահքերի պարկեշտութիւն եւ աղօթքների տքնութիւն, իմաստուն համբերութիւն, ինչպէս նաեւ աննենգ սէր Աստուծոյ եւ մարդկանց հանդէպ, չի սասանւում անպատշաճ բարկութեամբ եւ չի վառւում ագահութեամբ ի սէր արծաթի կամ այլ նիւթական բանի, սանձում է մեծ վիշապին՝ լեզուն, եւ մարում նրա սաստիկ հուրը. քիչ է հոգ տանում երկրաւոր բաների մասին՝ ըստ առաքեալի. **«Մենք ունենք կերակուր ու հանդերձ եւ բաւարարուենք այդքանով»**[82], ինչպէս նաեւ միշտ խորհում է երկնաւորի մասին, որովհետեւ **«այնտեղ է գանձ-**

ւում ամէն ինչ»[83]:

Ահա՛, սիրելինե՛ր, այսպիսին են ճշմարիտ կոյսերը, որոնք կարող են ահաւոր հրապարակում անաչառ Դատաւորի առջեւ կրել կուսութեան անունը: Եւ Նա էլ կպատուի նրանց տիեզերական Ատեանում եւ արեգակի նման շուշանափայլ կպսակի նրանց ի տես հրեղէն եւ հողեղէն արարածների: Ուստի, աղաչո՛ւմ եմ, ջանացէ՛ք քաջութեամբ եւ արիաբար կռուեցէ՛ք վաւաշոտ ախտի եւ պոռնկական դեւի դէմ: Եւ որքան հնարաւոր է, սուրբ եւ մաքո՛ւր պահէք կուսութիւնը ոչ միայն մարդկանց ցուցադրելու, այլեւ ծածկատես Աստուծոյ աչքի առջեւ: Եւ ոչ սոսկ մարմնով, այլ ե՛ւ մտքով, ե՛ւ խորհրդով պարկեշտ լինենք, նաեւ աչքը անարատ պահենք, որ Աստուծոյ առջեւ կատարեալ լինենք եւ հանդերձեալ կեանքում արժանի լինենք Աստուծոյ կատարեալ բարիքներին:

Իսկ երբ ամենայնի Տէրը ստեղծեց այր եւ կին, օրհնեց նրանց որդեծնութիւնը եւ ուրախութեամբ եկաւ նրանց հարսանիքին: Եւ առաքեալը սուրբ կոչեց այր եւ կնոջ արդար անկողինը, որովհետեւ նրանք Աստուծոյ արարչութեան գործիքներ են, ինչպէս սղոցը եւ ուրագը՝ հիւսնի համար: Եւ Աստուած Իր օրհնութեամբ այնտեղից է մեզ ստեղծում, որովհետեւ Աստուծոյ ստեղծած ոչ մի բան խոտան չէ: Եւ յոյժ բարի են Աստուծոյ արարածները, ով չափաւոր է վարւում նրանց հետ:

Քանզի եթէ անկողինը սուրբ օրէնքով լինի, առանց սոդոմական ախտի, մերձենալը՝ պարկեշտութեամբ՝ որդեծնութեան նպատակով, եթէ միւս գործերն էլ բարի լինեն, երբեմն այր ու կին իրենց կամքով զբաղուեն աղօթքով եւ յետոյ միայն գնան միմեանց մօտ, այնպիսի այրն ու կինը կպատուեն Աստուծոյ կողմից եւ Քրիստոսին մայր, եղբայր եւ քոյր կլինեն իրենց բարի գործերի շնորհիւ: Ինչպէս Տէրն է ասում. ***«Ով կատարի Իմ Հօր կամքը, որ երկնքում է, նա է Իմ եղբայրը, քոյրը, հայրն ու մայրը»[84]:*** *Այս խորհրդով սուրբերից մէկն ասաց. «Կո՛յս եղէք, կանա՛յք, որ Քրիստոսին մայր լինէք: Զի թէպէտեւ որդիներ ծնէք ըստ Աստուծոյ սահմանածի, նաեւ ձեր միւս գործերն էլ բարի լինեն Աստուծոյ կամքով, կլինէք մայր եւ քոյր Յիսուս Քրիստոսին»: Արդ, քանի որ այսպէս քաղցր, բարեգութ եւ մարդասէր է Աստուած, ապա մի՛ եղէք անյոյս եւ սաստիկ մեղքերով մի՛ հեռացէք Նրանից, այլ օր ու գիշեր ջանացէ՛ք ամենայն բարեգործութեամբ: Եւ պարկեշտ ու սուրբ լինենք այս աշխարհում՝ ըստ մեր կարողութեան, որպէսզի բոլոր սուրբերի հետ հանդերձեալ կեանքին ու անճառելի հանգստին արժանի լինենք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրութեամբ. Ում հետ էլ Հօրը եւ Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ժ. Ողորմութեան, սիրոյ եւ գթութեան մասին

Եւ արդ, որովհետեւ աստուածային կերտուածքի սկիզբն այսպէս եղաւ, ե՛կ, ո՛վ վսեմդ, քննենք Յիսուս Քրիստոսի հիմքի վրայ կառուցուող բարձր աշտարակներն ու բոլոր բարի շինուածքների գլուխը՝ սէրը, գութը եւ ողորմութիւնը: Եւ արդ, սրանք մի են եւ միապէս էլ գովաբանւում են աստուածային Գրքերում: Ինչպէս նաեւ սրանք Աստուծոյ անուններն են, մի հօրից եւ մի մօրից սերուած եղբայրներ, իրար նման եւ միմեանց մերձաւոր գործով: Քանզի երբ մէկը կամենում է ողորմութիւն տալ մէկ ուրիշին, առաջին հերթին շարժւում է նրա գութը եւ յանգչում աղքատի վրայ՝ գութ առաջացնելով նրա նկատմամբ: Եւ ապա սէրը, որ ծածկուած է հոգու մէջ, յորդորում է նրան ողորմութիւն գործելու: Իսկ նա, ով գութ չունի, ո՛չ սէր ունի, ո՛չ էլ կարող է ողորմած

լինել: Եւ եթէ տայ էլ, այդ դէպքում վարձք չի ստանայ Աստծուց՝ ըստ մեր Փրկչի հրամանի, որովհետեւ մարդկանց աչքին երեւալու համար է կատարում, որ գովաբանուի տեսնողների կողմից:

Գրուած է. «**Աստուած սէր է**»[85]: Եւ ով աննենգ սիրում է Աստծուն, ընկերոջը եւ աղքատին, նա բնակւում է Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ նրա մէջ, եւ ըստ իր կարողութեան նմանւում է Աստծուն: Եւ մի այլ տեղ ասում է. «**Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպէս քո անձը**»[86]: Եւ Տէրը հրամայում է. «**Նոր պատուիրան եմ ձեզ տալիս, որ սիրէք միմեանց, ինչպէս որ Ես սիրեցի ձեզ եւ Իմ անձը դրեցի ձեր փրկութեան համար**»[87]: Այս է կատարեալ սէրը: Քանզի եթէ չես կարող սիրել եղբօրդ, որին տեսնում ես, ինչպե՞ս կսիրես Աստծուն, որին չես տեսնում: Քանզի մարդիկ ընկերասէր մարդուն աստուածասէր են կոչում: Դրա համար էլ Տէրը քաջալերում է՝ ասելով. «**Եղէ՛ք գթասիրտ, ինչպէս որ գթասիրտ է ձեր երկնաւոր Հայրը**»[88], իսկ առաքեալն ասում է. «**Զգեստաւորուէ՛ք գթասրտութեամբ եւ ողորմութեամբ**»[89], որովհետեւ Աստուծոյ Դատաստանին ո՞վ կպարծենայ բարձրագլուխ: Եւ դարձեալ ասում է. «**Եթէ բոլորի համար բարիք գործեմ եւ սէր չունենամ, ապա իզուր եմ ջանում**»: Նաեւ սքանչելի Եսային է գոչում. «**Տա՛ր աղքատին, անյարկին քո տուն գթասրտութեամբ, սիրով եւ ողորմածութեամբ տալով նրան քո հաւաքած հացի աւելցուկը, եւ ահաւոր Ատեանում նախօրօք կծագի քո լոյսը, եւ չի հանգչի քո լապտերը**»[90]: Դաւիթն էլ գոչում է. «**Երանի՜ նրան, որ խնամում է աղքատին, որովհետեւ դատաստանի Օրը Տէրը կփրկի նրան անսահման չարից**»[91]: Եւ Տէրը բարձրագոյն հրամանով ասում է. «**Երանի՜ ողորմածներին**»[92]: Որովհետեւ երբ անաչառ Ատեանի սոսկալի բեմի առաջ ամէն ոք օգնութեան կարիք զգայ, նա ողորմութիւն կգտնի՝ մեծ պարծանքով մէկի դիմաց հարիւրը ստանալով: Եւ աղքատները պայծառ ջահերով նրան կշրջապատեն եւ

կգովեն նրան Դատաւորի առաջ, որովհետեւ իմաստուն վաճառականի պէս տուեց անցաւոր ունեցուածքը եւ գնեց այս անգին մարգարիտը: Ապա յիրաւի հրամայում է Տէրը. «**Ձեզ համար բարեկամներ արէք անիրաւ մամոնայից**»[93]. Աստծուն եւ աղքատների դասերին տալով՝ երկնքո՛ւմ դիզէք գանձը, որ ապահով մնայ գողերից ու աւազակներից:

«**Գիտեմ,- ասում է,- որ յոյժ սիրում էք քսակն ու արծաթը եւ կամենում էք պինդ պահել այն: Ես ցոյց կտամ ձեզ պահելու կարգը. աղքատների միջոցով առաքեցէ՛ք վեր՝ դէպի Հօր առագաստը՝ ուր չի կարող մտնել գողը, եւ ցեցը՝ ապականել**»[94]: Նա՛ է սիրում իր գանձը, ով հանդերձեալում է պահում այն, եւ ոչ թէ նա, ով թաղեց այն հողի մէջ, իսկ ինքը առանց պաշարի գնաց դատաւորի մօտ: Եւ յիրաւի Տէրն աշխարհի ունեցուածքը «**անիրաւ մամոնայ**»[95] է անուանում, քանզի թողեցինք մեր ժառանգութիւնը, որ դրախտն էր, եւ անիրաւութեան պատճառով յափշտակուեցինք անասունների այս աշխարհը: Տէրն ասում է. «Սուտ եւ օտարօտի բաներով էք կամենում ետ գնել ձերը, որն անվախճան հանգիստն է: Դո՛ւք գիտէք, բայց դեռ շատ էք անօգուտ ապաշաւելու: Արդ, ձեզ համար բարի անո՛ւն վաստակեցէք, քանի որ աղքատները ողորմածին Աստուած են կոչում եւ ասում. «Այս ինչ բանը Աստուած պարգեւեց ինձ»»: Գրուած է. «Երանի՜ նրան, որ իր հացը ուտում է ամենայն ջրերի վրայ»: Ողորմութիւնն արագաթեւ արծիւ է, երբ սիրով եւ գթասրտութեամբ է արւում: Քանզի սուրբերից մէկը պատմեց. «Տեսայ ահա մի թագուհի, որն իր ձեռքին ունէր լուսաւոր ջահ՝ առաւել պայծառ, քան արեգակը, եւ կանաչասաղարթ, տերեւառատ եւ պտղալից ձիթենի: Նա հրեղէն կառքով հրեշտակների դասերի ուղեկցութեամբ մեծ համարձակութեամբ բարձրանում էր երկինք: Ես բարձր ձայնով հարցրի նրան. «Ո՞վ ես դու, ի՞նչ է քո անունը, ո՞ր թագաւորի դուստրն ես դու, որ այդպիսի

զարմանալի փառքով բարձրանում ես երկինք»: Իսկ նա պատասխանեց. «Ես երկնաւոր Թագաւորի դուստրն եմ, անունս ողորմութիւն է. ես մարդկանց՝ աղքատներին տուած ողորմութիւնն եմ: Ինչպէս տեսնում ես, ամէն օր արագաթեւ բարձրանում եմ երկինք՝ Հօրս մօտ, եւ պարծանքով նստում Աստուծոյ աջ կողմում: Եւ ամէն ժամ մեծ համարձակութիւն ունեմ Նրա առաջ, առաւել եւս՝ դատաստանի Օրը: Եւ եթէ դու կամենում ես փրկուել բարկութիւնից, որ գալու է, ինձ քեզ կենակից եւ սիրելի հացակից դարձրու, միշտ գրկախառնուիր ինձ հետ եւ սիրալիր գթասրտութեամբ համբուրիր իմ լուսաւոր աստուածատիպ պատկերը»:

Գիտե՞ս արդեօք դպիր Եւնոմիկոս մանուկին, որ փորձելով եկաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի մօտ եւ հպարտութեամբ ասաց. **«Ո՞վ է իմ ընկերը, քանի որ պատուիրաններդ, որ հրամայեցիր, ես բոլորը պահեցի»:** Եւ Տէրը չասաց. «Արքայութիւնում ես», այլ՝ **«Հեռու չես արքայութիւնից** (այսինքն՝ արքայութեան ներսում չես, այլ հեռւում), եւ քեզ մօտ խորհուրդ կայ, որ չես կարող մտնել այնտեղ, քանի որ չես կամենում: Քանզի եթէ չունես բոլոր բարիքների գլուխը՝ սէր, գութ եւ ողորմութիւն, քո գործած բարիքները նման են անգլուխ կենդանու: Եթէ այս ամէնը պահէիր քո մտքում, դու չէիր հաւաքի ոսկի, արծաթ, նաեւ այլ փարթամութիւններ, այլ գթութեամբ ու սիրով այս ամէնը կբաշխէիր որպէս ողորմութիւն: Եւ արդ, եթէ կամենում ես, որ քո բարիքը նպատակին հասնի եւ կատարեալ լինի, դու գնա՛ եւ տո՛ւր այն որպէս ողորմութիւն»: Իսկ նա յոյժ խոժոռուեց, որովհետեւ չարը նրան կապել էր արծաթի եւ այլ փարթամութիւնների սիրով: Արդ, մեր Տէրը գիտէր նրա ժլատ ու տմարդի բարքը եւ յիրաւի ասաց նրան. «Արքայութեան ներսում չես: Մի՛ կեղծիր, որովհետեւ Ես սրտագէտ եմ եւ գիտեմ, որ դու եւ քո նման մեծատունները չէք կարող մտնել արքայութիւն, քանի դեռ մնում էք ձեր անողորմ բարքերի մէջ: Ինչպէս որ

ասեղի նեղ անցքով չի կարող մտնել ստուար ու հաստ պարանը, որ ամրացուած է մի մեծ նաւի նաւախելին կամ հոյակապ եւ մեծ քաղաքի աշտարակներին՝ տարբեր գործերի համար նախատեսուած: Եւ դու կարծեցիր, թէ Ես մարդկանցից դուրս եկած մի բարի վարդապետ եմ: Եւ ահա մարդկանց մօտ չկայ ճշմարիտ եւ ստոյգ բարի, ինչպէս եւ դու չես, որովհետեւ չէիր կեղծի ստութեամբ: Ապա եթէ որպէս Աստուծոյ ես Ինձ բարի կոչում, այս է ճշմարիտ եւ ստոյգ բարին, քանի որ իրօք Աստուած եմ եւ ստոյգ եւ ճշմարիտ Բարին»:

Բայց եւ ա՛յս իմացիր, սիրելի՛ս, որ եթէ բոլորը ողորմած լինէին եւ հիւրասէր, ինչպէս Աբրահամը, Ղովտը, Յոբը, Կոռնելիոսը եւ Այծեմնիկը, աշխարհում չէր լինի աղքատութիւն, այլ կլինէր մեծ հաւասարութիւն:

Արդ, յիմար կոյսերը յաղթեցին պոռնկական դառնագոյն, մորմոքող, վաւաշոտ ախտին եւ չար դեւին, բայց չմտան արքայութիւն, որովհետեւ առատապէս ողորմութիւն չարեցին, այլ փոքր-ինչ:

Յիշի՛ր նաեւ հարուստին, թէ ինչպէս էր չարաչար տանջւում, որին յանդիմանեց Աբրահամը եւ մի կաթիլ ջրի անգամ չարժանացրեց նրան: Ահեղ Ատեանում նոյնպէս Դատաւորը կասի անողորմներին. «Հեռացէ՛ք Ինձնից եւ մտէ՛ք սատանայի կրակի մէջ, որովհետեւ նմանուեցիք նրա անողորմ բարքին եւ կարող էք յաւիտեան միասին բնակուել: Ես ողորմած եմ, իսկ դուք՝ անողորմ. ինչպէ՞ս կարող էք դուք բնակուել Իմ առագաստում, քանզի օրէնք չէ, որ թշնամիներին բերեմ Իմ առագաստը: Իմ գութը, որը դուռն է Իմ անմահ հարսանիքի, փակուեց ձեր առջեւ եւ չտարածուեց ձեր վրայ, քանի որ քաղցեցի, եւ Ինձ ոչինչ չտուեցիք ուտելու» եւ այլն:

Ո՛վ ողորմելի, որքա՜ն ծանր կլինի այն ժամանակ, երբ տեսնենք ոմանց արեգակնակերպ լուսապսակով Թագաւորի պէս ահաւոր հրապարակում ճեմելիս, իսկ մեզ՝ ողորմելիներիս, խաւարամած

հրի մէջ մտնելիս: Սա առաւել ծանր է, քան տանջանքները: Արդ, աղաչո՛ւմ եմ, չխնայե՛նք մեր ունեցուածքը, որքան կարող ենք, տա՛նք Աստծուն աղքատների ձեռքով, որ չամաչենք այն սոսկալի Օրը: Զհոգանք մեր ձիերի, ջորիների, շների, կանանց եւ մեր մարմինների համար՝ անտես անելով Քրիստոսին, որ մեր փրկութեան համար աղքատների հետ շրջում է մեր դռների մօտ: Նա քեզ համար մերկ խաչ բարձրացաւ, ծաղրուեց, թուք ընդունեց, ծարաւեց, խոցուեց, գամուեց. եւ դարձեալ՝ այսօր սոված եւ մերկ աղքատների հետ շրջում է մեր դռների մօտ: Եւ արդ, ողորմենք մեր անձերին եւ չանտեսենք Նրան: Նաեւ աղքատը, որը մուրում է, կարող է ողորմութիւն անել, եթէ կամենայ. եւ այն Աստուած աւելի մեծ է համարում, որովհետեւ չունեցածից տուեց, քան հարուստինը, որն աւելորդից տուեց: Այն այրի կինը, որը սիրով երկու խերեւեշ գցեց գանձանակը, առաւել գովաբանուեց Քրիստոսի կողմից, քան հարուստները, որոնք աւելի շատ գցեցին: Իսկ եթէ բնաւ ոչինչ չունես, դու լա՛ց եղիր եւ ապաշխարի՛ր նեղուած եղբօրդ համար: Մի բաժակ ջուր կարո՛ղ ես տալ, կարո՛ղ ես այցելել հիւանդին: Արդ, այս ամէնն Աստուած կընդունի որպէս մեծ ողորմութիւն, թէպէտ եւ քեզ փոքր է թւում, որովհետեւ Աստուած միայն ըստ կարողութեան է խնդրում. ում շատ տուեց, շատ է պահանջում նրանից, իսկ աղքատից մի փոքր՝ խօսքով հնազանդուել, ապաշաւել, հոգով եւ մարմնով սուրբ լինել:

Գիտնականներն էլ կարող են ողորմել խօսքով եւ գիտութեամբ: Եւ ինչպէս հոգին մեծ է, քան մարմինը, այնպէս էլ ով խօսքով է խրատում եւ ուսուցանում մեղաւորին՝ հանելով նրան մեղքից, կոչւում է Աստուծոյ բերան, եւ այդ աւելի մեծ ողորմութիւն է, քան մարմնականը: Դրա համար գիտնականը պէտք է ջանայ, արիանայ, քաջանայ եւ մարդկանց մտքի սեղանին դնի խօսքի եւ գիտութեան արծաթը եւ աճեցնի աստուածային իմաստութեան

քանքարը: Նա չպէտք է Աստուծոյ օրէնքների չար վաճառական եւ ծուլութեամբ՝ անիրաւ մշակ լինի, երբէք չպէտք է դադարի խրատելուց եւ յանդիմանելուց: Եւ այս պէտք է անի ոչ թէ մարմնաւոր շահի, այլ Աստուծոյ սպառնալիքների համար, որ շատերը օգտուեն: Նա թող կսկծացնող աղ լինի ծոյլերի համար եւ համեմի նրանց մեղկ եւ թոյլ բնութիւնը, իր անձը առանց գայթակղութեան պահի, լուսատու ճրագ լինի աշխարհի տան մէջ՝ մեղքով խաւարածների համար, եւ, ըստ իր կարողութեան, յանձն առած անուամբ նմանուի Աստծուն:

Եւ ինչպէս որ Աստուած ամէն բարիք տալիս է մարդկանց, խնամում ու խրատում է տգէտին եւ կատարեալ դարձնում, այնպէս էլ պէտք է գիտնականն անի՝ տգէտին դարձնելով առ Աստուած, յոյս տալով եւ մշտապէս խրատելով: Եւ Աստուած այս ամէնը մեծ ողորմութիւն կհամարի եւ կվարձատրի նրան, որովհետեւ սիրով եւ գթութեամբ կատարեց: Ուստի ջանացէ՛ք, սիրելինե՛ր, եւ մի՛ դադարէք խրատելուց, թէպէտեւ տգէտ եւ կամ ծոյլ մարդիկ վշտացնեն մեզ, որովհետեւ վարձքը ըստ վաստակի ու քրտինքի կլինի: Մեր Տիրոջը եւ Նրա ծառաներին էլ ատեցին յանդիմանելու պատճառով եւ բազում նեղութիւններ պատճառեցին նրանց: Որովհետեւ գրուած է. «Դռների մօտ ատեցին յանդիմանողներին եւ պղծեցին սուրբ խօսքերը»:

Եւ եթէ այսպէս անենք այս կեանքում, մեր վարձքը Աստուծոյ կամքով կլինի, եւ Նրա միւսանգամ Գալստեան ժամանակ Նրա աջակողմեան դասին արժանաւոր կլինենք մեր Տէր ու Փրկիչ Յիսուսի Քրիստոսի շնորհներով եւ մարդասիրութեամբ, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ահա հասնելով՝ ժամանեցինք առաքինութեան գլուխ եւ մայր խոստովանութեանը՝ զղջմամբ եւ ապաշխարութեամբ հանդերձ, որը բարձրագոյն աշտարակն է Աստուծոյ սուրբ Եկեղեցու եւ յոյսը՝ սուրբ Աւազանի բոլոր ծնունդների, որն անչափ ցանկալի ու սիրելի է Աստծուն, եւ Աստուած գովում է այն Հին ու Նոր Կտակարաններում: Բոլոր սուրբերը նոյնպէս աստուածային Գրքերով յորդորում են մեղաւորներին՝ ետ դառնալ, ապաշխարել եւ ընկնել Աստուծոյ առաջ: Քանզի Աստուած շատ է կամենում եւ սիրով, գթութեամբ կանչում է ամէն մէկին եւ մեղաւորի դարձով ցնծում է ուրախութեամբ, բայց յոյժ տրտմում է, երբ Իր անարատ ձեռքով ստեղծուածը անզեղջ է մնում:

Եւ դարձեալ՝ ո՛վ աստուածաստեղծ իշխան, Աստուածաշունչ գրքերից քննենք նաեւ այս անեզր երանութեան ու կատարեալ բարեգործութեան գեղեցկութիւնը, որ Աստծուց օտարացածին կրկին ետ է բերում առ Աստուած եւ ժառանգորդ դարձնում Նրա անհաս պարգեւներին: Եւ արդ, Աստուծոյ ստեղծած բոլոր երախտիքներից առաւել մեծն ու զարմանալին խոստովանութիւնն ու զղջման յոյսն է: Եւ դու, ո՛վ մարդ, մի՛ յուսահատուիր, եթէ շատ են քո յանցանքները, որովհետեւ քո բազում չարիքներն ու յանցանքները չեն կարող յաղթել Աստուծոյ ողորմութեանը, եւ առաւել համարձակ թող լինեն խօսքերս, որովհետեւ Աստուած անբաւելի ու անսահման է մեծութեամբ եւ անճառելի՝ առաւելութեամբ, քան չար սատանան, որովհետեւ նրա Արարիչն ու Տէրն է, ինչպէս նաեւ առաքելու է նրան անշէջ հրի մէջ:

Նմանապէս էլ Աստուծոյ գութը, ողորմութիւնն ու մարդասիրութիւնը առաւել բարձր է ու մեծ, քան սատանայի չարութիւնն ու մեղքերը, որ գործել է տալիս մարդկանց:

Եւ ինչպէս փոքրիկ հուրը չի կարող վնասել համատարած ծովը, այնպէս էլ աշխարհում գործուող չար մեղքերի բազմութիւնը, երբ մեղաւորը գալիս է զղջման խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, անյայտանում եւ ջնջւում են Աստուծոյ ողորմութեան առաջ: Եւ կամ ինչպէս մոմ, որ հալւում է կրակի առաջ կամ էլ ծխի պէս, որ ցնդում է: Միայն հաւատ ու յոյս ունեցի՛ր անձիդ մէջ, դո՛ւրս եկ մեղքերից եւ թո՛ղ դրանք եւ ստոյգ կերպով հաւատա՛, որ Աստուած կարող է քեզ ապրեցնել, որովհետեւ իր Որդուն իսկ չխնայեց իր թշնամիների առաջ: Քանզի առաւել փրկում եւ ուրախանում է, երբ սիրելիներս եւ բարեկամներս դառնում ենք դէպի Նա: Նայի՛ր եւ տե՛ս օրինակը եւ մի՛ յուսահատուիր, ո՛վ մարդ: Աշխարհում չկար այնպիսի մեղք եւ չար անօրէնութիւն, որ չգործեցին նինուէացիները: Բայց երբ զղջացին սակաւ օրեր, արտասուքով հանգցրին Աստուծոյ բարկութեան հուրը: Մեծն Դաւիթը շնացաւ եւ սպանեց, բայց Աստուած ընդունեց նրա դարձը, մեղան եւ արտասուքը: Իսրայէլի Մանասէ թագաւորը սղոցեց մեծն Եսայիին եւ Աստուծոյ ժողովրդին բռնութեամբ կռապաշտութեան դարձրեց: Բայց երբ ետ դարձաւ եւ ապաշխարեց Բաբելոնի երկաթէ բանտում եւ զղջմամբ ասաց «Տէ՛ր ամենակալը», Աստուած ուրախացաւ նրա դարձի համար եւ կրկին անգամ նրան թագաւոր դարձրեց Երուսաղէմում:

Տե՛ս նաեւ Պետրոսի դառն արտասուքը, որը ջնջեց ուրացութեան թարախը: Նայի՛ր Պօղոսի խոնարհութեանը, որ անարգ եւ հալածող կոչեց ինքն իրեն եւ ամենայն մեղաւորաց գլխաւոր: Յիշի՛ր նաեւ մաքսաւորին եւ մի՛ մոռացիր նրա գործը, որ գոչում էր տաճարում. ***«Աստուա՛ծ, քաւի՛ր ինձ՝ մեղաւորիս»***[96]*: Եւ ջնջուեցին նրա բազում անօրէնութիւնները, եւ իջաւ արդարացած: Վերցրո՛ւ եւ պահի՛ր աւազակի հաւատքը, որը մի խօսքով ջնջեց անսահման մեղքերի թարախը եւ բացեց դրախտի փակուած դուռը: Նրա հետ*

դու էլ ասա. «Տէ՛ր, յիշի՛ր ինձ, երբ գաս Քո արքայութեամբ»[97]: Գործի՛ր, ինչպէս անառակ որդին, որը թէպէտեւ յոյժ հեռացաւ Աստծուց եւ մեծամեծ մեղքերով միացաւ դեւերին, սակայն յիշելով հօր գութը, վերադարձաւ եւ ասաց. **«Հա՛յր, մեղայ երկնքի եւ քո առաջ»**[98], իսկ տէրն առաջին փառքին արժանացրեց նրան: Գրուած է. **«Զկայ որեւէ մէկը առանց մեղքի, եթէ մի օր անգամ ապրի աշխարհում», եւ դարձեալ՝ «Քո առաջ չի արդարանայ ոչ մի մարմնաւոր արարած»**[99]: Թող սա էլ իմանայ ամէն ոք, որ թէպէտ Աստուած մեզ ստեղծեց Իր պատկերով, մեզ համար մարդացաւ եւ չարչարուելով մահացաւ խաչի վրայ, սակայն ունենք նաեւ Աստուծոյ մեծ երախտիքը՝ խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը, որովհետեւ այն երկրորդ Աւազան շնորհեց մեզ:

Քանզի Աստուած գիտէր մարդկանց մեղսասէր եւ թոյլ բարքը, որ չէին կարող պահել Աւազանի շնորհները: Նա պարգեւեց մեզ անխոնջ խոստովանութիւնը, որովհետեւ որչափ էլ մեծ է մեղքը, բայց երբ գալիս է զղջման եւ խոստովանութեան, այն միայն մեղք է կոչւում եւ ջնջւում արտասուքով: Իսկ նա, ով խոստովանութեան չի գալիս, թէպէտեւ փոքր է մեղքը, բայց մահու չափ է եւ կոչւում է [մեղք] եւ անվերջ տանջանքների տանում այն ունեցողին: Արդ, եկէ՛ք, Ադամի՛ որդիներ, օրհնե՛նք Նրան, Ով մեզ ստեղծեց Իր պատկերով եւ Ինքը սիրով դարձեալ հագաւ մեր պատկերը: Եւ փառաւորե՛նք Նրան, որ կրկին անգամ գթայ մեզ եւ ընդունի մեր դարձը:

Եւ արդ, սրտագէտ Աստուած, եթէ գտնէր սրտանց զղջում եւ մեղայ սատանայի եւ կամ Ադամի սրտում եւ Նոյի ժամանակ սոդոմցիների, փարաւոնի եւ կամ չար Յուդայի մօտ, մեծապատիւ եւ սիրալիր գթասրտութեամբ կընդունէր նրանց, քանի որ անբաւ է Նրա ողորմութիւնը, եւ այսքան չարիքներ եւ նեղութիւններ չէին գայ մարդկանց որդիների վրայ, եւ Աստծուն էլ հարկ չէր լինի մարդանալ եւ չարչարուել մարմնով մարդկային ցեղի համար, որ

կամովին յանձն առաւ, որովհետեւ մարդասէր է եւ ողորմած:

Ահա՛ սա է բարձր աշտարակը, հաստատահիմն ու անսասանելի սանդուղքը, ահա՛ հեշտանցիկ եւ դիւրին կամուրջը՝ զղջումն ու խոստովանութիւնը, երբ սրտանց է կատարւում:

Եկէ՛ք, Աստուծո՛յ սիրելիներ, վերցնենք այն եւ բարձրանանք առ Աստուած, որ միշտ կանչում է մեզ՝ ասելով. **«Եկէ՛ք Ինձ մօտ, ամենայն մեղքերից տառապածնե՛ր, եւ Ես կհանգստացնեմ ձեզ»**[100]:

Այս մասին գիտեն ամէնքը, որովհետեւ երբ մեղաւորը խոստովանում է եւ դուրս գալիս խոստովանահօր մօտից, թեթեւանում է նրա խղճմտանքը, եւ հանգստանում նրա հոգին, կարծես թէ երկաթեայ բեռը վերցրին իր թիկունքից: Եւ արդ, ուրախանում է Աստուած, եւ ցնծում են հրեշտակները՝ տեսնելով զղջումը, որ արտասուքով ու խոստովանութեամբ է լինում: Նաեւ զուարճանում են երկրի արդարների դասերը, երբ տեսնում են ապաշխարութիւնը, որը կատարւում է սրտանց ու անկեղծ:

Ո՛վ դու, մա՛րդ, մի՛ յապաղիր եւ մի՛ ասա. «Շուտով դուրս կգամ մեղքերից եւ կդիմեմ Աստծուն»: Մի՛ խորհիր այդ քո մտքում, որովհետեւ այդ չար դեւն է սերմանում քո սրտում, որ ուշացնես եւ յանկարծակի անյոյս մեռնես եւ նրա հետ այրուես հրում: Եւ դարձեալ՝ ասում է չար սատանան. «Ի՛նձ տուր պատանեկութիւնդ եւ մեղքերով կատարի՛ր իմ կամքը: Եւ երբ յոյժ ծերանաս, Աստծո՛ւն տուր քո անձը եւ բարո՛ւք ապաշխարիր»: Սակայն դու մի՛ խաբուիր նրա չար պատրանքներից, որովհետեւ անյայտ է, եւ չգիտես, կծերանա՞ս, թէ՞ ոչ: Դրա համար գոչում է իմաստունը. **«Յիշի՛ր քո Արարչին մանկութեանդ օրերին»**[101], որովհետեւ այդ ժամանակ կարող ես ապաշխարել զօրաւոր մարմնովդ:

Գրում է աստուածային առաքեալը. **«Ահա՛ ընդունելի ժամանակը»**[102], քանի դեռ մարմնի մէջ ես եւ տէր ես քո կամքին նախքան ահաւոր Ատեանը: Քանի որ Աստուած այժմ բազմած է ողոր-

մութեան աթոռին, եւ ամէն ոք, որ մեղքին է պարտական, բայց գնում է Նրա մօտ եւ թողութիւն ու ողորմութիւն է խնդրում, ստանում է Նրանից: Իսկ ով ուշացնում է, անզեղջ մահանում, Աստուած վերջին օրը նստում է դատաստանի աթոռին եւ արդար իրաւունքով ողորմութիւն չի անում, այլ հատուցում է ըստ գործերի: Ապա յիրաւի գոչում է մարգարէն Աստուծոյ առջեւ եւ ասում. **«Մեղաւորին մահ չեմ կամենում, այլ նրա դարձը»**[103], որովհետեւ նրա համար մարդացաւ: Եւ մէկ այլ մարգարէ ասում է. **«Խոստովանի՛ր մեղքդ, որ արդարանաս»**[104]: Եւ մէկ ուրիշն ասում է. **«Անձամբ պատմեցի իմ մեղքերը, որովհետեւ նեխեցին հոգուս վէրքերն»**[105], ու **«Լաց եղայ իմ մահճում եւ թրջեցի անկողինս արտասուքով»**[106], եւ **«Ողորմեա՛, Տէ՛ր իմ, որովհետեւ հիւանդացայ հոգով»**[107]: Նաեւ՝ **«Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան»**[108], եւ՝ **«Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, քանի որ կոխկռտեց ինձ մարդը, որը թշնամի է»**[109]: Եւ դարձեալ՝ «Տէ՛ր, ողորմեա՛ մեզ, որովհետեւ Քեզ յուսացինք», եւ՝ «Դո՛ւ, Աստուա՛ծ, յոյսն ես ապաշխարողների»: Եւ այլ բազում այսպիսի խօսքեր, որոնք յոյս են տալիս մեղաւորներին եւ մխիթարում նրանց: Դրա համար Տէրն ասաց Պետրոսին. **«Եթէ քո եղբայրը քո դէմ շատ անգամ մեղք գործի եւ ասի՝ ապաշխարում եմ, ների՛ր նրան»**[110]: Եթէ մարդը ների մարդուն, դէ տե՛ս, թէ Աստուած որքան առաւել կների նրանց, ովքեր սրտանց դառնան դէպի Նա:

Ահա՛, սիրելինե՛ր, այս ամէնը եւ շատ ուրիշներ, որ կան աստուածային Գրքերում, թող մեզ օրինակ լինեն, որ անզեղջ չմնանք մեր մեղքերի մէջ, որովհետեւ սիրտը, որ չի զղջում ու ապաշխարում, նմանւում է սատանայի սրտին, որն էլ նման է դարբնի սալին: Որին թէպէտեւ բոլոր սուրբերը կռանի նման աստուածային խօսքերով յանդիմանում եւ խփում են, բայց բնաւ որեւէ բիծ կամ հետք չի թողնում նրա վրայ: Այսպիսին էին փարաւոնի, Յուդայի եւ Նոյի դարաշրջանի սոդոմացիների սրտերը:

Եւ այնքան հաճելի է ու բարձրագոյն խոստովանութեան եւ զղջման գործը, որ ոչ միայն Եկեղեցու վարդապետներն ու աստուածային Գրքերը գովեցին այն, այլեւ արտաքին իմաստասէրները վկայեցին եւ յոյժ գովեցին նրան, ով ունի այն: Եւ թէպէտ կռապաշտութեան մէջ էին, բայց այս մասին բարւոք խորհեցին, որովհետեւ Պիւթագորասն ասում է. «Մի՛ ծածկիր մեղքերդ, այլ յանդիմանի՛ր, որ բժշկուես»: Եւ Տիմոսթենէսն ասում է. «Ով բժշկից թաքցնում է մարմնի ցաւը, չի կարող առողջանալ, նոյնպէս էլ, ով թաքցնի մեղքերը, չի բժշկուի»: Արիստոտէլն ասում է. «Ով հեգաբար խոստովանի իր մեղքերը, կհաւասարուի անմեղին»: Եւ Կղիտարքոսն ասում է. «Նոյն հարթակի վրայ մի՛ դիր կրակը հանդերձի հետ, նմանապէս մի՛ պահիր մեղքը սրտիդ մէջ»: Եւ Թիոդիմոսն ասում է. «Մեղքերն են, որ արգելում են աշխարհում Աստուծոյ բարերարութիւնը»: Եւ մէկը սրանցից նայում էր մարդկանց գործերին եւ լալիս՝ ասելով. «Վա՜յ, որ ընդունայն եւ իզուր ալեկոծւում էք»: Մէկ ուրիշն էլ ծիծաղում էր մարդկային ցեղի վրայ ու ասում. «Յիրաւի արժանի էք ծաղրանքի, որովհետեւ խաղում էք երեխաների պէս»: Իսկ մէկ ուրիշն էլ սրանցից նայեց մեծագոյն քաղաքի վրայ եւ ասաց. «Ա՛յ շէն, ա՛յ շէն, թէ քանի տէր է փոխուել քեզ վրայ, որն էլ իմաստունը ունայն եւ սուտ է կոչում, եւ աւելորդ՝ գործն աշխարհի»: Եւ սուրբերից մէկ ուրիշն ասում է. «Երկիրն այլայլութեան եւ փոփոխման տեղ է»: Դրա համար պէտք է մտապահել ասածներս եւ ատել աշխարհն ու նրա կերպարանքը եւ սիրել Աստծուն եւ Նրա մնայուն բարիքները եւ խոստովանել սրտանց մեր մեղքերը, որ Նա թողութիւն շնորհի, ինչպէս որ խոստացաւ Իր անսուտ բերանով: Եւ անդադար խնդրենք Աստծուն, որ անտես անի մեր յանցանքները եւ տայ մեզ զղջման հոգի եւ մարմնեղէն սիրտ՝ լցուած ջերմագոյն ջրով եւ խառնուած աստուածային

հրով, եւ մեր միջից հանի քարեղէն սիրտը: Որպէսզի բարի ոգով եւ ջերմ արտասուքով լաց լինենք մեր եւ մեր եղբայրների մեղքերի համար: Եւ խնդրենք Աստծուց, որ մեզ անմեղ պահի, նաեւ մեր ննջեցեալներին բոլոր սուրբերի հետ [արքայութեան] արժանաւոր դարձնի մեր Տէր Յիսուս Քրիստոս, Որով եւ Որի հետ օրհնուած է ամենակալ Հայրը, կենդանարար ու ազատիչ Սուրբ Հոգով հանդերձ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԲ. Դժոխքի եւ նրա չար ու դառը տանջանքների մասին

Եւ արդ, որովհետեւ Աստուծոյ շնորհներով [քաղելով] աստուածային Գրքերից, փոքր ի շատէ պատմեցինք բարի գործերի մասին, թէ որոնք են, որ մեզ Աստուծոյ մշանջենաւոր ցնծութեանն ու պայծառ հանգստեանն են արժանացնում, [այժմ] ժամանակն է, ո՛վ աստուածաստեղծ եւ բարձրագահ իշխան, աստուածային Գրքերի միջոցով քննել նաեւ այս, թէ ինչ է դժոխքը, եւ կամ ինչ են նրա չարչարանքները: Չար է դժոխքի անունը մարդկանց լսողութեան համար, եւ չար է նրա յիշատակը, քանի որ այն չի օրհնւում նրանց մտքում: Բոլոր արարածները սարսափում են նրանից ու անարգում նրան եւ նրա ստեղծման [պատճառը]:

Իսկ արդարները ցնծում են, որովհետեւ չեն երկնչում նրա չարիքից եւ փառաբանում են նրա Արարչին: Եւ բոլոր աստուածային Գրքերը սաստում են մեզ նրանով, ինչպէս երկայրի դառնագոյն սրով: Չար եւ դառնագոյն են նրա տանջանքները, քացախահամ, դաժան հոտով, եւ լեղի են այն սիրողների քիմքում: Հայր Աստուծոյ մարգարէները ատեցին այն, իսկ Բան Աստուծոյ ընտրեալ առաքեալները ոտնակոխ արեցին նրա զօրութիւնը: Մարտիրոսներն ու բոլոր սուրբերը լցուեցին Աստուծոյ Հոգու շնորհներով եւ նզովեցին այն:

Եկէ՛ք եւ մենք, ո՛վ Աստուծոյ սիրելիներ, այս վերջին ժամանակներում Երրորդութեամբ փրկուածնե՛ր եւ պահպանուածնե՛ր, լի բերանով թքենք նրա վրայ եւ որքան ցանկանում ու սիրում ենք Աստծուն, փախչենք նրա չարիքներից: Բայց արդ, աստուածային Գրքերում սովորութիւն կայ ամէն նեղ ու խաւար վայր դժոխք կոչելու, իսկ թագաւորների եւ իշխանների խօսքի սովորութեամբ մահապարտին բանտարկելու տեղն են կոչում դժոխք եւ խաւարի տուն: Նմանապէս չար ճանապարհը, մացառուտ ու անհանգիստ վայրն է դժոխք անուանւում: Դժոխք են ասում կաթացող տանը եւ խաւար գիշերին, երբ ուղեկցւում է չար հողմով եւ հիւսիսային խստութեամբ համակուած սաստիկ անձրեւով: Իսկ աստուածային Գրքերը նաեւ այս աշխարհն են դժոխք անուանում՝ դրախտի բարւոք վայելքի եւ ճոխ հանգստի հետ համեմատած, որովհետեւ Ադամը որպէս մահապարտ նետուեց անէծքների այս աշխարհը: Դժոխք են կոչւում նաեւ գերեզմանները, որովհետեւ չարակերպ է նրանց տեսքը, նեղ եւ անձուկ: Ըստ գրուածի, որ ասում է. «Ոչ թէ նրանք, ովքեր դժոխքում են, կօրհնեն Քեզ», նաեւ՝ **«Ով է, որ կփրկի իր անձը դժոխքից»**[111]: Դարձեալ ասւում է. «Դժոխքը երկրի խաւարային մի տարածք է՝ լի արհաւիրքներով ու ահաւոր թնդիւններով, նեղ եւ յոյժ խորը քարակարկառների եւ մացառուտ ժայռերի մէջ», եւ՝ «Մինչեւ Քրիստոսի գալուստը սատանան այնտեղ էր պահում մարդկանց հոգիները»: Եւ դարձեալ ասում է. «Սանդարամետում է դժոխքը, ուր իջաւ Սադայէլը իր բոլոր չար դեւերով հանդերձ»: Եւ դարձեալ՝ «Դառն ու գարշահոտ ծովերի եւ դաժանակերպ լեռների յոյժ խորքերում է դժոխքը, այնտեղ, որտեղ չնական պիղծ դեւերը խառնակւում են չարակերպ եւ գարշահոտ վիշապների հետ: Եւ նրանց չարահոտ գոլորշին բարձրանալով՝ օդի միջոցով տարածւում է աշխարհում եւ դառն ցաւերով հիւանդութիւն է բերում մարդկանց վրայ»: Իսկ մարգարէն Բաբելոնն ու Եգիպտոսը

դժոխք համարեց Իսրայէլի համար, որովհետեւ այնտեղ սաստիկ տանջում էին նրանց:

Իսկ Տէրն ասաց, որ դժոխքը այս աշխարհից դուրս գտնուող թանձրամած խաւար է՝ նման Աստուծոյ հրամանով Եգիպտոսում պատահածին, որը կատարուեց Մովսէսի ձեռքով: Այն խորագոյն տեղ է՝ լի հրախառն խաւարով ու ծծումբով, նաեւ՝ սաստկագոյն ու չարակսկիծ սառնամանիքներով: Եւ Տէրն հրամայում է այնտեղ հանել ճախակողմեաններին՝ ասելով. **«Դո՛ւրս հանէք նրանց դէպի արտաքին խաւարը»**[112]: Քանզի այս աշխարհը, ուր բնակուած է մարդկային ցեղը, դրախտ եւ Աստուծոյ տուն է դառնալու: Եւ օրէնք չէ, որ մահապարտին թագաւորի տանը կամ քաղաքում սպանեն, այլ բնակավայրից դուրս:

Նմանապէս աստուածատես Յովհաննէս աւետարանիչը պատմում է իր աստուածացոյց եւ սուրբ տեսիլքում. **«Տեսայ, եւ ահա Վերին Երուսաղէմից դուրս ճգմուում էր Աստուծոյ հնձանը: Այն շատ մեծ էր եւ հազար վեց հարիւր ասպարէզ հեռու, իսկ արիւնը հասնում էր մինչեւ ձիու սանձը»**[113]:

Աստուծոյ հնձան է կոչւում դժոխքը, որը շատ մեծ է, որովհետեւ բոլոր մեղաւորներին հաւաքելու տեղն է: Ինչպէս ողկոյզն է ճգմուում հնձանում, այնպէս էլ հրեշտակների դասերը կճգմեն եւ կհարուածեն մեղաւորներին դժոխքում: Հազար վեց հարիւր ասպարէզը ցոյց է տալիս, որ դժոխքը շատ հեռու է արքայութիւնից՝ ըստ այնմ, որ Աբրահամն ասաց մեծահարուստին. **«Մեծ է վիհը մեր եւ ձեր միջեւ»**[114]: Արիւնը խորհրդանշում է չար կսկիծն ու ողորմելի, դառնագոյն հառաչանքները, որոնցով աղաչում էին հրեշտակներին: Ձին տանջող հրեշտակն է, իսկ սանձը՝ Աստուծոյ հրամանը, որ նրանց վրայ էր: Եւ այնպիսի դառնագոյն ողբերով էին հառաչում մեղաւորները, որ հրեշտակները փոքր-ինչ դադար տան:

Գիտուններից եւ իմաստուններից մէկ ուրիշը, որին Բենիկ էին

կոչում, նոյնպէս պատմեց դժոխքի մասին. այն Աստուած ցոյց տուեց նրան, եւ նա գրեց ի շահ լսողների: Ասում է. «Տեսայ, եւ ահա յոյժ մեծ մի ծով, որն հրեղէն էր եւ եռում էր՝ լեռնացած [ալիքներով] նման յորձանք տալով անդունդներից, այն բարձրաբերձ բլուրների պէս կուտակուելով, վեր բարձրանալով՝ ծածկել էր բոլոր արարածներին: Նրա ահաւոր որոտումներից դողում էին անդունդները, եւ շարժւում էին աշխարհի հիմքերը: Լսւում էին որոտի ու հրեղէն վիշապների ձայներ, նաեւ նրանց ատամների կրճտոցները, որոնք սասանեցնում էին արարածներին եւ քանդում իմ ոսկորները: Տեսայ, եւ ահա լեռների նման կրակի բովեր էին դուրս գալիս անդունդներից եւ շրջում հրամած ծովում: Նրանց բերանից բոցերը ցայտում էին գետերի պէս եւ լցւում էին հրամած ծովը: Իսկ հրամած ծովում միւսներից երիցս մեծ ու դառնատեսիլ մի բով կար, նրա միջից սաստիկ եռալով հուր էր դուրս գալիս՝ խռիւի պէս այրելով մնացածներին: Ես, նրա ահից ահ ու դողով համակուած, սարսափով լցուած, կանգնել էի: Եւ ասացի. «Վա՛յ Ադամի սերունդներին»: Ինձ մօտ կար մէկը, որն ասաց ինձ. «Տե՛ս, մարդո՛ւ որդի, եւ մտապահի՛ր, ահա ասում եմ քեզ, որ սա է անշէջ հուրը: Այդ բոցերը մեղաւորների տանջարաններն են: Իսկ այն մեծագոյն բովը, որ գտնւում է հրամած ծովում՝ միւսների միջեւ, դժոխքի որովայնն է, այնտեղ տանջւում են սատանան իր դեւերի հետ միասին եւ բոլոր մեծագոյն մեղաւորները, որոնք կատարեցին նրա կամքը ու չզղջացին»:

Եւ դարձեալ՝ նայեցի երկրորդ անգամ, եւ ահա հրամած ծովը լցուեց հրեղէն վիշապներով, որոնք եռալով կուտակւում էին իրար վրայ. նրանք լեռների պէս մեծ էին, հուրը գետի նման հոսում էր նրանց բերանից, եւ նրանց ռունգերից, ինչպէս հնոցից, ծուխ էր բարձրանում: Եւ նրանց՝ անդունդից դուրս գալուն պէս դողացին աշխարհի հիմքերը, իսկ որոտումներից պատառոտուեցին լեռները:

Ինձ հասաւ մի ձայն, որն ասում էր. «Տե՛ս, մարդո՛ւ որդի, դրանք հրեղէն որդերն են, որ ծնեցին մեղաւորներն իրենց վաւաշոտ ախտերով ու գարշելի ցանկութիւններով: Դրանք աճում են, մինչեւ կլինի համընդհանուր յարութիւն, եւ հրեղէն ծովը կծածկի արարածներին: Երբ մեռելները յարութիւն առնեն, արդարների դասերը այս հրից կվերցնեն լոյսն ու թեթեւութիւնը եւ կբարձրանան Քրիստոսին դիմաւորելու: Իսկ մեղաւորները կմնան թանձր մրուրի, նրա այրող զօրութեան ու հրեղէն վիշապների մէջ: Այդ հրեղէն վիշապները, որոնք Սուրբ Գրքում կոչւում են անքուն որդեր, շրջում են. ինչպէս որդին՝ մօրը, այնպէս նրանք կգտնեն մեղաւորներին, ովքեր իրենց վաւաշոտ ցանկութեամբ ծնեցին եւ զղջմամբ ու արտասուքով չսպանեցին նրանց, ժանիքներով կբռնեն եւ յաւիտեանս յաւիտենից կքամեն նրանց: Եթէ չես հաւատում ասածիս, ահա խօսքիս ամենամեծ վկայութիւնը. երբ ննջեցեալին դնում են գերեզման, քահանան Սուրբ Գրքից կարդում է նրա վրայ. «Ցանկութիւնը կանցնի, իսկ որդը չի մեռնի»: Ասուածի իմաստն այս է. մարդո՛ւ որդի, ահա մեռար, մտար գերեզման, հող դարձար, անցաւ եւ վերջացաւ քո գարշելի ցանկութիւնը, բայց այն որդը, որը ծնեցիր քո իսկ մեղքով, հրի մէջ է գտնւում եւ կմնայ մինչեւ քո յարութեան օրը: Արդ, մեր Տէրը յաւիտենական անուանեց տանջանքները, լացն ու ատամների կրճտոցը եւ սրով մէջտեղից հատելը: Եւ այս սաստիկ չարչարանքների մասին ասաց, որ մեղաւորները սարսռալի կսկիծից չեն կարողանում խօսել, տեսնել, ճանաչել իրար, ոչ էլ՝ գթալ, որովհետեւ հուրը լճացած խաւար է, իսկ չարչարանքները դառնագոյն են: Այնտեղ կան նաեւ չար դահիճների պէս խիստ ու դաժանատես տանջող հրեշտակներ, որոնք հրեղէն գաւազաններով անխնայ խփում են մեղաւորներին: Այնտեղ խստագոյն սառնամանիք է, որն հրից առաւել խիստ է այրում ու մորմոքեցնում: Այնտեղ է անհանգիստ տարտարոսը, ուր

անդադար տարուբերելով՝ միշտ խփում են մեղաւորներին: Սա էր, որ տեսաւ սերովբէատես Եսային եւ ասաց. **«Մ՞վ պիտի պատմի ձեզ, թէ կրակը բորբոքուել է»**[115], իսկ մի այլ տեղ՝ **«Նրանց որդը չի մեռնելու, եւ կրակը չի հանգչելու»**[116]: Դժոխքի յատակում [մարդիկ] ըստ [գործած] մեղքերի են տանջուելու. կան, որ փոքր-ինչ թեթեւ, կան, որ աւելի պակաս, եւ կան, որ շատ քիչ, սակայն կսկիծն այնքան դառնագոյն է, իսկ չարչարանքն՝ այնքան սարսափելի, որ եթէ մէկին չնչին չափով անգամ բաժին հասնի, կհամարի, թէ բոլոր մեղաւորների ողջ մորմոքն ու կսկիծն իրեն են տուել:

[Մեղաւորներն] այրւում ու տոչորւում են (այդ մասին է ասում աստուածային առաքեալը. **«Այրում են, ինչպէս կրակի մէջ»**[117]), սակայն մահը չի տիրում նրանց, որովհետեւ ըստ Տիրոջ խօսքի՝ յաւիտենական են նեղութիւններն ու տառապանքները: Նրանք [այնտեղից] դուրս գալ չեն կարող, այրւում ու խորովւում են միշտ, եւ մահ չկայ նրանց. այս ամէնը վկայում են աստուածային Գրքերը: Իրապէս վա՛յ մեզ, սիրելինե՛ր, եւ եղո՛ւկ Ադամի բոլոր սերունդներին, որոնք եկել են, եւ որոնք դեռ պիտի գան աշխարհ, որովհետեւ եթէ երկնքի եւ երկրի միջեւ եղած անսահման տարածութիւնը լցուած լինէր մանանեխի հատիկներով, եւ մեղաւորները նրանց քանակի չափով միայն մնային տաջանքների մէջ եւ յետոյ դուրս գային այնտեղից, այնպէ՛ս կցնծային ուրախութեամբ՝ համարելով, թէ բնաւ, մի օր անգամ չեն տեսել նրա երեսը: Նրանով ենք առաւել եղկելի ու ողորմելի, որ անցաւոր կեանքում մի փոքր իսկ մեղանչելով՝ ժառանգելու ենք յաւիտենական տանջանքները: Արտաքին իմաստասէրները եւս, թէեւ կռապաշտ էին, բայց խօսքը ձեւակերպելով՝ ասացին. «Դժոխքը համատարած ծովի մէջ է, մեղաւորները կանխաւ կանգնած են այնտեղ՝ ջրերի վրայ, եւ շատ մեծ, ահաւոր, լայն, երկսայրի, շատ դառնատես մի սուր մագից կախուած է նրանց գլխավերեւում: Նրանք անքթիթ նայում

են դրա սարսափելի տեսքին եւ դրա սպառնալիքից չեն համարձակւում խոնարհուել եւ ջուր խմել, այլ լայնատարած ծովի մէջ կանգնած՝ տոչորւում ու տանջւում են ծարաւից»: Ասացին նաեւ, թէ Արամազդը՝ Քրոնոսի որդին, պատրաստեց այն մեղաւորների համար: Իսկ նրա արքայութեան մասին ասացին. «Արամազդի որդին իբրեւ թագաւոր է անհաս գեղեցկութիւն ունեցող ծաղկաւէտ հաճելի դրախտում, որը լցուած է զանազան ծաղիկների անճառ անուշահոտութեամբ, եւ այնտեղ գնում ու բնակւում են արդարների հոգիները»: Եւ արդ, թէպէտեւ տգիտաբար ասացին այս ամէնը, բայց յաջող ձեւակերպեցին, որպէսզի ահ գցեն լսողների մէջ:

Բայց դարձեալ՝ իմացէք նաեւ այս, սիրելինե՛րս, որ աստուածային Գրքերում գտանք եւ Եկեղեցու իմաստուն վարդապետներից լսեցինք, որ մինչեւ Աստուծոյ Որդու գալուստը դժոխքն անհաւատութիւնն ու անյուսութիւնն էր: Եւ տեղին ու յարմար է խօսքս եւ ընդունելի Աստծուն ու մարդկանց, որ այն մարդը, որը յոյսը չի դնում Աստծու վրայ եւ չունի հաւատ, թէ կայ Աստուած եւ ըստ գործերի հատուցում, հոգով ու մարմնով դժոխքում է գտնւում, անգամ եթէ լինի ողջ աշխարհի տէրը: Սատանան Ադամից ծնուածներին կապել էր անյուսութեան եւ անհաւատութեան դառնատեսակ դժոխքում, մինչեւ Բան Աստուած մեզ համար մարդացաւ, [Իր] գիտութեան լոյսը ծագեցրեց մարդկային ցեղի համար եւ մարդկանց միջից հալածեց անյուսութիւնն ու անհաւատութիւնը, որոնք չար դժոխք էին եւ համարձակօրէն մեղանչել էին տալիս:

Հիմա էլ կան շատերը, որոնք անյուսութեան դժոխքում են, դուրս չեն գալիս մեղքերից ու վիշապի չար ժանիքներից եւ հաւատով չեն դիմում Աստծուն: Ահա՛, սիրելի՛, սրանք նման են այն մեղաւորներին, որոնց Տէրը քարոզեց դժոխքում, երբ խաչից իջաւ նրանց մօտ: Նրանք չհաւատացին մեր Տիրոջը, բայց Տէրը հանեց եւ ազատեց նրանց, որովհետեւ քանդեց դժոխքը, իսկ վերջին Օրը

կրկին այնտեղ պիտի ուղարկի նրանց, որ կատարուի Դաւթի հոգեւոր գիրը, որն ասում է. **«Մեղաւորները կրկին դժոխք կընկնեն, նաեւ բոլոր նրանք, ովքեր մոռացան Աստծուն»**[118]:

Աստուծո՛յ սիրելիներ, նայենք ինքներս մեզ բազում անգամ, քննենք մեր անձերը, որ այսպիսի չարիք չպատահի մեզ, որովհետեւ Տէրը խաչով ու սուրբ Աւազանով ազատեց մեզ դժոխքից, ուր դարձեալ կմտնենք մեր պիղծ մեղքերի պատճառով: Աստուածախօս Մովսէս մարգարէն այս առիթով ասաց. **«Ո՛վ մարդու որդի, քննի՛ր քո անձը. չլինի թէ մոռանաս քո Տէր Աստծուն եւ [ընկնես] չար մեղքերի մէջ»**[119]:

Քննենք օրինակներ, որոնք կատարուեցին առաջներում. Յեսուն աւերելով կործանեց Երիքովը եւ ասաց. **«Անիծեա՛լ լինի այն մարդը, ով կվերականգնի այն, որովհետեւ դա դժոխքի օրինակն է»**: Աքաաբի օրերին Ազան Բեդելացին չինեց այն եւ ընկաւ Յեսուի անէծքի տակ:

Այսպէս արեց Տէրը, որովհետեւ խաչի վրա Իր չարչարանքներով քանդեց ու հիմնիվեր տապալեց դժոխքը: Մինչդեռ մարդկանցից շատերը մեղքերով ու անօրէնութիւններով դարձեալ կառուցում են այն, կանգնեցնում են նրա աշտարակը եւ անյուսութեամբ, առանց զղջալու նստում են այնտեղ: Այն ահեղ Օրը նրանք կարժանանան Յիսուս Քրիստոսի նզովքին, որ պիտի ասի. **«Հեռացէ՛ք ինձնից, անիծեալնե՛ր, դէպի անշէջ հուրը**[121], որովհետեւ ես Իմ չարչարանքներով քանդեցի դժոխքը, իսկ դուք հեշտացաք մեղքերով եւ [կրկին] կառուցեցիք այն: Եւ արդ, հեռացէ՛ք դէպի ձեր չար շինուածքը»: Այս բոլոր սպառնալիքները ուղղուած են անյոյսներին, որոնք չզղջացին, եւ անհաւատներին, որոնք արհամարհեցին Աստծուն:

Բոլոր սուրբերը սարսափելի չարչարանքներով սպանեցին իրենց մարմինը, ինչպէս օտարի մարմին, ու շատ խնդրեցին

Աստծուն, որ փրկի իրենց սառնամանիքներից ու խաւարից, կիզող հրից ու անքուն որդերից:

Եղբայրնե՛ր, եկէք մենք էլ նմանուենք Աստուծոյ սուրբերին եւ կամովին խոստովանենք մեզ դառնացնող մեղքերը, մեր սրտից հանենք, ներենք մեր եղբայրների յանցանքները եւ բաղձալի պաղատանքներով ընկնենք Աստուծոյ առաջ, որ մեզ համար մարդացաւ: Եւ Նրա անարատ ծնող կոյս Մարիամին միշտ բարեխօս ունենանք Նրա մօտ, որ տայ մեզ իմաստութեան եւ զգաստութեան ոգի՝ չմոռանալու այս անվախճան տանջանքները, եւ պահպանի, որ այս սպառնալիքների ահից սպանենք մարմնի ախտն ու աշխարհի չար ցանկութիւնները եւ սրբութեամբ ապրենք այս կեանքում՝ միշտ սպասելով Նրա երեւալու Օրուան: Եւ դարձեալ՝ ջերմ արտասուքներով եւ մեծ թախանձանքներով աղաչենք Աստծուն, որ Իր բոլոր սուրբերի աղաչանքներով նաեւ մեր ննջեցեալներին փրկի դժոխքից ու նրա դառնակերպ տանջանքներից: Եւ արժանացնի մեզ Իր անճառելի հանգստին Իր բոլոր սուրբերի հետ, երբ գայ փառաւորուելու Իր սուրբերի մէջ եւ յայտնուելու աստուածայինների մէջ Հօր Բանը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ բոլորի Աստուածը, Որ օրհնեալ ու փառաւորեալ է միշտ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԳ. Մեղքերի մասին, թէ որոնք են եւ որքան

Եւ որովհետեւ աստուածային Գրքերից փոքր-ինչ իմացանք դժոխքի դառնութեան ու չար տանջանքների մասին, որոնք անպատմելի են ու յաւիտենական, հասաւ ժամանակը, ո՛վ քրիստոսասէր եւ վսեմախոհ իշխան, երբ հարկ է քննել նաեւ այն, թէ որոնք են անօրէնութիւնները, կամ թէ որքան են չար մեղքերը, որ գործւում են աշխարհում անօրէն սատանայի դրդմամբ, որ մեղք

գործողներին արժանացնում է անվերջանալի տանջանքների:

Արդ, առաջին չարն ու մեղքը ճշմարտապէս սատանան է, նա է պատճառը բոլոր մեղքերի եւ անօրէնութիւնների, որոնք գործւում են աշխարհում: Նա, ինչպէս նրա ընկերները, որոնք Աստուծոյ մօտ են եւ փառաբանում են Նրան ըստ Նրա կամքի, Աստուծոյ կողմից բարի ստեղծուեցին: Բայց սատանան անձնիշխան կամքով, որն ունէր, ինքնակամ յօժարութեամբ չար դարձաւ: Ոչ թէ չարը նրան բռնադատեց, եւ կամ մի այլ տեղից մտաւ նրա մէջ, այլ ինքն իրենից բուսեցրեց չարը եւ ծնող դարձաւ բոլոր չար մեղքերին, որոնք գործւում են աշխարհում: Քանզի չարը չունի որեւէ էութիւն կամ գոյութիւն, որովհետեւ ստեղծուած չէ Արարչի կողմից: Աստուածային Գրքերը վկայում են, որ Աստուած ամէն բան շատ ***բարի ստեղծեց***[122]*: Եւ դարձեալ՝* ***«Աստուած չստեղծեց մահը»***[123]*, այլ բանսարկուի պատրանքներով մեղքը մտաւ աշխարհ, իսկ մեղքի միջոցով էլ՝ մահը: Ինչպէս խաւարը՝ տարերքների ստուերը, ստեղծուած չէ եւ չունի էութիւն, այլ արեգակի լոյսի պակասից է գալիս եւ լոյսի երեւալով՝ փախչում է եւ անյայտանում, որովհետեւ չունի էութիւն, եւ կամ ինչպէս անպատուհան տունը խաւար է, բայց լուսամուտ բացելուն պէս խաւարը հեռանում է եւ աներեւոյթ դառնում, այնպէս էլ իմացիր, սիրելի՛դ Աստուծոյ, որ երբ հեռանում է բարին, գալիս է չար մեղքն ու նստում է այնտեղ, սակայն բարու գալուն պէս հալածւում են չարն ու մեղքը: Այդպէս էլ արեց սատանան. կամովին հեռացրեց բարին ու խոնարհութիւնն իր մտքից, եւ նախ եկաւ չար հպարտութիւնն ու նստեց նրա չար սրտում, եւ նա դարձաւ ինքնակամ չար: Խորանի մէջ սերովբէներից յետոյ էր նա եւ հպարտութեամբ ասաց. «Ինձնից ցածր բոլոր դասերը պէտք է փառաբանութիւն մատուցեն ինձ, եւ ապա ես՝ Աստծուն»: Նա մարմին չունէր, որ ծածկէր այս չար խորհուրդը, որը բուսեց նրա մէջ (ի տարբերութիւն մեզ, որ շատ խորհուրդներ*

ունենք մեր սրտերում, բայց մեր ընկերները չգիտեն այդ մասին), եւ սերովբէները նայեցին ու տեսան նրա սրտի մէջ բուսած այս չարիքը, որովհետեւ երեւում էր, ինչպէս սառոյցի կամ ապակու մէջ կողմնակի իրը: Եւ մեծ զօրութեամբ ձայն տալով միմեանց՝ անթիւ բազմութեամբ կուտակուեցին նրա վրայ, հրեղէն ահագդու սերովբէները ահեղահրաշ աստուածային մուրճերով խփեցին նրան ու նրա դասակիցներին, որոնք կրում էին նրա խորհուրդները, եւ երկիր շպրտեցին նրանց: Եւ երկնային զօրքերը գոչեցին. ***«Վա՜յ երկրի վրայ բնակուողներին, որովհետեւ ձեզ մօտ ընկաւ չար վիշապը՝ մեր եղբայրների թշնամին ու չարախօսը»***[124]*, ինչպէս պատմում է Յովհաննէս աւետարանիչը: Այս պատճառով է ողբում սուրբը մարգարէն՝ Աստուծոյ անունից այսպէս ասելով.* ***«Ինչպէս ալ ձեռքի մատանի եւ դրախտի պսակ ստեղծեցի քեզ: Դու անարատ գնացիր Իմ ալ կողմում, մինչեւ գտաւ քեզ քո իսկ չարութիւնը: Դրա համար էլ երկիր շպրտեցի քեզ»***[124ա]*:*

Ինչպէս ասացինք, նա է պատճառն ու սկիզբը բոլոր չարիքների եւ դժոխքի: Այս պատճառով էլ բոլոր սուրբերը կոչեցին նրան չարիք, մեղք, անօրէնութիւն, մահ, ապականութիւն, դժոխք, կորուստ, նաեւ շուն՝ լրբութեան, առիւծ՝ չարաչար պատառոտելու, զուարակ՝ խփելու պատճառով եւ վիշապ, որովհետեւ մեղքը հեշտութեամբ է մօտենում մարդուն, տգրուկ կոչեցին նրան, որովհետեւ չի յագենում մեղքերից, որոնք գործւում են աշխարհում, եւ չի ասում. «Բաւականացայ եւ յագեցայ»: Նաեւ լեռ կոչեցին նրան մեծագոյն չարիքների պատճառով, որոնք հաստատուած են նրա սրտում: Եւ այլ չար անուններ տուեցին, որովհետեւ անասելի է նրա չարութիւնը, եւ լեզուն չի կարող պատմել նրա անօրինութիւնները: Եթէ նա կարողութիւն ունենար, կամ եթէ Աստուած թոյլ տար, նա չարութեամբ, որ միայն ինքն ունի, մի օրում կապականէր եւ կկործանէր բոլոր արարածներին:

Արդ, առաջին չարիքը հպարտութիւնն է, որը բուսեց Սադայէլի ներսում, որով կործանուեց սատանան: Հպարտութեան միջոցով կործանեց նաեւ Ադամին ու Եւային, որովհետեւ հպարտացրեց Եւային, որն էլ կամեցաւ աստուածանալ, եւ գրգռեց նրան ընդդէմ Աստուծոյ: Նմանապէս կկործանուի նա, ով կհպարտանայ իր եղբօր վրայ:

Բայց դու, ո՛վ մարդու որդի, նայի՛ր քեզ եւ իմացի՛ր, որ թարախախառն շարաւ ես, ժահահոտ աղբի ման ես, գարշելի եւ դէճ ախտի բնակարան ես, զազրելի մեղքերի անօթ ես, ընդունակ ես ցաւերի, հիւանդութիւնների եւ բազում վշտերի, մահուան ու ապականութեան կերակուր ես, ինչո՞ւ ես հպարտանում, ի՞նչ պատճառով ես փքւում, ինչի՞ համար ես պարանոցդ շարժում ախտակից եղբօրդ վրայ եւ արհամարհանքով վեր բարձրացնում յօնքդ: Ինչո՞ւ չես նայում գերեզմանին ու չես տեսնում քո եղբայրների, իշխանների ու թագաւորների փտած ոսկորները, թէ ինչ են եւ կամ ինչպիսին, ո՞ւր է նրանց փառքը...

Արդ, կան երեք եղբայրներ՝ շատ սիրով կապուած միմեանց՝ սատանան, Յուդան եւ Մուհամեդը: Մէկը՝ հպարտ, որի պատճառով ընկաւ փառքից, եկաւ Եւայի մօտ եւ ասաց նրան. ***«Եթէ ուտես այս պտղից, կաստուածանաս»***[125]*, եւ այս ասելիս հպարտութիւն սերմանեց նրա սրտի մէջ, եւ Եւան խորհեց ուտել եւ Աստծուց առաւել բարձրանալ: Եւ վերցնելով՝ կերաւ, չարաչար կործանուեց եւ հեռացաւ Աստծուց: Նոյն հպարտութիւնը չարը սերմանեց Ադամի որդիների մտքի մէջ: Եւ ամէն ոք, ով հպարտանում է, յոյժ հեռանում է Աստծուց, ինչպէս իր մայր Եւան:*

Միւսն արծաթասէր, գող ու ագահ էր, որով էլ մատնեց մեր Տիրոջն ու խաչի վրայ մահուան դատապարտեց մեր Կենարարին, իսկ ինքը դարձաւ կորստեան որդի, որովհետեւ խեղդամահ լինելով՝ պատռուեց, եւ նրա փորոտիքը թափուեց: Եւ Ադամի բոլոր

ծնունդները գոչում եւ նզովում են նրա չար յիշատակը:

Իսկ միւսը՝ արուամոլ, որը Սոդոմի դժնդակ այգուց խմեց գինին, այն այգուց, որը տնկել էր սատանան: Ինքն արբած թմրեց եւ խմեցրեց այն կամազուրկ ազգերին, որոնց դուրս բերեց կռապաշտութիւնից, բայց չհասցրեց նրանց առ Աստուած: Ինքը դառնապէս կորաւ եւ չարաչար խեղդեց նաեւ նրանց:

Եւ դարձեալ՝ հպարտութեան եղբայրներն են ամբարտաւանութիւնը, ամբարհաւաճութիւնը, փառասիրութիւնը, կեղծաւորութիւնը, մարդահաճութիւնը եւ սնափառութիւնը: Սրանք միմեանց ազգակից ու գործակից են, համանունդ եղբայրներ ու սատանայի ծնունդներ եւ դիւրութեամբ կործանում են մեծ գիտնականներին, ուր մնաց թէ՝ տգէտներին ու հասարակ ժողովրդին: Եւ սրանց սկիզբն ու հայրը հպարտութիւնն է, որովհետեւ միանման է սրանց գործունէութիւնը: Քանզի հպարտն ասում է. «Ինձ հետ համեմատած՝ ամէն ոք անասուն է»: Եւ ետ է տանում պարանոցը, վեր բարձրացնում յօնքը արտեւանունքների հետ միասին եւ միշտ դիւանման՝ ցանկանում է երեւելի [լինել] մարդկանց աչքում: Բայց կանայք աւելի շատ են խաբւում հպարտութեան ախտից, ինչպէս նրանց մայրն ու պատկերը՝ Եւան, առաջինը խաբուեց. որովհետեւ հայելու մէջ տեսնում են իրենց գեղեցիկ պատկերն ու զգեստների պայծառ զարդերը, մտովի բարձրացնում են [իրենց անձը], ինչպէս լեռ, բայց ընկնելով՝ կործանւում են իրենց մայր Եւայի պէս. Կայէնի դուստրերից մէկը սովորեցրեց, եւ նրանք զարդարեցին ու պճնեցին իրենց դուստրերին դեւի պէս: Այս տեսնելով՝ Աստուծոյ որդիները, որոնք Սէթի զաւակներն էին, տոփանքով վաւաշոտ ախտով լցուեցին, խառնակուեցին Կայէնի դուստրերի հետ, եւ Տիրոջ Հոգին հեռացաւ նրանցից: Սրա մասին է Գիրքն ասում. **«Աստուծոյ որդիները խառնակուեցին մարդկանց դուստրերի հետ»**[126]: Մինչդեռ ոմանք սխալ հասկացան այս եւ տգիտաբար կարծեցին, թէ աստուածային Գիրքը հրեշտակների մասին ասաց:

Կանայք այստեղից սովորեցին պճնել իրենց ու իրենց դուստրերին՝ [կորստեան] պատճառ դառնալով բոլոր իրենց նայողներին, որովհետեւ ներկում ու փայլեցնում են իրենց երեսներն ու սեւադեղով կամարաձեւ գծում յօնքերը, մի այլ ծիրանափայլ սեւադեղով զարդարում են աչքերը, խորշելի գիսակներով ու թանկարժէք ծամկալներով շքեղացնում են գլուխներն ու ոսկեայ կամ արծաթեայ շղթաներով զարդարում ոտքերը, ձեռքերն ու ականջները, չար ծառայի կերպարանք են տալիս իրենց անձին, պէս-պէս գունաւոր կերպասներով պաճուճում են իրենց ողջ մարմինը եւ անպատկառ [տեսք ստանալով]՝ դառնում են դիւանման՝ ի կորուստ իրենց տեսնողների: Այդպէս կործանեց Հերովդէսին ու նրա բազմած իշխաններին Հերովդիայի դիւակերպ դուստրը: Այդպէս զարդարուած կինը յայտնապէս ասում է Աստծուն. «Ո՛վ Աստուած, որ բազմած հանդստանում ես երկինքների երկնքում, Դու չկարողացար ինձ գեղեցիկ եւ մարդկանց հաճելի ստեղծել ու զարդարել, դրա համար ես ջանացի եւ հակառակ Քեզ արարչագործեցի ու զարդարեցի իմ պատկերն ու անձը»: Ամէն ոք թող իմանայ այս, որ կնոջ մտքում եղած չար ու պիղծ խորհուրդները, նրա սրտում թաքնուած չարիքը տեսնողներին յայտնի են դառնում նրա զգեստից ու տեսքից: Վա՜յ այն կնոջ սատանայական մտքերին, որն առաջինը սովորեցրեց կանանց զարդարուել, որովհետեւ սատանան իսկապէս խառնուեց նրա մտքին: Ամէն մի զարդասէր կին կամակատարն է սատանայի եւ երկսայրի սուր է նրա ձեռքին: Քանզի տեսնելով կանանց՝ տղամարդիկ բնականօրէն շարժւում են, որովհետեւ ստեղծուած են նրանց արիւնից ու անձից: Եօթնապատիկ խաբւում ու կործանւում են, երբ տեսնում են նրանց արտաքին զարդարանքը: Ամէն մի այր մեղանչում է, երբ տեսնում է կանանց զարդարանքը. Աստուած այդ մեղքը կիտելու է կնոջ գլխին, որ զարդա-

րուեց ու մեղքով կործանեց տղամարդուն: Եսային դրա համար իրաւացիօրէն նախատում է զարդարուող կանանց եւ ասում նրանց. ***«Ձեր պէս-պէս եւ պայծառակերպ կերպասեղէն զարդերի փոխարէն փոշի կհագնէք եւ կամաչէք յաւիտեան»***[127]*: Առաքեալը դրա համար է խրատում նրանց ու ասում.* ***«Խոնարհութե՛մբ զարդարեցէք ձեր անձերը, կանա՛յք, սրբութեամբ եւ պարկեշտութեամբ, որպէսզի Աստուած հաւանի ձեզ եւ բնակուի ձեր հոգում: Եղէ՛ք տնարար, որդեսէր, ամուսնուն սիրող, հանդարտ ու աղօթասէր»***[128]*, որովհետեւ զարդարուելը պոռնիկի գործ է եւ ոչ նրա, ով արդար եւ սուրբ անկողնով ծնում է մանուկներ:*

Առաքեալը գրում է նաեւ. ***«Կանայք պիտի ապրեն որդեծնութեան համար»***[129]*: Քանզի առաջին սուրբ կանանց հետ Աստուած պիտի դասի այն կնոջը, որը զարդասէր չէ եւ որդիներ է ծնում արդար եւ պարկեշտ անկողնով, որի միւս գործերն էլ բարի են: Եւ եթէ կանանց սեռը ուշքի գար եւ միշտ պարկեշտ լինէր, տե՛ս, թէ ի՛նչ անպատմելի երանութեան եւ մեծ խնդութեան կարժանանար, որովհետեւ կոյս Մարիամ Աստուածածինը յայտնուեց նրանց սեռից, կուսութեամբ ծնեց բոլորի Արարչին, եւ կուսութիւնը մնաց անխախտելի, քանի որ Աստուած ծնուեց մարմնով, եւ կանացի ազգը հատուցեց տղամարդկանց ազգին եւ հաւասարուեց նրանց, որովհետեւ առաջին տղամարդը՝ Ադամը, առանց կնոջ, կուսութեամբ ծնեց ողջ մարդկութեան մայր Եւային, իսկ ամենասուրբը կոյս Մարիամն առանց տղամարդու ծնեց կատարեալ Մարդուն՝ բոլորի Աստծուն:*

Ամբարտաւանն ասում է. «Մարդկանցից ո՞վ է իմ ընկերը, եւ կամ ո՞վ կարող է ինձ հաւասարուել կամ բարձրանալ ինձնից առաւել»՝ այն, ինչ ասաց սրա անդգամ հայր հպարտութիւնը:

Ամբարհաւաճն իր մտքում ասում է. «Ինչ որ ասում ու գործում եմ, ա՛յն է ճիշտը», եւ հպարտութեամբ է նայում իր թէ՛ հոգեւոր

եւ թէ՛ մարմնաւոր գործերին եւ շատ է հաւանում դրանք: Իսկ այլոց խօսքերն ու գործերը չի համարում, թէ մի բան են:

Փառասէրն ատում է Աստուծոյ փառքը եւ սիրում է աշխարհի փառքը: Աստուծոյ մասին բնաւ չի խորհում, չի խօսում, իսկ Նրա արքայութեանն [արժանանալու] համար [ոչինչ] չի անում: Այլ խորհում, խօսում եւ անում է այն, որով մարդիկ կգովեն եւ կփառաւորեն իրեն, եւ ուրախանում է նրանց սուտ գովաբանութեամբ:

Գալիս եւ սրանց է միանում կեղծաւորութիւնը, որովհետեւ կեղծաւորը ջանում ու միշտ ծածկում է իր մեղքերը եւ մարդկանց աչքին ներկայանում որպէս բարեգործ, պահեցող, աղօթասէր, ողորմած, բայց նրա միտքը ուղղուած չէ Աստծուն ու Նրա բարի հատուցմանը, այլ միայն մարդկանց, որոնք կգովեն իրեն: Յիրաւի մեր Տէրն ասաց. ***«Այդ է նրանց գործերի հատուցումը»***[129ա]*: Ահա՛ վնասակար գայլը, որը, ըստ Տիրոջ խօսքի, ծածկել է իրեն գառան մորթով:*

Սրա եղբայրն ու շատ սիրելի գործընկերը մարդահաճութիւնն է, որովհետեւ մարդահաճը լսողների ցանկութեամբ եւ կամքով է խօսում ու գործում: Եւ երբ գալիս է ժամանակը՝ խօսելու Աստուծոյ իրաւունքների մասին, ջանում է թիւրութեամբ ու փափկութեամբ հաճելի լինել լսողներին: Եւ տրտմեցնում է Աստծուն, որովհետեւ դուրս է գալիս Նրա կամքից, որովհետեւ չի ընդունում, թէ իր առջեւ է Աստուած: Յիրաւի է ասում առաքեալը. ***«Եթէ հաճոյանայի մարդկանց, ապա Քրիստոսին ծառայ չէի լինի»***[130]*:*

Սրան միանում է նաեւ նորափառութիւնը, որովհետեւ այդպիսին կեղծաւորում ու մարդահաճոյ է դառնում եւ յոյժ հեռանում Աստծուց: Նա ջանում է, որ միշտ, ամէն խօսքում ու գործում նորից ու նորից գովեն եւ փառաւորեն իրեն իբրեւ Աստուած, իսկ ինքը ցնծում է՝ աւելի ու աւելի յղփանալով սուտ գովաբանութիւններից, ինչպէս Փրկիչն է ասում. ***«Մարդկանցից տրուած փառքն***

աւելի սիրեցին, քան Աստծուց տրուած փառքը»[131]:

Դարձեալ՝ սրանց մերձաւոր ու միախորհուրդ է սնափառութիւնը, որովհետեւ սնափառը միշտ ջանում է կերպասներով պաճուճել ու ցոփ հանդերձներով յարդարել իր անձն ու տունը: Իսկ հոգին՝ Աստուծոյ պատկերակցին, չի կամենում զարդարել բարեգործութեամբ, այլ աշխարհի սին ու սուտ փառքով: Միշտ կամենում է երեւելի լինել մարդկանց եւ ոչ թէ Աստծու [աչքում]: Եւ ջանում է նոյնութեամբ, ինչպէս վերը նշեցինք, որ մարդիկ իրեն գովեն եւ ստելով ասեն. «Դու ես, եւ քոնն է», ինչ որ ինքը չէ եւ չունի: Սիրում է սին փառքը եւ ատում ճշմարիտը:

Եւ ստութիւնը գալով՝ միանում է վերը նշուած չարիքներին, քանզի սրանք բոլորը եղբայրներ են՝ ծնուած հպարտութիւնից: Քանզի մարդը, որի խօսքերն ու գործերը ամբողջովին սուտ են, փառամոլ հպարտութեամբ ամբողջ զօրութեամբ ջանում է արդար եւ իրաւացի երեւալ մարդկանց, որ գովեն իրեն: Եւ միշտ սուտ է խօսում խօսքի բոլոր կերպերում, պարծենում է ստութեամբ, եւ ճշմարտութիւն չկայ նրա սրտում, որովհետեւ սուտ է նրա հայրը, որ եկաւ մեր մայր Եւայի մօտ եւ, ստութեամբ խաբելով, կործանեց նրան: Եւ ըստ Գրքի՝ «Տէրը կործանում է նրանց, ովքեր սուտ են խօսում»[132]*, եւ նրան, ով թիւրում ու հեգնում է ամէն խօսք եւ ուղիղ չի ասում խօսքի միտքը, նաեւ նրան, ով նենգում ու գողանում է ընկերոջ միտքը եւ խօսեցնում է, ինչ որ կար մտքում: Քանզի Կիպրիանոսն ասում է ստութեան դեւի մասին. «Բիւրակերպ էր չարիքներով եւ ստութեամբ ջանում էր ու ջանում է միշտ խաբել մարդկանց»: Արդ, գոյութիւն ունի հպարտութեան կարեւոր գործակիցը, բարեկամն ու սիրելի որդին՝ հերձուածողութիւնը: Քանզի բոլոր հերետիկոսները, որոնք հերձուածողներ են, հպարտութեամբ փառասէր ու անձնահաճ դարձան: Կամեցան նոր օրէնքներ սահմանել, մարդկանց աչքում երեւելի լինել եւ փառաւորուել աշխարհի սուտ փառքով: Եւ պառակտուելով՝ անջատուեցին Աստծուց ու հեռացան Նրա արդար օրէնքներից, որովհետեւ հերձուածողը հաւասար է կռապաշտին եւ նրա պէս հայհոյում է Աստծուն: Ինչպէս եւ Գրիգոր Աստուածաբանն է ասում. «Ովքեր Աստուծոյ Որդուն սոսկ մարդ են կոչում առանց Բան Աստուծոյ՝ Կոյսի որովայնում կամ խաչի վրայ կամ գերեզմանում եւ կամ ասում են երկու բնութիւն, երկու կամք եւ երկու ներգործութիւն, սրանք հաւասար են նրանց, ովքեր երկրպագեցին Աստարտին, գարշելի Քամովսին եւ Աստղիկին»: Ինչպէս պիղծ Արիոսը, որ Որդուն Հօրից փոքր ասաց, Մակեդոնը Հոգուն Որդուց նուազ ասաց, Սաբէլը Երրորդութիւնը մի Անձ համարեց, Սիմոն կախարդն ասաց. «Ես եմ, որ իջայ երկնքից, եւ ես մեծ մէկն եմ», իսկ յետոյ երկու բնութիւն կոչեց Քրիստոսին եւ երկու որդի: Նոյնն ասացին նաեւ Նեստոր Անտիոքացին ու Պօղոս Սամոսատացին, Թադէոս Մամեստիան, որը Մսիսն է, եւ Դեոդորոսը Կեորիս քաղաքից, Վաղենտիանոսը, Մարնին, Մարկիոնը, Բասիլիդէսը, Եպրոկատէսը, Գորգիանոսը եւ անթիւ բազում ուրիշներ, որոնք Քրիստոսին երկու բնութիւն կոչեցին, երկու կամք, երկու որդի եւ այլ բազում այսպիսի հայհոյութիւններ խօսեցին, որոնք մեր ժամանակը չի բաւականացնի գրաւոր հաղորդել, որովհետեւ աշխարհում Աստուծոյ Որդու մարմնանալուց ու մարդեղութիւնից առաջ եւ յետոյ սատանան հարիւր վաթսուն հերձուած գցեց մարդկանց մտքի մէջ: Իսկ սա էլ պատռելով բաժանեց Աստուծոյ Եկեղեցին եւ բազում հայհոյութիւններ սերմանելով՝ տնկեց Քրիստոսի հաւատացեալների մէջ: Քանզի չարը կործանուած տեսաւ իր թագաւորութիւնը, որ կռապաշտութեան ժամանակ ունէր, անօրինութեամբ ջանաց եւ չար հերձուածութեան որոմը սերմանեց ցորենի բարի սերմերի վրայ, որ Տէրն էր սերմանել մարդկանց որդիների մտքում:*

Եւ արդ, աշխարհում գործուող այս բոլոր չարիքների եւ այլ

անթիւ մեղքերի պատճառը եղաւ հպարտութիւնը:

Ուստի, Աստուծո՛յ սիրելիներ, մեզ պէտք է եւ պատշաճ է փախչել հպարտութիւնից, որը սատանայի գործն է, եւ խոնարհամիտ լինել Աստուծոյ առաջ. ամէն մէկի մօտ եւ ամէն մէկին առաւել համարենք մեզնից եւ սրանով իսկ նմանուենք Աստուծոյ Որդուն, որովհետեւ այս է Աստուծոյ կամքն ու հաճութիւնը: Այս կեանքում հեռանանք վերը նշուած մեղքերից եւ այլ անբաւ անօրէնութիւններից, որպէսզի աշխարհից հեռանալիս բոլոր սուրբերի հետ անճառելի բարիքներին ու հանգստին արժանի լինենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհներով եւ մարդասիրութեամբ, Որն օրհնեալ է ու փառաւորեալ Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԴ. Որովայնամոլութեան, արբեցողութեան, ագահութեան, արծաթասիրութեան, անյուսութեան, ուրացութեան, անհաւատութեան ու թովչութեան մասին

Որովայնամոլութիւնը կատարեալ չարիք է եւ բազում մեղքերի պատճառ: Այս մեղքի պատճառով է, որ մարդը զրկուեց աստուածային փառքից. որովհետեւ սատանան կնոջը նախ ասաց. ***«Երբ ուտես պտղից, կաստուածանաս»***[133]*: Եւ մեր մայրը՝ Եւան, երբ լսեց աստուածանալու մասին, հպարտացաւ: Ապա [սատանան] նրա մէջ սերմանեց որովայնամոլութիւնը, եւ սկսեց ճմլել ու անժուժկալութեամբ լլկել նրա որովայնը. որքան պտուղն էր գեղեցիկ, առաւել եւս այն փայլեցնում էր կնոջ աչքի առաջ: Յետոյ նրա մտքի մէջ սերմանեց ագահութիւնը, եւ նա խորհեց. «Ամէն բանի տէրն ու թագաւորը ես կլինեմ եւ կիշխեմ իմ ամուսնու՝ Ադամի վրայ, կաստուածանամ եւ կծնեմ աստուածորդիներ»: Եւ չդիմանալով քաղցին (որովհետեւ պիղծ դեւը նեղում էր նրան)՝ վերցնելով՝ ճաշակեց պտուղը, ու խայտառակ ամօթանքներով մարմինը մերկացաւ:*

Հոգու եւ մարմնի այս մեծ չարիքը, որ կայ աշխարհում, պտղի մի անգամ ճաշակումը բերեց մարդկային ցեղի վրայ, որովհետեւ շատ վաւաշոտ ախտեր ու գարշանքներ սրանից ծնուեցին: Եւ ով ասի. «Խոտելի չէ որովայնամոլութիւնը», հարկ է, որ մտաբերի, թէ որտեղից եղաւ Եւայի կործանումը, նաեւ Մովսէսի ժողովրդին, թէ ի՞նչը պատճառ եղաւ, որ երկրպագեցին հորթին: Աստուածեղէն Գիրքն ասում է. ***«Վեր կացան պարելու եւ զոհելու հորթին, իսկ դրանից յետոյ կերան, խմեցին ամաղեկացիների բերածը եւ ելան ու սկսեցին լրբաբար պոռնկել ամաղեկացիների դիւանման զարդարուած դուստրերի հետ: Իսկ Տիրոջ հրեշտակապետը նոյն պահին նրանցից քսաներկու հազար մարդու սպանեց: Յետոյ վեր կացաւ Փենեհեզը, օրհնութեամբ սրբեց, անցկացրեց ցասումը եւ ինքն էլ արդարացաւ Աստուծոյ առաջ»***[134]*:*

Արդ, որովայնամոլութեան ախտի մասին այսքանը բաւական է, որովհետեւ պահքի մասին ճառում էլ դրա մասին բազում խօսքեր ու վկայութիւններ մէջբերեցինք, որ աստուածեղէն Գրքի վկայութեամբ չար ախտ է:

Նաեւ արբեցողութիւնը հաստատապէս դիւական ախտ է եւ որովայնամոլութեան եղբայր ու գործակից է համարւում, որովհետեւ միանման է սրանց գործը. երկուսն էլ գէջ ու վաւաշոտ ախտերի յորդորողներ են: Յիրաւի բոլոր Աստուածաշունչ Գրքերը անընդհատ պախարակում են այն: Հնում եւ խաւարային ժամանակներում մարգարէն գոչում է ու ասում. ***«Վա՛յ նրանց, որ գինի են խմում ու ճգտում նրան, որովհետեւ գինին հէնց այդտեղից կայրի նրանց»***[135]*: Եւ դարձեալ՝ «Քահանաները գինի էին խմում եւ օծւում իւղով»: Հեղիի որդիներին Աստուած կործանեց արբեցողութեան եւ ծուլութեան պատճառով: Իսկ բոլոր ուխտաւորները,*

ինչպէս Սամփսոնը, Սամուէլը եւ անթիւ ուրիշներ, յոյժ սուրբ էին պահում իրենց անձերը գինուց: Ինչպէս Յովհաննէս Մկրտիչն աստուածային Գրքում ասաց. **«Պահքի օրերին որթատունկի բարի-քից մի՛ ճաշակիր»**[136], որովհետեւ գինին ամօթով պատեց մեծ նահապետ Նոյին՝ աշխարհի երկրորդ հօրը, եւ նրա՝ իր որդուն նզովելու պատճառ դարձաւ: Գինին յիմարացրեց հռչակաւոր Ղովտին եւ թելադրեց նրան յիմարութեամբ չար խառնակութիւն գործել իր երկու դուստրերի հետ, երբ դուրս եկան Սոդոմից: Ժողովուրդը կերաւ, խմեց, ինչպէս նշեցինք վերեւում, զոհ մատուցեցին հորթին եւ պոռնկեցին ամաղեկացիների դուստրերի հետ: Անասելի գէջ ախտը Նոյի ժամանակ եւ Սոդոմում յորդորեց միայն ուտելու եւ խմելու, որովհետեւ գրուած է. **«Ուտում էին եւ խմում»**[136ա]:

Ո՞վ կարող է պատմել այն չարիքի մասին, որ գործել է տալիս գինին. որովհետեւ տանում է խելքը, վերցնում իմաստութիւնն եւ անգամ անասունից աւելի չարացնում մարդուն: Եւ յիրաւի սուրբ առաքեալն արբեցողին ու պոռնիկին մի լծով է կապում եւ դուրս հանում արքայութիւնից՝ ասելով. **«Պոռնիկները, արբեցողներն ու արուամոլները չե՛ն կարող ժառանգել Աստուծոյ արքայութիւնը»**[137]: Դարձեալ գրում է. **«Մի՛ արբէք գինով, որի մէջ զեխութիւնն է»**[138]: Եւ մեր Տէրը հրամայում է. **«Ձեր սրտերը մի՛ ծանրացրէք շուայտութեամբ եւ արբեցողութեամբ, որովհետեւ մահուան օրը գողի նման կգայ ձեզ վրայ. ի՞նչ կպատասխանէք Մարդու Որդուն»**[139]: Գրում է նաեւ իմաստունը. **«Պիտի նկուն լինեն երգող աղջիկները»**[140], այսինքն՝ պիտի ամաչեն ու կորանան վերջին օրը նրանք, ովքեր սիրում են գինին ու գուսանների երգերը: Քանզի գուսանը սատանայի կոչնակն է, որը գինու եւ չար երգերի միջոցով վաւաշոտ ախտերի շարժիչն է: Դատաստանի Օրը անհամար հոգիներ դժոխքի ժառանգորդներ կդառնան գինու պատճառով:

Գրուած է. **«Սգոյ տուն գնալը խնջոյքի տուն գնալուց լաւ է»**[141], քանզի այնտեղ խայտալով կաքաւում են դեւերը: Գրուած է նաեւ, որ երբ իշխանական միջավայրում ճաշի ժամանակ մի իմաստասէրի գինի են մատուցել, նա, վերցնելով այն, թափել է գետնին եւ ասել. «Լաւ է, որ դա թափուի հողին, քան թէ ինձ կործանելով՝ գետնին տապալի»:

Արբեցողութիւնը կրկնապատիկ մեծ չարիք է, քան դիւահարութիւնը, որովհետեւ դիւահարն իր անձն է միայն չարչարում ու կոծում, չարիք ու վնաս չի պատճառում ուրիշներին, իսկ հարբեցողը տանջւում է մարմնով, չարչարւում է հոգով, մեռնում մեղքերով, գործում անկարգ խառնակութիւններ եւ դառնում շատերի կորստեան պատճառը, եթէ ձեռնհաս է լինում: Ամէն բան, եթէ չափի սահմաններում է գործւում, պատժի արժանի չէ: Գրուած է. «Ով կին ունի, իր կնոջը որդեծնութեան նպատակով՝ բնութեան օրէնքով է մերձենում եւ հեռու է սոդոմական չար խառնակութիւնից, այնպիսին պատժի արժանի չէ: Իսկ ով թողնելով իր կնոջը՝ գնում է ուրիշ կնոջ մօտ եւ շնանում, շների ու պոռնիկների հետ է դատապարտւում, թէպէտ միակերպ են նրա հեշտասիրութիւնն ու ցանկասէր աղտեղութիւնը ինչպէս իր, այնպէս էլ օտար կնոջ հետ»:

Այսպէ՛ս իմացիր՝ եթէ գինի ամենեւին չխմես, լաւ է, սակայն եթէ ուրախութեան եւ սիրոյ օրերին եւ կամ մարմնի տկարութեան, ինչպէս նաեւ մարմնի այլ կարիքների համար չափաւոր խմես, չես պատժուի: Բայց եթէ շատ խմես, խելագարուես, շուայտանաս ու զեխանաս, կպատժուես Աստծու կողմից, որովհետեւ մեղքերի սկիզբ դարձաւ, ինչպէս որ սուրն է: Որովհետեւ եթէ սրով սպանես կատաղի գազանին կամ օտար թշնամուն, որոնք կամենում էին քեզ սպանել, անմեղ ես, իսկ եթէ նոյն սրով սպանես մի սիրելի անձնաւորութեան եւ կամ նրան, ով քեզ չար չէր կամենում, ճշմարտապէս մարդասպան ես:

Նաեւ ագահութիւնն է մեծ կորստեան պատճառ է դառնում: Ինչպէս Եսայի մարգարէն ագահի մասին գրում է. **«Վա՜յ նրանց, ովքեր տանը տուն են կցում եւ ագարակին ագարակ միացնում, իսկ ընկերոջն արտաքսում են զրկանքներով. թէպէտեւ մեծամեծ շինութիւններ էլ կառուցեն, աւերակ են դառնալու»[142]:** Գրուած է. «Իզուր է տագնապում ու ճիգ թափում, գանձ կուտակում՝ հոգին կորցնելով եւ չիմանալով, թէ ով է ժառանգելու այն», ինչպէս բազմիցս տեսնում ենք: Նաեւ ագահութիւնը, որ անյագութիւն է, բազում անպատշաճ անգթութիւններ է գործել տալիս. որովհետեւ [ագահն] անողորմաբար զրկում է ամէն մէկին, անխղճօրէն յափշտակում ուրիշների ունեցուածքը եւ աներկիւղ գողանում ու սպանում: [Այդ ախտն էր], որ գործել տուեց Յուդային ու Գեհեզին: Քանզի չար արբեցութիւնն է ագահութիւնը եւ աւելի պիղծ է, քան դիւահարութիւնը: Նաեւ տզրուկի եւ չար սատանայի նման բացում է մտքերի բերանը եւ ջանում կլանել բոլոր գանձերն ու հայրենի ժառանգութիւնը, եթէ միայն հնար կամ կարողութիւն ունենայ. որովհետեւ ագահի միտքը նման է տզրուկի, որը ծծում է արիւնը, փսխում, ապա դարձեալ սկսում անյագութեամբ:

Եւ յիրաւի գրեց սուրբ առաքեալը. **«Ագահութիւնը կռապաշտութիւն է»[143]**, որովհետեւ [ագահն] անիրաւաբար ջանում է ու ժողովում՝ չմտաբերելով Տիրոջ ասածները. **«Ի՞նչ օգուտ քեզ, եթէ ողջ աշխարհը շահես, սակայն հոգիդ կորցնես»[144]:** Եւ դարձեալ ասում է. **«Ո՞ւմն է լինելու ինչ որ ամբարել ես, եթէ այս գիշեր հոգիդ քեզնից ետ պահանջեմ»[145]:**

Եւ որովհետեւ անբաւ չարիք է ագահութիւնը, մեծն Կիպրիանոսն ասում է. «Երբ չար կախարդութեամբ կռապաշտութեան մէջ էի, տեսայ բոլոր ախտերի եւ մեղքերի դեւերին, որ տեսակ-տեսակ մեղքեր եւ անօրէնութիւններ են գործել տալիս մարդկանց: Տեսայ նաեւ անյագութեան դեւին, որն ագահութիւնն է. լայն գլուխ ունէր եւ երկար բերան: Ետեւի կողմից ծծում էր լեռները եւ կամենում էր կուլ տալ ողջ աշխարհը»:

Արծաթասիրութիւնն ագահութեան եւ կռապաշտութեան ընկերը, եղբայրն ու գործակիցն է: Միապէս չար է նրանց ե՛ւ գործը, ե՛ւ խորհուրդը, որովհետեւ արծաթի սիրոյ համար շատերն են անահ գողանում, զրկում ու սպանում, հեռանում հաւատքից:

Ահա՛ վատ գինուց հարբելուց բազմապատիկ վատ եւ դիւահարութիւնից բազմապատիկ գարշելի խելագարութիւն: Արծաթի սիրուց գործած չար Յուդայի օրինակը բաւական է մեզ, քանզի նա արծաթասիրութեան պատճառով խաչի եւ մահուան մատնեց իր Արարչին ու Վարդապետին, Որն եկել էր կեանք տալու ողջ աշխարհին եւ տուեց անսահման պարգեւներ ու շնորհներ: Այստեղից սովորի՛ր, թէ որքան չարիք է գործւում աշխարհում այս չարագլուխ ախտի պատճառով: Արդ, բազում էր արծաթը, որը խաբեց Յուդային եւ կործանեց սատանայի ձեռքով, որը ստորացրեց նրա միտքը եւ նրան ճանաչել չտուեց իր մեծ կործանումը:

Իսկ մեր ժամանակներում շատերը մի քանի արծաթի, փոքր-ինչ շահի, ասենք՝ մէկ դրամի եւ կամ հինգ խերեւեշի համար չարաչար երդուելով՝ ուրանում են Քրիստոսին ու զրկում շատերին:

Մի իմաստասէր տեսնում է, որ գալիս է ծանր բեռնաւորուած ջորիներով մի զօրեղ մարդ: Նրա այն հարցին, թէ՝ «Ի՞նչ է դրա բեռը, եւ ո՞ւմն է դա», պատասխանում են, որ գրաստը այն ինչ անունով իշխանինն է, վրայի բեռը արծաթեայ ու ոսկեայ ամաններ եւ այլ անօթներ են՝ նրա իշխանական ճաշի պէտքերի համար: Եւ նա, հոգոց հանելով, ասում է. «Ո՜հ, որդեակնե՛րս, իմացէ՛ք՝ նա, ով հաւաքել է դրանք, ճշմարտապէս կործանել է իր հոգին»:

Եւ դարձեալ՝ արտաքին իմաստասէրներից մէկը գրում է մի իշխանի մասին, որն այրւում, տոչորւում ու խորովւում էր ագահութեան ու արծաթասիրութեան ախտից եւ զրկելով [ուրիշներին]՝

մեծ ցանկութեամբ անընդհատ կուտակում էր: Զաստուածները բարկացան նրա վրայ եւ նրա տանը եղած ամէն բան ոսկի ու արծաթ դարձրին: Երբ նա ուզում էր որեւէ բան ուտել, այն արծաթ էր դառնում նրա ձեռքերում: Ի վերջոյ նա սովամահ եղաւ:

Անյուսութիւնն առաւել չարագոյն ու պատառող գազան է, քան վերը նշուած չարիքները, որովհետեւ նա, ով յոյս չունի, թէ գոյութիւն ունի յարութիւն եւ բարի ու չար գործերի հատուցում, չի կարող բարիք գործել ո՛չ Աստուծոյ եւ ո՛չ էլ մարդկանց համար: Նա իրեն էլ չի խնայում եւ գործում է այն բոլոր չարիքները, ինչին հասու է լինում: Այդպիսին չի զղջում եւ չի խոստովանում իր մեղքերը. որովհետեւ շատերն են, որ երբ մեծագոյն մեղք են գործում, յոյսը կտրում են Աստծուց եւ չեն գալիս խոստովանութեան: Քանզի անյուսութեան դեւը կուրացնում է նրանց միտքը եւ չի թողնում մտաբերել տէրունական խօսքը, որ ասում է. «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածնե՛ր ու բեռնաւորուածնե՛ր, եւ ես ձեզ կհանգստացնեմ»[146]: Եւ շատերն են յիշում խեղդուելու մասին եւ ինքնասպան լինում, որովհետեւ չար սատանան նեղսրտեցնում է շատ մեղք ունեցողին ու անյոյս դարձնում, ինչպէս Յուդային, որը չկարողացաւ համբերել նեղսրտութեանը, որ սաստիկ խղճմտութիւնից եկաւ նրա վրայ, եւ նա գնաց խեղդուեց ու սատկեց:

Սրան միանում են ուրացութիւնն ու անհաւատութիւնը, որովհետեւ նմանապէս չար են եւ սատանայի պատկեր. որովհետեւ ուրացողն ու անհաւատը համարձակօրէն ու աներկիւղ են մեղք գործում, ինչպէս անբան անասունը: Քանզի եթէ մարդը մեծ հաւատով իր աչքերի առաջ չի տեսնում Աստծուն, հանդերձեալ աշխարհն ու դատաստանի Օրը, կգործի ամենայն չարիք, եթէ իշխանների եւ դատաւորների ահը չլինի նրա վրայ: Տեսնում ենք նաեւ բազում տգէտների, որոնք իշխաններից ու դատաւորներից առաւել են երկնչում, քան Աստծուց, եւ ակամայ բարիք են գործում:

Յիրաւի է գրուած. **«Անզգամն իր սրտում ասաց, թէ գոյութիւն չունի Աստուած»**[147]: Եւ դարձեալ՝ **«Անօրէնն ասում է իր մտքում, թէ իր աչքերի առջեւ Աստուծոյ երկիւղ չկայ»**[148]:

Դարձեալ՝ համախոհ է ասածներիս եւ սրանց սիրով կապուելով՝ միանում է նաեւ թովչութիւնը, որը ճշմարտապէս հակառակ է Աստուծոյ հրամաններին, որովհետեւ Աստուած հրամայեց, որ մարդկային ցեղը մշտապէս մեծ թշնամութեամբ, ոխակալութեամբ ու ատելութեամբ լցուած լինի օձերի ցեղի նկատմամբ: Եւ պէտք է համարձակօրէն սպանել ու սաստիկ զզուանքով հեռանալ նրանց չարակերպ ու դառնագոյն տեսքից: Եւ սա ճշմարիտ է, որովհետեւ օձը դարձաւ սատանայի անօթ, բերան ու լեզու եւ [Աստծուց] պառակտելով՝ խաբեց, կործանեց մեր մայր Եւային ու նրա բոլոր սերունդներին: Եւ սա ստոյգ է, որովհետեւ ամէն ոք, երբ օձ է տեսնում, զարհուրում ու սոսկում է նրա ահից, որովհետեւ սատանան իր զօրութեամբ միացած է օձերի ցեղին: Եւ այնպիսի սիրով են կապուած միմեանց հետ, որ նաեւ ինքը՝ մեղքերի մայր սանտանան, բոլոր սուրբերի կողմից որպէս վիշապօձ դիտուեց ու անուանուեց:

Իսկ իւրաքանչիւր թովիչ ամենից առաջ սէր ու խաղաղութիւն է հաստատում սատանայի եւ ապա օձի հետ, որը մարմինն ու գործարանն է սատանայի: Եւ վերցնելով օձին՝ դեւերի միջոցով աղաչում է եւ սիրով իր մօտ պահում թշնամի եւ ատելի էութիւնը: Եւ այս անողը դառնում է Աստծուն թշնամի ու ատելի: Եւ երբ այս գործերը հաստատւում են որեւէ մէկի մօտ, այնժամ նա համարձակօրէն մեղքեր ու անօրէնութիւններ է գործում, որովհետեւ իր կամքով սիրեց սատանայի սիրեցեալին: Դրա համար բոլոր Աստուածաշունչ գրքերը կախարդի հետ հաւասարապէս դատեցին թովչին, որովհետեւ նրա գործակիցն ու ընկերն է, եւ միապէս գործակից են սատանային:

Ուստի, Աստուծոյ սիրելի ընտրեալնե՛ր, մեզ պէտք է եւ պատ-

շաճ է ամէն ժամ լիաբերան փառաւորել մեր Արարիչ Յիսուս Քրիստոսին՝ Հօր Բանին, որ եկաւ եւ ցոյց տուեց մեզ Իր մեծութիւնն ու ողորմութիւնը: Եւ մեզ ամէն ինչում գիտուններ դարձրեց ու լուսաւորեց՝ իմանալու այստեղինն ու այնտեղինը: Ապա յիրաւի մենք պարտաւոր ենք ամէն ժամ յիշել Աստուծոյ՝ մեզ համար գործած անբաւ երախտիքը եւ մեզ խոստացած հանգիստը, որը անհաս է մարդկային մտքին: Եւ որքան հնարաւոր է, փախչենք բոլոր մեղքերից եւ սրբութեամբ ու առաքինութեամբ ապրենք այս կեանքում, որ Աստուծոյ Որդին մեզ հանգստեան տեղ տայ, երբ գայ դատելու մարդկանց որդիներին, եւ դասի մեզ անմարմին զուարթունների հետ միասին իր բոլոր ընտրեալ անդրանիկների հետ, որ նրանց հետ անլռելի ձայնով արժանաւոր օրհնութիւն, գոհութիւն ու փառաբանութիւն վերառաքենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԵ. Կռապաշտութեան եւ կախարդութեան մասին

Կռապաշտութիւնը անթիւ չարիքների ու բազում անօրէնութիւնների սկիզբն ու մայրը եղաւ մարդկային ցեղի համար եւ յոյժ հեռացրեց նրան Աստծուց: Եւ արդ, ո՛ւշ դարձրու, ո՛վ քրիստոսասէր իշխան, եւ կպատմենք սրա մասին, ինչպէս վերեւում փոքրիշատէ պատմեցինք այլեւայլ մեղքերի տեսակների մասին, որոնք գործւում են աշխարհում:

Ասում են՝ կռապաշտութեան սկիզբը դրուեց Բաբելոնում: Երբ Աստուծոյ Հոգին քանդելով կործանեց աշտարակը, հիմնիվեր տապալեց այն, բաժանեց մարդկանց լեզուները եւ ցրեց նրանց չար միաբանութիւնը, այդ ժամանակ զօրաւոր հսկայ Բէլը Բաբելոնում հիմնեց թագաւորական աթոռ: Անցաւ որոշ ժամանակ, եւ վախճանուեց մի ոմն թագաւորի որդի: Թագաւորը շատ սգաց իր որդու վրայ, եւ նրա շողոքորթ եւ մարդահաճ ծառաները ներկերով նկարեցին նրա որդու պատկերն ու մատուցեցին նրան: Նա տեսաւ որդու նկարը, շատ ուրախացաւ եւ մխիթարուեց դրանով: Այն մեծ պատուով դրեցին գանձարանում եւ անուշահոտ խունկ [ծխեցին] ու երկրպագութիւն մատուցեցին դրան: Թագաւորը մտաւ, նայեց պատկերին, եւ սուգը իսկոյն հեռացաւ նրա սրտից:

Արդ, նրանք մահացան ու հեռացան այս աշխարհից, նրանցից յետոյ եկան ուրիշները եւ, սովորելով ու խրատուելով նախնիներից, նոյնն արեցին իրենց որդիների ու եղբայրների համար: Յետոյ շատերն սկսեցին այդպէս անել: Որոշ ժամանակ էլ անցաւ, եւ չար սատանան գողացաւ մարդկանց միտքը: Պիղծ դեւերը, մտնելով այդ պատկերների մէջ, առաջօք խօսում էին տգէտ մարդկանց հետ: Եւ մարդիկ աւելի ու աւելի էին պատւում ու ծառայում պատկերներին եւ կամաց-կամաց մոռացան Աստծուն: Եւ պատկերագործութեան սովորութիւնը յոյժ բազմացաւ Բաբելոնում: Յետոյ դեւերն առաջօք սկսեցին արհաւիրքներ ու կախարդութիւններ գործել այնտեղից: Իսկ սատանան ահ ու երկիւղ էր տարածում մարդկանց սրտերում, որպէսզի արիութեամբ պատկերներն իբրեւ Աստուած պաշտեն:

Եւ մարդիկ սկսեցին սովորել կախարդութիւն, հմայութիւն ու գետնակոչութիւն: Սովորեցին նաեւ կախարդները եւ իրենց պաշտել էին տալիս, իսկ մահուանից յետոյ կանգնեցնում էին նրանց պատկերներն ու պաշտում: Եւ այսպէս կամաց-կամաց չարը տարածուեց ողջ մարդկութեան մէջ, եւ չմնաց որեւէ շարժուն բան, որ չպաշտեցին մարդիկ. անգամ՝ ախտերը եւ կանանց ու անասունների ամօթոյքի մարմինները: Եւ Ադամի որդիները յոյժ հեռացան Աստծուց: Իսկ սատանան ջանում էր ամէն տեսակի չարիք պատճառել մարդկանց՝ կարծելով, թէ Աստուծոյ հանդէպ է անում այս

ամէնը, ինչպէս վատ ծառան, որը չարութեամբ ապստամբելով թագաւորի դէմ՝ բռնում ու չարչարում է թագաւորի ծառային՝ համարելով, թէ թագաւորին է չարչարում ու նեղում:

Արդ, բառերը չեն բաւականացնի՝ պատմելու այն չարիքը, որ սատանայի առաջնորդութեամբ գործեցին մարդիկ կռապաշտութեան ժամանակ: Սակայն մի փոքր՝ ծովից վերցրած մի կաթիլի չափ, կպատմենք չար գործերի մասին, որպէսզի դրանցով նաեւ այլ բաները յայտնի դառնան լսողներին:

Պարսից աշխարհում օրէնք սահմանեցին, թէ ամէն մի որդի, երբ դառնայ հասուն տղամարդ, առաջին հերթին պղծութեամբ պիտի շնանայ իր մօր հետ եւ հատուցի սերմը իր մօրը, որտեղից որ ծնուեց, եւ յետոյ միայն ուրիշին կնութեան առնի: Տե՛ս, թէ մարդիկ անասուններից որքան աւելի չար եղան: Ջիերն անգամ, որ յոյժ ախտասէր են, հրաժարւում են իրենց մայրերից:

Թէ այլ ինչ պիղծ աղտեղութիւններ էին գործում նրանք, չենք համարձակւում ասել, որ չապականուի լսողների միտքը:

Աղեքսանդրիա քաղաքում կար մի մարդ, որը կուռքերի քահանայ էր եւ նրանց չար օրէնքների գիտակ: Սակայն հաւատալով ճշմարիտ Աստծուն՝ հրաժարուեց կուռքերից ու դարձաւ եպիսկոպոս: Նրա անունն էր Դիոնէսիոս (ոչ թէ Աթենացին, այլ Աղեքսանդրացին): Իսկ չաստուածների քահանաները՝ նրա նախկին գործընկերները, նախատելով գրում էին նրան ու ասում. «Ինչո՞ւ թողեցիր քո հարազատ չաստուածներին»: Իսկ նա գրեց նրանց ու ասաց. «Դուք լաւ գիտէք, որ սուտ է կռապաշտութիւնը, լի ամէն տեսակ աղտեղութիւններով, եւ մարդկանց որդիներին չկայ դրանից ոչ մի օգուտ, այլ միայն անբաւ կորուստ: Գիտեմ, որ լաւ գիտէք նաեւ հնդկական հռչակաւոր եւ պայծառութեամբ զարդարուած այն մեհենատունն ու տաճարը, տեսել էք, որ տաճարի պատին կան ներկերով նկարուած չաստուածների պատկերներ, ուր

տղամարդիկ եւ կանայք մերկ ու խայտառակ կանգնած են դէմ դիմաց: Եւ բացուած է կանացի իգական ամօթոյքների անդամը, եւ տղամարդկանց առնական ծննդական ծածուկ անդամը բաց կանգնեցուած է կանացի իգական անդամի հանդէպ: Եւ ներկերով այնպիսի ձեւեր են տուել պատկերներին, որ չաստուածները կարծես կամենում են խառնակուել միմեանց հետ: Այս ամէնն արել են անօրէն կուռքերի պաշտօնեաներն ու սպասաւորները, որպէսզի երբ ժողովուրդը գայ կուռքերի, այսինքն չաստուածների տաճարը՝ զոհելու, տօնելու կամ երկրպագելու, եւ տեսնի չաստուածներին այսպիսի խայտառակ եւ լիրբ վիճակում, սովորելով չաստուածներից՝ համարձակ գրգռուի չար ախտից, անասունների պէս խառնակութիւն գործի եւ վաւաշոտ ու չար ախտով պաշտի չաստուածների աղտեղութիւնը, որովհետեւ դա է արժանի նրանց եւ չաստուածներին: Եւ արդ, ասացէ՛ք ինձ՝ ի՞նչ աստուածպաշտութիւն են այսպիսի չար գործերը, եւ կամ ինչո՞ւ էք պարտադրում ինձ՝ կրկին վերադառնալու իրենց չաստուածներին եւ պաշտելու նրանց, որոնցից ինձ ազատեց Քրիստոս Իր գալստեամբ»:

Արդ, բաւական է այսքանը, որ Դիոնէսիոսն ասաց կռապաշտութեան աղտեղութեան մասին, այլեւս չշաղախենք մեր բերանն ու ձեր լսելիքը՝ կռապաշտութեան անքանակ աղտեղութիւնների մասին պատմելով:

Իսկ այս ամէնն անում էր սատանան՝ կախարդանքներով ու սուտ խոստումներով խաբելով մարդկանց: Ինչպէս պատմում է Կիպրիանոսը. «Տեսայ, եւ ահա յոյժ չարատեսիլ էր կռապաշտութեան դեւը, որն ունէր ուլունքներ, գործում էր արհաւիրքներ եւ խաբում մարդկանց»: Ինչպէս որ այժմ էլ նրա աշակերտները գալիս են եւ քաղաքներում չար վիշապի շնչով առաջօք ինչ-ինչ խաղեր ու բազում արհաւիքներ գործում՝ զարմացնելով ամէն մէկին, ով տեսնում է այն:

Կռապաշտութեան սիրելի որդին ու գործակիցը կախարդութիւնն է, որը ծածուկ միաւորութիւն է սատանայի հետ: Եւ նրա ծառան առաջին կռապաշտների նման է: Սակայն կախարդները յայտնապէս ասում են. «Քրիստոնեայ ենք», որովհետեւ երկնչում են թագաւորներից ու իշխաններից, բայց պէտք չէ հաւատալ նրանց, որովհետեւ ստութեամբ կեղծաւորւում են մարդկանց աչքի առաջ: Նրանցից կան ոմանք, որոնք ագահութիւնից են ընկնում այս ախտի մէջ, որպէսզի ունեցուածք դիզեն, կէսն էլ խաբւում է տգիտութեամբ [եւ] չիմանալով ուսանում չարը, միւսներն էլ՝ աղքատութեան պատճառով, որովհետեւ ոչ թէ ըստ մարմնական կարիքների, այլ ըստ սովորութեան են մնում նոյն չարիքի մէջ, թէպետեւ գիտեն, որ սատանայի գործ է: Քանզի անհնար է, որ կախարդը կարողանայ չնչին իսկ կախարդութիւն անել առանց սատանայի ու նրա շնչի:

Գիշերով գնում են նրա մօտ, դաւանում եւ միանում հոգով, մարմնով ու ձեռագրով՝ հրի մէջ այրուելու նրա հետ: Եւ ապա նրանց տալիս է շնակերպ դեւեր, որոնք ենթարկւում են նրանց հրամանին, որ իրենց միջոցով առաջօք կախարդութիւններ անեն: Ինչպէս Կինովպասը, որի հրամանի տակ ինը բիւր դեւեր կային, եւ Կիպրիանոսը, երբ կռապաշտ էր, Նիկիտէն ու Սիմոն կախարդը:

Կախարդները միաւորուած են սատանայի հետ, սակայն, գալով քրիստոնեաների ժողովին, բացայայտ ասում են, թէ՝ քրիստոնեայ ենք. այսպէս էին անում Մանին, Մարկիոնը, Կիրնթոսը, Բասիլիդէսը, Եպրոկատէսը, Գորգիանոսը, Մոնտանոսն ու պիղծ Բարդիծանը: Սրանց մի մասը եպիսկոպոսներ էին, իսկ միւսները կարգաւորներ էին ձեւանում, սակայն յամառօրէն կապուած էին կախարդութեան ախտերին:

Քանզի Մոնտանոսը Տարսոն քաղաքի եպիսկոպոսն էր՝ յոյժ ծերացած ու լցուած կախարդական արուեստով: Նա իր մօտ

պահում էր երկու պոռնիկ կին, որոնց հետ միշտ աղտեղանում էր շնութեամբ եւ ասում. «Ես մխիթարիչ հոգին եմ, որ Վերնատանը իջայ առաքեալների վրայ»: Նրա մասին Գրիգոր Աստուածաբանն ասում է. «Մոնտանոսը չար հոգու մէջ էր»: Նոյնպէս էլ միւսները, որոնց յիշեցինք վերեւում, սատանայի անօթներ էին:

Յետոյ մի հին ձեռագրում գտանք, ուր ասւում էր. «Կիլիկիացիների երկրում՝ Փռուգիայի մօտ՝ ծովեզրին, յոյժ դժուարամատչելի մի մացառուտ անտառ կայ՝ լի չարակերպ ու դժուարանցանելի ժայռերով: Այդ ժայռերի մէջ կար մի մեծ գիւղ, որտեղ կային երկու կանայք՝ ամէն տեսակ կախարդութիւնների վարդապետներ: Եւ շատերն էին գալիս նրանց մօտ՝ սովորելու սատանայական գործեր: Նրանց կոչում էին պեպուզանք, իսկ նրանց աշակերտներին՝ պեպուզիանոսներ: Սրանք առաջօք անթիւ գործեր էին կատարում դեւերի միջոցով»: Պատմում են, որ սատանան այնտեղ էր դրել իր աթոռը: Սրանցից բազում չարիքներ մնացին կանանց սեռի, ինչպէս նաեւ տղամարդկանց մէջ: Խաբելով՝ մէկը միւսին սովորեցնում են ծրարագործութեան (կախարդագիր) եւ այլ սատանայական փաթեթների ուսումը եւ այժմ էլ կործանում տգէտներին այդ նոյն չարիքով եւ [կկործանեն] մինչեւ աշխարհի վերջը: Նաեւ կարեւոր է իմանալ հետեւեալը. սատանան կռապաշտութիւնը կախարդութեամբ, աստղաբաշխութեամբ (աստղագուշակութիւն) եւ ճակատագրութեամբ էր հաստատում, եւ այնտեղից է, որ մնաց մարդկանց մէջ այս չար ախտը:

Կռապաշտութիւնն ու կախարդութիւնը ծառի արմատներն են, իսկ դրանց ոստերն ու շառաւիղներն են դեղատուութիւնը, հատընկեցութիւնը, ձեռնածութիւնը, լուսնագիտութիւնը, աստղաբաշխութիւնը, օրը չար անուանելը եւ սրանցով որեւէ բան ասելը կամ անելը, կենդանակերպերին նայելով բախտագուշակութիւն անելը, որեւէ դժբախտութիւն կամ մէկի ճակատագիրը գուշակելը, թէ

չարի կպատահի կամ բարու, ախթարացոյցերը քննելը եւ աստղահմայութեամբ մարդկանց տարիների թիւը ծննդաբանելը. եւ այլեւայլ ծրարներ՝ ինչ-որ հանգուցակներ, լեզուակապեր, քաղցրադեղեր եւ ինչ-որ անասնակապեր, որոնք գայլակապեր են կոչւում: Նաեւ կապում են տղամարդուն, որը թուլանալով՝ չի կարողանում մերձենալ կնոջը: Եւ ուրիշ անթիւ հնարներ, որոնք արժանի չհամարեցինք նշել այս գրքում, ովքեր մեծ բռնութեամբ, բազում տանջանքներով ու ջանքերով դուրս հանուեցին Աստուծոյ Եկեղեցուց: Ընտրեալ առաքեալների դասերն ու սուրբ հայրապետները Աստուծով խստօրէն նզովեցին նրանց, ովքեր խորհում, կատարում կամ ուսուցանում են այդպիսի բաներ:

Բայց ե՛կ եւ տե՛ս, թէ այժմ՝ մեր իսկ ժամանակներում, կախարդների ձեռքով Աստուծոյ Եկեղեցում որքա՜ն չարիք է գործւում:

Քանզի սկզբից ի վեր այս է Աստուծոյ սովորութիւնը, որ աշխարհում կատարուող անառակ մեղքերի պատճառով ցասում է բերում ու խրատում մարդկանց, որպէսզի յիշեն Իրեն ու դուրս գան մեղքերից. աղքատացնում է, հիւանդացնում, տարաժամ մահ սփռում, [բերքի] նուազութիւն ու խստագոյն սով առաքում, թոյլ տալիս դիւահարութիւն ու յանկարծակի այլեւայլ պատուհասներ տալիս աշխարհին, որպէսզի մեզ ակամայ դուրս հանի չարից: Եւ ով գոհանալով համբերի վշտերին ու նեղութիւններին, Աստուած կքաւի նրա յանցանքները: Առաւել եւս՝ ով դիւահար է եւ համբերում է աղօթքով, պահքով ու սրբութեամբ, նա երանելի մարտիրոսների պսակին կարժանանայ Աստուծոյ կողմից, թէպէտեւ մահանայ չար դեւից՝ ջրում, հրից կամ մի այլ որոգայթից: Սակայն այժմ տեսնում ենք, որ դիւահարները փախչում են Եկեղեցուց, խաչից, Աւետարանից, քահանայից, աղօթքից ու պահքից, որն Աստուած որպէս դեղ հրամայեց այս ախտերի դէմ:

Եւ առհասարակ գրոհելով գնում են կախարդների մօտ ոչ

միայն տգէտ ու ռամիկ մարդիկ, այլեւ առաջնորդներն ու քահանաները յօժար կամքով գնում են դիւթողների ու կախարդների մօտ, որով իսկ հեռանում են Աստծուց: Եւ ոչ թէ միայն դիւահարութեան պատճառով են գնում, այլեւ հէնց այնպէս, թէպէտ այնտեղ մարդկանց համար օգտակար ոչինչ չկայ: Անմտութեամբ վիճակափորձւում եւ բախտախօսւում են կախարդների կողմից, նաեւ գիր ու ինչ-որ ծրարներ են վերցնում նրանցից ու ամէն բանում դիւական շունչը օգնութիւն են համարում, իսկ Աստուծոյ օգնութեանը չեն ապաւինում: Ինչպէս որ Իսրայէլի արքայ Սաւուղն արեց, երբ գնաց վհուկների մօտ՝ բախտ հարցնելու, որի համար Աստուած հարուածեց ու սպանեց նրան:

Եւ երբ դիւահարները գնում են կախարդների մօտ, [կախարդն] ասում է. «Քաջքակալ ես եւ ոչ թէ դիւահար, քանի որ ոչ թէ դեւ, այլ ոմն աղէկ մանուկ է քեզ պատահել սիրոյ համար եւ խփել ու շփոթեցրել է քեզ խռովեցնելու համար: Այժմ դու անհո՛գ եղիր, որովհետեւ քեզ շուտով կբժշկեմ աւելի լաւ, քան Խաչը, Եկեղեցին եւ Աստուած»: Եւ ասում է. «Պահք մի՛ պահիր, որդեա՛կ, մի՛ աղօթիր, այլ կե՛ր ու խմի՛ր, որպէսզի Աստուած հեռանայ քեզնից, եւ սատանան քեզ մերձենայ»: Եւ տգէտները յօժարութեամբ են յանձն առնում կախարդների ասածները: Յետոյ կախարդները գնում են իրենց վարդապետ սատանայի մօտ ու աղաչում են. «Մի որոշ ժամանակով քո չար դեւը հանի՛ր այս մարդուց, որ եկաւ քո կամքին, որպէսզի մարդիկ հաւատան ու գան մեզ մօտ, իսկ մենք էլ քո գնդերին կմիաւորենք նրանց»: Եւ նա լսում է կախարդին ու մի որոշ ժամանակով հանում է դեւին: Սակայն կան դեւեր, որոնք վերադառնում են նոյն դիւահարի մօտ, եւ կան, որ չեն վերադառնում: Ո՞վ գիտէ, թէ որքան է չար սատանայի խաբէութիւնը՝ մարդկանց կորստեան մատնելու համար: Քանզի, արդարեւ, վա՛յ է Ադամի սերունդներին. թէ ի՜նչ է լինելու վերջին օրերին: Եւ ապա դիւահարներից

պահանջում են բերել խունկ, ձէթ, հաց, գինի, երկաթ եւ ջուր, որոնք յայտնապէս տանում ու սեղան են դնում դեւերի համար եւ սիրով, աղով ու հացով կապում դիւահարին սատանայի հետ: Լոյս են դնում եւ խունկ ծխում դեւերին, փոխանակ ճրագ եւ խունկ մատուցելու Աստծուն: Նաեւ դեւերին հացակից եւ սեղանակից են անում նրան, փոխանակ Աստուծոյ հացին ու սեղանին, իսկ ջուրը [դնում են] աւազանի ջրի փոխարէն: Եւ այսպէս շատերին են կործանում ծածկաբար: Եւ մեծագոյն եւ չար կորուստն այն է, որ չարաչար երդւում են ու ասում. «Աստծով եւ Նրա սուրբերով ենք անում այս ամէնը»: Եւ մարդկանց ահից Աստուծոյ անունը դնում են սատանայի վրայ, իսկ Աստուծոյ սուրբերի անունն էլ՝ Սադայէլի դեւերի վրայ եւ ի ցոյց մարդկանց յիշատակում են Աստծուն, բայց կանչում սատանային, որի հետ միաւորուած են: Զայնում են Աստուծոյ սուրբերին, բայց ծածկաբար առաջ են բերում չար չնական դեւերին:

Նրանք բացայայտ եւ համարձակօրէն գործում են քրիստոնեաների մէջ եւ մարդկանցից ահ չունեն, որովհետեւ հոգեւոր առաջնորդները զբաղուած են անհոգութեամբ եւ չեն խրատում ըստ կանոնների եւ չեն կոչում առ Աստուած՝ քաղցրութեամբ յորդորելով նրանց դէպի բարին, յուսադրելով առ Աստուած եւ հեռացնելով չարից: Եւ դարձեալ՝ չեն սպառնում խստութեամբ հալածել եւ դառնօրէն խրատել նրանց՝ խարելով եւ կամ ամբողջութեամբ այրելով, որպէսզի միւսները վախենան եւ չմտաբերեն, որ Աստուած պիտի դատի իրենց: Քանզի ըստ մարգարէի. **«Տեսուչ կարգեց նրանց»**[149]: Արդ, զոհում են գիրուկն ու դեղերով չեն բուժում հիւանդին եւ չեն նմանւում այն առաջնորդներին, որոնք իրենց արիւնը հեղեցին Քրիստոսի հօտի համար: Նաեւ թագաւորների գործակալները, մեծամեծ իշխաններն ու գաւառապետներն ամենեւին հոգ չեն տանում, եւ ոչ մի խստութիւն չկայ նրանց դէմ: Զեն էլ մտաբերում այս կործանարար չարիքը, որը գործում են

նրանք, չեն հալածում, չեն խրատում նրանց. եւ նրանք, ովքեր ունեն իշխանութիւն եւ չեն ջանում ու չգիտեն, թէ Աստուած կարողներից է պահանջում կատարելը, կդատուեն այնպէս, ինչպէս դատուելու է նա, ով թաքցրեց քանքարը: Քանզի ում շատ տրուեց, շատ կպահանջուի նրանից: Նրանք չեն նմանւում նախկին իշխաններին, ովքեր իրենց արիւնը հեղեցին սուրբ հաւատի ու սուրբ Եկեղեցու, ինչպէս նաեւ տկար ու տգէտ ժողովրդի համար:

Արդ, որքան հնար է, ատենք բոլոր մեղքերն ու անօրինութիւնները եւ արագօրէն փախչենք նրանց հօտից: Եւ ուրիշներին արիաբար խրատենք, որպէսզի անյուսութեամբ չմնան մեղքերի մէջ: Բայց առաւել եւս ատենք կախարդներին ու դիւթողներին եւ բնաւ չմօտենանք նրանց: Եւ յանձն չառնենք նրանց խաբեբայ խօսքերը, դիւաշունչ ծրարներն ու հնարները, որպէսզի մեր բոլոր խօսքերն ու գործերն Աստծով լինեն կեանքում եւ մահուան ժամանակ: Նաեւ որքան կարող ենք, խրատենք եւ այլոց, որ հեռանան նրանցից ու նրանց պիղծ աղանդից, եւ օգնենք տկարներին, որ տգիտաբար չմոլորուեն, որպէսզի այստեղ բոլորս Աստուծոյ կամքով բարւոք առաքինութեամբ ապրենք սրբութեան մէջ եւ հանդերձեալում անպատմելի բարիքներին արժանաւոր լինենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրութեամբ, Որի հետ օրհնեալ է ամենակալ Հայրը կենդանարար ու ազատիչ Սուրբ Հոգով հանդերձ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԶ. Շնութեան, պոռնկութեան, արուամոլութեան եւ անասնապղծութեան մասին

Ահա՛ դառնատեսակ չարիքը, կործանարար անունը, սատանայական համբաւն ու սանդարամետական գործը: Առաւել ծանրագոյն է սա, քան երկաթը, եւ աւելի դաժանահոտ, քան [հոտած]

ուղեղը: Շունչն է սա չար վիշապի եւ նրա անօրէն սրտի ծնունդը:

Դարձեալ ե՛կ հոգեպատում գրուածքներով նկարագրենք այս չար ախտերի կերպերն ու որպիսութիւնը, ինչպէս որ ծանօթացանք այլ անօրէնութիւնների հետ: Նախ կարեւոր է իմանալ, որ նախկինում շատերը կործանուեցին այս ախտերից, իսկ շատերն էլ կորչելու են յետոյ, որովհետեւ մարդու մօտ սա բնական է եւ ոչ թէ օտարամուտ, ինչպէս նաեւ մարդկանց ծննդեան, աճման ու որդեծնութեան պատճառն է: Պոռնկութեան դեւը առաւել, քան բնական անհրաժեշտութիւնը, յորդորելով ջերմօրէն թուլացնում է, հեշտացնում եւ գցում շնութեան ու այլանդակ աղտեղութեան մէջ: Արդ, ժամանակն է քննելու այս դիւական ախտերի տեսակները:

Շնութիւն է կոչւում այն, որ ծածուկ, երկնչելով ու մեծ ամօթով է լինում, [մարդը] երբեմն կարողանում է մտնել կնոջ մօտ եւ շնանալ, իսկ երբեմն էլ ահից ու ամօթից չի կարողանում: Կգայ ժամանակ, եւ նա դիւրութեամբ դուրս կգայ մեղքերից, որովհետեւ ամօթով էր:

Պոռնկութիւն է կոչւում այն, որ լրբութեամբ ու աներկիւղ է գործւում: Իսկ լիրբն առաւել է ատում Աստծուն, նման նրան, ով վերցնում է կեղտն ու դնում իր տանը. ահա լրբացաւ, պոռնկացաւ ընդդէմ [գործեց] Աստուծոյ կամքի, որը չեն հրամայում Եկեղեցու կանոնները: Նայի՛ր խորհրդիս եւ իմացի՛ր. մի՞թէ չէր կարող Աստուած բազում կանայք ստեղծել մեր հայր Ադամի համար, սակայն Ադամի կողից միայն Եւային ստեղծեց եւ տուեց նրան: Այդ պատճառով էլ Եկեղեցու կանոնները սահմանեցին երկրորդ կին ապաշխարութեամբ առնել: Իսկ երրորդ պսակ երբեք չես կարող գտնել աստուածային Գրքերում. նզովւում է այդպիսի պսակը, նաեւ Եկեղեցին ու քահանան, որը պսակում է, որովհետեւ պղծում է Եկեղեցին ու օրհնութեան պսակը: Աւելի լաւ կլինէր, եթէ [կնոջն] իր տուն տանէր անպսակ, որը թէպէտեւ ճշմարիտ պոռնկութիւն է եւ Աստծուն ատելի, բայց կգայ ժամանակ, եւ նա, ում վրայ չկայ երրորդ պսակի նզովքը, կարող է դիւրութեամբ ելնել մեղքից: Իսկ նա, ով իր մտքում պսակի համար արդար է համարում կնոջը, չի կարողանում հեշտութեամբ բաժանուել եւ միւս քրիստոնեաների պէս համարձակւում եւ պսակւում է [երրորդ անգամ]՝ այդպիսով պոռնկանալով ու լրբաբար հակառակուելով Աստծուն, նզովւում է: Քանզի Աստուածաշունչ Գրքերի սովորութիւնն է յանդգնօրէն եւ լրբաբար գործուած ամէն մի չար մեղք պոռնկութիւն անուանել: Ինչպէս Եսաւին են պոռնիկ անուանում, որը մի քիչ կերակուրի հետ վաճառեց առաջնեկութիւնը:

Նաեւ մարգարէն շուն է անուանում Երուսաղէմը, որովհետեւ [այնտեղ] ծածուկ կուռքեր էին պաշտում: Եւ Սամարիան է պոռնիկ անուանում, որտեղ յայտնապէս եւ համարձակօրէն պաշտում էին կուռքերին՝ ըստ այն խօսքի. **«Քարի ու փայտի հետ էր շնանում Երուսաղէմը, իսկ Սամարիան պոռնկում էր լրբաբար»**[149]:

Շնութեան մէջ էլ մեծ եւ փոքր կայ. երբ կոյսը շնանում է կոյսի հետ, աւելի թեթեւ է, որովհետեւ շատ ծարաւ էին: Աւելի ծանր է տղամարդու համար, որովհետեւ հմուտ էր գործի մէջ եւ ծարաւ չէր: Եռապատիկ ծանր է նրա համար, ով շնանում է մի կնոջ հետ, որի ամուսինը կենդանի է: Առաւել ծանր է, երբ կենդանի են [մէկի] ամուսինը եւ [միւսի] կինը, բայց նրանք շնանում են:

Բայց կայ ասածներից տասնեօթ անգամ առաւել չար, պիղծ եւ ճշմարտապէս նզովքի արժանի շնութիւն, երբ այրն ու կինը, որոնց Աստուծոյ օրէնքով արդար պսակ է հասել (որ ամուսնութիւնը լինի սուրբ եւ պարկեշտ անկողնում՝ ըստ սուրբ առաքեալի հրամանի), թողնում են [իրենց] սուրբ պսակն ու, դիւական սիրոյ չար ախտով շնանալով, պոռնկութեամբ [ուրիշ կին են] առնում, տանում տուն կամ մի այլ տեղ՝ դուրս գալով Աստուծոյ հրամաններից ու օրհնութիւններից: Իսկապէս շնութիւնը սատանայական սիրոյ գործ է եւ

դժոխքի դռների բանալի: Ովքեր չնանում են եւ չեն զղջում, անշէջ գեհենի ժառանգորդներ են: Ահա՛ մարդիկ, որոնք գտնում են հաց, բայց խոզի պէս կերակրւում են աղբով: Ահա՛ մարդկանց այն տեսակը, որն ունի մաքուր ջուր, սակայն ուրախութեամբ ըմպում է մահացու ճահճաջուրը, որի մէջ կան գեռուններ, որոնք ժահահոտ աղբի մէջ կենդանանում են, իսկ անուշահոտ իւղի մէջ՝ սատկում: Թէպէտ սրանք ունեն ոչխարի մաքուր եւ անարատ կաթը, բայց վերցնում եւ ցնծութեամբ ըմպում են շան արիւնը, որովհետեւ նրանց արդար պսակն ու անկողինը անարատ կաթն է, իսկ անուշահոտ իւղը՝ յստակ ջուրն ու մաքուր հացը: Ով թողնելով իր անարատ ու արդար պսակը՝ բաժանուած է պահում կնոջը եւ չնանում է, կամ [ուրիշ կին] առնելով՝ բերում է տուն, նրա անկողինը շան արիւն է, չար եւ ժահահոտ աղբ, յոյժ եւ իրապէս մահացու տղմոտ ցեխ: Այստեղ չարժէ [աւելորդ անգամ] յիշել, որ դա ստուգապէս հակառակ է Աստծուն ու Նրա օրէնքներին, նաեւ ատելի է հրեշտակներին ու Նրա բոլոր սուրբերին:

Եթէ նրանք նոյն բանի մէջ առանց զղջալու վախճանուեն, կժառանգեն անվերջանալի տանջանքները:

Կարգաւորները, որոնք կամովին գլորւում են լոյսի աստիճանից, ինչպէս Ադամը՝ դրախտից, զրկւում են մեծ ու ցանկալի պատուից, հեռանում Աստծուց եւ Նրա շնորհներից. կին են առնում եւ իրենց լրբութեամբ գայթակղեցնում տեսնողներին: Նրանց համար աւելի լաւ կլինէր, եթէ Աւետարանում յիշուած ծանր քարը կախուած լինէր նրանց պարանոցից, եւ սատկէին ծովի խորքերում, քան թէ գայթակղեցնէին որեւէ մէկին: Սրանք առաջին մարդու նման տուեցին անգին մարգարիտն ու վերցրին ժահահոտ աղբը: Աստուածային առաքեալը գրում է. ***«Բոլոր մեղքերը, որոնք գործում է մարդը, նրա մարմնից դուրս են, իսկ ով չնանում է կամ պոռնկանում, իր մարմնի ներսում է աղտեղանում»***[150]: Եւ դարձեալ գրում է՝ զարմանալով. ***«Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնկի անդամնե՞ր էք դարձնում. որովհետեւ ով մկրտւում է, Քրիստոս է հագնում: Դուք Աստուծոյ տաճար էք: Իսկ նրան, ով մեղքով ապականում է Աստուծոյ տաճարը, Աստուած կապականի անշէջ հրում»***[151]: Եւ մի՛ տրտմեցրէք Սուրբ Հոգուն, որով մկրտուեցիք սուրբ Աւազանում եւ փրկուեցիք անէծքների կապից: Արտաքին իմաստունները եւս, որոնք թէպէտեւ կռապաշտ էին, սակայն շնութեան եւ պոռնկութեան ախտը երեքգլխանի գիշատիչ չար գազան անուանեցին եւ ասացին. «Նա դժոխքի դռնապանն է: Գլուխներից մէկը շան գլուխ է, իսկ պոչով շողոքորթում է քաղցր հեշտութեամբ, որ մարդկանց գցի պոռնկութեան մէջ:

Միւս գլուխը վիշապօձի է. շնութեան ախտը դիւրութեամբ է մտնում ամէն մէկի մէջ, որովհետեւ հեշտացնող է եւ ողորկ, ինչպէս օձ, որն իր կաշուի ողորկութեան պատճառով դիւրութեամբ է մտնում նեղ ճեղքերը: Օձին որեւէ մէկը մեծ բռնութեամբ անգամ չի կարող ետ քաշել ճեղքից, որովհետեւ ողորկ կաշին հակառակւում է եւ չի թողնում: Նմանապէս էլ շնութիւնից եւ այլ մեղքերից բռնութեամբ ոչ ոք չի կարող դուրս գալ, որովհետեւ հեշտասիրութիւնը դիմադրում է եւ թոյլ չի տալիս:

Միւս գլուխն էլ առիւծի է. թէպէտեւ նրա կամ ուրիշ հեշտացնող մեղքերի իշխանութիւնից դուրս գալու համար ջանքեր թափես, նա առիւծի պէս կմռնչայ եւ կզարհուրեցնի քեզ, իսկ հեշտութիւնն իր ժանիքներով կօղակի եւ թոյլ չի տայ քեզ դուրս գալ մեղքերից եւ դժոխքից»:

Գալիս եւ նոյն չարիքին է միանում արուամոլութիւնը: Թէպէտ միանման ախտեր են սրանք, բայց սա շնութիւնից առաւել չար, ստուգապէս սատանայական ախտ է, որովհետեւ դուրս է մարդկային բնութիւնից եւ անպիտան որդեծնութեան համար, ի տարբերութիւն կանացի իգական անդամի, որն Աստուած ստեղծեց մարդ-

կանց աճման համար: Քանզի սատանան, որքան կարողանում է, հնարներ է [մտածում], ջանում է աւելի մեծ չարիքներ գործել տալ մարդկանց, որ նրանք յոյժ հեռանան Աստծուց: Դրա համար էլ հնարեց, ջանաց եւ Ադամի որդիների մէջ սերմանեց արուամոլութիւնը Աստուծոյ հրամանին հակառակ: Աստուած ստեղծեց կնոջ ծննդական անդամը եւ օրհնութեամբ մարդկանց հրամայեց բազմանալ: Սակայն տե՛ս բանսարկուի չարութեան արուեստը, թէ որտեղից սկսեց այս անտանելի չարիքը: Պատմում են, թէ Կայէնի զաւակների մէջ կար մի կին, որը դարձաւ սատանայի անօթ. սատանան խառնակուեց նրա հետ եւ նրա միջոցով մարդկանց սովորեցրեց արուամոլութիւն: Այդ կինը դժուարածին էր եւ որպէսզի չչարչարուի ծննդաբերելիս, իր ամուսնուն սովորեցրեց անբնականը եւ սոդոմականը գործածել իր չար ախտը բաւարարելու համար եւ ոչ թէ ծննդական որովայնը:

Եւ որովհետեւ հնարաւոր չէ, որ աշխարհում գործուող չարիքը թաքուն մնայ, մարդիկ այս չարիքի մասին լսեցին, սովորեցին նրանցից եւ սովորեցրեցին շատերին: Կամաց-կամաց տարածուեց այն: Տղամարդիկ սովորելով՝ թողեցին իրենց կանանց անկողինը, ու տղամարդը տղամարդու հետ էր գործում այս խայտառակութիւնը: Եւ իգանալով՝ միմեանցից կրկին փնտրում էին փոխադարձը, ինչպէս աստուածային առաքեալը արուամոլների մասին գրում է իր ճառում: Յետոյ տարածուեց ախտը, եւ Աստուծոյ որդիները, որոնք Սեթի որդիներն էին, խառնակուեցին Կայէնի որդիների բարքերին:

Գրքերում գրուած է, թէ Աստուծոյ դրախտի առջեւ գտնուող մի լեռան վրայ հինգ հարիւր տարի բնակուեցին եւ երկար ժամանակ արվամոլութեամբ զբաղուեցին Ադամի որդիները՝ դառնալով առաւել վատթար, քան անասունը: Ապա, թողնելով այն, սկսեցին կանանց հետ վարուել անասունի պէս, որովհետեւ ընդհանուր

դարձրին կանանց: Գրուած է, որ քսան տղամարդ միաժամանակ մի կնոջ հետ շնանում էր լրբութեամբ: Սա պակասեցրեց որդեծնութիւնը: Աստուած տեսաւ նրանց գործերն ու յոյժ տրտմեց: Եւ քանի որ ետ չէին դառնալու իրենց մեղքերից, Նա վաւաշոտ ախտի պատճառով ջրհեղեղի դէջ ջրով կործանեց նրանց: Ջրհեղեղից յետոյ բարձրացաւ աշտարակը, հիմն ի վեր փլուեց այն, տապալուեց, եւ Ադամի որդիները ցրուեցին երկրի երեսին: Այնուհետեւ սատանան եկաւ Սոդոմ եւ Գոմոր, նրանց այլ քաղաքներն ու սովորեցրեց նախկին արուամոլութիւնը: Եւ այնքան բազմացրեց չարիքը, որ նոյնիսկ մոռացան կանանց, ու պակասեց նրանց ծնունդը: Այդ մասին մի իմաստուն ասում է. «Եթէ Լիւբիկեն, Եւրոպան, Ասիան եւ Եթովպիան համագործակցէին Սոդոմի ու Գոմորի հետ եւ սովորէին նրանց աղտեղի, պիղծ ու անօրէն գործը, կպակասէր աշխարհից որդեծնութիւնը, եւ մարդկային ցեղը շատ կնուազէր»:

Այս ամէնն հասաւ Աստուծոյ ականջին: Սրտագէտ Աստուած գիտէր, որ նրանք ետ չեն դառնալու չարիքից, իջաւ երկիր եւ եկաւ Աբրահամի մօտ, իր երկու հրեշտակներին էլ ուղարկեց Սոդոմ՝ Ղովտի համար: Եւ Սոդոմի տղամարդիկ եկան կուտակուեցին Ղովտի դռան մօտ եւ պահանջում էին Ղովտից նրա մօտ եկած հրեշտակներին, որովհետեւ մարմնաւոր հիւրեր էին կարծում նրանց, քանզի Սոդոմի եւ Գոմորի անօրէն սովորութիւնն այն էր, որ եկած հիւրին չարչարում էին սոդոմական պիղծ ախտով: Որպէսզի հաւատաս խօսքերիս, թող քեզ վկայութիւն լինի այն, որ Ղովտը [հրեշտակների փոխարէն] իր երկու կոյս աղջիկներին էր տալիս նրանց ձեռքը՝ նրանց չար եւ անօրէն ախտերը բաւարարելու համար: Իսկ նրանք չհաւանեցին ու չվերցրեցին նրա դուստրերին:

Նաեւ հայրապետներից մէկի մօտ գրուած գտանք. «Որովհետեւ նրանք չարաչար ցանկացան հրեղէն, անմարմին հրեշտակներին, Աստուած իրաւամբ վերին հուրը, որտեղ բնակւում են հրեղէն

հրեշտակները, անձրեւի նման տարածեց ու թափեց նրանց վրայ եւ իսպառ ջնջեց նրանց չար հիշատակը: Հրով կործանուեցին Սոդոմը, Գոմորը, Անդիման, Սաբայիմն ու Սեգովրը՝ այս հինգ քաղաքներն իրենց գիւղերի ու քաղաքների հետ միասին: Բայց նրանց չար գործն ու դառը յիշատակն աշխարհում չպակասեց, այլ Սոդոմի դառնատես չար տունկը օրըստօրէ գնալով աճում է ողջ երկրի երեսին եւ պտուղ տալիս, իսկ Գոմորի անօրէն ողկոյզը մահացու պիղծ վիշապների գինի է պատրաստում, որը տնկեց սատանան՝ Ադամի սերունդներին կործանելու համար»:

Վա՜յ մեզ, եղբայրնե՛ր, աւա՜ղ եւ շա՜տ եղուկ մեր լսելիքին, որովհետեւ ահա մի գործ, որը յոյժ ատեց Աստուած, ահա մի գործ, որը պէտք է իսկապէս այրել, կատաղած գազանի պէս սատկացնել. կամ կտոր-կտոր անելով աշխարհից ջնջել նրան, ով կմտադրուի այն գործել:

Արդ, այս պիղծ ախտի դասակից եղբայրը, որը ճշմարտապէս միանում է սրան, անասնապղծութիւնն է: Երբ չար սատանան տեսաւ, որ ջնջուեցին Սոդոմն ու նրա պիղծ ընկերները, եւ աշխարհում թեթեւացաւ նրանց անօրէն գործը, սկսեց [սերմանել] այն, ինչ սերմանել էր նախկինում, եւ տնկելով՝ բուսեցրեց ու աճեցրեց անասնապղծութիւնը Փիւնիկէում, Հրէաստանում, Պաղեստինում, Գալելիայում եւ Երուսաղէմի շրջակայ այլ գաւառներում: Եւ այնտեղ յոյժ բազմացաւ անասնապղծութեան չար ախտը, որը, ինչպէս Սոդոմի ու Գոմորի դիւական գործը, յոյժ ատելի է Աստծուն եւ Նրա բոլոր սուրբերին: Քանզի սա էլ է օտար եւ հեռու մարդկային բնութիւնից:

Այս չար ախտերի պատճառով Աստուած խլեց նրանց այնտեղից եւ այնտեղ տնկեց Իսրայէլի տասներկու ազգերին՝ Մովսէս, Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ նահապետների ժողովրդին, երբ նրանց հանեց Եգիպտոսից: Նրանցից էլ մարմնաւորուեց

Քրիստոս, ընտրուեցին առաքեալները եւ մարգարէները: Այս չար յանցանքների համար Աստուած՝ Մովսէսին, իսկ Մովսէսն էլ ժողովրդին ասաց. **«Ամէն մարդ, որ կկենակցի անասունի հետ, պէտք է այրուի կամ քարկոծուի»**[152]: Նոյնպէս էլ՝ **«Պէտք է քարկոծուի կինը, որը կկանգնի անասունի առջեւ»**[153]: Պատմում են, որ մի թագուհի, որի անունն էր Պերսեփոնա, ցանկացաւ եւ չար մեքենայութեամբ կանգնեց անասունի առաջ:

Դարձեալ՝ պատմում են նաեւ մեծ քաղաք Նինուէի թագուհի վաւաշոտ Շամիրամի մասին, թէ նա Հայոց Արա թագաւորի մասին լսեց, որ շատ գեղեցիկ է եւ տեսքով նման Ադամին՝ առաջին մարդուն: Եւ որովհետեւ ախտասէր կին էր, ցանկացաւ Արային եւ նրա հանդէպ բորբոքուեց դիւական սիրոյ ախտով: Նա պատուիրակներ առաքեց Հայաստան՝ Արա Գեղեցիկի մօտ, որ գայ եւ պոռնկի իր հետ: Արան նախատեց Շամիրամին: Բայց Շամիրամը, չկարողանալով տանել վաւաշոտ ցանկութիւնը, մեծ զօրքով ելաւ եւ եկաւ Հայոց աշխարհ՝ Արա Գեղեցիկի վրայ: Նրան պատուով ու աղաչանքով կանչեց, որ գայ եւ կատարի իր գարշելի ու պիղծ ցանկութիւնը: Ըստ երեւոյթին Արան սրբասէր էր եւ դրա համար կրկին մերժեց Շամիրամին: Եւ Շամիրամը պատերազմ սկսեց Արայի դէմ: Կռուի մէջ զինուորները չճանաչելով՝ սպանեցին Արա Գեղեցիկին: Թագուհին շատ խռովուեց, որովհետեւ զօրքերին պատուիրել էր, որ նրան կենդանի բերեն իր մօտ: Եւ բերել տուեց մեռած մարմինը եւ երեք օր արտասուելով՝ աղօթում էր չաստուածներին, որ կենդանացնեն նրան, մինչեւ որ Արայի մարմինը հոտեց եւ նեխեց: Շամիրամը չինեց յոյժ զարմանալի մի քաղաք: Եւ բարձրանալով՝ նայում էր իր զօրքին եւ հրամայում ամէն գիշեր երկու գեղեցիկ երիտասարդ բերել իրեն՝ իր ախտալից անձի ցանկութեան համար, իսկ առաւօտեան հրամայում էր սպանել նրանց, այսպիսով յոյժ նուազեցնում էր զօրքը: Այս տեսնելով եւ իմանալով՝ նրա որդինե-

ը չարաչար սատկացրին նրան:

Արդ, պոռնկական ախտը այսպիսի չարիք է եւ աճում է օրէցօր՝ կործանելով բոլոր արարածներին: Այն յոյժ ատելի է Աստծուն: Դրա մասին Կիպրիանոսն ասում է. «Տեսայ պոռնկական դեւին, որը զազրատեսակ էր, արնաներկ, շարաւագոյն ու փրփրատեսակ, նրանից ժահահոտութիւն էր բուրում»:

Սիրելինե՛ր, վա՜յ Ադամի որդիներին: Ահա՛ շաղախեցինք մեր բերանն ու ճանճրացրինք մեր լսելիքը անախորժ, դիւական ախտերի մասին պատմութիւններով, չշարունակենք դրանք, քանի որ անվերջանալի են, եւ ո՞վ կարող է ճառել դիւամոլ ցանկութիւնների աղտեղութեան մասին, որ եղել են աշխարհում: Բայց վնասակար չէ այսպիսի չարիքների մասին դարձեալ լսելը, որովհետեւ այդ բանն իմանալով՝ անդադար գոհութիւն ենք մատուցում Աստծուն, Որն Իր գալստեամբ մեզ ազատեց ու սրբեց այսպիսի աղտեղութիւններից: Ուստի, Աստուծո՛յ որդիներ, մշտապէս յիշենք Աստուծոյ երախտիքն ու պարգեւները, որ տուեց մեզ, եւ փութով փախչենք պոռնկական անտանելի ախտից, սրբենք մեր անձերը աղտեղի ցանկութիւններից, որպէսզի այստեղ սրբութեամբ մաքրուեն մեր սրտերը, իսկ հանդերձեալ աշխարհում կարողանանք տեսնել Աստծուն. եւ անլռելի ձայնով օրհնենք համագոյ եւ անբաժանելի Ամենասուրբ Երրորդութեանը այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԷ. Զրկանքի, գողութեան եւ վաշխառութեան մասին

Արդ, պէտք է եւ վայել է մեզ, ո՛վ վսեմախոհ եւ քրիստոսասէր իշխան, Աստուծոյ հոգեպատում մատեաններից քննել եւ իմանալ նաեւ այս չարագլուխ ախտերի մասին, որովհետեւ սրանք էլ անօրէն վիշապի, բանսարկու թշնամու ստեղծածներն են, եւ բազմաթիւ մարդիկ սրանց միջոցով են ընկնում դժոխք: Սրանք երեք եղբայրներ են՝ մի հօրից, եւ միանման է սրանց անօրէնութեան գործը: Բոլոր Աստուածաշունչ գրքերը նզովում ու պարսաւում են սրանց, միշտ խրատում են եւ ուսուցանում մեզ, թէ ամէն ոք, ով զրկելով ձեռք բերածից է ողորմութիւն տալիս, ոչ թէ հաշտեցնում, այլ բարկացնում է Աստծուն: Ինչպէս այն մարդը, որն սպանեց թագաւորի որդուն եւ որովհետեւ շատ աղաչեց, թագաւորը ներեց նրա մեղքը: Իսկ նա ամէն օր թագաւորի մօտ էր տանում նրա որդու արիւնաթաթախ հանդերձը, եւ թագաւորը, տեսնելով այն, յիշում էր իր որդուն, եւ խոցւում էր նրա սիրտը:

Ի վերջոյ բարկացաւ եւ հրամայեց սպանել նրան: Նոյնն է անում Աստուած նրանց, ովքեր զրկում են աղքատին գողութեամբ կամ վաշխով եւ կամ զրկանքի [այլ տեսակով] եւ ողորմութիւն են տալիս:

Երբ արհամարհում են աղքատին, զրկում, չեն վարձատրում գործի դիմաց եւ կամ իզուր տուգանք են վերցնում նրանից, նա դառնապէս հառաչում է եւ ասում Աստծուն. «Տե՛ս, որ նստած ես քերովբէների մէջ եւ նայում են անդունդներին»: Սրա մասին է գրում Եսային. ***«Ձեզնից զրկուածն աղաղակում է, եւ ձեր հնձողների բողոքը հասաւ զօրութիւնների Տիրոջ ականջին»***[154]*: Իսկ Դաւիթն աւելի բացայայտօրէն է ասում.* ***«Մեծ եւ փոքր զրկանքի համար Աստուած կհատուցի ահեղ Ատեանում»***[155]*: Տեսնում ենք, որ Աստուած այստեղ քիչ է հատուցում, եթէ այնտեղ էլ չհատուցի, եթէ չկայ յարութիւն եւ ոչ էլ դատաստան, ապա վա՜յ նրանց, ովքեր յանիրաւի չարչարուեցին ու շատ զրկանքներ կրեցին: Քա՜ւ լիցի, իսկապէս գոյութիւն ունի ամէն ինչի համար հատուցում: Աստուած ներում է, որ մարդիկ այստեղ քաւեն իրենց մեղքերը:*

Գողութեան մասին դարձեալ գրում է Եսայի աստուածաբան մարգարէն. ***«Ձեր իշխանները գողակից են գողերին, իսկ ձեր***

վաճառականները գինուն ջուր են խառնում»[156]*: Ամէն մի գող պիտի ժառանգի Գէեզգէի անէծքը:*

Դարձեալ՝ Յուդան էլ գող անուանուեց կենսապատում սուրբ Աւետարանում:

Արդ, մարգարէն տեսաւ մի հրեղէն երկսայրի գերանդի՝ մանգաղի նմանութեամբ, որն ունէր հինգ թիզ լայնութիւն եւ տասը թիզ երկարութիւն: Այն արագաթեւ արծուի պէս սլանում էր օդի միջով, նրանից ցայտում էին ահեղ ու զարմանալի հրի ճառագայթներ: Մարգարէն զարմանքով հիացաւ եւ ասաց. «Տէ՛ր, ո՞ւր է գնում այս գերանդին»: Եւ հրեշտակն ասաց. ***«Գողերի ու աւազակների տները, որպէսզի այստեղ եւ հանդերձեալում կտրի, խողխողի ու այրի նրանց»***[157]*: Տե՛ս, սիրելի՛ս, սա՛ է գողերի հատուցումը: Երբ Յեսուն կործանեց Երիքովը, Աքարը գողացաւ ոսկի լեզու եւ այլ անօթներ, եւ զարկուեց Աստուծոյ բանակը, մինչեւ Աստուծոյ հրամանով գտան գողին ու քարկոծեցին նրան իր ողջ ընտանիքի հետ միասին, ապա Աստուծոյ ցասումը վերացաւ բանակից*[158]*: Բազմատեսակ եւ մեծ ու փոքր է գողութիւնը, պէտք է բոլորից էլ հրաժարուել, որպէսզի սովորելով դրանք՝ չկործանուէք, քանի որ սաստիկ չարագոյն գազան է այս ախտը: Գող կոչուեց սատանան, որովհետեւ գողացաւ Եւայի միտքը եւ կործանեց նրան: Նմանապէս այժմ էլ, շատերի միտքը գողանալով, կործանում է նրանց: Եւ յիրաւի են ասում, որ գողութիւնն առաւել չար [մեղք] է, որովհետեւ [դրանով] բազում անմեղ հոգիներ են գայթակղւում եւ կասկածով լցւում: Իսկ այլ մեղքերում չի լինում այսպիսի գայթակղութիւն:*

Այս մեղքին հաւասար է տոկոս [վերցնելը], որին վաշխառուութիւն են անուանում: Մարգարէն գրում է. ***«Վա՛յ նրան, ով իր արծաթը կամ մի այլ բան [փոխ է տուել] եւ վաշխով ու տոկոսով ետ պահանջել»***[159]*: Որովհետեւ [այդպիսին] Աստծուն հակառակ է գործում, քար է ծնում եւ մեղք է աւելացնում մեղքերի վրայ:*

Գամիրքի մեծ սիւն Բարսեղը վաշխը բազմագլուխ գազան անուանեց, որովհետեւ օձի պէս գալարուելով՝ պատում է [վաշխով] տուողի մարմինն ու հոգին եւ կործանում է նրանից ծնուած երեք կամ չորս սերունդներին:

Բայց դու տե՛ս այս ախտի առաւել չար լինելը. սա ստուգապէս անօրէնների գործ է, որոնք յոյս չունեն առ Աստուած: Սատանան այն սերմանում է ոչ միայն տգէտ մարդկանց, այլ նաեւ քահանաների մէջ, որոնց հրամայուեց աղ եւ լոյս լինել Աստուծոյ ժողովրդի համար: Եւ սա գործել է տալիս արծաթասիրութեան (որն հաւասար է կռապաշտութեան) ագահ ախտը. այն էր, որ կործանեց Յուդային ու զրկեց նրան Աստուծոյ Որդու փառքից:

Եւ եթէ նա, ով տէր է մեծ հարստութեան, եւ արդար վաստակից ողորմութիւն չի տալիս, չի կարող մտնել Աստուծոյ արքայութիւն, ապա նա, ով այսպիսի զրկանքներ գործած է մահանում, ի՞նչ պատասխան պիտի տայ Աստծուն: Զնայած մարմնով կենդանի, բայց հոգով մեռած է ամէն մի մեղաւոր: Գրուած է. «Աստուծոյ առաջ լաւ է մէկ արդարը, քան բիւրաւոր անդարձ մեղաւորները»:

Կան մարդիկ, որոնք նեղութեան մէջ գտնուող աղքատին դահեկան են տալիս հացի, գինու եւ այլ կարիքների համար, իսկ յետոյ նեղում են նրան՝ պահանջելով. «Այսքան գինի եւ այսչափ ցորեն տուր մի դահեկանի դիմաց»: Սա ծածուկ վաշխառութիւն է, որն աւելի ծանրագոյն [մեղք] է, քան այն, երբ բացայայտօրէն են վաշխ վերցնում: Կան [մարդիկ], որոնք գրաւ են վերցնում եւ պահում են աղքատների սեփականութիւնը. սա նոյնպէս հաւասար է վաշխառութեան, որովհետեւ գաղտնի է սատանայի որոգայթը եւ գաղտնի կերպով էլ կործանում է մարդկանց որդիներին: Այս երեք ախտերը՝ գողութիւնը, վաշխառութիւնը եւ զրկելը զրկանք են կոչւում:

Կաշառք [վերցնելը] նոյնպէս զրկել է [նշանակում], որի մասին նշեցինք վերեւում եւ բազում մէջբերումներ արեցինք Գրքերից

սրա՝ չարիք լինելու մասին: Կատարեալ չար եւ անօրէնութիւն են զրկելն ու մաքս վերցնելը, որը բաժ են կոչում, այսինքն՝ բաժինք, բայց անիրաւ եւ ոչ թէ օրինական, որն ագահութիւնից դրդուած սահմանեցին նախկին թագաւորները: Նրանք գնացին, սակայն նրանց չար գործի պտուղը մնաց ի յիշատակ նրանց: Եւ յիրաւի, չար զրկանք է այս, եւ պիղծ է յիշատակը նրա, ով սահմանեց այն, որովհետեւ նա աշխատանքի ժամին աշխատողների մէջ չէ, այլ նստած է ճանապարհների եզրին եւ անամօթաբար բաժին է պահանջում ճանապարհորդներից:

Եւ թէպէտ խոստովանութիւնն ու արտասուքը ջնջում են բոլոր մեղքերը, երբ մեղաւորը ետ է դառնում եւ դուրս գալիս մեղքերից, սակայն զրկելու մեղքը ոչ ոք չի կարող քաւել: Եւ պատճառն այն է, որ մեղքերն աւելի առաջ է գնում առ Աստուած, քան մարդը, որ գործեց այն. եթէ նա հատուցի մեղքի դիմաց, [մեղքն] այլեւս չի աճի: Եւ երբ մեղաւորը զղջում եւ ապաշխարում է, ջնջւում են մեղքերը, թէպէտ իրենից առաջ գնացին առ Աստուած: Եթէ այլ տեսակի մեղք գործողներ մահանում են առանց զղջալու, մեղքերը չեն աճում, այլ մնում են նոյնութեամբ մինչեւ դատաստանի Օրը: Իսկ զրկանքը նոր, չար տունկ է, որ մարդը տնկում է, կամ էլ սովորեցնում ուրիշներին չար գործել. մարդը մեռնում գնում է, իսկ մեղքերը յետոյ գալիս, գործւում են աշխարհում մինչեւ Քրիստոսի Գալուստը, բազում վաշխերով աճում եւ պտղաբեր ծառի պէս նորանոր պտուղներ են տալիս: Թւում է՝ սրա համար ասաց առաքեալը. **«Կան մեղքեր, որոնք աւելի առաջ են գնում դատաստան, եւ կան, որոնք յետոյ են գալիս»**[160]:

Իսկ զրկողի թողութիւնն այն է, որ վերցրածը վերադարձնի նրան, ում զրկել է, եւ ոչ թէ [միայն] խոստովանութիւնը: Կան շատ հարուստ իշխաններ, որոնք մահանալիս այդպէս են անում, եւ Աստուած ընդունում է, որովհետեւ բարութեան մաս է:

Տե՛ս, թէ ինչ եղաւ Զակքէոսին. Տէրը, որից սարսելով՝ թաքնւում էին սերովբէները, մտաւ Զակքէոսի տուն եւ նստեց մեղաւորների մէջ: Զակքէոսը պատմեց իր գործի մասին, իսկ Տէրը լուռ էր, իսկ երբ ասաց. «Ունեցուածքիս կէսը կտամ աղքատներին՝ որպէս ողորմութիւն իմ մեղքերի դիմաց, եւ եթէ որեւէ մէկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ», մեր Տէրն ասաց. **«Այսօր փրկութիւն եղաւ այս տանը. այժմ սա համարուեց Աբրահամի որդի, որովհետեւ այսօրուանից հեռացաւ կործանարար ժանտաթզենուց, որի վրա բարձրացել էր՝ որպէս իր չարութիւնների գագաթին եւ անօրէնութիւնների ճիւղերին»**[161], այն չար թզենուց, որի ասեղներով կարկատուած տերեւով ծածկուեց նախաստեղծ Ադամը, եւ որը իր ներքոյ ծածկել էր Նաթանայէլին:

Արդ, զրկանքը զրկանք է, ինչպիսին էլ որ լինի, եւ եթէ այն դեռ զրկողի տանն է, եւ նա գնում խոստովանում է իր մեղքերը եւ կարծում է՝ ապաշխարեց, երբ խոստովանեց. Աստուած չի ընդունում նրա դարձը, որովհետեւ մեղքը դեռեւս չի հեռացել նրանից, այլ կենդանի մնում է տանը: Երբ այդպիսին խոստովանում եւ հեռանում է մեղքից, շուտով թողութիւն է ստանում, իսկ եթէ չի հեռանում մեղքից, թէպէտ խոստովանի էլ, թողութիւն չի ստանայ: Նա, ով խոստովանում է, սակայն վերցրածը պահում է տանը, անօգուտ են նրա ջանքն ու վաստակը. նա նմանւում է այն շանը, որը վերադառնում է իր փսխածին:

Տե՛ս այլ աւելի զարմանալի բան, քան սա է. մեծ աստուածաբան Գրիգոր հրաշապատում վարդապետը Եկեղեցու «Ի յերգս պայծառ» ճառում մարդկանց կոչ էր անում ժամանակին մկրտուել, որովհետեւ մինչեւ ծերութիւն չէին մկրտւում, որ շատ հեշտանային մեղքերով, որ յետոյ՝ մահուան ժամին, մկրտուեն ու սրբուեն: Շատ էր պատահում, որ չէին հասցնում մկրտուել եւ քրիստոնեայ դառնալ, որովհետեւ մահը յանկարծակի էր գալիս նրանց

վրայ: Իսկ նրանց, ովքեր գալիս էին մկրտութեան, սակայն պահում էին վերցրածը, նա ասում էր. «Ի՞նչ օգուտ քեզ, որ գալիս մկրտւում ես, այլ մեղքերիդ թողութիւն ստանում, իսկ վերցրածդ չես վերադարձնում նրան, ում զրկեցիր: Թէպէտ անբաւ են սուրբ Աւազանի շնորհները, բայց սրբում ու ջնջում են այն մեղքը, որը գործեցիր առաջ, սակայն զրկելու մեղքդ չի ջնջում, որովհետեւ [զրկելով ձեռք բերածդ] դեռ քո տանն է՝ քեզ մօտ»:

Տեսնո՞ւմ ես՝ որքան [մեծ] չարիք է զրկելը եւ աւելի դառը, քան արբեցողութիւնն ու դիւահարութիւնը: Ուստի, աղաչո՛ւմ եմ, մեծագոյն ջանքերով եւ յօժար սրտով փախէ՛ք զրկելուց, առաւել, քան բոլոր մեղքերից: Նաեւ մեր արդար աշխատանքի վաստակից շատ ողորմութիւն տանք, որպէսզի ահեղ Օրը արժանի լինենք Աստուծոյ ողորմութեանն ու տեսութեանը եւ բոլոր սուրբերի հետ փառաւորենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԸ. Ոխակալութեան, ատելութեան, մախանաքի, բարկութեան, նախանձի եւ այլ բազում մանր մեղքերի մասին, որոնք Սուրբ Գրքերում կոչւում են շնչական*

Ոխակալութիւնը մեծագոյն չարիք է եւ վիթխարի գազան: Այն ճշմարտապէս սատանայի գործ է, որովհետեւ առաջին ոխը նա պահեց եւ մարդուն հանեց դրախտից: Տէրը յիրաւի դատապարտում է ոխակալին, թէ՝ «Թողութիւն չունի դատաստանի Օրը, որովհետեւ գործակից է չարին»: Բոլոր զգայական ու հոգեւոր մեղքերի մայրը ոխակալութիւնն է, որովհետեւ ոխակալը մախում է եղբօրը, հակառակւում է, գրգռւում: Իսկ ով ոխակալ չէ, նման է Աստուծոյ

* Բնագիր՝ *շրջանք*

Որդուն. չի նախանձում, չի գրգռւում, չի մախում, քէն ու վրէժ չի փնտրում, նաեւ չի ատում որեւէ մէկին, այլ Աստուծոյ սիրով սիրում է իր եղբօրը եւ չարի փոխարէն բարի է հատուցում, ինչպէս պատուիրեց մեզ Աստուած: Այս շնչական մեղքը, թէպէտեւ փոքր է թւում, սակայն կատարեալ չարիք է, երբ որեւէ մէկը գործում է այն ու չի զղջում: Քանզի Քրիստոսը սահմանեց. ***«Ով մեղք է գործում, ծառայ է մեղքին»***[162]*: Ուրեմն, ով փոքր մեղք է գործում, փոքր մեղքի ծառայ է: Սակայն թէ՛ մեծին, թէ՛ փոքրին ծառայող ամէն ոք միապէս ծառայ է կոչւում: Նա նման է այն հմուտ որսորդին, որին առիւծները չկարողացան սպանել, եւ երբ նա անհոգ ննջեց, եկան տկար աղուէսներն ու անզօր ճագարները եւ սպանեցին նրան: Նմանապէս էլ մենք, եթէ մեծ մեղքեր՝ շնութիւն, սպանութիւն կամ մի ուրիշ ծանրագոյն մեղք չգործեցինք, այլ միայն բամբասեցինք, խեղկատակեցինք, հեգնեցինք, մախացինք, ատեցինք, ահա, Աստուծո՛յ սիրելիներ, չսպանուեցինք առիւծից, այլ տկար աղուէսներից: Քրիստոս ասաց.* ***«Ամէն մի դատարկ խօսքի համար հաշիւ պիտի տաք դատաստանի Օրը»***[163]*:*

Ով յանիրաւի բարկանում է իր եղբօր վրայ, մարդասպան է:

Ով նայում է անամօթաբար, շնացաւ աչքով: Առաքեալը դատապարտում է բամբասողին ու շողոքորթին, իսկ Տէրը դատաստանի արժանի է համարում [եղբօրը] ***յիմար եւ տգէտ ասողին***[164]*:*

Հակառակութիւնն ու գրգռութիւնն այն են, որ [մարդ] միշտ խռովարար է լինում եւ յորդորում է ուրիշներին աղաղակ ու խռովութիւն բարձրացնել, իսկ ինքը հեռու է մնում:

Ով ատում է եղբորը, մարդասպան է:[165]

Մախանքն այն է, որ ծածուկ ոխով այրւում եւ ծխում են մտքում, ինչպէս կրակը յարդի տակ:

Նախանձն այն է, որ երբ տեսնում են մէկի բարիքը, խեղդւում եւ յոյժ տրտմում են, ինչը հակառակ է Աստծուն:

Զարակնելն ու յաչաղելն այն են, որ երբ Աստուած ընկերոջն ունեցուածք է տալիս, յոյժ խոցւում են եւ չեն կամենում տեսնել կամ լսել եղբօր մասին:

Այս աղտերը, որոնց մասին խօսեցինք, ծնում են ոխը, մախանքը եւ նախանձը, որովհետեւ միանման են սրանք եւ նոյն գործն են կատարում:

Առաքեալը բամբասողին դասեց պոռնիկի ու մարդասպանի հետ եւ հանեց արքայութիւնից, որովհետեւ առաջին չարիքը քսութիւնն ու բամբասանքն են, որովհետեւ սատանան օձի միջոցով Եւայի մօտ բամբասեց Աստծուն:

Կատարեալ չար է նա, ով նախատելով բամբասում է եղբօրը: Մարիամն էլ նախատելով բամբասեց Մովսէսին, եւ Աստուած բորոտ դարձրեց նրան ու ասաց. **«Ի՞նձ բամբասեցիր եւ ոչ թէ Մովսէսին»**[166]: Թէպէտ նա արդարացիօրէն բամբասեց, որովհետեւ ասաց. **«Եթովպացի կին առաւ»**, եւ այդպէս էր, բայց նախատելով բամբասեց: Ուստի բնաւ պէտք չէ չարախօսել որեւէ մէկին կամ նախատասէր լինել, որ սատանան չուրախանայ: Թոյլ մի՛ տուր որեւէ մէկին քեզ մօտ բամբասել, մի՛ ընդունիր մահացու չար դեղը քո լսելիքում, ինչպէս քո մայր Եւան արեց, որ չմեռնես հոգով, ինչպէս նա մեռաւ, եւ չարաչար չբորոտուես, ինչպէս Մարիամը:

Սուտ վկայողը Յուդայի գործակիցն է, որովհետեւ այն, ինչպէս նաեւ մատնութիւնն ու ընկերոջ դէմ որոգայթ լարելը, սպանութիւն է:

Երդուելն արգելեց Քրիստոս եւ թոյլ չտուեց որեւէ բանով, անգամ գլխի մազով երդուել[167], որովհետեւ վատն այն է, որ երդումն ուրացութեամբ է լինում: Դրա համար էլ [Տէրը] ընդհանրապէս հրաժարեցրեց [երդուելուց]: Վա՛յ մեզ, եղբայրնե՛ր, ո՞վ կարող է փրկուել, որովհետեւ բազում անգամ երդւում եւ երդումն ուրանում է ամէն մէկը: Եւ սուտը շատ է, քան ճիշտը:

Անողորմների բաժինը, պարգեւն ու վիճակը յայտնի են. այդ մասին փոքր-ինչ նշեցինք ողորմածների վերաբերեալ ճառում, որովհետեւ սատանան անողորմ է եւ անողորմների հետ կլսի. **«Հեռացէ՛ք Ինձնից»:**

Սպանութիւնը մեծ կորուստ է, որովհետեւ Տէրը բանսարկուի մասին վկայում է, թէ ի սկզբանէ մարդասպան է, որովհետեւ մեղքով սպանեց Եւային: Կայէնը եղաւ երկրորդ մարդասպանը, որովհետեւ սպանեց Աբէլին՝ իր եղբօրը, եւ բացեց նոր, չար ու դառնատեսակ դուռն աշխարհում: Կամովի [գործած] սպանութիւնը խիստ չար ու ծանր լուծ է, երկաթի բեռ: Ակամայ [գործածն] աւելի թեթեւ է, քան կամաւորը: Պատերազմում սպանելն աւելի թեթեւ է, քան այն, որ ծառայ են առնում ու սպանում: Բայց եթէ հնար լինէր, աւելի լաւ կլինէր չսպանելը, որովհետեւ սրա ծանր լինելու պատճառով է աղօթում մարգարէն եւ ասում. **«Փրկի՛ր ինձ արիւնից, Աստուա՛ծ իմ»**[168], եւ ապա՝ **«Կցնծայ իմ հոգին Քո արքայութեան մէջ»**[168ա], եւ դարձեալ ասում է. **«Զգնացի նրանց արիւնոտ ժողովներին. որտեղ արիւն է հեղւում, խիստ սաստիկ է խղճի խայթը»**[168բ]: Դրա համար նաեւ Եկեղեցին է միշտ աղօթում եւ ասում. «Փրկի՛ր մեզ արիւնից, որ իշխանութիւն ունես հոգիների եւ մարմինների վրայ»:

Ապա իսկապէս վա՛յ մարդկային ցեղին, քանզի, յիրաւի, անթիւ իզուր արիւնահեղութիւններ են տեղի ունենում աշխարհում: Ի՞նչ պիտի պատասխանեն ահեղ դատաստանի Ատեանում, քանզի ասաց Նոյին. **«Ձեր արիւնը բոլորից կպահանջեմ»**[169]:

Եւ ցորենի, գինու եւ այլ պէտքերի ազնիւ վաճառողը չէ, որ նզովւում է աստուածային Գրքերում, այլ նա, ով արծաթի սիրոյ համար ագահութեամբ ջանում է նուազեցնել ընդունուած եւ Աստուծոյ կողմից սահմանուած [չափից] աւելի, լինի քիչ, թէ՝ շատ: [Այսպիսով], ով սահմանուած չափից նուազեցնում է կամ

թերակշռում, նա նզովուած է Սուրբ Գրքում, որովհետեւ ագահութեան ախտն է դրդում նրան այդ անել:

Հաւասարապէս զրկել [է նշանակում] ե՛ւ լեռներում յափշտակելը, ե՛ւ տանը կամ գիւղում գողանալը, ե՛ւ մաքսը, ե՛ւ վաշխը, ե՛ւ կաշառքը, ե՛ւ իզուր տուգանքը, ե՛ւ մշակի վարձը չտալը: Սրանց հաւասար է ժլատ վաճառքը, երբ մէկը նուազեցնում է չափը կամ կշիռը:

Առաւել չար է եւ աստուածային Գրքերում նզովւում է նա, ով կիրակի օրը չի մեծարում եւ չի պատւում. Աստուած կդատապարտի նրան, որովհետեւ աստուածային Գիրքը թագաւորական եւ տէրունական օր անուանեց այն, որովհետեւ Աստուած նրանում սկսեց արարչագործութիւնը եւ նրանում ստեղծեց լոյսը, հրեշտակներին ու վերին երկինքը: Նաեւ՝ կիրակի օրը ժողովրդին հանեց Եգիպտոսից: Եւ կիրակի օրը Բեթղեհէմում Կոյսից ծնուեց Ինքը՝ Հօր Բանը՝ Յիսուս Քրիստոսը, եւ կիրակի օրը յարութիւն առաւ մեռելներից եւ քանդեց դժոխքի գոյացութիւնը: Կիրակի օրը Նա պիտի գայ երկնքի ամպերով եւ մեզ յարութիւն պիտի տայ մեր գերեզմաններից: Եւ պիտի տայ իր սիրելիների վարձքը վերջին կիրակի օրը, երբ լրանայ եօթ դարը: Սա պիտի լինի ութերորդ դարասկզբի առաւօտեան այն ժամին, երբ [մեր Տէրը] յարութիւն առաւ գերեզմանից: Սա այն դարն է, որը չի անցնելու յաւիտեան, այլ մնալու է անսպառ, նաեւ ցերեկ եւ գիշեր չի լինելու այնտեղ: Ապա յիրաւի աստուածային Գրքերից մեզ հրամայուեց, որ պատուենք կիրակի օրը որքան կարող ենք, եւ որքան թոյլ է տալիս ժամանակը:

Կիրակի օրը մարմնով հանգստանանք վեց օրուայ աշխատանքից, նաեւ մեր հոգին հանգստացնենք՝ խոստովանելով վեց օրուայ մեղքերը: Այդ օրը նաեւ Գրքերով մխիթարուենք եկեղեցու դռանը, որովհետեւ երեք Աւետարանները, որոնք ընթերցւում են կիրակի

օրը, նախանշում են երեք փողերը. Իւղաբերից Աւետարանը նախանշում է առաջին փողը, երբ կենդանիներին կմահացնի, իսկ ընտրեալ արդարներին յարութիւն կտայ եւ կդարձնի Վերին Երուսաղէմի ժառանգորդներ: Առաւօտեան Արձակման Աւետարանը խորհրդանշում է միջին փողը, որը յարութիւն կտայ բոլորին: Իսկ Ճաշու Աւետարանը նախանշում է դատաստանը, երբ Դատաւորը կբազմի զարմանագործ եւ անձեռակերտ Աթոռին եւ կասի Ադամի սերունդներին՝ եկէ՛ք, կամ՝ գնացէ՛ք եւ այլն: Ապա իրաւացի կերպով գրուեց. «Ով իր ծուլութեան պատճառով մնայ տանը եւ չլսի երեք Աւետարանների ձայնը, այնպիսին չի լսի փողի ձայնը»: Իսկ նա, ով առողջ է մարմնով ու կատարեալ՝ հասակով եւ առանց մեծ պատճառի նախքան Պատարագի [աւարտը] ճաշակում է որեւէ բան, կամ էլ ծուլութեան պատճառով չի գնում Պատարագի, նզովքներով փակուած է կանոնական հրամաններով:

Դրա համար, աղաչո՛ւմ եմ, պատուեցէ՛ք կիրակի օրը եւ փախէ՛ք նզովքներից, որոնք գրուեցին նրանց համար, որոնք չեն պատւում այն: Բայց դու, ո՛վ եղբայր, տե՛ս գերագոյն եւ հրաշափառ կիրակի օրուայ պատիւն ու ահեղ լինելը, որովհետեւ հոգեշունչ գրքերը հրաման չեն տալիս ծնկի գալ այդ օրը՝ ճակատը գետնին հասցնելով, ինչպէս անում ենք վեց օրերին, այլ երկրպագել Աստծուն ոտքի վրայ՝ մի քիչ խոնարհուելով եւ մատների ծայրը միայն գետնին հասցնելով:

Ապա տե՛ս, թէ նա, ով առանց խտրութիւն դնելու մարմնի օրէնքներով է գործում կիրակի օրը, ինչպէս միւս օրերին, որքան նզովքներով է կապւում Աստուածաշունչ Գրքում:

Զծնրադրելու պատճառն այս է. մեր հայր Ադամը, չարից խաբուած, ընկաւ անէծքների այս աշխարհը գերակատար բարձունքներից: Նոյն օրինակով էլ մենք մեր մօր որովայնից գլխիվայր ենք ծնւում եւ ընկնում երկիր՝ նմանուելով մեր հայր

Ադամին: Քանի որ մանուկը մօր որովայնում ոտքի վրայ է, գլուխը՝ վերեւում, իսկ վերջին ամսին իրեն ստեղծող Աստուծոյ հրամանով շրջւում է գլխիվայր: Եւ խոնաւ, խաւարային բանտում նրան կենդանի է պահւում թաղանթապատ: Գլուխը որովայնի դռան մօտ է, եւ ամէն օր փնտրում է ելքը: Դրա համար աստուածային Գրքերը նզովում են նրան, ով այդ ժամանակահատուածում ամուսնութեամբ մերձենում է իր կնոջը, որովհետեւ վնասակար է, եւ շատ է պատահում, որ մանուկը խեղդւում է: Եւ առաջին պատճառի համար, որ Ադամը գլխիվայր ընկաւ երկիր, մենք նոյն խորհրդով վեց օր ծունր ենք դնում Աստծուն եւ գլուխը գետին հասցնում, իսկ կիրակի օրը չենք խոնարհւում գետնին, այլ ոտքի վրայ ենք երկրպագում Աստծուն, որովհետեւ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից կիրակի օրը եւ մեզ ոտքի հանեց մեղքերի կործանումից եւ կռապաշտութեան կորստից. Նրան փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԹ. Պղծախօսների մասին, որոնք հայհոյում են Աստծուն

Պղծախօսն առաւել չար գազան է, քան դառնաշունչ վիշապօձը, որի մահաբեր թոյնը իր չար ժանիքների մէջ է: Քանզի առաջին վիշապի դառնագոյն եւ պիղծ թոյնն է բնակւում նրա լեզուի վրայ: Քանզի չար հայհոյութիւնը, որ կար քարը իժի կոկորդում ու բերանում, գալիս բնակւում եւ հանգչում է պղծախօսի բերանում ու շրթունքներին: Անիծեալ օձը, որ չարաչար բնակուեց մեր մայր Եւայի սրտում եւ խորհուրդներում, սողալով գալիս եւ սողոսկելով ու յոյժ ցնծալով՝ տեղաւորւում է պղծախօսի մտքում եւ հոգում: Այն անճոռնի եւ յաղթանդամ վիշապը, որը մահացու դեղերով լցրեց իր ականջները եւ փոխանակ փաթաթուելու կործանարար թզենուն՝ պինդ փաթաթուեց մեր նախամայր Եւայի պարանոցին ու

լանջին, կրկին գալիս ու անբաժան կերպով փաթաթւում է պղծախօսի կրծքին ու պարանոցին: Ահա՜ աւելի վատթար կորուստ, քան Եւայի խաբուելն է, որովհետեւ նա բացայայտ չանարգեց Աստծուն, այլ միայն չհնազանդուեց Նրա հրամաններին, իսկ պղծախօսն անարգում է Աստծուն եւ չի զարհուրում դողալով: Դրա համար աստուածային Գրքերը հերձուածողների հետ դասեցին նրան, որն առաւել չար ու ծանրագոյն մեղք է, քան չնութիւնն ու գողութիւնը: Քանզի ամէն մի մեղք գործելիս փափկանում ու պարարտանում է մեր մարմինը, իսկ պղծախօսի հայհոյութիւնը ոչ մի օգուտ չի բերում մարմնին, այլ յոյժ ծանր բեռ է հոգու համար: Ապա յիրաւի գրուեց. «Դժոխքի հրեղէն յատակում պղծախօսների բերանները լցուած կլինեն որդերով, որոնք միշտ կուտեն՝ այրելով ու մորմոքելով նրանց, որովհետեւ Աստուծոյ պատկերակցին անարգելով՝ գազանի պատկեր դարձրեցին: [Նոյնն է սպասում] նրանց, ովքեր չար նախատինքներով անարգում են երեսն ու ճակատը, որը մեռոնով է դրոշմուած, որովհետեւ երեսների հետ անարգում են Խաչն ու Մեռոնը»: Իսկ Փրկիչը հրամայեց. ***«Ով ձեզ անարգում է, Ինձ է անարգում»***[170]*: Որովհետեւ Քրիստոս Իր անունով մեզ կոչեց եւ քրիստոնեաներ անուանեց: Եւ՝* ***«Եթէ մէկը սրբութեամբ Ինձ ճաշակի, նա կբնակուի Իմ մէջ, եւ Ես՝ նրա մէջ»***[171]*: Եւ առաքեալն ասում է.* ***«Ովքեր մկրտուեցին ի Քրիստոս, զգեստաւորուեցին Քրիստոսով»***[172]*:*

Տեսնո՞ւմ ես՝ որքան չար ու աններելի անօրէնութիւն է պղծախօսութիւնը: Քանզի քրիստոնեային անարգելուն պէս անարգանքը բարձրանում է առ Քրիստոս: Իսկ ինչպէ՞ս թողութիւն կունենայ նա, ով անահ ու անընդհատ անարգում է Աստծուն:

Կռապաշտութեան ժամանակներում այրում էին նրան, ով անարգում էր կուռքին: Եւ Աստուած Մովսէսին ասաց. «Նոյնպէս եւ դո՛ւք արէք [Աստծուն անարգողների հետ]»: Դէպք եղաւ, երբ

մի մարդ անարգեց Աստծուն, եւ Մովսէսը քարկոծելով՝ այրեց նրան: Այնուհետեւ ուրիշ ո՞վ կհամարձակուէր անարգել Աստծուն:

Արդ, եթէ հնար եւ կամ ժամանակ լինէր, որ երբ մէկն անարգէր Աստծուն, քարկոծէին կամ այրէին նրան, թերեւս ոչ մէկը չէր համարձակուի նման չար հայհոյութիւն [գործել]:

Բայց վա՜յ մեզ, որովհետեւ ահա՛ անտանելի չարիք է, երբ ամէն բերան աներկիւղ ու համարձակ անարգում է Աստծուն: Եւ սա դարձաւ ընդհանուր [երեւոյթ], ինչպէս այլ անօրէնութիւնները, որոնք կատարւում են աշխարհում: Եւ չկայ մէկը, ով քննելով՝ հոգայ խափանել այս անկարգ գործը:

Երկնայինները զարմացան Աստուծոյ իմաստութեան վրայ եւ հիացան սքանչանալով, թէ ինչպէս է Աստուած անձրեւ տալիս կամ դալարեցնում բոյսն այնտեղ, ուր Աստծուն ուղղուած անարգանքների ձայն է լսում:

Աստուծոյ՝ մարմնով աշխարհ գալուց առաջ բազում եւ անթիւ էին մարմնաւոր եւ շնչաւոր մեղքերը, սխալներն ու հայհոյութիւնը: Սակայն երբ աշխարհում ծագեց աստուածգիտութեան լոյսը, Տիրոջ կողմից հրամայուեց. **«Այոն այո լինի, եւ ոչը՝ ոչ»**[173]: Դրանից յետոյ մարդիկ համարձակուեցին եւ, քիչ-քիչ ստեղծելով անարգանքի առիթներ, սկսեցին հայհոյել դստերը, մօրը, կնոջը եւ ապա մարդկային պատկերը: Վերջինիս հետ էլ աշխարհում սառեց ու ցամաքեց սէրը, եւ մարդիկ թուլացան հաւատից եւ Աստծուն դարձրին անարգանքի առարկայ:

Վա՜յ մեզ եւ եղո՜ւկ Ադամի բոլոր սերունդներին, որովհետեւ միայն քրիստոնէութեան անունը մնաց մեր մէջ, իսկ բարի գործերն ու աստուածպաշտութիւնը հեռացան մեզնից: Եւ առաւել խիստ վտանգաւոր է մեզ համար, երբ մեր պարզ ու յստակ լեզուով մարդիկ հայհոյալից խօսքեր են ասում: Քանզի չար մշակ սատանան քրիստոնեայ ժողովրդի մէջ ցանեց հերձուածի որոմը եւ տեսաւ, որ

հերձուածը չարմատացաւ հայոց ազգի, ինչպէս եւ այլ քրիստոնեայ ազգերի մէջ: Եւ հնարեց ու ջանաց վրէժխնդիր լինել: Եւ ծածկապէս մեր ազգին սովորեցրեց մի այլ գործ, որը հաւասար է կորստեան հերձուածին: Քանզի հերձուածողներն ասացին. «Հայրն անսկիզբ չէ», մէկն ասաց. «Որդին հաւասար չէ Հօրը», իսկ միւսը, թէ՝ «Հոգին հաւասար չէ Որդուն»: Եւ մի այլ մէկը, թէ՝ «Տէրը առաջօք չրջեց աշխարհում եւ ճշմարտապէս չէր մարդացել»: Մի ուրիշն էլ, թէ՝ «Մարիամը չծնեց Աստծուն, այլ սոսկ մարդու», եւ այլ անթիւ հայհոյութիւններ ու հերձուածներ, որոնք գրեցին հերետիկոսները: Սակայն այս ամէնը չարմատացաւ մեր ազգի մէջ: Եւ բանսարկուն մեր ազգին սովորեցրեց պղծախօսութեան հայհոյութիւնը: Եւ ամէն օր համարձակօրէն անարգել է տալիս Աստծուն, հայհոյում է հրեշտակին ու քահանային: Իսկ նա, ով անարգում է Աստծուն, ո՞ւմ է արդեօք կամենում պաշտել: Զարմանալի է այս. պաշտես Աստծուն ու դառնալով անարգես Աստծուն: Արդ, ասա՛ ինձ՝ ի՞նչ բանի համար Աստուած շնորհակալ լինի քեզնից՝ Իրեն անարգելու եւ նախատելո՞ւ, թէ՞ պաշտելու եւ երկրպագելու համար:

Ո՛վ մարդ, ինձ թւում է՝ դու նման ես այն խելագար յիմարին, որը գնաց թագաւորի մօտ եւ երկրպագեց նրան, իսկ յետոյ, ոտքի կանգնելով թագաւորի դիմաց, լի բերանով թքեց նրա երեսին: Եւ մերձակաները սրախողխող արեցին նրան: Արդ, այսպէս կլինի նրա հետ, ով պաշտում է Աստծուն եւ յետոյ դառնում անարգում է Նրան: Բայց պատահում է նաեւ, որ Աստուած բարկանում է բոլոր մեղքերի համար եւ ժամանակ առ ժամանակ ցասում է բերում [աշխարհի վրայ]:

Պղծախօսութեան համար [Աստուած] առաւել շատ պատուհասներ է բերում աշխարհին՝ սով, անժամանակ մահ եւ այլն: Եւ եթէ ետ չդառնանք ու չապաշխարենք, ապա վերջին օրը հրով կդատի մեզ: Իսկ պղծախօսութեան բացատրութիւնն այս է. երբ մէկը

անարգում է Աստծուն հայհոյութեամբ, Աստուծոյ առջեւ յիշում է արարածների մեղքը, այդ ժամանակ շարժւում են Աստուծոյ աթոռները, որոնք բազմաչեայ քերովբէներն ու սերովբէներն են, որոնք ջանում են հրեղէն սրով ջնջել մարդկային ցեղը, իսկ ներող եւ համբերող Աստուած սաստում է նրանց, որ հանդարտուեն [եւ սպասեն] մինչեւ դատաստանի Օրը, որովհետեւ անեզր է Նրա քաղցրութիւնը, եւ շատ է ցանկանում մեր դարձը:

Ուստի, աղաչո՛ւմ եմ ձեզ, նայենք ահեղ Ատեանին եւ թօթափուենք բոլոր մեղքերից, առաւել եւս փախչենք պղծախօս հայհոյութիւնից: Եւ միւսներին էլ խստօրէն խրատենք, որ չհայհոյեն Աստծուն: Աստծուց [դրուած] պարտաւորութիւն կայ իշխանների վրայ, որոնք իշխանութիւն ունեն սաստելու, խրատելու, պարտադրելու ու յանդիմանելու բոլոր նրանց, ովքեր գտնւում են իրենց իշխանութեան ներքոյ, որպէսզի պղծախօսութեամբ չհայհոյեն Աստծուն:

Առաւել եւս մեծ պարտաւորութիւն կայ հոգեւոր առաջնորդների վրայ, որ հոգ տանեն հօտին եւ ամէն ժամ, մշտապէս ուսուցանեն ամէն տեսակ արդարութեան եւ բոլոր մեղքերի մասին, որպէսզի աշխարհի բոլոր իշխաններն ու առաջնորդներն այստեղ բարի օրինակ լինեն, եւ [մենք] հանդերձեալ աշխարհում անվախճան բարի հանգիստը ժառանգենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Որն օրհնեալ է ամէն ինչում, հաւասար Հօրը եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի. Տասը թուի մասին, որ կատարեալ եւ խորհրդաւոր թիւ է՝ լցուած աստուածային գերակատար իմաստութեամբ

Եւ որովհետեւ Աստուծոյ շնորհով աստուածային պատուիրաններից ըստ մեր տկար մտքի կարողութեան քաղելով՝ փոքրիշատէ ծանօթացանք բարու եւ չարի տեսակներին, բե՛ր, ո՛վ աստուածային իշխան, քննենք նաեւ աստուածային պատուիրանների տասը թուի մասին, որովհետեւ այն կատարեալ թիւ է եւ իր մէջ ունի թաքուն ամբարուած բազում խորհրդական եւ աստուածային իմաստներ: Եւ կատարեալ հաւատով սկսենք մօտենալ այս գերագոյն եւ սրբազան խորհրդի նշանակութեանը: Եւ Աստուած, որ խոստացաւ տալ Իրենից խնդրողներին, կտայ նաեւ մեզ խօսքի իմաստութիւն՝ ի շահ բոլոր լսողների եւ յօգուտ մեր ողորմելի անձերի: Իսկ ամէն բանից առաջ բարւոք է իմանալ այս, որ առաջին թիւը Աստուծոյ օրինակն է: Որովհետեւ Աստուած կոչւում է Սկիզբ եւ Մայր բոլոր ստեղծուածների, որովհետեւ անգոյից ստեղծեց նրանց, եւ չկայ ոչինչ Նրանից առաջ: Նմանապէս էլ առաջին թիւն է բոլոր թուերի ծնողը, եւ նրանից առաջ չկայ մէկ այլ թիւ: Եւ ինչպէս բոլոր ստեղծուածները առաջացան եւ ի յայտ եկան Մի Աստծուց, նմանապէս էլ բոլոր թուերը մէկից սկսուեցին, երեւացին եւ անհաշիւ բազմացան: Եւ որովհետեւ Աստուած ծայրագոյն Լոյս է, եւ Ինքն էլ գոյացրեց լոյսը, իսկ լոյսից ստեղծեց անմարմինների դասերը, ու լոյսից լոյս երեւաց, այսպէս էլ մէկ թիւն է լոյս մարդկանց մտքի մէջ, որովհետեւ սրանից յայտնուեցին միւս թուերը, որոնցով կենցաղավարւում է մարդկանց կեանքը աշխարհում:

Այսպէս նաեւ առաջին դարում Աստուծոյ լոյսով պայծառացան հոգին ու միտքը մեծն Ենովքի, որն Ադամից յետոյ եօթերորդն էր: Նա ձգտեց լուսեղէն դրախտին, որի մասին լսեց Ադամից, մտաւ պահքի լոյսի մէջ եւ կենդանի մարմնով վերափոխուեց մշտնջենաւոր լոյսի մէջ:

Մէկ թիւը բարի լոյս է, ինչպէս ասացինք, եւ լոյս է, ինչպէս առաջին արարչութիւնը, եւ կոչւում է միաշաբաթ, օր է թագաւորական եւ աստուածային եօթնադարեան կեանքի: Նրա մէջ գոյացաւ լոյսը, որովհետեւ օրը լոյս է թարգմանւում: Եւ ըստ կարգի երեւացին Արարչի նաեւ միւս գործերը: Նաեւ՝ նա է մայրը բոլոր մնացած օրերի:

Իսկ երկու թիւը գալով՝ նախ խորհրդանշում է Ադամին եւ ապա՝ Ադամին ու Եւային: Քանզի Ադամն Աստծուց ստեղծուեց որպէս երկու մարդ՝ երկու նիւթերից, այսինքն՝ հոգի եւ մարմին: Քանզի առաքեալը հոգին կոչում է ներքին, իսկ մարմինը՝ արտաքին մարդ[173], որոնք միմեանց հակառակ են, որը մեր փորձով իսկ տեսնում ենք ամէն օր: Սակայն մարդը մի բնութիւն կոչուեց եւ ոչ թէ՝ երկու:

Եւ ինչպէս միակը ծնեց երկուսին եւ բաժանեց, եւ երկուսը անախտ ելաւ մէկից, այնպէս էլ Արարչի հրամանով բաժանուեցին եւ ելան Ադամը եւ Եւան՝ որպէս կատարեալ անախտ մարդիկ: Եւ երկու թուի խորհուրդը բազում բաներում է երեւում. մենք ունենք երկու տեսանելիք եւ երկու լսելիք: Նաեւ մեծամեծ լուսատուները երկնքում երկուսն են: Եւ Տէրը երկու-երկու էր առաքում իր աշակերտներին: Երկուսն են Կտակարանները, եւ երկուսն է կեանքը՝ այս, որի մէջ ապրում ենք, եւ հանդերձեալը: Երկուսն են մարգարէները, որ Թաբոր լեռան վրայ վկայեցին Յիսուս Քրիստոսին, իսկ Հայրն ու Հոգին՝ Յորդանանում: Նաեւ երկրորդ դարում Աստուծոյ հրամանով ջուրը սպանեց եւ մէջտեղից վերացրեց չարիքը: Իսկ Նոյը Աստուծոյ հրամանով նաւավարութիւն սովորեց եւ ելաւ տապանից, եւ Աստուած նորից բոյսերով ու տունկերով արարչագործեց աշխարհում եւ հաստատութեան ուխտ կնքեց Նոյի հետ: Իսկ ջրերը վերադարձան իրենց տեղերն ու հաստատուեցին աշխարհում: Եւ Նոյը՝ երկրորդ Ադամը՝ այս մարդկութեան հայրը, որովհետեւ բարւոք է երկու թիւը, ելաւ մէկից եւ հաստատուեց, ինչպէս նաեւ արարչութեան երկրորդ օրը, որ բաժանուեց եւ դուրս եկաւ միաչաբաթից, որովհետեւ այս ընթացքում սահմանուեց երկնքի հաստատութիւնը, եւ վերին ու ներքին ջրերը բաժանուեցին:

Իսկ երեք թիւը յոյժ կատարելագոյն եւ բարի է, քանի որ դեղեցկազարդ կերպով Սուրբ Երրորդութեան խորհուրդն է ցոյց տալիս:

Երեք է այս թիւը, եւ երեք են նաեւ Աստուածութեան Անձնաւորութիւնները՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի: Եւ ինչպէս որ մի թուի մէջ երեւացին Իրենց Երեք Անձերով, այսպէս էլ Հօրից երեւաց Որդին՝ ծննդեամբ, եւ Հոգին՝ անընդհատ ու անսպառ բխմամբ: Ամէն ինչով Հօրը հաւասար Երեք կատարեալ Անձեր՝ մի անբաժանելի Բնութեամբ: Եթէ Մէկը պակաս լինի Երրորդութիւնից, նուաստ, անկատար եւ անշուք կմնայ Աստուածութիւնը:

Երեք թիւը նմանւում է նաեւ մարդ արարածին, որովհետեւ մարդն ինքը հոգի, մարմին եւ միտք է: Եթէ մէկը պակասի, ապա մարդը կդադարի կատարեալ լինելուց, բայց կատարեալ Երրորդութիւնը ստեղծեց մարդուն կատարեալ երեքից: Հայրը մեզնից պահանջում է սուրբ եւ անաղարտ պահել մեր մարմինն Իր բնակութեան համար՝ չշնանալ, չպոռնկել, չսպանել, չգողանալ, որն օրինադրեց Մովսէսին պահքերով, աղօթքներով, աշխատելով ու ողորմութեամբ: Որդին հրամայում է մաքուր պահել մեր հոգին Իր բնակութեան համար՝ չլինել ո՛չ ոխակալ, ո՛չ բամբասող, ո՛չ նախանձ, ո՛չ մատնող, ո՛չ երդուող, այլ մնալ օրհնութիւններում, բարի խօսքերում ու հոգեշահ խրատներում: Իսկ Սուրբ Հոգին կամենում է, որ սուրբ եւ յստակ պահենք մեր միտքը Իր բնակութեան համար՝ ո՛չ հպարտ լինել, ո՛չ ամբարտաւան, ո՛չ ագահ, ո՛չ իզուր խռովուող, այլ խոնարհ, լսող եւ հեզ, որովհետեւ Հոգին հեզութիւն է:

Եւ ինչպէս որ երկուսը ծնուեց մէկից, իսկ երեքը՝ երկուսից, նմանապէս Եւան ծնուեց Ադամից, իսկ Սէթը՝ Եւայից ու Ադամից: Արդ, անհաշիւ աճեցին մարդիկ, իսկ թուերն էլ՝ անսպառ: Նաեւ երրորդ դարում փլուեց աշտարակը, ու խափանուեց մարդկային չար խորհուրդը: Եւ ցրուեցին մարդկանց որդիները, ու մարդկանցով զարդարուեց ողջ աշխարհը:

Եւ որովհետեւ այսքան բարի է երեք թիւն ու մեծափառ, դրա համար անթերի խոստովանենք Սուրբ Երրորդութիւնն ու բոլոր

բարելի առաքինութիւններով զարդարենք մեր անձերը: Ինչպէս արարչութեան երրորդ օրը երկիրը զարդարուեց պէս-պէս բոյսերով, տունկերով, ծաղիկներով, նաեւ Աստուծոյ հրամանով Ադենի դրախտը զարդարուեց զանազան ծաղիկներով ու տունկերով:

Չորս թիւը նոյնպէս իր մէջ ամբարուած ունի խորհուրդի անսահման հոգեշահ եւ ցնծալից իմաստներ:

Առաջինն այն է, որ Աստուած ոչէից ստեղծեց նախ տարերքների բնութիւնը եւ նիւթը եւ ապա՝ տարերքները՝ հուրը, հողը, օդը եւ ջուրը: Եւ յետոյ իրար հակառակ տարերքները խառնեց միմեանց, կապեց սիրով եւ սրանցից ստեղծագործեց բոլոր արարածներին:

Ունի նաեւ չորս գետերի խորհուրդը, որոնք բխում էին Ադենի դրախտում: Նաեւ աշխարհն է քառաթեւ, եւ չորսն են կենդանիները, որոնք կրում են Աստուածութեան աթոռը: Բազում է չորսի խորհուրդը. նաեւ Աստուած հրամայեց, որ տապանակը քառակուսի պատրաստեն մեծ խորհուրդի պատճառով, իսկ նրա վրայ՝ չորս օղամանեակներ, որոնց միջոցով քահանաները կվերցնեն տապանակը:

Նաեւ՝ Քրիստոսի չորս Աւետարանները աշխարհի չորս կողմերում, որոնցով սուրբ Եկեղեցին արժանապէս կրում է Յիսուս Քրիստոսին, ինչպէս որ քահանաները՝ տապանակը:

Եւ ինչպէս մի թագաւոր յոյժ մեծարեց չորս թիւն ու քառեակ կոչեց այն, որովհետեւ տեսաւ, որ չորսն են տարերքները, եւ չորսն են առաքինութիւնները, որոնք ունի մարդը, եւ նրա աշակերտները չորս տարրերի վրայ երդուեցին: Եւ Յակոբ նահապետը իր չորրորդ որդուն տուեց Աստուծոյ օրհնութիւնը եւ անճառելի խորհուրդը, որ Քրիստոսով էր ամբողջանալու, քանզի ասաց. «Ռուբէ՛ն, իմ զօրութի՛ւն եւ առաջնե՛կ իմ որդիների, ջրի նման մի՛ եռայ երկրի վրայ, որովհետեւ պղծեցիր քո հօր անկողինը: Ղեւիին եւ Շմաւոնին չընդունեց իմ անձը, որովհետեւ չար էր նրանց բարկութիւնն ու ցասումը, որ ջարդեցին սիկիմացիներին»: Գալով չորրորդին՝ ասում է. **«Յուդա՛, քեզ կօրհնեն քո եղբայրները. բազմեցիր եւ ննջեցիր, ինչպէս առիւծն ու առիւծի կորիւնը»**[175], իսկ մնացածին նորոգի՛ր քեզ հետ, եւ ճշմարտապէս կկատարուի Քրիստոսով:

Նաեւ՝ չորսն են առաքինութիւնները, որ Աստուած սահմանեց մարդու համար, երբ ստեղծեց նրան, որոնք են՝ խոհականութիւնը, որը բանական [ոլորտինն] է, արիութիւնը, որը սրտմտական [ոլորտինն] է, ողջախոհութիւնը, որը ցանկական [ոլորտինն]* է, նաեւ՝ արդարութիւնը: Իսկ այս գոհացողական է, որը բանականն է մեր մէջ, որպէսզի բանականութեամբ անդադար հրեշտակներին հաւասար օրհնաբանենք մեր Արարչին եւ չբամբասենք, չխեղկատակենք, որպէսզի այլ բան չգայ բանականութեան հետ, ինչպէս չար պղծախօսութիւնը:

Եւ արիութեան գործն է, որ քաջապէս եւ արիաբար ջանանք բարի գործերում, որը հաճելի է Աստծուն, եւ մեծ պատերազմով բարկանանք օձի ու մեղքերի վրայ եւ ոչ թէ՝ մեր եղբայրների: Բարկութիւնը դռնապահ դարձնենք չարիքի եւ մեղքերի դէմ, ինչպէս շունը, որը պահում է իր տիրոջ ունեցուածքը: Իսկ ցանկականի գործն է, որ միշտ ցանկանանք Աստծուն եւ Նրա բարիքները եւ մեր բոլոր խորհուրդներն ու գործերը ուղղենք վեր՝ դէպի աստուածայինը եւ անախտ կեանքը: Եւ չցանկանանք ո՛չ աշխարհը, ո՛չ էլ մարմնի ախտերը, որովհետեւ դրանք սիրողները ոչինչ չշահեցին:

Եւ արդարութեան գործն է, որ արդար կշռով մեզ առաջնորդի դէպի բարին, որովհետեւ կառապանը, որ կողմ կամենում է, ուղղում է կառքի սանձերը: Նմանապէս էլ արդարութիւնը ղեկավարում է խոհականին, արիականին ու ցանկականին եւ միշտ նրանց ընթացքն ուղղում է վեր՝ դէպի աստուածայինը, եւ թոյլ չի տալիս խոտորուել մեղքերում:

---

* Գրաբար տեքստում բացթողում կայ. բացակայում է ցանկական ոլորտի առաքինութիւնը:

Եւ այսպէս, Ադամը դրախտում զարդարուած էր չորս առաքի-նութիւններով, եւ նա Աստուծոյ կառքն էր ու հանգիստը: Իսկ երբ խախտեց եւ Աստուծոյ հրամանները չպահեց, չար վիշապ-սատա-նայի կառքն ու բնակարանը դարձաւ: Մինչեւ որ աշխարհ եկաւ նախկին կառավար Աստուած եւ մարդուն վերադարձրեց առաջին պատիւը: Որովհետեւ չորրորդ դարում Աբրահամին Իսահակի մասին աւետիս տրուեց, որն ամբողջացաւ Քրիստոսով: Քանզի անմատոյց եւ մշտնջենաւոր Լոյսը հաւաքուելով՝ ծածկուեց Մարիամ Աստուածածնի սուրբ եւ մաքուր արգանդում: Եւ այնտե-ղից առ մեզ ծագեց Աստուած՝ մեր երեսաց Լոյսը:

Ինչպէս նաեւ արարչութեան չորրորդ օրը երեք օրերի լոյսը, որ ցիր ու ցան էր, Աստուծոյ հրամանով հաւաքուեց եւ կոչուեց արեգակ, լուսին ու աստղեր:

Նաեւ հինգ թիւն է յոյժ խորհրդաւոր. այն խորհրդանշում է մարդկանց հինգ զգայարանները, որոնք են՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք եւ շօշափելիք, եւ մեզ խրատում նրանցով գործել միշտ բարին: Նրանց գործունէութիւնը հետեւեալն է:

Տեսանելիքով նայել արարածներին եւ օրհնել Արարչին, զուար-ճանալ ու զարմանալ Արարչի մեծագործութեան վրայ, երբ նայում ենք երկնքի լուսատուներին, պտղատու զանազան ծառերին, գեղե-ցիկ ծաղիկներին, անթիւ կենդանիներին ու մարդկանց գեղեցիկ դէմքերին: Եւ պէտք չէ նայել արատով, աղտեղութեամբ, նախան-ձով կամ չարակնութեամբ:

Լսելիքով յօժարակամ լսել Աստուծոյ հրամանները եւ հաւանել Նրա օրէնքները, ընդունել Նրա խրատները, որոնք վերաբերում են արքայութեանը, դժոխքին, բարի եւ չար գործերին: Եւ մեր լսելի-քը չտրամադրենք չար խօսքերին, բամբասանքին, խեղկատակու-թեանը, աղտեղութիւններին ու գուսանական երգերին, որոնք դեւերի կոչնակներն են եւ ցանկասէր ախտերի գրգռողները:

Հոտոտելիքով զգալ հանդերձեալ կեանքի բուրմունքն ու Աստուծոյ օրէնքների համը եւ բարին հոտոտել, ինչպէս աշակերտ-ները Թաբոր լեռան վրայ հոտոտեցին անմահական եւ աստուածա-յին բուրմունքը: Եւ արժան չէ հոտոտել իգական մահացու խոր-հուրդների ու զանազան մեղքերի չար հոտը, որոնք թունաւորում են մեզ ու դարձնում դժոխքի ժառանգ:

Ճաշակելիքով մանրամասն ճաշակել, քննել եւ միշտ պարզաբա-նել Աստուծոյ հրամաններն ու օրէնքները եւ կոկորդում հոգոց հանել Աստուծոյ խօսքի պարարտութեան համեղութիւնից, ըստ Գրքի, որն ասում է. «**Քո խօսքերը աւելի քաղցր են, քան մեղրը, որ հասնում է մարմնիս քիմքին ու կոկորդին**»[176]: Եւ դարձեալ՝ «**Ինչպէս մարմնական ճաշակելիքս ուրախանում է ճարպի պարարտութիւններից, այնպէս էլ Քո պատուիրաններից պարար-տացան հոգուս քիմքն ու ճաշակելիքը, եւ իմ շուրթերը ցնծացին ու բանական հոգուս միջոցով օրհնաբանեցին Քեզ, Աստուա՛ծ**»[177]:

Ճաշակելիքով պէտք չէ պարարտացնել որովայնը եւ բազմա-ծախ եւ անուշահամ կերակուրներով պոռնկացնել ճաշակելիքը, աւելի հեշտացնել ու թշնամի դառնալ Քրիստոսի խաչին՝ ըստ առաքեալի հրամանի:

Շօշափելիքով, որը մեր ձեռքերն են, վաստակել եւ ողորմութիւն տալ՝ գանձել Աստուծոյ մօտ, եւ ըստ մարգարէի՝ ձեռքերը վեր բարձրացնելով՝ աղօթել Աստծուն եւ աղաչել, որ ազատի մեզ անչէջ հրից[178]: Մեր ձեռքերը չմեկնենք գողութեան, գրկելու, հարուածե-լու, սպանելու եւ մարմնի փափկութիւն շօշափելու, որ բոլոր աղտեղութիւնների դուռն է:

Եւ սրանք մեր հինգ պատուհաններն են, որոնցով մեր մէջ մտնում են բարին ու չարը, որոնց ընդունում ենք կամովին: Եւ սրանցով սողոսկելով՝ ներս է մտնում անիծեալ օձն ու առաջին գողը եւ գրկում մեզ աստուածային գանձից: Ցիրաւի մեր Տէրը

առակով մեղաւորների բոլոր դասերին նմանեցրեց հինգ յիմար կոյսերին, իսկ բոլոր ընտրեալ արդարների դասերին՝ հինգ իմաստուն կոյսերին, որովհետեւ մարդկային հինգ զգայարաններով են գործւում չարն ու բարին: Ինչպէս նաեւ հինգն [են այն] քաղաքները, որոնք Սոդոմի հետ այրուեցին հրով, սակայն մնում է նրանց չար յիշատակը: Նաեւ՝ հինգերորդ դարում Մովսէսը ժողովրդին անցկացրեց ծովը, տուեց մանանան եւ այլն: Նաեւ Յեսուն անցաւ Յորդանանն ու տապալեց Երիքովը հիմն ի վեր: Եւ հինգշաբթի օրը մեր Տէր Յիսուս Քրիստոսը, աստուածացած մարմնով խոնարհուելով, Վերնատանը լուաց աշակերտների ոտքերը, որոնք բարձրացան, թռան երկինք եւ մտան Վերին Երուսաղէմ: Եւ այսպէս բարի է հինգ թիւը, ինչպէս արարչութեան հինգերորդ օրը, որի ընթացքում Աստուծոյ հրամանով ստեղծուեցին ծովի անքանակ ձկներն ու մեծամեծ կետերը: Եւ նոյն ծովից անթիւ ու անհամար ձկներ թռան ու բարձրացան երկինք ու զարդարեցին այն:

Վեց թիւը նոյնպէս ցանկալի է եւ գեղեցկազարդ: Իր մէջ պարփակում է հանճարի խօսքը, որովհետեւ կատարեալ է եւ անդրադառնում ու կրկնում է ինքն իրեն լաւագոյն մասերով, որն ունի: Որովհետեւ եթէ վեցը բաժանես երեք մասի, զոյգ կդառնայ՝ երկուերկու, իսկ եթէ երկու մասի բաժանես, երկու երեք կդառնայ, որոնք յոյժ խորհրդաւոր թուեր են, ինչպէս նշեցինք վերեւում երկու եւ երեք թուերի մասին [խօսելիս]:

Իսկ երբ վեցը կրկնապատկես, կդառնայ տասներկու, որը ցոյց է տալիս հրեշտակների տասներկու գնդերը, որի մասին Տէրն ասաց Պետրոսին, նաեւ՝ երկնքի տասներկու կենդանակերպերը եւ տասներկու ժամերը, որ ամբողջացնում են ցերեկն ու գիշերը, եւ տասներկու ամիսները, որոնք բովանդակում են ողջ տարին, եւ տասներկու մեծամեծ անդամները, որոնք մարդուն մարդ են ներկայացնում, նաեւ՝ տասներկու որդիները Յակոբ նահապետի եւ

Զաղիմի տասներկու աղբիւրները, որոնք քաղցրացան Իսրայէլում, եւ Ահարոնի վակասի տասներկու ակնաքարերը եւ տասներկու քարերը, որոնք Յեսուն վերցրեց Յորդանանից, եւ տասներկուսը, որ դրեց Յորդանանի յատակին. եւ տասներկու եզները, որ Սողոմոնի տաճարում էին, տասներկու առաքեալներին ու տասներկու մարգարէներին:

Նաեւ Սուրբ Երրորդութեան անունների տառերի քանակը տասներկուս է, եւ է այսպէս՝ Հայր, Որդի, Հոգի:

Թէ որքան խորհրդաւոր է վեց թիւը, սովորի՛ր մեր ծնունդից, որովհետեւ երբ կինը տղամարդուց յղիանում է, երեք օրում սերմը որովայնում դառնում է արիւն, իսկ վեցերորդ օրը արիւնից ծնւում է որդը՝ ըստ Դաւիթ մարգարէի, որն ասում է. **«Ես որդ եմ եւ ոչ թէ մարդ»**[179]: Եւ որովայնում քիչ-քիչ աճում է որդը, եւ ծլում են մարդու անդամները, իսկ քառասուներորդ օրը արու մանուկը կատարեալ է դառնում եւ ստանում է բանական հոգին: Նաեւ էգ մանուկն է այսպէս լինում, ինչպէս ասացինք, սակայն երկու քառասունքում: Քանի որ արու մանուկը ստեղծւում է աջ կողմում՝ լեարդի տակ, եւ լեարդի ջերմութիւնից անդամներով ամբողջանում է աւելի շուտ՝ քառասուներորդ օրը, եւ նոյն օրն էլ առնում է բանական հոգին: Եւ նա, ով սրանից յետոյ որեւէ հնարով սպանի մանկանը եւ վիժեցնի որովայնից, կատարեալ մարդասպան է: Որովհետեւ գրուած է. «Միապէս դատաստանի կգան քառասնամեայ կատարեալ տղամարդն ու քառասնօրեայ ստեղծուածը, որ վիժեցուեց, որովհետեւ միապէս ունեն բանական հոգին»:

Իսկ էգ մանուկը ստեղծւում է ձախ կողմում՝ փայծաղի տակ, եւ փայծաղի հով սառնութիւնից նրա ստեղծումը երկարաձգւում է մինչեւ երկու քառասունք, եւ ապա ամբողջանում է եւ բանական հոգի է վերցնում:

Նաեւ՝ ոչ աւել, ոչ պակաս, այլ վեց է մարդկային չարժումը:

Այսպէս՝ դէպի վեր եւ դէպի վար, աջ ու ձախ, առաջ եւ ետ: Աստուած մեզնից պահանջում է, որ այս վեց շարժումներն անարատ, ըստ Իր կամքի պահենք: Զհպարտանալ դէպի վեր բանսարկուի նման եւ ամբարտաւան լինելով՝ կործանուել դէպի անդունդները, ինչպէս նա: Նաեւ վայր չընկնել, դառնագոյն մեղքերով չկործանուել եւ չիջնել սանդարամետները:

Զխոտորուել աջ՝ բարի գործը ի ցոյց դնելով մարդկանց առաջ, եւ կամ գովեստից հպարտանալ եւ զրկուել վաստակներից:

Եւ չխոտորուել ձախ, երբէք ծուլութեամբ անհոգ չմնալ, չհեռանալ բոլոր բարիքներից եւ չշաղախուել մարմնի ցանկութիւնների եւ աշխարհային սիրոյ հետ:

Առաջ չխոտորուել, այսինքն՝ պէտք չէ [կարողութիւնից] աւելի ջանալ առաքինութեան համար եւ սկսել այն, ինչը չես կարող գլուխ բերել: Մի՛ քննիր Աստուծոյ մասին աւելի, որոնք գրուած չեն հոգեւոր գրքերում: Եւ կամ առաւել ջերմանալ եւ խղճմտութեամբ զղջալ եւ սկիզբ դնել սաստիկ ապաշխարութեան, որը չես կարող տանել ու դիմանալ: Այլ ամէն կերպ ջանալով՝ արժանի է գնալ միջին ճանապարհով:

Եւ ետ չխոտորուել, այսինքն՝ {չլինի թէ}բնաւ չփութալ բարի գործեր անելու, այլ «Աստուած ողորմած է» ասելով՝ ծուլանալ եւ կամ ամենեւին չընթանալ [պատուիրանապահութեամբ] եւ չխորհել Աստուծոյ առաջին ու վերջին Գալստեան մասին:

Աստուած մարմնով ծնուեց Կոյսից վեցերորդ դարում եւ վեցերորդ օրը յարութիւն տուեց արդէն մարմնով հոտած Ղազարոսին՝ որպէս օրինակ Ադամի եւ նրա սերունդների, որովհետեւ չար սատանան դէպի իրեն գրաւեց մարդկանց վեց շարժումներն ու չարաչար մեղքերով պահում էր իր ըստ իր կամքի:

Եւ բարի է վեց թիւը, կարգաւորուած ու կատարեալ բարի՝ մասերով ու խորհուրդներով, ինչպէս վեց օրեայ արարչութիւնը,

որի ընթացքում Աստուած ստեղծեց մարդուն, նրան դրեց դրախտում, եւ որի ընթացքում ձեւաւորուեցին երկինքն ու երկիրը: Քանի որ Ադամին տէր եւ թագաւոր կարգեց դրախտում, դրա համար ուրբաթը աւելում է կազմութիւն, որովհետեւ հինգ օրուայ գործը նրանով կազմուեց, որովհետեւ Աստուած ամէն ինչ մարդու համար ստեղծեց: Եւ մարդը չէր երեւում եւ ստեղծուած չէր, որ տեսնէր արարածներին կամ գործէր եւ պատրաստէր եւ վայելէր նրանց, ինչպէս եղաւ յետոյ:

Նաեւ եօթը շատ ցանկալի թիւն է, գերակատար սուրբ Աւագան եւ առաւելապէս բարձրագոյն է, որովհետեւ եօթը նման է անմայր միակի: Սա չի ծնւում որեւէ թուից, եւ ոչ էլ այլ թիւ՝ իրենից:

Եօթ թիւը անսպառ ու անհասանելի մեկնեցին նախնիները: Նրանք այլաբանօրէն իմաստութիւնն Աթէնաս կոչեցին, որովհետեւ իբր թէ Աթէնասի ուղեղի միջից են գտել եօթ թիւը, երբ տապարով մէջտեղից կիսել են այն: Իբր այն դուրս է եկել Աթէնասի (որն իմաստութիւնն է) ուղեղից:

Խօսքիս իմաստն այն է, որ մարդիկ մեծ չարչարանքով ու տառապանքով գտան իմաստութիւնը եւ վերցրեցին Աստծուց: Եւ չկարողացան հասնել Աստծուն, քանի որ իմացան Աստծուն, բայց իբրեւ Աստուած չփառաւորեցին Նրան, այլ նանիր խորհեցին ու աստուածացրին արարածներին՝ ըստ առաքեալի, եւ առաջին օձի նման երկրի վրայ սողացին[179ա]:

Նաեւ՝ եօթն էին Ադամի շնորհները, որոնք կորցրեց մեղքով: Եօթն էին Կայէնի յանցանքները, եօթ էին նաեւ նրա պատիժները: Եւ Ադամից յետոյ եօթներորդը՝ Ենովքը, կենդանի մարմնով երկինք բարձրացաւ:

Եօթն էին աշտանակները, եւ եօթն էին ճրագների բերանները:

Եօթ օր էր քաւութիւնը, եւ եօթ օր՝ հանդիստը, եւ եօթի այլ անհամար խորհուրդներ, որոնք կան օրէնքներում:

Ըստ Եսայու խօսքի՝ եօթ են հոգու զօրութիւնները, որ մեզ համար ընդունեց ոչ մի բանի կարիք չունեցող Յիսուս եւ մեր մէջ բնակուեց:

Եօթ դար է աշխարհի կեանքը, որն այլեւս չի աճի եւ չի բազմանայ: Դրա համար իմաստունը գրում է. **«Բաժի՛ն տուր եօթ կեանքերին, նաեւ ութին»**[179]: Այսինքն՝ աշխարհից վերցրո՛ւ մարմնիդ պէտքերը եւ մարմնիդ անհրաժեշտ պէտքերից աւելի մի՛ ձգտիր կերակուրի, ըմպելիքի, հանդերձի եւ արծաթի: Մերձեցի՛ր կնոջդ, բայց միայն որդեծնութեան համար, պարկեշտութեամբ ու արդար անկողինով: Ոչ էլ ձգտիր թանկարժէք զգեստի ու կերակուրի, որ չհրամայեց Աստուած, որը մարդիկ մեծ ջանքով եւ չարագիւտ արուեստով գտան: Վաւաշոտ աղտեղութեամբ մի՛ վարուիր կանանց հետ՝ լրբանալով շնութեամբ, որը աստուածային սուրբ Կտակարանները նախատում են: Քանզի եօթն են չարիքները մեր թշնամու հոգում: Այսինքն՝ անսահման չարիքն իր մէջ ունի նաեւ եօթ զօրութիւններ, որոնք բոլոր եօթ դարերի ընթացքում կամենում ու ջանում է սերմանել Ադամի որդիների հոգիներում եւ մտքերում: Իսկ մենք պարկեշտ լինենք եւ չմոռանանք ութերորդ դարը, որը յաւիտենական կեանքի մուտքն է:

Եւ ահա՛ աւարտուեցին եօթ դարերը եւ տարան կանգնեցրին մեզ հանդերձեալ կեանքի դռան առաջ:

Բայց նաեւ արժան է իմանալ, որ այժմ մենք, թէպէտ գիտենք Աստծուն ու Նրա կամքը, բայց բազմակերպ մեղքերով միշտ վշտացնում ենք Նրան: Դէ տե՛ս, թէ որքան են տրտմեցնում կամ հայհոյում Նրան հերձուածողներն ու անյոյս մեղաւորները, անտանելի չարագործներն ու անհաւատները, որոնք բնաւ չճանաչեցին Աստծուն:

Եօթերորդ դարից յետոյ յարութիւն կլինի, եւ ամէն ոք ըստ իր վաստակի յարութիւն կառնի: Կդադարեն մարմնական խորհուրդներն ու աշխարհի գործերը, կվերանան մեղքն ու մահը: Եւ Աստուած կհանգստանայ եօթերորդ դարի լրմանը եւ այլեւս չի տրտմի մեղքերի պատճառով, այլեւս չի ստեղծի ու չի աճեցնի, որովհետեւ կաւարտուեն այս աշխարհի գործերն ու սատանայի չարիքը, որն այժմ գործել է տալիս մարդկանց:

Այսչափ մեծ ու հրաշազարդ է եօթ թուի խորհուրդը, նաեւ ցոյց է տալիս այն, որ ասում է եօթ օրուայ արարչութեան մասին. **«Աստուած Իր բոլոր գործերից հանգստացաւ այդ օրը, երբ շաբաթ էր»**[180]: Քանզի շաբաթը թարգմանւում է հանգիստ:

Իսկ ութ թիւը յոյժ ցանկալի է բոլոր սուրբերին, որովհետեւ ութերորդ դարի առաջին մուտքով կպսակուեն արդարները, իսկ մեղաւորները տանջանքների կարժանանան:

Ապա յիրաւի օրէնքը հրամայում է ծնուած մանկանը թլպատել ութերորդ օրը, որպէսզի մարմնի ծայրից աւելորդ մաշկը կտրելով՝ հեռացնեն, որովհետեւ ութերորդ դար մտնելիս կլինի դատաստանը եւ արդարների ու մեղաւորների բաժանումը եւ կտրումը. մեղաւորները մեռած մաշկի նման կկտրուեն արդարներից ու կբաժանուեն, աստուածային խօսքով կթլպատուեն եւ նրանց կասուի. **«Հեռացէ՛ք Ինձնից»**, եւ այլն:

Ինը թիւը ցուցանում է անմարմինների ինը դասերը, որոնք անդադար փառաբանում են Աստծուն: Նրանց միանում են արդարների երամներն ու սերովբէների հետ ուրախալի ձայնով երգում անվախճան հարսանիքում եւ անճառելի ցնծութեան մէջ:

Տասը թիւը աւարտն է թուերի եւ նրանց գլխաւորն ու թագաւորը, այն ցոյց է տալիս Աստուածութիւնը՝ Տէր եւ Թագաւոր ամենայնի եւ Գլուխ: Եւ Նա՝ բոլորի Արարիչ Սուրբ եւ Համագոյ անբաժանելի Երրորդութիւնը, բազմած է անձեռակերտ աթոռին՝ աւելի վեր, քան երկինքների երկինքը՝ ինը դասերի գագաթին՝ անմահ երկնաւոր անմարմին զուարթունների զօրքերի անմատոյց լոյսում ու

անմերձենալի խորանում, որն անտեսանելի է արարածներին:

Եւ դարձեալ՝ տասը թիւը ցուցանում է Ադամից յետոյ տասնեորդին՝ Նոյին, որն աշխարհի երկրորդ հայրն է, նաեւ՝ Աբրահամի տասը փորձանքները, Եգիպտոսում [կրած] տասը պատիժները, Աստուծոյ տասը պատուիրանները, որ տրուեցին Մովսէսին, Աստուծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի տասը երանիները Աւետարանում (մէկը Դաւիթ մարգարէինն է՝ Քրիստոսի մարմնաւոր հօրը) եւ մարմնի տասը զգայարանները, հինգը՝ հոգու, հինգը՝ մարմնի:

Նաեւ տե՛ս տասերի անվախճան խորհրդի մեծութիւնը, որ երբ տասը բազմապատկում ես տասով, ստանում ես հարիւր կատարեալ թիւը, եթէ հարիւրն ես բազմապատկում տասով, ստանում ես հազար, եւ եթէ հազարը բազմապատկում ես, ստացւում է բիւր: Ապա անհատնում եւ անհաշիւ բարձրանում է մինչեւ հազարների հազարը եւ բիւրերի բիւրը: Սա առաւել մեծ խորհուրդ ունի, որովհետեւ բացայայտում է Աստծուն օրհնաբանող հոգեղէնների, հողեղէնների, հրեղէնների ու լուսեղէնների անթիւ եւ անեզր բազմութիւնը՝ ըստ մեծն Դանիէլի, որն ասում է. «Տեսնում էի, եւ ահա՛ նստեց Հինաւուրցը, իսկ անթիւ հազարներ կային Նրա շուրջը, եւ անսահման բիւր բիւրեր պաշտում էին Նրան»[181]:

Եւ արդ, ճառիս խորհուրդը անմոռաց պահենք մեր աչքերի առջեւ ամէն ժամ եւ հեռանալով՝ փախչենք աշխարհի բոլոր մեղքերից ու մարմնական ցանկութիւններից: Միշտ բարին գործենք եւ երանական կեանքն ակնկալենք: Եւ որչափ որ կենդանի ենք մարմնով, հաւատով եւ յոյսով կապուենք մեր յոյս Յիսուս Քրիստոսին, որպէսզի աշխարհից դուրս գալուց յետոյ արժանաւոր լինենք դասուելու անմահ սուրբ հրեշտակների զօրքերի հետ, որոնք օգնեցին մեզ՝ հասնելու ճառիս խորհրդին Յիսուս Քրիստոսի շնորհնեռով. եւ նրանց հետ անլռելի ձայնով Աստուծոյ անճառ եւ լուսաւոր առագաստում օրհնաբանելու, գովելու ու փառաւորելու Համագոյ եւ Ամենասուրբ անբաժանելի Երրորդութեանն այժմ եւ յաւետ եւ անսպառ ժամանակներում, որը պիտի գայ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԻԱ. Աստուծոյ Որդու՝ երկնքի ամպերով փառաւոր գալստեան, նրա ահեղ եւ անաչառ Դատաստանի եւ աշխարհի վախճանի մասին

Քանզի մի փոքր ծանօթացանք մեղքերի ու անօրէնութիւնների տեսակներին, թէ որտեղից սկսուեցին կամ ինչպէս են կործանում մարդկանց, նաեւ տասը թուերի (որ կատարեալ են) խորհուրդների իմաստներին, կրկին ուշադրութիւնդ բե՛ր, ո՛վ վսեմախոհ եւ քրիստոսասէր իշխան, կապի՛ր աստուածային Գրքերի խօսքերին, որպէսզի ըստ մեր կարողութեան քննենք անճառելի Գալուստը, ահազդու եւ անաչառ Դատաստանը, որը վերջին գիշերը լինելու է Երուսաղէմում, եւ որն սպասում է բոլորին: Նրան քաջ հմուտ ու ծանօթ են Ադամի ողջ սերունդները՝ մեծերն ու փոքրերը, քարոզում եւ միշտ ակնկալում են տեսնել այն: Ընտրեալ արդարները անձկութեամբ փափագում են Նրա Գալուստը, որպէսզի վայելեն Նրա բարի խոստումները, իսկ անզեղջ մեղաւորները, երբ յիշում են այն, նախատելով պարսաւում են, որովհետեւ գիտեն, որ տանջուելու են Նրա յայտնուելու Օրը:

Մեր Տէրը Իր Գալստեան նշանն յայտնեց ու ասաց. **«Կտեսնէք Մարդու Որդուն զօրութեամբ ու բազում փառքով երկնքի ամպերի վրայով գալիս»**[182]: Աստուծոյ՝ Կոյսից մամնանալուց հինգ հարիւր տարի առաջ մեծն Դանիէլը Բաբելոնում տեսաւ Նրա վերջին ահեղ Գալուստը եւ ասաց. **«Տեսնում էի, եւ ահա՛ դրուեցին աթոռներ, եւ բազմեց Հինաւուրցը»**[183]: Նաեւ՝ **«Տեսայ, ահա՛ գալիս էր երկնքի ամպերի վրայ, ինչպէս Մարդու Որդին, եւ հարութիւն առան մեռելները երկրի հողից»**[184]:

Տեսնո՞ւմ ես ստոյգ մարգարէութիւնը, թէ ինչ զարմանալի է, որովհետեւ նոյն մարմնով, որը Քրիստոսն առաւ սուրբ Կոյսից, չարչարուեց եւ մեռաւ, յարութիւն առաւ եւ համբարձուեց, նրանով էլ գալու է երկնքի ամպերով, հայրական անճառելի փառքով եւ անմարմինների անթիւ զօրքերով, որ նոյնիսկ երկինքը թափուր կմնայ անբաւելի լուսեղէն դասերից: Եւ կգայ ամպերով, որովհետեւ Աստուծոյ սովորութիւնն է ամէն տեղ երեւալ ամպով: Նայի՛ր երկրաւոր ամպին, որ գոյանում է օդից, երեւում է Աստուծոյ հրամանով եւ դարձեալ ծածկւում: Յոյժ ցանկալի է այն գարնանը, երբ բարձանում է լեռներից վեր, երբեմն էլ ուժգին փայլում ճառագայթակերպ արեգակի լոյսից, երբ դէգ-դէգ կուտակւում են իրար վրայ եւ հեռաստանից երեւում բլուր-բլուր, մէկը միւսի վրայ գալով՝ խտանում եւ թանձրախիտ ծառացած երեւում իբրեւ բամբակների կոյտեր՝ աւելի սպիտակագոյն, քան ձիւնը, որը խտտում է իրենց նայող մարդկանց միտքն ու աչքը: Արդ, եթէ այս առարկայական ամպն այսպէս յոյժ ցանկալի է ու զարմանալի, ապա տե՛ս, թէ այն, որ աստուածային ամպ է եւ Աստուծոյ լոյսով է պայծառացած՝ եօթնապատիկ զարդարուած հրակերպ ջահաւոր լոյսով, ինչպէս արեգակ Աստուծոյ բոցեղէն զօրքերի մէջ, որքա՜ն ցանկալի եւ անճառելի է նրա խորհուրդը հողեղէններին: Դրա համար Աստուած ամպի մէջ երեւաց Մովսէսին եւ ամպի մէջ խօսեց Յոբի հետ, եւ այն լուսաւոր եւ զարմանալի ամպն էր, որ ցոյց տուեց Թաբոր լեռան վրայ: Նոյն ամպով համբարձուեց եւ նրանով էլ գալու է երկնքով: Եւ ի պատիւ արդարների՝ գերազանց լոյսով լցուած նոյն ամպը կտայ նրանց վերջին Օրը, որի վրայ կբազմեն ընտրեալ արդարներն ու կբարձրանան հանդիպելու Քրիստոսին՝ ըստ առաքելական խօսքի: Այդ նոյն ամպի մէջ անպատմելի եւ զարմանալի փառքով բազմած՝ կերեւայ Տէրը: Նրան կշրջապատեն բոլոր երկնային զօրքերն անհամար հազարներով եւ անթիւ բիւրերով, որոնք քաղցր

ձայներգութեամբ կգեղգեղան Աստուծոյ օրհնաբանութիւնները: Եւ կդղրդան աշխարհի հիմքերը նրանց ահագին գոչյունների ձայնից ըստ այնմ՝ «Կլսուեն հրեշտակապետների ձայները»: Եւ արդ, ի՞նչ միտք կարող է բովանդակել, եւ կամ ո՞ր լեզուն [կարող է] ճառել Աստուծոյ Որդու անհաս, ահեղահրաշ, սոսկալի ու սարսափելի Գալստեան մասին: Քանզի մարդ սոսկում եւ զարմանում է, երբ թագաւոր է գալիս մեծ ու հոյակապ քաղաք. նախապէս զարդարում են քաղաքի արտաքինն ու փողոցները, իսկ յետոյ մարդկանց բազմութիւնը դուրս է գալիս դիմաւորելու թագաւորին՝ շարքեր կազմած, զանազան երգերով, փողերի, սրինգների եւ այլ գործիքների ձայներով, նաեւ մարդկանց գոչման աղաղակներով: Խնջոյք, ճայթիւններ, բազում դղրդոցներ եւ թագաւորի թիկնապահ զօրքերի որոտող ձայներ... Եւ այդ պահին արեգակի ճառագայթները պայծառ աստղերի պէս երփներանգ փայլեցնում են սաղաւարտները, զրանհները, երկրային սրերն ու նիզակի տէգերը, ոսկեզօծ ու արծաթազօծ պատմուճանները: Եւ այնքան ազդու է լինում հրաշալիքը, որ վախկոտ ու յիմար ռամիկները թմրում են հիացմունքից, իսկ երեխաները դողում եւ խիստ սարսափում են:

Արդ, եթէ սուտն ու ոչինչը՝ աշխարհի փառքն ու մեծութիւնը, որ այսօր կայ, իսկ վաղը չի երեւալու, որը նման է սարդոստայնի, աղբի մէջ եռացող որդերի կամ քնի մէջ տեսած երազի, այսքա՜ն զարմանալի է թւում տեսնողներին, ապա տե՛ս եւ հասկացի՛ր, թէ [ինչ կլինի], երբ յոյժ պայծառակերպ երեւան երկնաւոր եւ անմահ թագաւորութիւնը եւ Քրիստոս թագաւորը՝ նստած լուսազարդ ու աստուածատեսակ ամպերի վրայ: Նրա երեսի լոյսից կհալուեն երկինքն ու երկիրը, ինչպէս մոմը կրակի առաջ, արեգակից պայծառ անթիւ լուսեղէն զօրքեր կլինեն նրա շուրջը, իսկ Հայրն ու Հոգին անսպառ եւ անսահման փառքով Նրա հետ բազմած կլինեն այն անձեռակերտ աթոռին, որոնց փառքի սաստկութիւնից կսար-

սեն երկնային զօրքերը, կոսկան ու կթաքնուեն սերովբէները, որովհետեւ չէին տեսել Աստուծոյ փառքը: Բայց սրանից է նրանց գոյութիւնը, այժմ էլ փառքերի լոյսից դողում եւ ծածկում են իրենց երեսները: Տեսնելով, թէ ինչպէս են սարսում ու դողում բոլոր հրեշտակները, տե՛ս, թէ հողեղէնները ի՞նչ կկրեն այնժամ եւ կամ ի՞նչ կպատասխանեն:

Եւ ապա լոյսի հրաբորբոք եւ ճառագայթաձեւ փայլից ու ահռելի որոտից կդողան լեռներն ու բլուրները եւ կհալուեն ու կհաւասարուեն դաշտերին: Կշարժուեն անդունդներն աշխարհի հիմքերով հանդերձ, եւ կհնչի փողը, որը հրեշտակապետի ձայնն է, ու կասի. «Վե՛ր կացէք, ննջեցեալնե՛ր, որոնք Ադամից էք, ահա՛ գալիս է Նա, Ով ձեզ ստեղծեց»: Եւ Աստուծոյ զօրութիւնը, որ ոչնչից ստեղծեց արարածներին, խառնուելով՝ կմիանայ հրեշտակապետի ձայնին ու սլացիկ արագութեամբ կանցնի մինչեւ անդունդները եւ կշարժի բոլոր ստեղծուածներին, ակնթարթային հրաշապէս նորոգմամբ ստեղծելով՝ կկենսագործի մարդկանց հող դարձած մարմինները: Այն ժամանակ աշխարհից կլսուի առաւել դառնագոյն ձայն, որովհետեւ հասաւ իր ծննդեան ժամանակը, նման կնոջ, որը յոյժ սաստկագոյն գոչում է ծննդաբերելու ժամանակ երկունքի ցաւերից: Ապա Աստուծոյ ակնթարթային հրամանով երկիրը կծնի Ադամի որդիներին, եւ մարդկային ցեղը կյառնի հողից, ինչպէս ծաղիկները գարնանը՝ զանազան գոյներով՝ իւրաքանչիւրն իր արմատների վրայ: Նմանապէս էլ ամէն մարդ կդառնայ ըստ իր արած գործերի: Եւ հրեղէն ծովը երկնքից, անդունդներից եւ ամէն կողմից յանկարծակի կծածկի բոլոր արարածներին ջրհեղեղի չափով, որը եղաւ Նոյի ժամանակներում: Եւ հրեղէն ծովի մէջ կծածկուեն թէ՛ արդարները, թէ՛ մեղաւորները: Եւ եթէ արդարները փոքր-ինչ պակասութիւն ունենան, այն էլ հուրը կմաքրի՝ ըստ Տիրոջ հրամանի, որ ասում է. **«Ամէն բան կրակով պիտի աղուի»**[185]: Իսկ արդարները, ջրեղէն ծովի լոյսն ու թեթեւութիւնն առնելով, **«կբարձրանան լուսեղէն խմբերով Քրիստոսին հանդիպելու»**[186]՝ ըստ առաքելական խօսքի: Եւ հրեշտակները կընտրեն արդարներին եւ նրանց պատուով կբարձրացնեն ըստ Տիրոջ հրամանի՝ **«Կհաւաքուեն Նրա ընտրեալները»**[187]:

Եւ այն ժամանակ այնտեղ չի երեւայ ո՛չ հպարտ թագաւորը, ո՛չ բարձրամիտ իշխանը, ո՛չ թագուհին՝ բազում ախտերի տիկինը, վաւաշոտ ու հեշտասէր մարմնի սնուցողը, ո՛չ հպարտ եւ շահասէր առաջնորդը, որը ճեմում էր աստուածաբար, ո՛չ բարձրագահ գիտնականը՝ պերճացած տգէտ ժողովրդի մէջ. չի ճանաչուի ո՛չ կին, ո՛չ տղամարդ, ո՛չ տէր եւ ո՛չ ծառայ, այլ միայն արդարները կփայլեն առաւել պայծառ, քան արեգակը՝ ըստ Փրկչի խօսքի:

Եկէ՛ք քննենք, ո՛վ աստուածասէր, թէ այդ ժամանակ ո՞ւր կլինեն վաւաշոտ ու ախտասէր մարմնաբոյծները, ո՞ւր կլինեն արբեցող եւ յիմարացած գինեմոլները, որոնք այժմ շուայտանում են զեխութեամբ, եւ նրանք, որոնք կուռքի պէս պաշտում են իրենց որովայնը, եւ նրանք, որոնք սիրում են գուսանական երգերն ու չար խնջոյքները: Ո՞ւր են այն ժամանակ աշխարհակալ, մեծամեծ ու փառաւոր իշխանները, որոնք աստուածաբար վարւում էին իրենց կամքով: Ո՞ւր են դիւցազուն եւ անուանի կայսրերը, հռչակաւոր եւ բարձրագահ թագաւորները, որոնք աւելի ծառայել ու պաշտել են տալիս իրենց անձերը, քան Աստծուն, Որն ստեղծեց իրենց: Արդ, այնտեղ չեն երեւում, որեւէ տեղ յայտնի չեն անունները, առաջ չեն բերում նրանց ու չեն մեծարում, չեն սարսում եւ դողում նրանցից, ինչպէս այժմ:

Ո՞ւր են ջահակալները, տիգաւորներն ու սուսերաւորները, որոնք նրանց առաջ են. բոլորը խափանուեցին, որովհետեւ սուտ եւ ունայն երազների տեսիլք են եւ չեն յայտնւում ոչ մի տեղ: Եւ այս ինչպէ՞ս եղաւ: Որովհետեւ Տէրը հրամայեց. **«Այն ժամանակ**

կծագեն արդարներն ինչպէս արեգակ Աստուծոյ արքայութեան մէջ»[188]**:** Իսկ յետոյ դուրս կգան անդունդներից հրեղէն վիշապները եւ, ինչպէս ասացինք դժոխքի մասին ճառում, կշարժուեն հրամած ծովի մէջ, կլինեն մեծամեծ, ինչպէս լեռները, եւ նրանց բերանից կրակի գետեր կհոսեն: Կշրջեն հրեղէն ծովում եւ կգտնեն այն մեղաւորներին, որոնք ծնեցին նրանց իրենց իսկ գէճ ցանկութեամբ եւ զղջմամբ չսատկացրին նրանց: Եւ կվերցնեն նրանց իրենց դառնատեսիլ ժանիքներով ու յոյժ չարաչար կտանջեն նրանց յաւիտեան, եւ նրանք մահ չունեն: Ըստ այն հոգեղէն գրքի, երբ ննջեցեալին դնում են գերեզման, քահանան նրա վրայ կարդում է. «Քո ցանկութիւնն անցաւ, որովհետեւ հող դարձար, բայց չի մեռնում որդը, որին ծնեցիր մեղքերով ու անօրէն ցանկութիւններով անչէջ հրի մէջ»:

Սրանից յետոյ գետի նման աշխարհից դուրս կելնի թանձրագոյն, մրախառն, խաւարային ու այրող հուրը՝ մեղաւորներով ու հրեղէն վիշապներով հանդերձ՝ ըստ Փրկչի բարձրագոյն հրամանի, որ ասում է. ***«Հանէ՛ք նրանց արտաքին խաւարը»***[189]**:** Եւ ապա՝ ըստ Յովհաննէս աւետարանչի աստուածային տեսիլքի. «Քրիստոսի հետ խաչուած անդրանիկ կատարեալ սուրբերի հոգիները կկազմեն լուսաւոր, մեծ, զարմանալի ու փառաւոր աթոռ, որի վրայ կբազմի Քրիստոս Դատաւորը եւ նրանցով կդատի բոլոր արարածներին՝ ասելով. «Սրանք էլ ձեզ պէս մարմնաւոր կարիքների ներքոյ էին, սակայն դուք ինչո՞ւ չնմանուեցիք սրանց»:

Այս այն խօսքն է, որ հրամայում է մեր Տէրը. ***«Կնստէք տասներկու աթոռների վրայ՝ դատելու Իսրայէլի տասներկու ցեղերին»***[190]**:** Արդ, այսպէս է նրանցով դատելու աշխարհը, որովհետեւ Քրիստոսն է միայն Դատաւորը եւ ուրիշ ոչ մէկը՝ ո՛չ առաջին արդարներից եւ ո՛չ էլ վերջին ընտրեալներից:

Արդ, Յովհաննէս աւետարանիչը տեսաւ եւ ասաց Նոր Երուսաղէմի, Երկնաւոր քաղաքի, Գառան Հարսի, արդարների հոգիների մասին, որոնք նորոգեցին իրենց անձերը ջերմ արտասուքով ու այլ առաքինութիւններով եւ դարձան Աստուծոյ բնակութեան քաղաք: Քանզի Աստուած առաւել ցնծալով բնակւում է արդարների հոգիներում, քան քերովբէական կառքում, որովհետեւ հարսնացան եւ սրբութեամբ միացան Նրան: Եւ յոյժ ահեղ փառքով Քրիստոս Դատաւորը կբազմի զարմանագործ աթոռին՝ Գողգոթայի վրայ, որտեղ խաչի [մահուամբ] անարգեցին Նրան: Եւ այն ժամանակ հողեղէններն ու հրեղէնները կսարսափեն՝ դողալով Նրա առաջ: Եւ նրանք, ովքեր մեծ կամ փոքր մեղքերով դրուել էին գերեզման (որոնց Յովհաննէս աւետարանիչը մեծ ու փոքր մեռեալ է կոչում)[191] նոյնպէս կյառնեն ու կկանգնեն Նրա առաջ սարսափելով: Եւ ամէն մարդ գիտուն վարդապետ կդառնայ եւ կընթերցի իր [գործած] չարիքների ու բարիքների գիրն ըստ Գրքի, որ ասում է. ***«Նա ատեան նստեց, եւ գրքերը բացուեցին»***[191ա]**:**

Այն ժամանակ կմիանան մարդն ու իր գործերը, եւ որեւէ տեղից օգնական կամ բարեխօս չի լինի: Եւ անհաւատներն ու անյոյսները, խաչ բարձրացնողներն ու անզեղջ մեղաւորները դառնապէս կողբան ու լաց կլինեն այն տիեզերական հրապարակում, թաքնուելու տեղ կորոնեն ու չեն գտնի՝ ըստ աւետարանչի խօսքի: Քանզի բոլոր արարածները, որոնք երկինքներից էլ վեր են, որոնք անդունդներից էլ ներքեւ են, եւ նրանք, որոնք երկնքի ներքոյ են եւ երկնքից դուրս, առհասարակ բոլորը համեմի սերմի մի հատիկի նման կլինեն Աստուծոյ ամենատես աչքի առջեւ: Այս ամէնը կկատարուի Երուսաղէմում, ուր չարչարեցին [Նրան], որպէսզի խաչ բարձրացնողները տեսնեն Նրա ահեղահրաշ ու զարմանալի փառքը: Եւ հերձուածողները, միւս անդարձ մեղաւորները, ինչպէս նաեւ անհաւատները, որոնք անարգում են Նրան, կամաչեն յաւիտենական ամօթով եւ վայ կտան իրենց անձերին:

Եւ այն ժամանակ կտեսնեն Նրա տէգով խոցուած կողը եւ բեւեռների հետքերն ափերի մէջ ըստ գրուածի՝ **«Կնայեն Նրան, Ում խոցեցին»**[192]: Եւ նա, ով չար մեղքերով իր անունը ջնջեց Կեանքի Գրքից ու արտասուքով կրկին չնորոգեց գիրն ու անունը, կմտնի կրակէ լիճը սատանայի հետ[193], ինչպէս տեսաւ Յովհաննէս աւետարանիչը: Այդպէս նաեւ այժմ է պատահում. զինուորներին աշխատավարձ կամ ռոճիկ տալու ժամանակ, ում անունը գրուած չէ թագաւորների եւ իշխանների գրքում, նրան աշխատավարձ չեն տալիս, որովհետեւ նրա անունը չգտնուեց թագաւորի գրքում:

Ըստ մարգարէի. **«Այն օրը մեղաւորների համար չար գիշեր է, խաւարամած ու մառախլապատ»**[194] եւ նրանց մշտնջենաւոր ողբի եւ սուգի սկիզբը: Իսկ արդարների համար այն օրը բարի է եւ գերազանց լոյս, ինչպէս նաեւ նրանց անճառ ու յաւիտենական հանգստի սկիզբը: Մեղաւորների դասերը մեծ ամօթով գլուխները խոնարհած [կկանգնեն], որովհետեւ կտեսնեն, որ անդունդներից հուրն ու հրեղէն որդը եռում են իրենց համար: Եւ կհոսեն հրեղէն գետերը, կյորդեն բոցեղէն հեղեղները, եւ կծաւալուի ծովացած հուրը: Յոյժ զարհուրելի ճայթյուններ ու դղրդյուններ, ամէն կողմից անսպառ փայլատակումներ ու անպատմելի հրաձգութիւններ, լուսեղէն զօրքերի ձայներ, Դատաւորի ահարկութիւն եւ այլ անպատմելի հրաշքներ կլինեն այնտեղ: Եւ այս տեսնելով՝ մեղաւորները վայ կտան իրենց անձերին:

Իսկ ընտրեալ արդարների դասերը բարձրագլուխ ու համարձակ կկանգնեն մեծ պարծանքով, ցնծալից բերկրանքով, որովհետեւ կտեսնեն բացուած առագաստը եւ իրենց համար պատրաստուած հարսանիքը, նորոգուած ու ճառագայթաձեւ փայլող անթառամ պսակը եւ իրենց դիմաց՝ քաղցրահայեաց Թագաւորին, լուսեղէն անմարմիններին՝ գովելիս ու փարուելիս իրենց, Փեսային՝ ուրախացած, խոստումը ձեռքին եւ լուսեղէն ամպը յարդարած:

Նրանք կխայտան զանազան ուրախութիւններով, որովհետեւ Տէրն ու Դատաւորը արդարների դասերին ասում է. «Եկէ՛ք, Իմ հաւատարիմ զինուորնե՛ր, որ ատեցիք աշխարհը, սպանեցիք բոլոր ախտերը եւ ձեր մարմինը խաչեցիք: Արդ, ուրախութեամբ մտէ՛ք Իմ Հօր լուսեղէն առագաստը, տեսէ՛ք Իմ անսահման փառքը եւ վայելէ՛ք Իմ անսպառ հանգիստը»:

Բայց ինչպէս կշեռքով, Դատաւորը արդար կդատի իւրաքանչիւրին, մինչեւ [անգամ] խորհուրդներն ու խօսքերը, որոնք չի խոստովանել: Ըստ այնմ, որ ասում է. **«Կդնեն արդարութեան կշեռքը»**[195]: Իսկ Տէրն ասում է. **«Դատարկ խօսքերի համար հաշիւ էք տալու»**[196], եւ՝ **«Իմ դատաստանն արդար է»**[197], եւ՝ **«Այնտեղից դուրս չես գայ, մինչեւ չվճարես վերջին գրոշը»**[198], այսինքն՝ փոքր մեղքերինը, որոնց վճարը խօսքով է:

Աստուծոյ սիրելինե՛ր, Նրա անարատ Արիւնով գնուածնե՛ր եւ Նրա աւետեաց ժառանգնե՛ր, տեսէ՛ք եւ խորհեցէ՛ք, որովհետեւ այս ահեղ դատաստանից ու տիեզերական զարմանալի Ատեանից սոսկացին բոլոր սուրբերը եւ խաչ բարձրացրին իրենց անձերը: Ուստի, աղաչո՛ւմ եմ, ըստ մեր կարողութեան ջանանք նաեւ մենք եւ յոյժ փախչենք աշխարհի սիրուց եւ մահուան ու դատաստանի Օրը միշտ պահենք մեր աչքերի առջեւ, ինչպէս նաեւ մեծ ջանքով ու արագութեամբ գործենք բոլոր առաքինութիւնները՝ ըստ Աստուծոյ կամքի, որպէսզի այստեղ ապրենք խաղաղութեամբ, իսկ հանդերձեալում արժանաւոր լինենք Աստուծոյ անճառելի բարիքներին բոլոր ընտրեալ արդարների երամների հետ, որոնք անդրանիկների դասերն են, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհնեռով ու մարդասիրութեամբ, Որին վայել է փառք, պատիւ եւ իշխանութիւն Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԻԲ. Նեռի ծննդեան, գալիք դառը ժամանակների եւ նրա սատակման մասին

Եւ արդ, ըստ մեր տկարութեան չափաւոր ճառեցինք Աստուծոյ Որդու Գալստեան եւ Նրա անաչառ դատաստանի մասին, որը լինելու է Երուսաղէմում: Դարձեալ ե՛կ եւ բե՛ր քո միտքը, ո՛վ քրիստոսասէր իշխան, որպէսզի սկսենք եւ քննենք աստուածային Գրքերը. սուրբերն Աստուծոյ Հոգով աւելի վաղ տեսան ու պատմեցին Նեռի չարութիւնների ու դառը ժամանակի նեղութիւնների մասին: Քանզի նաեւ մեծ շահ ու պարգեւ է մեզ եւ շատ օգուտ՝ նրանց, ովքեր դեռ պիտի գան աշխարհ, երբ բազում անգամ քննենք Նեռի մասին [ասուածը] եւ կրկին ու կրկին պարզենք նրա չարութիւնը, որպէսզի նախքան նրա գալուստը այն յայտնի լինի Ադամի սերունդներին, որ մարդիկ տգիտաբար չկորչեն: Այս պատճառով էլ Աստուծոյ կամքով Հոգին յայտնեց ընտրեալ սուրբերին, եւ նրանք շատ բաներ խօսեցին ու գրեցին Նեռի պղծութեան մասին, որպէսզի [ամէն ոք], ով ծնուելով աշխարհ է գալիս, լսի նրա ամբարշտութեան մասին, լի բերանով ցաւագին նզովքներ ու դառնագին անէծքներ արձակի նրա ետեւից, նախատի նրա ծնունդն ու կորստեան որդի կոչի նրան, որովհետեւ չար է նրա յիշատակը մարդկանց հոգիներում: Եւ սատանան կմիանայ նրա հոգուն. Աստուածաշունչ Գրքերը սատանայի որդի եւ մարմին են քարոզում նրան: Եւ արդ, նրա օրինակներն ու կարապետները բազում են աշխարհում ըստ առաքեալի խօսքի՝ «Նեռերը բազում են աշխարհում», որովհետեւ ամէն ոք, ով չի հաւատայ Յիսուս Քրիստոսին, ստուգապէս Նեռ կկոչուի: Նաեւ ով մարդկանց չարաչար նեղութիւններ հասցնի, ճշմարտաբար Նեռ կկոչուի: Ինչպէս այժմ քրիստոնեաներին տագնապով մեծ նեղութիւն են պատճառում Հագարի ու այլ ազգերի անօրէն որդիները, որոնք դիւա-

խառն Մուհամեդի եւ նրա անիծուած հօր՝ սատանայի աշակերտներն են:

Զրոյցը պատմում է, թէ Անտիոքոսն իր դժնեայ ու չար բարքով նման էր Նեռին: Նաեւ պիղծ Յուլիանոսը յոյժ նմանուեց նրան եւ վերցնելով՝ հաստատապէս իրեն միացրեց նրա անունը, գործն ու հոգին:

Արդ, բազում սուրբեր շատ բան գրեցին Նեռի չար անօրէնութիւնների մասին՝ հեռուից սկսելով եւ խօսքը դէպի նրան տանելով՝ ցոյց տալու համար նրա դառնագոյն պղծութիւնը:

Արդ, գրքերում գտանք սուրբերից մէկի ասածը. «Նեղութեան ժամանակ, երբ մօտ կլինի օրերի վախճանը, Կիլիկիայի Տաւրոս լեռան մօտ Աստուծոյ հրամանով կնստի հայոց մի թագաւոր՝ այրի կնոջ որդի: Նա կլինի իմաստուն այր, բայց ամենաաղքատ թագաւորը, կյաղթի անօրէններին, եւ նրա համբաւը ահարկու կլինի շրջակայ բոլոր երկրների վրայ, ուր էլ որ հասնի: Նա կունենայ գազանի անուն՝ Լեւոն, այսինքն՝ առիւծ: Այդ ժամանակ քրիստոնեայ ազգերը սաստիկ կնեղուեն անօրէնների անբաւ հարկերից ու անսահման զրկանքներից եւ, նրան ապաւինելով, կփախչեն կգան նրա աշխարհը, կկուտակուեն այնտեղ եւ կբնակուեն նրա մօտ, որովհետեւ Աստուած նրան տեղապահ կկարգի քրիստոնեաների վրայ: Նրանք կվերականգնեն հին ժամանակների աւերակները եւ կկառուցուեն անառիկ պարիսպներով դղեակներ: Եւ Աստուած ոչինչ չի պակասեցնի նրա աթոռից, մինչեւ հեթանոսների, այսինքն՝ անօրէնների ժամանակի լրանալը: Եւ կբարձրանայ արիական ազգը, եւ կվերցնեն յոյների թագաւորական քաղաք Բիւզանդիոնը, որը Կոստանդնուպոլիսն է, իսկ յետոյ՝ ժամանակը լրանալուն պէս, կգրաւեն նաեւ Երուսաղէմը»: Եւ այնպէս մանրամասն եւ ճշգրիտ է պատմում մեր քրիստոսատեսակ թագաւորների մասին, կարծես մեր ժամանակների մասին պատմի: Եւ՝ «Երբ արիական ցեղը գայ, մեր երկրի զօրքերը դուրս կգան ու կխառնուեն

նրանց բանակին»: Ինձ թւում է՝ այս գերութեան մասին է ասում, թէ Երուսաղէմը կազատեն ծառայութիւնից, եւ կգայ բարի ժամանակը: Բայց միայն Աստծուն է յայտնի:

Եւ՝ «Անօրէնները, ինչպէս ծովի աւազ, կգան եւ կկուտակուեն ընդդէմ արիական ազգի, եւ կլինի շատ մեծ կոտորած, մինչեւ որ քրիստոնեայ զօրքերը յոյսները կկտրեն, բայց յետոյ Աստուած յաղթութիւն կտայ, եւ կկոտորեն անօրէններին ու կճզմեն նրանց, ինչպէս սատկած մորեխների բազմութիւն: Եւ ինչպէս անօրէնները նեղել ու գերել են քրիստոնեաներին պէս-պէս չարչարանքներով, եօթնապատիկ վրէժ կառնեն նրանցից՝ չարչարելով նրանց սովով, գերութեամբ, հալածելով եւ ծառայեցնելով իրենց: Եւ Հայոց թագաւոր կնստի Տրդատի ցեղից եւ կթագաւորի երկար օրեր, կխաղաղանայ երկիրն ու դրախտի պէս ամենալից կլինի: Հաւատքը կպայծառանայ, եւ մարդիկ առանց չարչարանքի կգործեն արդարութիւն ու սրբութիւն: Եւ այն ժամանակ ճանապարհորդները գերեզմանների մօտով անցնելիս ձայն կտան ննջեցեալներին եւ կասեն. «Վա՜յ եւ շատ աւա՜ղ, որ չհասաք այս բարի ժամանակներին»: Բայց գրուած է. «Յիսուն տարի չեն գայ բարի օրեր»: Ասւում է նաեւ, թէ առաջին տարին, երբ բարի թագաւորը կկոտորի անօրէններին եւ կհալածի նրանց, Բիւզանդիոն գերի կտանի մի տարեկան Նեռին, որն էլ կդաստիարակուի այնտեղ, կսովորի կախարդութիւն եւ կմեծարուի թագաւորներից՝ յաջողակ դարձած: Դարձեալ ասւում է, թէ այս բարի թագաւորը նրա մօրը, որը լինում է Դանի ազգից, գերութեան է տարած լինում Հրէաստանից Բիւզանդիոն: Եւ մի Փռանկ զինուոր, տեսնելով նրան, չար կրքոտ սիրով տռփում է նրա հետ եւ կնութեան է առնում նրան: Նա կոյս է լինում, իսկ տղամարդը՝ կնատ, թոյլ ու չեզոք եւ չի կարողանում ամուսնական գործով միաւորուել կնոջ հետ: Սակայն երբ տղամարդը աղտեղանում է նրա հետ, կինը յղիանում է, բայց կոյս է

մնում, եւ ծնելու ժամանակ սրով պատռում են նրա որովայնը:

Խոսքիս վկայ է սուրբ Գրիգորի թոռ սուրբ Ներսէսը, որն իր մարգարէութեան մէջ Նեռի մասին ասում է. «Նա կծնուի պիղծ կոյսից ցերեկով, եւ նրա ծնուելուն պէս կլինի սաստիկ երկրաշարժ, կդողան աշխարհի հիմքերը, կխաւարեն արեւն ու լուսինը, աշխարհի վրայ եւ վերին եթերում կլսուեն վայի, ողբի եւ լացի ձայներ: Եւ նա ներսում որովայն չի ունենայ, որով կերակուրը մտնի: Կլինի տղամարդ, եւ նրա կերակուրը կանանց կաթը կլինի, եւ բազում կանանցից կերակրուելով՝ կմեռցնի նրանց»: Ինձ թւում է՝ տեսնողն այս բանն այլաբանօրէն է ասում Նեռի մասին եւ նմանեցնում է նրան անյագ տզրուկ սատանային, որը նրա հայրն է, որովհետեւ նա ծծում է մարդկային ցեղի բոլոր աղտեղի գործերն ու բնաւ չի յագենում եւ չի ասում, թէ՝ բաւականացայ: Կհասունանայ եւ կմեծարուի թագաւորների կողմից, եւ նրան զօրավար կնշանակեն: Եւ կաւարտուեն բարի ժամանակները, որովհետեւ լրացան կեանքի օրերը: Նաեւ լուսինը իր լրումին կհասնի եւ կաւարտուի՝ ո՛չ կմաշուի եւ ո՛չ էլ կաճի ի պէտս աշխարհի, որն Աստուած սահմանել էր նրա համար: Եւ խաղաղութիւնն աշխարհից կսկսի վերանալ, ինչպէս Դաւիթ մարգարէն է գոչում Քրիստոսի գալստեան մասին. **«Նրա օրօք արդարութիւն եւ խաղաղութիւն կտիրի, մինչեւ լուսնի վախճանը»**[199]: Եւ այն ժամանակ առաւել եւս կպակասի մարդկանց հաւատքը, կվերանայ իմաստութիւնը, կցամաքի սէրը, եւ աշխարհում համարձակօրէն կգործուի մեղքը: Եւ բոլոր արարածները սասանելով՝ կվրդովուեն, ջրի ու կերակուրի նուազութիւն կլինի: Եւ մարդիկ ուրախութեամբ ու ցնծութեամբ կամաց-կամաց սկիզբ կդնեն կռապաշտութեան. այս է չար թշենու ոստերի բողբոջումը եւ նրա պիղծ տերեւների ցցուելը, որը Տէրը, խաչի վրայ չարչարուելով, ցամաքեցրեց: Եւ ըստ Յովհաննէս աւետարանիչի տեսիլքի՝ **«Աստուծոյ թոյլտուութեամբ, ինչպէս անթիւ մորեխներ,**

անդունդներից դուրս կգան դեւերը»[200] *եւ ուժգին ու զօրաւոր մեղքերի պատերազմներով կխաւարեցնեն մարդկանց որդիների հոգիներն ու մտքերը, որոնք անգամ Աստուծոյ անունը չեն կամենայ լսել, որպէսզի համարձակ գործեն բոլոր մեղքերը, որովհետեւ սատանան կտեսնի, որ եկել հասել են իր կորստեան ժամանակները: Այն ժամանակ բացայայտ պատերազմի դուրս կգայ մարդկանց որդիների հետ: Կհաւաքի իր բոլոր չար իշխաններին, կկանչի շնական ու պիղծ ախտերի դեւերին եւ երբ հաւաքի նրանց, հանդէս կգումարի եւ նոր պատերազմներ կսովորեցնի նրանց: Ողբալով լաց կլինի նրանց առաջ, վայ կտայ իր անձին, կքաջալերի իր պիղծ զօրքերին ու խաւարասէր իշխաններին եւ խոնարհուած կաղաչի նրանց ու կասի. «Ահա՛, իմ որդինե՛ր ու ժառանգորդնե՛ր, շտապեցէ՛ք դուրս գալ աշխարհ՝ մարդկանց մօտ, արիաբար ջանացէ՛ք ծածուկ ու բացայայտ միջոցներով, խորտակեցէ՛ք մարդկանց եւ յորդորեցէ՛ք նրանց դէպի բոլոր մեղքերը եւ մեզ հետ միասին ժառանգակիցներ դարձրէք անչէջ հրի: Ա՛յս է վերջին մարտը, եւ ա՛յս է վերջին կռիւը, որովհետեւ աւարտուեց ժամանակը: Վա՛յ մեզ, որովհետեւ յարութիւնը կգայ, եւ այլեւս չենք կարողանայ կործանել մարդկանց, որովհետեւ կվերանայ մամնական կարիքն ու մեղքը: Արդ, Ադամի որդիներից շատերին կործանեցիք, բայց մեծ մասին չկարողացաք խափանել, որովհետեւ ծոյլ էիք եւ արիաբար չպատերազմեցիք չար կռուի ժամանակ: Այժմ պաղատո՛ւմ եմ ձեզ, այդպէս մի՛ ծուլացէք, այլ գործադրեցէ՛ք բոլոր հնարները, մեքենայութիւններն ու ծածուկ սլաքները մարդկանց դէմ եւ կործանեցէ՛ք մեղաւորներին, որովհետեւ մեր ձեռքից գնաց աշխարհը, ու ամէն բան աւարտուեց: Մի՛ նեղէք մեր մտերիմներին եւ նրանց մէջ մի՛ յապաղէք, որովհետեւ անհաւատները, հերձուածողներն ու անզեղջ մեղաւորները, նաեւ նրանք, ովքեր կատարում են մարմնի ցանկութիւնները, սրանք բոլորը մերն են, հանգի՛ստ թողէք նրանց:*

Այլ գնացէ՛ք սուրբերի ու արդարների մօտ եւ զայրացրէ՛ք, յուսահատեցրէ՛ք, շարժեցէ՛ք ախտը, տաքացրէ՛ք, գրգռէ՛ք, դրդեցէ՛ք սպանութեան եւ այլ անքանակ չարիքներ գործել տուէ՛ք նրանց»: Արդ, այս ամէնը եւ առաւել, քան այս բաները, չար բանսարկուն՝ անիծեալ վիշապը, կասի իր զօրքերին ու զօրապետներին: Իսկ ինքը կգնայ կմիանայ Նեռի հոգուն պիղծ ու աղտեղի կոյսի արգանդում, որն էլ կդարձնի իր գործելավայրը, որպէսզի նրա միջոցով կործանի մարդկանց որդիներին:

Եւ արդ, մեր Տէրը ծնուեց սուրբ Կոյսից, կործանեց սատանային եւ վերացրեց նրա պիղծ թագաւորութիւնը: Իսկ սատանան ամէն կերպ կջանայ Նեռին նմանեցնել մեր Քրիստոս Աստծուն: Քանզի ինչպէս ասացինք, Նեռը կծնուի պիղծ կոյսից եւ երբ դառնայ հասուն տղամարդ, բանսարկուի միջոցով, որը միացած է նրա հոգուն, կսկսի կեղծաւորել մարդկանց աչքի առաջ, կլինի բարեսէր ու կարգասէր, արդարադատ, կհսկի որբերին ու այրիներին, կլինի ողորմած, խոնարհ, հեզ, համբերող, աստուածասէր եւ Աստուծոյ օրէնքներին, աղօթքներին ու պահքերին նախանձախնդիր: Եւ այս ամէնը սուտ կձեւանայ մարդկանց աչքի առջեւ, կկեղծաւորի, որովհետեւ նա ճշմարտապէս գայլ է, որը ստութեամբ ջանում է ծածկել իրեն գառան մորթով, որովհետեւ սուտ է նաեւ նրա հայր սատանան, որը միացած է նրա հետ, յոյս է տալիս նրան եւ այնպէս է ջանում ու կեղծաւորում, որ նրա համբաւի համար իւրաքանչիւրը կձգտի նրան, եւ կասեն. «Երանի՜ նրան աշխարհի թագաւոր դարձնէին»:

Եւ ապա այս չար ժամանակներում Կոստանդնուպոլսում երեք տարի կնստի Ընծուկ անունով մի թագաւոր, որը կլինի աղքատ: Երբ սա մեռնի, թագաւորութիւնը յանկարծակի կբաժանուի տասը գաւազանի՝ տասը թագաւորների միջեւ. մէկը Նեռը կլինի, նա կսպանի նրանցից երեքին, իսկ մնացածին կհնազանդեցնի ու ինքը

կթագաւորի նրանց վրայ, ինչպէս Դանիէլը տեսաւ **«փոքրիկ եղջոյրը, որը բուսաւ գազանի գլխին՝ տասը եղջիւրների մէջ, եւ արմատախիլ արեց նրանց»**[201], որովհետեւ վերացան թագաւորութիւնները, եւ միայն հռոմէացիները մնացին: Եւ նա էլ վերացուելու է Նեռի կողմից՝ ըստ գազանների [տեսիլքի], որը տեսաւ Դանիէլը, եւ ըստ առաքեալի՝ թեսաղոնիկեցիներին ուղղուած թղթի. **«Երբ մէջտեղից կվերացուի նա, ով այժմ նրան ետ է պահում, պիտի յայտնուի անօրէնը, որին Տէր Յիսուսը պիտի կործանի Իր բերանի շնչով»**[202]:

Բայց Նեռի անունը մեզ տեսակ-տեսակ ներկայացրին նաեւ սուրբերը: Սուրբ Ներսէսն ասում է, թէ նրա անունը Հռաիմ է, նրա հօր անունը՝ Հռոմելաս, իսկ մօր անունը՝ Մելետինէ: Եւ որ՝ նա կծնուի Քորազինում եւ կդաստիարակուի Բեթսայիդայում, որոնց մեր Տէրը **«վա՜յ»**[203] ասաց: Եւ թագաւոր կնստի Կապառնայումում, որի մասին Յիսուս Քրիստոսն ասաց. **«Դու, Կապառնայո՛ւմ, մինչեւ դժոխք կիջնես»**[204]: Եւ դարձեալ՝ նրա անունը կկոչեն Իմեգ օձ, որը թարգմանւում է խաւարի վիշապ եւ կորստեան մարդ: Եւ դարձեալ այլ տեղում ասւում է. **«Նրա անուան թիւն է վեց հարիւր վաթսունվեց»**[205]: Սրանք կատարեալ թուեր են, եւ այս թուերով նրա անունը թարգմանւում է Շատինոս կամ Անթաստ: Ինչպէս որ կատարեալ է այս թիւը, նոյնպէս սրա նեղութիւնն ու չարիքը դառնագոյն են եւ մեծ, քան բոլոր նեղութիւնները, որոնք եղան մարդկանց վրայ աշխարհի սկզբից ի վեր: Դարձեալ՝ «Նեռի անունը լատիներէնում Լամպիտեստիան է ասւում, որը՝ Բենեդիկտոս, որն էլ թարգմանւում է՝ օրհնուած եւ կամ թէ՝ օրհնուած ես»:

Եւ, ինչպէս վերը նշեցինք, չարը ջանում է նմանուել Քրիստոսին ու յափշտակել օրհնեալ Աստուծոյ ճշմարիտ անունը, որպէսզի դրանով կործանի մարդկանց: Քանզի նա հրեաներին կասի. «Ես եմ Քրիստոսը, Որը գալու էր»: Դրա համար էլ Գիրքը նրան Դերաքրիստոս է կոչում, այսինքն՝ սուտ Քրիստոս եւ ոչ թէ ճշմարիտ: Եւ Կոնստանդնուպոլսից նա կճանապարհուի դէպի Երուսաղէմ: Եւ նրա ահեղ համբաւը կտարածուի ողջ աշխարհով, իսկ յետոյ քիչ-քիչ կսկսի բացայայտուել չարիքը, որը ծածկուած էր կեղծաւորութեամբ: Եւ նախ իր չարիքները կսկսի՝ այսպէս ասելով. **«Ես եմ Քրիստոսը, որ գալու էի աշխարհ»**[206]: Կնստի Աստուծոյ եկեղեցում եւ իրեն երկրպագել կտայ իբրեւ Աստուած: Կնստի տաճարում ու կհայհոյի բարձրեալ Աստծուն: Այս ամէնի մասին Դանիէլն ասաց. **«Տեսնում էի փոքրիկ եղջոյրը, որը ելաւ տասը եղջոյրների մէջ եւ արմատախիլ արեց նրանց»**[207]:

Բաներ կխօսի Բարձրեալ Աստծու մասին: Հրեաները, որոնք ջհուդներն են, կլսեն նրա համբաւը, ու նրանց ամբողջ ազգը կգայ ու կհաւաքուի նրա մօտ: Կերկրպագեն նրան, խայտալով կցնծան նրա առաջ ու կգոչեն՝ ասելով. «Հորթերի պէս արձակուեցինք Մովսէսի օրէնքների կապերից, որովհետեւ լրացաւ ժամանակը, ու կատարուեց գիրը. բարձունքներից խոնարհուեց Քրիստոսն ու իջաւ մեզ մօտ: Աւա՜ղ, շատ ուշացար ու վշտացրիր մեզ, վա՜յ առաջին հայրերին, որոնք չկարողացան քեզ տեսնել: Եւ ո՞վ կտար այս աւետիսը ննջեցեալներին, որոնք Աբրահամի զաւակներն են ու Մովսէսի ժողովուրդը»: Արդ, նրանց մասին առաքեալը գրեց. **«Մոլորուածները ակնկալում են մոլորուածին»**[208]:

Իսկ նա կսկսի նորոգել օրէնքն ու տաճարը: Եւ մեղքերի ծնունդ Ղովտի որդիները՝ մովաբացիներն եւ ամովնացիները, որոնք Սէիր լեռան մօտ են եւ ամբողջ Եգիպտոսում, նախօրօք կգան ու կհաւաքուեն նրա մօտ, ըստ Դանիէլի խօսքի. **«Կկուտակի Եգիպտոսում բազում հողաբլուրներ եւ կաւերի նրանց»**[209]: Եւ անօրէնները, որոնք սպասում են իրենց մոլորապետ Մուհամեդին, անթիւ հազարներով կգան եւ կհաւաքուեն նրա մօտ, որովհետեւ կկարծեն, թէ նա է իրենց առաջնորդը: Եւ այլ անթիւ իշխաններ ու

աշխարհների թագաւորներ կգան ու կհաւաքուեն նրա մօտ, որովհետեւ ամբողջ աշխարհում սաստիկ կհնչի նրա համբաւը:

Եւ միայն Խաչի պաշտօնեաները կճանաչեն նրա չարիքն ու յոյժ կհեռանան, կթաքնուեն նրա երեսից՝ ըստ Յովհաննէս աւետարանչի տեսիլքի, որն ասում է. **«Տեսայ, եւ ահա՛ սուրբ քաղաքը բաժանուեց երեք մասի»**[210]: Քանզի երեք բաժին կլինի աշխարհը, եւ երկուսը միանգամից կմիանան նրան ու կենթարկուեն նրա կամքին: Նրա համբաւը կտարածուի, եւ կդողայ ու կսասանուի աշխարհը: Եւ ծովի աւազի պէս անթիւ հազարներ ու բիւր-բիւրեր կգան կհաւաքուեն նրա մօտ: Կլինի երաշտ, սով, եւ կսկսեն ցամաքել աղբիւրները նրա թագաւորութեան ժամանակ, կփոշիանան ծառերն ու բոյսերը, որովհետեւ երկինքն ու երկիրը կդառնան ինչպէս երկաթ ու պղինձ, եւ հացը կպակասի աշխարհից: Գրուած է. «Կդայ ամայութեան չար ժամանակը», այսինքն՝ տգիտութեան, որովհետեւ քչերը միայն կլինեն, որոնք ծանօթ կլինեն Աստուծոյ անուանը: Նոյնն է ասում նաեւ մեր Տէրը. **«Մարդու Որդին գալով՝ կգտնի՞ արդեօք երկրի վրայ հաւատ»**[211]: Եւ բոլոր կողմերից կսկսուեն վիշտ ու տառապանք, այնպիսի նեղութիւններ, որ չեն եղել աշխարհի սկզբից մինչեւ նրա աւարտը: Այն ժամանակ բոլոր քրիստոնեայ ազգերի առաջնորդներն ու գիտնականները կտեսնեն սա ու աստուածային Գրքերով կճանաչեն, որ ահա՛ եկել հասել է աշխարհի վախճանը, եւ որ իսկապէս դա է կորստեան որդին: Ապա, միմեանց ձայն տալով, կգան կհաւաքուեն անթիւ հաշուով նրանք, ովքեր քաջ ծանօթ կլինեն Աստծուն եւ հմուտ կլինեն Նրա բոլոր պատուիրաններին, կընթերցեն Աստուծոյ գրքերը: Եւ իւրաքանչիւրը կքաջալերի իր ընկերոջը: Առաջ կգան եւ հապշտապ կյորդորեն միմեանց, կմռնչան ի խորոց, կտագնապեն անդամներով: Այն ժամանակ կգոչեն առիւծաբար, կյարձակուեն վարազաբար եւ կթռչեն արագավազ ինձերի պէս: Մէկ առ մէկ առաջ կգան

եւ կասեն. «Ահա՛, եղբայրնե՛ր, հասաւ բարի ժամանակը, քաջութեամբ ջանանք, որպէսզի ստանանք մարտիրոսական պսակը»: Եւ կգան Նեռի մօտ անհամար բազմութեան մէջ եւ կթքեն նրա վրայ, աստուածային սուրբ Գրքերով կնզովեն ու կյանդիմանեն նրան: Իսկ այն կորստեան պիղծ որդին զանազան չարչարանքներով կխայտառակի նրանց եւ յետոյ միայն սրով կսպանի: Այն ժամանակ աշխարհից կվերանան գիտնականները, եւ այն պիղծն աւելի կճոխանայ իր չարութեան մէջ: Սակայն բարեգութ Աստուած անտես չի անի մարդկային ազգին, այլ կառաքի Ենովքին ու Եղիային, որ գան եւ քարոզեն աշխարհում, շրջեն մարդկանց մէջ ու ասեն. «Մի՛ հաւատացէք դրան, որովհետեւ դա սուտքրիստոսն է՝ կորստեան որդին եւ սատանայի ժառանգը: Համբերէ՛ք մի քիչ եւ կհասնէք փրկութեանը. բազում են նեղութիւնները, բայց դռան մօտ է Քրիստոսը, եւ անճառելի՝ Նրա հանգիստը»:

Այն ժամանակ ծովը կնեխի, որովհետեւ կմեռնեն նրա մէջ գտնուող կենդանիները: Եւ չար ու գարշելի հոտից կապականուեն մարդկանց դէմքերը, ու զօրութիւն չի մնայ նրանց մէջ: Եւ մարախի պէս կոյտ-կոյտ կմեռնեն մարդիկ սովից ու ծարաւից: Նեխուելով կհոտեն քաղաքների փողոցներն ու հրապարակները, եւ ոչ ոք չի լինի, որ թաղի նրանց: Եւ այս անվախճան նեղութիւնների ու տառապանքների հետ միասին վայրի անապատներից մարդկանց մէջ դուրս կգան չարատեսք գազաններ, դառնագոյն այլակերպ ու մահաթոյն գիշատիչ սողուններ, որոնք անտես էին մարդկանցից, կուտեն մեռելներին եւ սովորելով՝ կսկսեն կենդանի մնացածներին էլ ուտել եւ կպատառոտեն նրանց, եւ չի լինի որեւէ մէկը, որ օգնի նրանց:

Այն ժամանակ սարսափելի արհաւիրքներ կլինեն լեռներում ու շէներում: Ահ ու երկիւղ սոսկալի, անդունդներից ու ծովից որոտումներ ու զարհուրելի ձայներ, եւ ամէն կողմից՝ սոսկալի

որոտումներ: Այնժամ վա՜յ Ադամի սերունդներին այդ տառապանքների պատճառով:

Կցամաքի ծովը, եւ կսարսափեն բոլոր արարածներն ու կհիանան՝ զարմանալով նրա խորութեան վրայ, ինչպէս նաեւ՝ մեծամեծ գազաններից, որոնք կերեւան, կգան կետերի հետ միասին:

Այն ժամանակ անթիւ զօրքեր ու երիտասարդների բազում գնդեր կգան, կհաւաքուեն միասին ու կտարուբերուեն երկրի վրայ, ինչպէս ծովի ալիքներ, ու սաստիկ սովի անչափ նեղութիւնից կուտեն միմեանց: Մայրը կուտի իր սիրելի որդուն, եղբայրը՝ իր ցանկալի եղբօրը: Եւ չկայ լեզու, որը կարողանայ ճառել այդ ժամանակի ծանր վշտի մասին: Քանզի չքնաղ կոյսերը, գեղեցկատես թագուհիներն ու փափկասուն տիկնայք համարձակօրէն դուրս կգան հրապարակ, եւ չի լինի որեւէ մէկը, որը կցանկանայ նրանց: Թագաւորական պայծառ պատմուճանները, պիտանի արծաթն ու ցանկալի ոսկին, մեծարժէք ակներն ու դժուարագիւտ մարգարիտներն ընկած կլինեն հրապարակներում, ինչպէս անպիտան աղբ, եւ չի լինի մէկը, որ նայի դրանց, որովհետեւ սովը կսաստկանայ, եւ ծարաւը կտանջի: «Վա՜յ եւ եղո՛ւկ» կլսուի ամէն տնից, իսկ փողոցներում կլինեն սասանում ու ցաւի ողբ: Այն ժամանակ կհաւաքուեն սիրուն իշխանները թագաւորների մօտ, բարեմիտ աղախինները՝ թագուհիների, ցանկալի որդիները՝ իրենց ծնողների մօտ եւ, միմեանց գիրկ ընկնելով, կողբան դառն արտասուքով սենեակներում ու հրապարակներում, եւ շատ վայ ու աւաղ կասեն նրանց ցանկալի սիրելիները, ապա ընկնելով՝ կմահանան: Իսկ իմաստունները կփախչեն ու կթաքնուեն խոր ձորերում ու ժայռերի ծերպերում, գերեզմանների փորուածքներում ու խորագոյն վիհերում եւ կասեն. «Լաւ է մեռնել այստեղ ու լինել Աստծունը, քան թէ տեսնել Նեռին ու խաբուել նրա պատրանքներից, որովհետեւ յոյժ չար են նրա մեքենայութիւնները»:

Քանզի մեր Տէրն ասում է. **«Բոլոր հնարներով կմոլորեցնի արդարներին»**[212]: Եւ զրոյցը պատմում է. «Եփրատ գետի եզերքներին գտնուող մեծամեծ ու դժուարամատչելի ժայռերում կթաքնուեն մարդկանցից շատերը եւ կազատուեն նրա չարիքներից: Իսկ դեւերը սուտ մարգարէների հետ միասին կշրջեն աշխարհում, կգտնեն թաքնուածներին եւ վերցնելով՝ կբերեն Նեռի մօտ: Չկայ լեզու, որը կարողանայ պատմել չար խաբէութիւնները, որոնք կգործի: Քանզի հուր կիջեցնի երկնքից, կթռչի օդի մէջ, ծովի վրայ լեռ ցոյց կտայ՝ թռցնելով այս ու այն կողմ: Կքայլի ծովի վրայով, նրա խորքերից բլուրներ կբարձրացնի ու յարութիւն կտայ մեռելներին: Մարդկանց առաջօք հաց ու ջուր կտայ, բայց [դրանք մարդկանց] որեւէ օգուտ չեն տայ: Այս եւ նման այլ նշաններ կանի առաջօք եւ կկործանի մարդկանց որդիներին ստութեամբ, դեւերի խաբէութեամբ եւ կերպարանափոխութեամբ, ինչպէս այժմ էլ գալիս են նրա կարապետները, քաղաքների հրապարակներում խաղեր են առաջօք ցուցադրում եւ զարմացնում են դիտողներին:

Կգան նրանք, որոնք հաւանեցին նրան, ու կաղաղակեն. «Մեռնում ենք սովից ու ծարաւից»: Իսկ նա կտկարանայ նրանց առաջ ու բացայայտօրէն կասի. «Ոչինչ չունեմ»: Բայց դարձեալ սուտ յոյսերով կխաբի եւ կմխիթարի նրանց: Իսկ ովքեր կճանաչեն նրա խաբէութիւններն ու չեն հաւատայ, նա, դառը չարչարանքներով նեղելով, կսպանի նրանց: Եւ ովքեր կամովին կհաւանեն նրան ու կերկրպագեն նրա աթոռին ու պատկերին եւ դաւանանքով կմիանան նրան, նա դրոշմով կկնքի նրանց, որպէսզի չկարողանան դուրս գալ իր գրքից* եւ կամ ուրանան ու նզովեն իրեն: Եւ այս է նրա պղծութեան նշանն ու կործանման խորհրդի դրոշմը. աջ ձեռքով բուրվառով խնկարկել եւ երկրպագել կտայ իր առաջ, առաջօք

* Նկատի ունի 666 թիւը:

հրեղէն պսակ կդնի մարդկանց ճակատին ու դրանով կսպանի նրանց, ովքեր կդաւանեն իրեն»:

Եւ դարձեալ ասւում է. **«Նրա անուան գիրը վեց հարիւր վաթսունվեց է»**[213], իսկ սա թարգմանւում է՝ ուրանում եմ: Եւ նա այս չար գրով կդրոշմի ու կկնքի իր սիրելիների ճակատն ու աջ ձեռքը, որովհետեւ նրան աստուած կդաւանեն եւ կուրանան ճշմարիտ Աստծուն, ինչպէս կռապաշտներն էին անում եւ տանջում մարտիրոսներին՝ ասելով. «Ուրացէ՛ք խաչուած Աստծուն»: Այս ողջ խաբէութիւններն ու նեղութիւնները կտեսնեն Իսրայէլի որդիները, հրեայ ազգն ու Յակոբ նահապետի զաւակները, ստոյգ կճանաչեն ու կասեն. «Սա Դերաքրիստոսն է եւ ո՛չ թէ ճշմարիտը, որին մենք ակնկալում էինք»: Եւ ապա կհաւաքուեն նրանք, գոչելով վայ կասեն եւ շատ եղուկ ու աւաղ կտան իրենց անձերին, որ չճանաչեցին ճշմարիտ Քրիստոսին, Որին իրենց հայրերը խաչի մահուամբ դատապարտեցին:

Այն ժամանակ կվերցնեն մարգարէների Աստուածաշունչ գրքերն ու կգան նրան ընդառաջ, պարսաւելով կնախատեն նրան, սուտ, կորստեան որդի եւ սատանայի բնակարան կկոչեն նրան եւ չարաչար կյանդիմանեն՝ գոչելով բարձր ձայնով: Ու կհաւատան ճշմարիտ Քրիստոսին, որին խաչեցին իրենց իսկ անօրէն հայրերը: Նեռը, դառը կտտանքներով չարչարելով, կսպանի նրանց: Իսկ Աստուած մարտիրոսական արեամբ կպսակի նրանց: Այս մասին է գրում Յովհաննէս աւետարանիչը. **«Տեսայ, եւ ահա՛ Յակոբ նահապետի տասներկու ազգերի որդիներից, ամէն ազգից տասներկու հազար կնքուած, կգան ու կվկայեն. «Քրիստոսն է ճշմարիտ Աստուածը, Որին խաչեցին մեր հայրերը»: Եւ վստահ հաւատով կմեռնեն Նրա համար»**[214]: Եւ կաւարտուեն այն դառն օրերը՝ նրա իշխանութեան երեքուկէս տարին: Այն ժամանակ անօրէնը բռնի կերպով կբերի Ենովքին ու Եղիային եւ, չարաչար կտտանքներով

նեղելով, կսպանի նրանց, որովհետեւ շատ համարձակօրէն կյանդիմանեն նրան: Իսկ այն ժամանակ առաւել եւս կբորբոքուի նրա չարութիւնը, որովհետեւ կասեն. «Տեսէ՛ք, ահա՛ հինաւուրց կենդանի վկաները չկարողացան ճողոպրել նրա ձեռքերից, այլ բռնեց ու սպանեց նրանց»: Աստուածատես ու պատուական ծերունիներն անթաղ ընկած կլինեն երեք օր: Իսկ երեք օրից յետոյ կենդանութեան հոգին կմտնի նրանց մէջ, եւ նրանք, յարութիւն առնելով, հրեղէն ամպերով կբարձրանան երկինք: Եւ յետոյ՝ ուրբաթ օրը, յանկարծակի կծագի տէրունական Խաչը՝ եօթնապատիկ աւելի պայծառ, քան արեգակը: Կգալարուի ջրամած կամարը մագաղաթի պէս, եւ կերեւայ լուսեղէն երկինքը հրեղէն եթերով հանդերձ:

Եւ այն ժամանակ կլսուեն անմարմին զօրքերի ձայներ ահեղ ու սոսկալի բարբառով, եւ նրանց հնչումից կշարժուեն երկրի հիմքերը: Իսկ խաչի լոյսից կծածկուեն արեգակն ու լուսինը, եւ ամբողջովին կանհետանայ նրանց լոյսը: Եւ եկեղեցիների խաչի մասունքները յանկարծակի կցոլան ու կմիանան Խաչի լոյսին, որը երկնակամարում է: Ոչ թէ քարն ու փայտը եւ կամ այլ նիւթերը կբարձրանան, այլ՝ օրհնութիւնն ու փառքը, լոյսն ու զօրութիւնը եւ անճառելի խորհուրդը: Եւ այն ժամանակ կկատարուի Տիրոջ կողմից ասուածը. **«Բոլոր նեղութիւններից յետոյ երկնքում կերեւայ Մարդու Որդու նշանը»**[215], որը լուսեղէն խաչն է:

Եւ արդ, ամէն թագաւորի գալուստ իր նշանն ունի: Նեռի թագաւորութեան նշանը մեղքերի համարձակութիւնն է եւ չար ժամանակը: «Իսկ Իմ գալստեան կարապետն ու նշանը խաչն է: Եւ դուք որեւէ մէկով չխաբուէ՛ք եւ չմոլորուէ՛ք: Եւ այն ժամանակ մեղաւորները եւ անհաւատները կողբան խաչի երեւմամբ. այս ազգ կլինի երկրին», - հրամայում է Տէրը:

Այն ժամանակ կդողան, կողբան եւ սարսափահար կապշեն Նեռն ու նրա պաշտօնեաները, ինչպէս նաեւ՝ սատանան իր դեւերով:

Եւ Աստուածութեան անբաւ զօրութիւնն ու լոյսը կմիանան խաչի լոյսին: Եւ խաչի ճառագայթից բորբոքուած՝ կայրուի աշխարհը եօթնապատիկ աւելի ուժգին, քան բորբոքուած հնոցից: Կշարժուեն աշխարհի հիմքերը, կգոչեն անդունդներն ու սանդարամետները եւ, բացելով իրենց երախը, կկլանեն սատանային, Նեռին ու նրա պաշտօնեաներին, որովհետեւ նրանք արժանի չեն տեսնելու Աստծուն՝ զարմանալի փառքով գալիս, եւ ոչ էլ Նրա արքայութիւնը, որպէսզի կատարուի Դաւթի երգը. ***«Զեն գայ կամ կանգնի ամբարիշտները դատաստանին եւ ոչ էլ մեղաւորները՝ արդարների հաւաքի մէջ»***[216]*: Եւ այն ժամանակ կկատարուի առաքեալի գրուածքը.* ***«Տէր Յիսուսը կսատկացնի նրանց Իր բերանի Հոգով»***[217]*:*

Եւ խաչի լոյսը կմնայ երեք օր: Եւ նրանք, ովքեր լի են մեղքերով, «վա՜յ» կգոչեն ու կիսամահ կլինեն նրա ահից:

Իսկ արդարները կցնծան, որովհետեւ կճանաչեն, որ այն իրենց լոյսն է, պսակն ու պարծանքը: Մինչեւ ծնուի վերջին մանուկը՝ դուրս եկած որովայնից, որպէսզի լրանայ հաշիւն արքայութիւնում՝ ըստ Սուրբ Գրքի, որովհետեւ թիւ ու հաշիւ կայ նրանց, որոնք ընտրեալներ են եւ ժառանգելու են արքայութիւնը: Այս մասին վկայում է նաեւ առաքեալը՝ ասելով. ***«Աշխարհի ստեղծումից առաջ մեզ ընտրեց»***[218]*:*

Եւ ապա վերջին մանկան ծնուելուն պէս կիրակի օրը՝ առաւօտեան ժամին, երբ Տէրը յարութիւն առաւ մեռելներից, յանկարծակի կհնչի փողը: [Սա կլինի] եօթերորդ դարի աւարտը եւ ութերորդ դարի սկիզբը, որը կոչւում է Մեծ Օր, որովհետեւ գիշերն այլեւս չի կարող փոխարինել նրան: Յանկարծակի Տէրը կերեւայ բարձունքներում լուսեղէն ամպով ու երկնային զօրքերով: Յետոյ կհնչի փողը, իսկ այդ ժամանակ աշխարհում շատերը կենդանի կլինեն եւ փողի գոչելուն պէս կմեռնեն ու ակնթարթօրէն յարութիւն

կառնեն, որը չեն կարող զգալ արագութիւնից: Եւ կլինի համընդհանուր յարութիւն, ինչպէս նշեցինք Գալստեան ու Յարութեան ճառում: Ուստի, աղաչո՜ւմ եմ ձեզ, սիրելինե՛րս, այս ամէնն իմանալով՝ քարոզեցէ՛ք աշխարհում Նեռի պղծութիւնը: Եւ որքան կարողանաք, գրաւո՛ր կերպով թողէք աշխարհում, որպէսզի լսեն հայրերն ու սովորեցնեն իրենց որդիներին: Եւ որքան հնարաւոր է, մի՛ ձանձրացէք բարի գործերից, երբէք մի՛ հանէք ձեր մտքից Տիրոջ երեւալու Օրը եւ Նրա անճառ հանգիստը, որպէսզի սրբութեամբ մնանք այստեղ, իսկ այնտեղ ժառանգենք երանական կեանքը բոլոր սուրբերի հետ նոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Որն օրհնեալ ու փառաւորեալ է Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԻԳ. Ծուլութեան, մեղքերի համարձակութեան ու բարու նուազութեան մասին

Եւ արդ, որովհետեւ բարերար, խնամող ու մարդասէր Աստուծոյ կամքով ու Նրա մեծապարգեւ ողորմութեամբ աստուածային Գրքերից փոքր ի շատէ ծանօթացանք բարու եւ չարի տեսակներին, տասը թուին, Բան Աստուծոյ գալստեանը, Դատաստանին, Նեռի անօրէնութեանն ու նրա սատակմանը, այժմ, ո՛վ բարեսէր, մենք պէտք է քննելով տեսնենք նաեւ մեր ապրած ժամանակներում [տարածուած] ծուլութիւնը, առաքինութեան նուազումը եւ ամէն տեսակի մեղքերի սաստկացումը:

Բայց առաջին հերթին քննենք ու տեսնենք աշխարհամասերը, յետոյ կրկին կգանք մեր խօսքին, որտեղ որ կանգ առանք:

Առաջին իմաստունները, որոնք կռապաշտ էին, կլիմներ արեցին, այսինքն՝ եօթ մասի բաժանեցին ողջ աշխարհը: Մի բաժինը կոչեցին Վերին Հայք՝ Վրաց տնից, Դարբանդի դռնից մինչեւ Սինա

անապատը, որտեղ Մովսէսը բերեց ժողովրդին, նաեւ Եդեսիայից, որն Ուռհան է, մինչեւ Կոստանդնուպոլսի սահմանները:

Միւս բաժինը Պարս կոչեցին, դէպի վեր՝ Խուժիստան, աւելի ներքեւ ձկնակերների աշխարհն էր՝ բազում գաւառներով, որտեղ լեռներից ծովն իջնող գետերի շատութեան պատճառով բոլորը ձկներով են կերակրւում: Նրանց մաշկը ոչխարի բրդի նման է, որովհետեւ մարմնի մազերը աճելով՝ ծածկում են նրանց: Պատմում են, որ նրանք կանանց հետ վարւում են անասնաբար, որովհետեւ մէկ կին չէ, որ հասնում է տղամարդուն, այլ բոլոր կանայք ընդհանուր են:

Միւս բաժինը Բաբելոնն է՝ բազում գաւառներով. արեւելեան կողմում խորանում է ընդհուպ մինչեւ աշխարհի մթութիւնը եւ հարաւային կողմում՝ մինչեւ անօրէնների բարբաջած Մահմեդի գերեզմանը, իսկ առաւել խորքերում անծանօթ գաւառներ են:

Միւս բաժինն է Ներքին Արաբիան, Եթովպիան եւ Վերին Հնդկաց աշխարհը: Պատմում են, թէ դա թզուկների եւ մերկ իմաստունների աշխարհն է, եւ այդ այն գաւառն է, որտեղ սովորաբար կանայք են թագաւորում: Եւ այսպիսին է նրանց կենցաղն ու ծնունդը. տարին մի անգամ, իմանալով ժամանակը, բարձրանում են լեռները, որոնք շրջապատում են իրենց գաւառները: Եւ գալիս են այդ սահմաններում բնակւող երիտասարդներն ու այնտեղ միաւորւում ամուսնութեամբ: Եւ ով յղիանում է, ծննդաբերելիս աղջկան պահում է, իսկ տղային՝ սպանում: Այս մասում են հրագոյն սուտակ եւ կանաչագոյն դահանակ պատուական քարերը, որոնց մասին աստուածային Գիրքն ասում է. «Գտնւում են Լատա գետի մօտ», եւ այնտեղ է Սկիւթը, իսկ հիւսիսի կողմից խոր անապատն է, որտեղից բերում են պատուական քարը, որը կոչւում է լիգիւրոն:

Նաեւ պատմում են, թէ թագաւորները սահմանների դժուարութեան ու հեռաւորութեան պատճառով մահապարտներին են ուղարկում այս քարը որոնելու: Եւ մահապարտները գալով՝ գառ են մորթում, միսը բարձր քարակարկառներից գցում են խոր ձորերի ու խաւար վիհերի մէջ: Արծիւները, որոնք բնակւում են շրջակայ ժայռերում, մսի հոտից իջնում են անդունդները եւ, վերցնելով միսը, տանում են վերեւ: Թանկարժէք քարը կպած է լինում մսին: Եւ երբ արծիւներն ուտում են միսը, մահապարտները հեռուից հետեւում են եւ նշան դնում տեղում, [ապա] գնում գտնում են ակնաքարերը:

Արդ, այս ակնաքարերը խորհրդանշում են արդարների հոգիները, իսկ գառան միսն ու արծիւները մեր Տէր Յիսուս Քրիստոսի խորհուրդն են կրում, որն իջաւ խաւարային դժոխքն ու հանեց, ազատեց այնտեղից արդարների հոգիները:

Միւս բաժինը Եգիպտոսն է, նրանից աւելի ներքեւ Ներքին Հնդկաց աշխարհն է, որտեղից բերում են պղպեղ ու այլ համեմունքներ, մաղձագեղեր, անփուտ սեւ փայտ, այսինքն՝ եբենոս, եւ այլ անուշահոտ փայտեր, նաեւ փղոսկր: Այն ձգւում է մինչեւ Այրուած Գօտի կոչուած լեռը, որը մօտ է Արեւելքին: Պատմում են, թէ այնտեղ չկայ դալար բոյս, եւ մարդ չի բնակւում նրա սահմաններում: Այս մասերում կան մեծամեծ գազաններ, որոնք յոյժ չարաժանիք են, գիշատիչ եւ մարդ չտեսած: Կան յաղթանդամ ռնգեղջիւրներ ու մեծամեծ փղեր: Իսկ մարդիկ արեգակի տապի պատճառով սեւ են: Պատմում են, թէ այնտեղ կան գաւառներ, որտեղ մարդիկ հանդերձ չունեն, մերկ են եւ միայն ծածկում են ամօթոյքները: Իսկ նրանց կերակուրը ոչխարի կաթն է: Եւ այս մասերում էր, որ Տոպազ քաղաքի քարհատները գտան թանկարժէք քարը, որը կոչւում է տպազիոն եւ, չճանաչելով այն, ցածր գնով ակնաքարը տուեցին աղբաստրացի վաճառականներին: Իսկ նրանք էլ տարան հնդիկների թագուհուն: Եւ նա գնեց ակնաքարն ու այն կապեց իր թագին: Նմանապէս էլ հրեաները չճանաչեցին իրենց Տիրոջը՝ անկիւնի Վէմին՝ տպազիոն պատուական քարին՝

Յիսուս Քրիստոսին, եւ մի քանի արծաթով վաճառեցին Նրան: Սակայն Աստուծոյ Եկեղեցին ու քրիստոնեաների դասերը գնեցին Յիսուսին՝ Հօր Բանին, եւ կապեցին իրենց գլխին:

Եւ միւս բաժինը Իսպանիան է, որը սահմանակից է Հռոմին եւ աւելի արեւմուտք բազում գաւառներով ձգւում է մինչեւ Մեծ ծովը: Եւ Հռոմի արեւելեան կողմում ու հարաւում կան բազում կղզիներ, ինչպիսիք են Կարդեոնը, Սիցիլիան, Պատմոսը, Վռենիսը, Տիւրոսը եւ բազում այլ կղզիներ: Եւ այնտեղ Եգիպտոսի կողմից՝ հնդիկների նաւահանգստի դիմաց, կայ մի մեծ կղզի: Այնտեղ կայ մի բարձր լեռ, որտեղ այլազգիները կորում են պատուական քար, որը կոչում են զմրուխտ: Դրա համար վայրը կոչում են Զմրուխտի լեռ:

Եւ միւս մասն ընդգրկում է Մեդոնիան եւ Հելլադան՝ մերձ Բիւզանդիայի սահմաններին: Ծովանման Դանուբոս գետի այն կողմում ռուզներն են, իսկ նրանից աւելի խորքերում, որտեղից բերում են թանկարժէք ձկների ժանիքներ ու շատ թանկարժէք ջրային կենդանիների մորթիներ, [նրանք են], որոնց խունդուզներ են կոչում: Հիւսիսային կողմում բուլղարներն ու ղպչաղներն են՝ չարադէմ ու գարշակեր, ծոյլ ու միանգամայն անյոյս եւ անաստուած ցեղեր են:

Եւ արդ, աշխարհի բոլոր բաժիններից առաւել գովեցին մեր բաժինն ու լաւագոյն կոչեցին: Քանզի տղամարդիկ միջահասակ են, օրէնքների ու զոհերի գիտակ, իսկ կանայք շատ չարադէմ եւ կատակապատկեր չեն, ոչ էլ՝ յոյժ պայծառ պատկերով, ոչ էլ՝ լիրբ ու ախտեր շարժող, ինչպիսիք իսպանացի կանայք են: Իսկ գազանները շատ վայրագ, խիստ ու գիշատիչ չեն, ինչպէս պատմում են Հնդկաստանի գազանների՝ վագրի եւ այլ չարատես գազանների մասին: Մեզ մօտ կան բազում գեղեցիկ անասուններ ու զանազան ու վայելուչ թռչուններ: Եւ կերակրւում են անուշահամ ընտիր հացով, անհամար մրգերով ու մեղրահամ բանջարներով. արդ, այս

ամէնը մեր նախնիներն ասացին:

Ապա, ե՛կ նոր ու վերջին ժամանակներս եւ տե՛ս բարիքները գաւառների, որոնք մեր բաժնում են:

Զրոյցը պատմում է, թէ Աստուած մարդուն Երուսաղէմի Սիոն լեռան վրայ ստեղծեց ու դրեց դրախտում: Ինչպէս Գիրքն է ասում. **«Մայր է կոչւում Սիոնը, եւ մարդը նրա վրայ ծնուեց»**[219]: Սա նախկինն էր, իսկ վերջին ժամանակներում Սիոն լեռան վրայ՝ Երուսաղէմում, Բանը ծնուեց մարմնով սուրբ Կոյսից եւ այնտեղից էլ համբարձուեց: Եւ մեզ համար ճանապարհ յարդարեց եւ բացեց երկինքը, որը փակել էր Ադամը: Եւ կգայ այնտեղ, կնստի Գողգոթայում եւ կդատի բոլոր արարածներին: Այս բաժնում երեւացին սուրբ մարգարէներն ու քարոզեցին Քրիստոսի ծնունդը կոյս Մարիամից, եւ մեր այս բաժնից ծագեցին սուրբ առաքեալները՝ տարածելով աստուածային լոյսը ողջ տիեզերքով մէկ եւ հալածեցին կռապաշտութեան խաւարը:

Եւ այս եօթ վիճակներից, որոնց բաժանուեց աշխարհը, չորսը չճանաչեց Աստծուն եւ ոչ էլ՝ Նրա օրէնքները: Իսկ երեք բաժիններից մէկը Մուհամեդի ժողովուրդն է, որոնք աստուածաճանաչ եղան, սակայն շատ աւելի լաւ կլինէր, եթէ ընդհանրապէս չիմանային Աստծուն, որովհետեւ ինչպէս արժանի էր, չճանաչեցին Նրան, այլ խեղդուեցին ծովեզերքում, բայց կորան ծովում խեղդուողների պէս: Իսկ միւսներն էլ եղան հերձուածողները, որոնք տեսակ-տեսակ հայհոյութեամբ անարգեցին Աստծուն ու Նրա գալուստը: Եւ նրանց համար աւելի լաւ կլինէր, եթէ ընդհանրապէս չլսէին Նրա գալստեան մասին, քան թէ այն, որ լսեցին, հաւատացին եւ դարձեալ հայհոյեցին եւ հայհոյում են այն:

Իսկ մի բաժինն էլ մնաց ուղղափառ ստոյգ աստուածապաշտներին եւ Համագոյական Սուրբ Երրորդութեան ճշմարիտ դաւանողներին, որոնք անգայթակղելի հոգով ու մտքով խոստովանողներն են

Բան Աստուծոյ մարդեղութեան, ինչպէս վայել է Աստծուն, ինչպէս որ վկայուեց առաքեալների ու մարգարէների, սուրբ հայրապետների ու սուրբ Եկեղեցու ուղղահաւատ վարդապետների կողմից:

Սակայն նաեւ սրանց է շարժում չար սատանան եւ թոյլ չի տալիս բարիք գործել, որովհետեւ. **«Առանց գործի հաւատքը մեռած է»**[220], եւ արծիւն էլ մի թեւով չի կարող երկինք բարձրանալ:

Եւ եթէ մենք այս սուրբ եւ ուղիղ հաւատով, որ ունենք, կարողանանք բարիք գործել, կլինենք ճշմարիտ երանելիներ: Բայց վա՜յ մեզ, Աստուծո՜յ սիրելիներ, որովհետեւ աշխարհում նուազեց բարեգործութիւնը, եւ բազմացաւ [կեղծ] գիտութիւնը: Այժմ ամէն մէկն Աստուծոյ օրէնքների վարդապետ է եւ քարոզող: Եւ նա, ով քարոզում է ուրիշներին, իսկ ինքը ընդհանրապէս հեռու է այդ ամենից, ինչ ուսուցանում է, նման է գուսանի եւ ո՜չ թէ վարդապետի:

Գրուած է. «Յիսուս գործում էր եւ ապա՝ ուսուցանում միւսներին»: Վա՜յ մեզ, եղբայրնե՛ր, որովհետեւ ծուլացանք, որը բոլոր մեղքերի պատճառն է, եւ հեռացանք Աստուծոյ օրէնքներից բոլորս՝ մեծ ու փոքր, այր ու կին, իշխան ու աղքատ, տգէտ ու գիտնական, քահանաներ ու ժողովուրդ: Քանդուեց պահքի պնդութիւնն, ու նզովքների կապը յոյժ ամրացաւ մեր գլխին: Հեղգացանք ու հեռացանք աղօթքներից եւ զրկուեցինք Աստուծոյ հետ խօսակցութիւնից: Մեր մէջ յանդգնեցաւ շնութիւնը, իսկ պոռնկութիւնն առաւել չարաչար անպատկառացաւ ոչ միայն աշխարհականների ու զինուորականների, այլեւ հոգեւորականների ու քարոզողների մէջ: Քանզի անհամար են կարգընկեցներն ու պատուակորոյսները, շնորհատեացներն ու աստուածամոռացները, որոնք շրջում են համարձակաբար ու մոլորեցնում են շատերին՝ մեծապէս գայթակղելով մարդկանց: Վա՜յ մեզ, աստուածասէ՛ր իշխան, որովհետեւ անթիւ է գողութիւնն, ու անսահման՝ զրկանքները, բազում՝ տոկոսներն, ու բազմապատիկ՝ կաշառքները, անպատմելի՝ կեղծաւորութիւնն ու արծաթասիրութեամբ աճած ագահութիւնը:

Վա՜յ մեզ, ցանկալի՜ եղբայր, որովհետեւ արմատացաւ սուտը, եւ հաստատուեց անյուսութիւնը, պիղծերի կողմից գովաբանուեց ոխակալութիւնն, ու բարի համարուեց արբեցողութիւնը: Ատելութիւնը հասնելով՝ բռնեց մեզ, իսկ սէրը, որը գլուխն է բարիքների, յոյժ հեռացաւ: Եւ այլ անբաւ անօրէն մեղքերի տեսակներ սկզբնաւորուելով՝ յորդորուեցին: Եւ այս ամէնը լրբաբար գործւում է աշխարհում:

Նաեւ յայտնուեցին հեշտաքարոզ վարդապետներ, կաղախօսներ եւ ուրիշներ, որոնք թողեցին Տիրոջ սահմանած օրէնքները: «Հզօր եւ ողորմած Աստուած» են ասում, բայց շատերին են կործանում, որովհետեւ այնպիսի բաների մասին են խօսում, որոնք մարմնջեցնում է մարդկանց լսելիքը, այսինքն՝ զուարճացնում, որի մասին առասպելների կործանող Պօղոս առաքեալն է խօսում, եւ ըստ սուրբ Գրքերի՝ «Մարդիկ թուլացան հաւատքից»:

Թագաւորների ու իշխանների վրայ գրուած պարտականութիւն կայ՝ կասեցնել անօրէնութիւնը, բարի օրինակ լինել լաւագոյն գործերի, խրատել իշխանութեամբ եւ յորդորել դէպի բարին, որովհետեւ Աստուած դատաստանի Օրը ա՜յս պիտի պահանջի իշխանութիւն ունեցողից:

Տե՛ս նաեւ կռապաշտ թագաւորներին, թէ որքան տառապանքների էին ենթարկում եւ նեղում սուրբ մարտիրոսներին՝ ասելով. «Զոհեցէ՛ք կուռքերին, որ աստուածները չբարկանան մեզ վրայ»:

Նաեւ մեծն Տրդատ թագաւորը, երբ դեռ կռապաշտ էր, այսպէս էր գրում եւ ասում. «Ինչպէս տանտէրն է [խնամք տանում] տանն ու որդիներին, այնպէս էլ մենք ենք խնամք տանում մեր աշխարհին ու մարդկանց հոգիների փրկութեանը, որ աստուածները չբարկանան մեզ վրայ»:

Եւ տե՛ս, թէ նոր՝ աստուածպաշտութեան ժամանակներում Աստուած մեծամեծերից որքան է պահանջում բարի գործեր ու հայրական խնամք: Քանզի արդարադատութիւնն ու սրբութիւնն են, որ հաստատում են թագաւորութիւնը, զարդարում են գահը բարեգործութեամբ եւ գովելի դարձնում Աստուծոյ առաջ, ինչպէս որ գրում է Տիտոսը՝ հռոմեացիների թագաւորը. «Այսօր թագաւորեցինք, որովհետեւ բարիք գործեցինք»: Նաեւ Սաւուղը քառասուն տարի թագաւորեց, բայց Գիրքն ասում է. ***«Երկու տարի թագաւորեց»***[221]*, որովհետեւ այն երկու տարում միայն բարիք գործեց:*

Ապա յիրաւի գրուեց. «Հզօրներից աւելի հզօրն են պահանջում», նաեւ՝ ***«Ում շատ շնորհուեց, նրանից շատ կպահանջեն»***[222]*: Եւ այս ստոյգ է, որովհետեւ, երբ գլխաւորը չփոթւում է եւ ինչ-ինչ մեղքեր է գործում, ապա ռամիկ ժողովուրդը համարձակօրէն է նոյն չարիքը գործում, որովհետեւ յոյժ ծանր է ղեկավարի յանցանքը:*

Սովորի՛ր Հին Օրէնքից, որ եթէ իշխանը կամ քահանայապետը մեղանչում էր, եւ այն նոյն մեղքով ամբողջ ժողովուրդն էր մեղանչում, միանման էր մեղքի թողութեան զոհը՝ որքան գլխաւորի, նոյնքան էլ ժողովրդի համար: Դրա համար ղեկավարի վրայ դրուած պարտականութիւն կայ, որ ինքը արդարութիւն գործի եւ միւսներին էլ դէպի բարին յորդորի, որպէսզի ուրիշի մեղքերի հետ չդատուի ահեղ Դատաստանին: Եւ հոգեւոր առաջնորդները, որոնց Աստուած վերակացու կարգեց ժողովրդին, նաեւ գլխաւորներ են ու Քրիստոսի հօտի հովիւներ, աշխարհի լոյս եւ մարդկանց անմահութեան աղ: Նրանք կոչւում են եւ են եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ, կանչուեցին Աստծուց ի պէտս բոլորի, նստեցին առաքեալների աթոռներին ու վերցրին նրանց իշխանութիւնը, [սակայն] ծուլացան, նստեցին անհոգ եւ չեն խնամում Քրիստոսի հօտը, չեն սաստում եւ չեն յանդիմանում, չեն մխիթարում եւ չեն կանչում քաղցրութեամբ: Եթէ չաղլիկ պատառ

է պատահում, այն են միայն ուտում, իսկ հիւանդին, որ տկարանում է, անտեսում են, ինչը սաստիկ նախատում է մարգարէն, իսկ Տէրը քանքար թաքցնողներ է կոչում նրանց եւ չարաչար պարտաւորեցնում է: Նաեւ բոլոր հոգեշունչ Գրքերը դատապարտում են նրանց: Եւ դարձեալ՝ կան ոմանք, որոնք բռնութեամբ նեղում են աղքատներին ու ագահաբար յափշտակում են նրանց ունեցուածքը: Այսպիսով մեծապէս գայթակղեցնում են տգէտ մարդկանց եւ պատճառ դառնում Աստուծոյ անուան ու հոգեւոր դասի հայհոյութեան, որը տեսանք եւ տեսնում ենք մեր աչքերով: Եւ փոխանակ առաջնորդելու՝ կործանում են շատերին:

Բայց այս ամէնը գործել է տալիս ագահ արծաթասիրութեան ախտը՝ այն ախտը, որը կործանեց պիղծ Յուդային: Եւ չգիտեն, որ ըստ մարգարէի խօսքի՝ Աստուած նրանցից է պահանջելու բոլոր նրանց արիւնը, ում չզգուշացրեցին դուրս գալ մեղքերից, եւ չնմանուեցին նախկին սուրբ հայրերին, որոնք մեռան Քրիստոսի հաւատքի համար: Այլ բոլորս դարձանք անհամ ու անպիտան աղ եւ տգէտներին՝ ոտնակոխ, ինչպէս ճանապարհի աղը: Եւ արդ, որեւէ մէկը թող չկարծի, թէ այս բամբասելով ենք ասում, քա՛ւ լիցի, որովհետեւ բամբասանքը մեծ չարիք է Աստուծոյ առաջ: Եւ ըստ Յոբի՝ ***«Ո՞ր մարմնաւոր մարդն է, որ կարող է արդարանալ Աստուծոյ մօտ, թէեւ ծնուած ու աշխարհում մէկ օր ապրած լինի»***[223]*: Քանզի ես էլ մէկն եմ այժմ ծնուածներից՝ բազում ախտերի տակ կքած եւ առաւել, քան շատերը, խաբուած չարից ու հեռացած Աստուծոյ օրէնքներից: Ապա ինչպէս մարդիկ եւ սառած ժամանակներն են թելադրում, այն ենք պատմում արգահատելով եւ ոչ թէ նախատանքով բամբասելով, բայց աւա՜ղ եւ վա՜յ մեզ, որովհետեւ ձմեռային ժամանակներն անցան, սակայն բարիքների ծաղիկը չի երեւում: Եւ չկայ մէկը, որը կարողանայ գործել կատարեալ բարիք, թէպէտեւ դնի սկիզբը, ինչպէս որ Տէրն ասում է.*

«Սառեց երկիրը, եւ սկսուեց բանսարկուի պիղծ թագաւորութիւնը, որովհետեւ նշանն այստեղի՛ց ճանաչիր, որ ծուլացան մարդիկ, եւ յայտնապէս յանդգնեց մեղքը»: Սա է նրա իշխանութեան սկիզբը: Եւ որքան օրերն անցնեն, այնքան բազմանալու է չարիքը, ու քիչ-քիչ աճելու է մեղքը: Բայց նա, ով կՁանայ ու մի փոքր բարիք կգործի այս ցուրտ ժամանակներում, Աստուած առաւել կուրախանայ եւ բազում վարձք կտայ նրան, որովհետեւ ցանկանում է մեր դարձը դէպի Ինքը: Աստուած շատ է սիրում նրան, ով խոստովանութեամբ ու արտասուքով ապաշխարում է իր մեղքերն ու անօրէնութիւնները: Եւ արդ, ո՜վ քրիստոսասէր իշխան Պաղտին, այս մասին մինչեւ այստեղ բաւական է, որովհետեւ յանդգնեցինք եւ ձեռնարկեցինք այս աստուածային գործը, որը վեր էր մեր կարողութիւնից: Քանզի ես ինքս դեռ շատ անհրաժեշտութիւն ունեմ ուսման եւ ուրիշներից խրատներ ընդունելու, բայց քո եղբայրութեան սէրն ու գութը եւ մեծ իշխանութեանդ հրամանները յորդորեցին, որ սկսեմ: Իսկ դու քաղցրութեամբ ու սիրով ընդունի՛ր այս, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոս ընդունեց այրի կնոջ լուման: Եւ ցանկութեամբ ու սիրով պահի՛ր այս քեզ մօտ քո ունեցած իշխանութեան ողջ փառքից ու մեծութիւնից առաւել: Քանզի աշխարհիս փառքն ու մեծութիւնն անցողիկ են, ինչպէս խոտի ծաղիկը, բայց այս կմնայ մշտնջենաւոր, եւ սրա փառքը կլինի քեզ համար կեանքի պաշար եւ քեզ հետ կգայ յաւիտենական կեանք, որովհետեւ սա ստոյգ Աստուծոյ գանձարան է, Նրա լուսազարդ օրէնքների քաղաք ու Աստուծոյ ձեռքով տնկած դրախտ: Եւ վստահ եմ Աստուծոյ ողորմածութեանը, որ սրանով կլուսաւորի հոգիդ, որովհետեւ գրասէր ես: Գիտեմ նաեւ, որ սրանով շատերին կլուսաւորես: Եւ իմ Աստուած Յիսուս Քրիստոս բազմապատիկ կճոխացնի քո հոգին ու միտքն աստուածային գործերով, ինչպէս բարի ու պարարտ հողում: Եւ եթէ մէկը ցանկանայ արտագրել այս, դու

օգնի՛ր նրան ու յորդորի՛ր, որպէսզի քո եւ քո ննջեցեալների համար բարի յիշատակները բազմանան այս աշխարհում: Քանզի այս գիրքը քո յիշատակն է, որովհետեւ քո միջոցով գրուեց այն: Եւ Աստուած թող բարի ծառաների կարգին դասի քեզ, որոնք շատ բազմացրին քանքարը, թող ընՁի քո ննջեցեալների բոլոր մեղքերը եւ քեզ քո հարազատ եղբայրների հետ միասին երկար ժամանակ թող խաղաղութեամբ պահի իր կամքով, որ բարի յիշատակով օգնական լինէք ննջեցեալներին, նաեւ՝ Յոբի նման՝ որբերի ու այրիների հայր, աղքատների իրաւարար եւ Աբրահամի նման՝ օտարասէր: Նաեւ մի՛ մեղադրիր, որ գեղջուկ բառով ու խօսքով գրեցինք այս: Գիտեմ՝ դու իմաստուն ես եւ կամենում ես նուրբ, ուղիղ եւ խորունկ խօսք, բայց ես հնարաւորին չափ պարզեցրի սրա բառերը, որպէսզի տգէտները նոյնպէս լսեն ու օգտուեն սրանից, եւ որպէսզի չձանձրանան լսողները: Զցանկացայ այս շարունակել երկար պատմութիւններով, որոնք կան աստուածային Գրքերում, այլ մի փոքր ծաղկաքաղ արեցի Աստուծոյ օրէնքների պատուիրանների ծաղիկներից, ինչպէս, օրինակ, մէկը մի կաթիլ է վերցնում օվկիանոս ծովից եւ կամ մի չիթ՝ անհուն անձրեւից: Դրա համար էլ չսկսեցի երկրի ստեղծումից եւ չգրեցի, թէ ինչպէս Աստուած ոչէից գոյացրեց բոլոր ստեղծուածներին, լոյսից՝ հրեղէնների դասերը, տարերքներից՝ ողջ աշխարհը եւ հողից՝ մարդուն. եւ թէ ինչ խորհրդով դրեց նրան դրախտում, եւ կամ թէ ինչպէս [մարդը] դուրս ելաւ դրախտից, եւ կամ ինչ տեղի ունեցաւ մինչեւ չար ջրհեղեղը, ու ջրհեղեղից յետոյ եղած անկարգութիւնները. թէ որքան ապրեց Նոյը, եւ կամ ինչու շինուեց աշտարակը, եւ կամ թէ քանի բաժին վերցրին Սէմի որդիները, եւ կամ թէ քանի սերունդ եղաւ նրան, եւ նրա ազգից ծնուեց մի իշխան, որը չմիաբանուեց աշտարակաշինութեանը: Եւ դրա համար Աստուած պատուեց նրան ու նրա ազգից ծնուեց մարմնով: Եւ կամ թէ ըստ կարգի՝

ինչեր գործուեցին Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Յովսէփի, Մովսէսի, Յեսուի օրերում, եւ որ սրանց օրինակը մօտ է Քրիստոսին: Նաեւ այն ժամանակների թագաւորների պատերազմների մասին, նոյնպէս եւ՝ Իսրայէլի դատաւորների, Սամուէլի, Սաւուղի, Դաւթի, Սողոմոնի, Եզեկիայի, Մանասէի, Աքաաբի ու այլ թագաւորների, թէ որքան պատերազմեցին: Լինում էր, որ յաղթում էին, եւ լինում էր, որ գերեվարւում էին: Եւ թէ աստուածատես մարգարէները որքան նահատակուելով ճգնեցին՝ Զաքարիան, Ովսիան, Մաղաքիան, Աբդիուն, Ամովսն ու Միքիան, Երեմիան, Եսային, Եղիան, Եղիսէոսը եւ մնացած բոլորը, մինչեւ եկաւ ու մարդացաւ Աստուծոյ Որդին: Եւ կամ թէ ինչքան նեղութիւններով ու դառն արտասուքով առաքեալները շրջեցին աշխարհում, նաեւ նրանց մահուան ու նրանց հետեւողների մասին: Եւ կամ թէ ինչեր գործուեցին Հռոմում, որից յետոյ այնտեղ իշխեց Հռոմելասը՝ Ֆռանկների հայրն ու առաջին իշխանը: Եւ կամ թէ ինչու եւ ինչպես սկսուեց ու Հռոմում դրուեց մեծագոյն կայսրի գահը, եւ որ առաջինը Գայեոսն էր, որն էլ կոչւում էր Յուլիոս, իսկ յետոյ՝ Օգոստոսը, որի ժամանակներում էլ Բեթղեհէմում սուրբ կոյս Մարիամից ծնուեց մեր Տէրը: Դեկոսն ու Ներոնը, Վաղերիոսն ու Տրայանոսը, Նումերիոսն ու Մաքսիմիանոսը, Դեոկղետիանոսն ու Մաքսենդէսը, սուրբ Կոստանդիանոսն ու պիղծ Յուլիանոսը, մեծն Թէոդոսն ու յոյժ վատագոյն Մարկիանոսը, Զենոնն ու Անաստասը, Յուստիանոսն ու Հերակլը, Մորիկն ու Մանիլը եւ ուրիշներ, որոնց մասին գրի չառանք, աւելի քան յիսուն կայսրեր նստեցին Հռոմում ու Կոստանդնուպոլսում, որը Բիւզանդիոնն է: Եւ թէ որքան բաներ կատարուեցին նրանց օրերում չար կամ բարի, կամ [ինչ] հերձուած, Եկեղեցու հալածանք եւ կամ պատերազմներ [եղան], այդ մասին չգրեցինք:

Եւ կամ ինչու Քամն անիծուեց Նոյի կողմից, եւ նրա որդիներն

աշխարհի որ բաժինը վերցրին, եւ կամ թէ քանի ազգեր դուրս եկան նրանից եւ բազմացան երկրի երեսին: Եւ կամ թէ քանի ազգ դուրս եկաւ Յաբեթից՝ Նոյի կրտսեր որդուց, որը մեր հայրն է: Եւ թէ քանի ազգեր ու լեզուներ բաժանուեցին, եւ քանի աշխարհներ ու կղզիներ ժառանգեցին: Եւ կամ թէ ինչ գործեց մեր հայր Հայկը, որը Յաբեթի որդիներից էր, եւ որի անունով մենք Հայք կոչուեցինք: Հայկը՝ ցանկալի ու գեղեցկապատկեր, հաստաբազուկ ու լայնաճակատ մեր հայրը, խարտեաշ ու գանգրահեր էր: Քանզի երբ լեզուները բաժանուեցին, ու փլուեց աշտարակը, Բէլը Բաբելոնում չինեց թագաւորական գահ, եւ ինքը կամեցաւ միայնակ թագաւորել մարդկանց վրայ: Իսկ մեր հայր Հայկը, վերցնելով մեր ազգն ու տոհմը՝ մօտ չորս հարիւր հոգի, որովհետեւ քիչ էին մեր նախնիները, եւ փախչելով Բէլից՝ ամրացաւ հիւսիսային կողմում՝ Վերին Հայքում, որը Մեծ Հայք են կոչում: Եւ Բէլը, որը նստել էր Բաբելոնում, չկարողացաւ Հայկին ենթարկել իր հպատակութեանը: Եւ որովհետեւ այն ժամանակ չէին սովորել ձիու վրայ պատերազմել ու կռուել, Բէլը, հաւաքելով յիսուն հազար պատերազմող տղամարդկանց հետեւակներ, եկաւ բարկութեամբ, ինչպէս ծովի ալիքներ, որ ջնջի մեր ազգը: Իսկ Հայկը հազար հոգով դուրս եկաւ ընդդէմ նրա. թէպէտ քիչ էին, բայց քաջ այրեր էին: Եւ Բէլն իր գնդով եկաւ աւելի շուտ, քան զօրքը: Իսկ Հայկն էլ իր գնդով եկաւ ընդդէմ նրա: Բէլը հագել էր կրկնակի տախտակի նման թանձր երկաթներ ետեւից ու առջեւից, որովհետեւ գիտէր մեր հօր բազկի թափը: Բէլն ունէր նաեւ խիստ սոսկալի նիզակ իր ձեռքին, իսկ մեր հայր Հայկը գալիս էր լայնալիճ պնդակազմ աղեղով: Բէլը գոչեց Հայկի վրայ, որովհետեւ հսկայ էր եւ չար վիշապի նման ցանկանում էր կլանել մեր հօրը: Իսկ Հայկը՝ մեր լայնաճակատ հայրը, ուժ տուեց բազկին, լայնալիճ աղեղից նետ արձակեց եւ խփեց Բէլի կրծքին, որը, պատուհան բացելով, անցաւ խրուեց

գետնի մէջ շատ զօրաւոր կերպով, եւ երկաթի թանձրութիւնը չխանգարեց նրան: Այսպիսով, ընկնելով սատկեց հսկայ եւ մսաբլուր Բէլը, եւ ազատուեց մեր ազգը:

Եւ կամ ինչ արեցին Թորգոմի [որդիները], այսինքն՝ Հայկի աթոռը, որովհետեւ հայերը Թորգոմի որդիներ ու տուն կոչուեցին նրա գործած քաջութեան համար: Եւ կամ ինչ հրաշալի քաջութիւններ եւ յաղթութիւններ գործեց նրանից յետոյ Ամրիկը (Արամը), որովհետեւ բոլորը մեր ազգին նրա անուամբ կոչում են արմէններ: Եւ թէ՝ երբ պակասեցին հայոց թագաւորները, եւ ընկաւ նրանց թագաւորութիւնը, եւ Աբրահամի ազգից թագաւորներ եկան Հայք, եւ չորս որդիների սերնդից, որոնք ծնուեցին նրա համար Քետուրից, առաջինն Արշակն էր, նրանից յետոյ՝ Վաղարշակը, Արտաշես ընտիրն ու քաջ Տիգրանը, Երուանդն ու Արա Գեղեցիկը*, Աբգարն ու Սանատրուկը, Խոսրովն ու յետոյ Տրդատն ու Գրիգոր Լուսաւորիչը, որոնք Աբրահամի ցեղից են, ըստ Աստուծոյ հրամանի, որն ասաց. **«Աբրահա՜մ, քեզնից կծնուեն ազգերի թագաւորներ, որովհետեւ դու միայն ջանացիր ու գտար Աստծուն»**[224]: Իսկ Տրդատից յետոյ [եկան] միւս Արշակն ու Խոսրովը, Պապն ու Վռամշապուհը, որի օրօք էլ Աստուծոյ շնորհներով գտնուեց հայոց գիրը, նաեւ սուրբ Վարդանանք՝ քաջ ու անուանի, ընտիր նահատակներ Եկեղեցու սուրբ հաւատի համար: Տե՛ս, թէ այս թագաւորների ժամանակներում որքան գործեր, պատերազմներ ու հալածանքներ եղան, որոնք գրի չառանք, որովհետեւ բազում վիպասաններ ու իմաստուն պատմագիրներ յայտնուեցին աշխարհում եւ անթիւ գրքեր գրեցին ու թողեցին ի յիշատակ նախկին անցած գործերի, որոնք եղան այս աշխարհում:

Եւ կամ թէ որքան գործեր ու պատերազմներ եղան Բաբելոնում Նաբուգոդոնոսորի, Դարեհի, Կիւրոսի եւ այլ թագաւորների օրօք:

* Ըստ Մովսէս Խորենացու. Արա Գեղեցիկը մեծն Արամի որդին է, եւ նրա անունն այս շարքում ճիշտ չէ վկայակոչուած (ԽԿ)

Եւ կամ թէ՝ որքան թագաւորներ նստեցին Եգիպտոսում ու ինչ գործեցին նրանք: Քանզի տասը Պտղոմէոս արքաներ նստեցին այնտեղ ու շատ փարաւոններ, որոնցից մէկը ընկղմուեց Կարմիր ծովում: Իսկ Պտղոմէոսներից մէկը հաւաքեց աշխարհի բոլոր գրքերը:

Եւ կամ թէ ինչ կատարուեց Մակեդոնիայում, որտեղից դուրս եկաւ Աղեքսանդրը եւ գրաւեց աշխարհի երեք բաժինները:

Եւ այլ անսպառ զրոյցների շատախօսութիւններ ու բազում պատմութիւններ, որոնք գրուել են նախնեաց կողմից ծովի աւազներից աւելի: Եւ նրանց մէջ կան, որ հոգեւոր են, կան, որ մարմնաւոր են, նաեւ կան, որ հոգեւորն ու մարմնաւորը խառնուած են միմեանց: Բայց դրանք ջանասիրաբար ընթերցողների համար շահ են եւ գիտութիւն, որովհետեւ մեծ բարիք է, երբ մէկը կարդում է բոլոր գրքերն ու նրանցով ճանաչում բոլոր արարածներին, նաեւ՝ ինչ կայ աշխարհում ու հանդերձեալ կեանքում, եւ փառաբանում է արարիչ Աստծուն: Քանզի տգէտը կոյր է կոչւում. աւելի լաւ է աչքով կոյր լինել եւ ոչ թէ մտքով, որովհետեւ կոյրը զուրկ է արեգակի լոյսից, իսկ տգէտը՝ Աստուծոյ ճառագայթից ու գիտութեան լոյսից, որովհետեւ ո՛չ այս կեանքը կարող է իմանալ եւ ո՛չ էլ հանդերձեալը: Աշխարհում չկայ աւելի մեծ բարիք, բազում գանձ ու անգին մարգարիտ, քան գիտութիւնն է: Քանզի աւելի լաւ է լինել մարմնով աղքատ, բայց ճանաչել ու իմանալ երկրաւորն ու երկնաւորը, քան թէ՝ ամբողջ աշխարհի թագաւոր, բայց տգէտ ու մտքով կոյր: Քանզի աշխարհն ու նրա մեծութիւնը կանցնեն, բայց գիտութիւնը կմնայ միշտ: Եւ այն է ճշմարիտ բարին ու հաստատուն մեծութիւնը, որովհետեւ թէ՛ մերկանալիս, թէ՛ մեռնելիս չի բաժանւում մարդուց, այլ գնում է նրա հետ:

Ապա, յիրաւի, գրասէրն ու ուսումնասէրը աստուածասէր է կոչւում: Քանզի գրուած է. **«Արդարի բերանը խօսում է արդարութիւն»**[225], եւ՝ **«Երանելի է նա, ում բերանից Աստուծոյ օրէնքը չի հեռանում»**[226], որովհետեւ Աստուած նրա մէջ է եւ չի հեռանում: Ուս-

տի մենք էլ լի բերանով օրհնենք եւ բարեբանենք Համագոյ եւ Ամենասուրբ Անբաժանելի Երրորդութեանը, որն Իր լոյսի գիտութեամբ լցրեց մեզ եւ լուսաւորեց մեր միտքը, որով իմաստուն դարձրեց մեզ եւ յուսադրեց ե՛ւ այս աշխարհի նկատմամբ, ե՛ւ այն, որ գալու է, եւ աստուածացրեց մեզ սուրբ Աւազանով ու Յիսուս Քրիստոսի խաչի չարչարանքներով: Եւ իմացանք, թէ որտեղից ընկանք կամ ում միջոցով, կամ ինչու ոտքի կանգնեցինք եւ կամ ուր ենք գնալու այս կեանքից յետոյ: Եւ արդ, նախ հրեղէնին հողին կապեց եւ արձակեց, որովհետեւ պատճառ դառաւ, եւ դարձեալ առաւել եւս կապելու է*: Արդ, չափ ու սահման կայ ամէն ինչին, որովհետեւ աչքը տեսնելով չի յագենայ, ոչ էլ ականջը՝ լսելով, եւ ոչ էլ լեզուն՝ խօսելով: Եւ երանի՜ նրան, ով գիտէ ժամանակով ու չափով առաջնորդուել: Եւ դրա համար երբէք մի՛ դադարէք սուրբ Գրքերի ընթերցումից, այլ առաւել մեծ փութո՛վ ջանացէք Աստուծոյ օրէնքների յոյսով օր ու գիշեր, քան մնացած բոլոր բարեգործութիւնները, որպէսզի այստեղ լուսաւորուի մեր միտքն Աստուծոյ գիտութեան լոյսով, իսկ այնտեղ պայծառանանք բոլոր սուրբերի հետ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու եռեակ լոյսի եւ մի բնութեան երանական ու գերազանց լոյսով, Որ օրհնեալ է այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԻԴ. Աղերս եւ պաղատանք առ Աստուած ողջ աշխարհի համար

Եւ արդ, որովհետեւ քո միջոցով սկիզբ դրուեց այսպիսի աստուածային գրքերի, ո՛վ վսեմափառ, աստուածամերձ, բարձրագահ, թագաւորազարմ եւ քրիստոսասէր իշխան Պաղտին, բազմակրկին անդրադարձութեամբ բե՛ր քո աստուածապաշտ միտքը,

* Նկատի ունի դիւային, որոնք նախապէս արարուել էին որպէս լուսոյ հրեշտակներ (ԽԿ)

որ այս աստուածային մատեանի եւ հոգեւոր երգի աւարտին Աստծուն առաքենք աղաչանքի եւ պաղատանքի խօսքեր ողջ աշխարհի ու ննջեցեալների համար, որովհետեւ Նա աղօթքներ է կամենում եւ ցնծում է առաւել, քան բիւրաւոր գառներից ու զուարակներից, որոնք զոհում են Նրա համար: Քանզի ոչինչ չի կարող այնպէս ուրախացնել Աստծուն, ինչպէս ընդհանուրի օգուտը:

Մեր քրիստոսապսակ թագաւորին իր իշխանների հետ, ինչպէս նաեւ մեզ միմեանց հանդէպ սիրո՛վ պահիր: Եւ երկար օրեր ու տարիներ խաղաղ կեանքով ապրեցրո՛ւ այս կեանքում եւ բարձրաբազուկ ու յաղթո՛ղ դարձրու նրանց անօրէնների ու բոլոր թշնամիների վրայ, նաեւ Հին Գրքի խօսքը կատարի՛ր նրանց համար. **«Օգնի՛ր մէկով հազարին եւ երկուսով տասը հազարին սպանել»**[227]: Սրբութիւն ու բարեգործութի՛ւն տնկիր սրանց սրտերում եւ ահեղ Ատեանը միշտ տարածի՛ր նրանց աչքի առջեւ: Իսկ ծուլութիւնն ու մարմնի հեշտասիրութիւնը բոլոր մեղքերով հանդերձ հալածի՛ր նրանցից: Գլխաւոր հայրապետ կաթողիկոսին, եպիսկոպոսներին ու քահանաներին հեզ, խոնարհ եւ առանց շահախնդրութեա՛ն պահիր: Ագահ արծաթասիրութիւնը հալածի՛ր եւ նրանց սրտում ողորմածութի՛ւն սերմանիր: Բարի օրինակ եւ անդայթակղելի՛ դարձրու նրանց, նաեւ մեծ քարից, որը կախուելու է պարանոցից, փրկի՛ր: Կուրացածներին՝ լոյս եւ մեղքերով նեխած աշխարհիս աղ [դարձրու], պատրաստի՛ր սրանց աղօթքի, սուրբ Եկեղեցու գործերի ու Քեզ ծառայելու համար անսայթաք եւ առանց գայթակղութեա՛ն պահիր: Եւ ովքեր Քո շնորհներից պարգեւ վերցրած՝ դարձեալ Քեզ կմատուցեն, նրանց ձեռնադրութիւնն ու մկրտութիւնը լոյսո՛վ զարդարիր: Պսակը պարկեշտ անկողնով սո՛ւրբ պահիր: Սուրբ Պատարագը թող հաճելի եւ ընդունելի լինի Քեզ: Եկեղեցու վարդապետներին ուղիղ հաւատով առաքելական օրէնքներում պնդակա՛մ զարդարիր, անաչառ քարոզողնե՛ր դարձրու

եւ փրկի՛ր նրանց պորտաբոյծ կեանքից: Շնորհի՛ր աճեցնել գիտութեան քանքարն ու յաջողի՛ր մարդկանց առաջ խօսքի արծաթը դնել սեղանին: Զար մշակի վարձքից ու քանքարը թաքցնելու յանդիմանութիւնից ազատի՛ր: Հատող սրից փրկի՛ր ու ապահովի՛ր արտաքին խաւարից: Մաքո՛ւր պահիր որովայնապարար ու պորտաբոյծ հաճոյքներից եւ ազատի՛ր մարմաջով լի մարմնական հեշտաքարոզ մտքերից: Պատսպարի՛ր խորհուրդները՝ կրելու Քո խաչը, շնորհի՛ր հետեւել Քո ոտնահետքերին, առաջնորդի՛ր՝ ձրի վերցրածը ձրի էլ վերադարձնելու: Շնորհի՛ր նրանց հեռու մնալ գայթակղեցնող կանանցից: Պարգեւի՛ր, պահպանի՛ր՝ Աստուծոյ անուանակցութեան պարգեւները վերցնելու, բարիք գործելու եւ ուրիշներին սովորեցնելու, նրանց մտքում պատկերի՛ր ու տպաւորի՛ր: Եկեղեցու երաժշտապետներին հեզութեան հոգով զարդարիր եւ հպարտութեան եղջիւրից փրկի՛ր: Դասակի՛ց դարձրու սերովբէներին, արի՛ եւ արթո՛ւն պահիր եկեղեցու դռանը, քաջալերի՛ր աղօթքների ու ծառայութեան, յորդորի՛ր ուսման եւ ժառա՛նգ դարձրու ժիր մշակներին: Փրկի՛ր ագահութիւնից ու անձնական փորձութիւններից եւ պարգեւի՛ր նրանց անճառելի բարին: Տէ՛ր Յիսուս Քրիստոս՝ ճգնաւորների բարի՛ Առաջնորդ, որոնք լեռներում են, առաջնորդի՛ր ու մաքրի՛ր, առանց կեղծաւորութեան յորդորի՛ր նրանց Քո սիրով, որ միշտ բազկատարած աղօթեն աշխարհի համար, եւ քաջալերելով՝ զօրացրո՛ւ նրանց: Մնափառութիւնը, աշխարհի սէրն ու մարմնական ցանկութիւնը հալածի՛ր նրանց մտքից. ահաւոր բարքերն ու տեղից տեղ փոխուելը թուացեալ ցնորքներով հանդերձ հերքի՛ր նրանց հոգուց. սուտ տեսիլքներից, դիւախաբ լինելուց փրկի՛ր նրանց. նաեւ որովայնի անժուժկալութիւնից ազատի՛ր նրանց. դիւական ձանձրոյթից, անհոգ ծուլութիւնից, չար նեղսրտութիւնից, խառնակիչ հայհոյութիւնից պահպանի՛ր նրանց. պիղծ ոխակալութիւնից, հրախառն մախանքներից, նախանձից, չար լուրից ու բարբաջանքից եւ աւելորդաբանութիւնից փրկի՛ր նրանց: Այս կեանքը հեռացրո՛ւ նրանց մտքից, նաեւ հանդերձեալ աշխարհն ու ահագին Ատեանը միշտ պահի՛ր մեր աչքերի առաջ: Նաեւ վանական կուսակրօն քահանաներին, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, սրբելով՝ մաքրի՛ր միտքն ու հոգին աշխարհի ախտերից եւ մարմնի պիղծ ցանկութիւններից. նաեւ պոռնկական պիղծ դեւերին հալածի՛ր աստուածային հրեղէն գաւազաններով, քնկոտութիւնից ու չար լեզուից, որովայնամոլութիւնից ու ոխակալութիւնից եւ բանսարկուի բոլոր հրախառն ծածուկ նետերից պաշտպանի՛ր նրանց, փրկի՛ր ագահութեան ու բարկութեան բոլոր մեղքերից եւ խորհուրդներից պահի՛ր նրանց: Որպէսզի կատարեալ բարի գործերով, սերտ եւ հաստատուն հաւատով, անշեղ մտքով ու մաքուր խորհրդով մերձենան Աստուծոյ Որդու Մարմնին ու Արեանը՝ ի շահ իրենց անձերի, ի փրկութիւն ապրողների եւ ի թողութիւն ննջեցեալների: Տէ՛ր Յիսուս Քրիստոս, մահուան օրը, անաչառ Արիւնն ու սոսկալի բեմն անմոռաց հաստատի՛ր նրանց սրտերում: Եւ ովքեր աշխարհից գան եւ կրօնաւորեն, նրանց հաստատո՛ւն պահիր սիրոյ, յոյսի, հաւատքի եւ բոլոր բարեգործութիւնների մէջ, ժուժկա՛լ դարձրու նրանց, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, նաեւ նրանց մտքից մաքրի՛ր նախկին վարքի յիշողութիւնը, որն ունէին աշխարհում. աղօթքներում՝ անզբաղ, առանց ագահութեա՛ն պահիր նրանց, հանդերձեալ աշխարհը, ահագին Ատեանը, անաչառ դատաստանն ու երանական ցնծութիւնը հաստատի՛ր ու ամրացրո՛ւ նրանց մտքի մէջ:

Նաեւ Քո ողջ ժողովրդին՝ տղամարդ թէ կին, ծեր թէ մանուկ, երիտասարդ թէ կոյս, բանսարկուի բոլոր մեքենայութիւններից ու պատրանքներից Աստուծոյ Հոգով անարա՛տ պահիր հոգով ու մարմնով:

Նաեւ ողջ աշխարհս պտղատու ծառերով ու բոյսերով, անա-

սուններով ու թռչուններով օրհնի՛ր եւ աճեցրո՛ւ Քո ժողովրդի օգտի, պէտքերի ու կարիքների համար:

Նաեւ կուսութիւնը սուրբ ու յստա՛կ պահիր եւ մաքրի՛ր ախտերի խտտանքից ու ապականագործ մեղքերից պահպանի՛ր նրան: Իսկ ամուսնութիւնը սոդոմական չար խառնակութիւնից ու աւելորդ աղտեղութիւնից պարկեշտացրո՛ւ եւ միայն որդեծնութեան օրհնութեան համա՛ր շնորհիր նրանց, երբ դան իրար մօտ՝ միաւորուելու: Եւ նրանց կամքով, ճիշտ ժամին ըստ նրանց աղօթքների՝ պարգեւիր: Իսկ մանուկը նրանց որովայնում բարո՛ւք ստեղծագործիր ու անարա՛տ հասցրու ծնունդին: Ծնողի բնութեան կապը կակղացրո՛ւ եւ մահու չափ դառը ծննդական ցաւից ազատի՛ր ու փրկի՛ր Դու: Տէ՛ր, գիտեմ, որ Քո ստեղծածներն ենք, եւ Դու ես մեզ ձեռակերտում կանանց որովայնում ու դնում Քո Այը մեզ վրայ: Եւ խոնաւ, խաւար բանտում անարա՛տ պահիր Քո ստեղծածներին, որովհետեւ ահեղ եւ զօրաւոր ես. եւ Քեզ փա՛ռք ամէն ինչում: Իսկ ծնուած մանկանը Աւազանի շնորհներով Հօր որդեգրութեանը եւ անվախճան կեանքի ժառանգութեա՛նը արժանացրու: Շնացողներին, պոռնիկներին ու այլ անասելի աղտեղի գազրագործներին յուսահատութիւնից եւ չար մեղքերից հանի՛ր, սիրոյ հրո՛վ ջերմացրու եւ զղջման հոգի՛ առաքիր նրանց: Հպարտին խոնարհեցրո՛ւ, իսկ արբեցողին պահեցո՛ղ դարձրու: Զրկողին ու անողորմին, վաշխառուին ու գողին, աւազակին ու կախարդին, թովչութիւն գործողին ու սպանողին, մատնողին ու երդմնահարին, ուրացողին ու անյոյսին, բոլոր տեսակի մեղաւորներին ու չարագործներին, որոնք սուրբ Աւազանի ծնունդ են, ո՛վ Աստուծոյ Հոգի, ազատի՛ր մեղքերի ծառայութիւնից ու սատանայի որդեգրութիւնից եւ զղջման հոգի՛ ուղարկիր նրանց վրայ Քո հարաւային քաղցր շնչով ու փափկացրո՛ւ նրանց խստացած սրտերը: Հոգեվարքն ու գերեզմանի դուռը, անչէջ գեհենն ու անքուն որդը,

թանձր խաւարն ու ցուրտ սառնամանիքը, Յիսուսի երեւման Օրն ու տիեզերական հրապարակը, ինչպէս նաեւ մնացած ամէն բան միշտ երեւացրո՛ւ եւ դի՛ր նրանց մտքի աչքերի առջեւ:

Երկնաւո՛ր Հայր, ազատի՛ր գերուածներին եւ փրկի՛ր բանտարկուածներին, նաւորդներին բարո՛ւք առաջնորդիր եւ ծովի ալիքներից փրկի՛ր, ճանապարհորդներին անխռով իրենց աշխարհն ու ժառանգութեա՛նը վերադարձրու, ազատի՛ր դիւահարներին, առողջացրո՛ւ հիւանդներին եւ այլ ախտերով տառապողներին փորձանքներից փրկի՛ր, համբերողներ ու իմաստուններ դարձրու իրենց վշտի պահին: Շնորհի՛ր աղքատներին համբերութեան սուրբ վարք, շնորհի՛ր փարթամացած մեծատուններին ողորմած, բարի ու գթառատ հոգի, նաեւ պարգեւի՛ր կատարեալ սէր աղքատների ու ճանապարհորդների նկատմամբ: Նաեւ բոլոր Քո անարատ ձեռքով ստեղծուածներին Քո կամքի՛ն դարձրու ողորմութեամբ ու սիրով: Եւ դառը ցաւերը բոլոր մեղքերի, որոնք գործուեցին ամբողջ աշխարհում, որոնք գործւում են առաջին մարդուց մինչեւ վերջինը, այս ամէնը գցի՛ր, ամրացրո՛ւ եւ կապի՛ր սատանայի գլխով ահեղ Ատեանում սուրբ Աստուածածնի ու բոլոր արդարների բարեխօսութեամբ, որովհետեւ չարը սովորեցրեց մեղքերն ու գործել տուեց աշխարհի սկզբից ի վեր: Ողջ մարդկային ցեղին առանց մեղքերի՛ պահիր ու Քո անսահման բարիքներին հաղորդ ու ժառանգո՛րդ դարձրու: Որովհետեւ ամէն ինչում գթած ես, մարդասէր եւ ողորմած, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուած բոլոր ստեղծուածների, որ եւ ամէն ինչով հաւասար ես Հօրը եւ Սուրբ Հոգուն: Որ իմ հայր Ադամի եւ նրա բոլոր սերունդների համար խոնարհուեցիր հայրական ծոցից եւ մտար կոյս Մարիամի որովայնը, մարդացար, կամովին խաչ բարձրացար եւ ջնջեցիր անբաւ պարտքերը Քո թշնամիների, իմ հայր Ադամի ու մայր Եւայի, ինչպէս նաեւ նրանց միւս՝ Քեզ ատող որդիների: Եւ փրկեցիր առաջին անէծքներից ու բոլորին ազատեցիր, ինչ-

պէս նաեւ ինձ՝ Քո միւս ստեղծածների հետ միասին, որովհետեւ ես նոյնպէս իմ հայր Ադամի չար անէծքների կապանքների մէջ էի:

Եւ արդ, դրա համար աղաչո՛ւմ եմ Քեզ, եթէ մէկը մահու չափ մեղք գործի եւ կամ խորհի մեղանչել, ով որ փորձել է նենգութիւն իմ հանդէպ, եւ կամ ով էլ պիտի փորձի, քանի դեռ աշխարհում եմ, եւ ով բամբասեց ու պիտի բամբասի, եւ ով նենգեց ու պիտի նենգութիւն գործի, ջնջի՛ր նրանց յանցանքներն ու թողութի՛ւն տուր նրանց այս անօրէնութիւններին: Որ թէպէտեւ չար դեւը բարկացնի ու նզովքներ տայ արտայայտելու եւ կամ ակամայ այլ չար խօսքեր, աղաչո՛ւմ եմ, Տէ՛ր, մի՛ լսիր ինձ այն չար ժամին, որովհետեւ բռնադատում է չարը: Այլ ա՛յժմ լսիր, երբ աղաչում եմ, եւ թողութի՛ւն տուր բոլորի մեղքերին, ովքեր իմ դէմ մեղք գործեցին:

Քո ամենայաղթ զօրութեամբ արմատախի՛լ արայ իմ սրտից ոխակալութիւնն ու ատելութիւնը, մախանքն ու նախանձը, ամէն տեսակի խէթն ու մնացած բոլոր դիւական սերմերը: Քո ողորմութեամբ, Տէ՛ր, հեռացրո՛ւ իմ անձից պոռնկական դեւի ցանկասէր ախտն ու անձնական կեանքի սէրն ու փառքը, որովհետեւ հող եմ ու մանր փոշի եւ անասուն եմ համարւում Քո առաջ: Նախ՝ եթէ չփրկէիր, եւ դարձեալ՝ եթէ չօգնես, ակնթարթօրէն իմ անձը կիջնի դժոխք: Տէ՛ր, սովորեցրո՛ւ ինձ՝ կատարել Քո կամքը, ինչպէս նաեւ սերմանի՛ր իմ սրտում Քո ողջ բարիքները: Եւ եթէ թողնես, կջնջուեմ, թէ հեռանաս, կընկղմուեմ, եթէ թողնես, կկործանուեմ, թէ չմխիթարես, կվրդովուեմ, թէ չհաստատես, կյուսահատուեմ, իսկ եթէ պահես, կկանգնեմ, թէ խնամես, կնորոգուեմ, եթէ գաս, կհաստատուեմ, թէ մխիթարես, կյուսապնդուեմ ու կցնծամ սրտով:

Ամէն բանում Դու ես իմ փախուստի տեղն ու ապաւէնը: Դու յո՛գ տար ինձ, Աստուա՛ծ իմ Յիսուս Քրիստոս, եւ Քեզ կյանձնեմ իմ ողջ կեանքը հոգով ու մարմնով: Իսկ ամէն ոք, ով ծնունդից մինչեւ այժմ եւ մինչեւ մեր՝ աշխարհից դուրս գալը մեզ բարի

աչքով ու խնամքով է նայել եւ կամ նայում է դայեակութեամբ, կերակրելով, ընծայելով, ողորմութեամբ, աղօթքների բարի խօսքերի յանձնարարմամբ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, նրանց մէկի փոխարէն հարիւրապատի՛կ հատուցիր այստեղ եւ հանդերձեալում Քո անճառելի փառքի՛ն [արժանացրու]. իմ ծնողներին, որոնք դառը վշտերով ծնեցին ինձ, ինչպէս նաեւ մեծ տառապանքներով կերակրեցին եւ գորովագութ [սիրով] կարեկցում էին ինձ, բոլորի Տէր՝ Յիսո՛ւս Քրիստոս, որ մարմնով ծնուեցիր սուրբ կոյս Մարիամից, Քո Մօր եւ Քո բոլոր սուրբերի բարեխօսութեամբ ջնջի՛ր նրանց կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ [գործած] բոլոր յանցանքներն ու մեղքերը Քո ողորմութեամբ. ինչպէս նաեւ իմ բոլոր ազգականներին, գիտութիւն ուսանողներին ու բարի գործողներին:

Եւ ինձ՝ տառապեալիս ու ողորմելիս, որ անունով եմ միայն գովաբանւում մարդկանցից եւ բարի երեւում, բայց ոչ՝ Աստուծոյ առաջ, որովհետեւ յոյժ հեռացել եմ Աստծուց, փրկի՛ր մեղքերի որոգայթից եւ ազատի՛ր օտար շարաւալից յանցանքների մասնակցութիւնից: Եւ ըստ իմ կարողութեան չափի թոյլատրի՛ր, որ փորձութիւններ գան ինձ վրայ, եւ Դու զօրացրո՛ւ այդ պայքարի մէջ եւ աւելի՛ հեռացրու ինձնից: Ադամի բոլոր սերունդներին, ինչպէս նաեւ ովքեր ծնունդ են սուրբ Աւազանի, ովքեր մեզնից առաջ էին, եւ ովքեր մեր ժամանակակիցն են, ինչպէս նաեւ ովքեր պիտի գան մեզնից յետոյ՝ մինչեւ փողի հնչելը, փրկի՛ր բոլորին, Տէ՛ր Աստուած՝ ամենայնի՛ Արարիչ, անքուն որդերից ու անշէջ գեհենից, դաժան սառնամանիքներից, դառնակսկիծ տանջանքներից, թանձր խաւարից ու անհանգիստ տարտարոսից: Նաեւ մեզ, ինչպէս նաեւ նրան, ով խնդրեց գրել այս գիրքը, անճառելի բարիքներին արժանաւո՛ր դարձրու Քո բոլոր սուրբերի հետ, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յիշատակարան

Ես՝ ողորմելի Վարդանս, տգէտս գիտնականների մէջ եւ ստորինս՝ կրօնաւորների մէջ, գրեցի այս աստուածաբնակ բառերը աստուածասէր թագաւորազն իշխան պարոն Պաղտինի խնդրանքով: Նաեւ աղաչում եմ, մի՛ մեղադրէք այս յիմար գրուածքի համար, որովհետեւ այս էր մեր կարողութիւնը: Եւ որքան հասու եղաւ մեր միտքը, Աստուծոյ ողորմութեամբ հաւաքեցինք Աստուծոյ օրէնքներից ու դրեցինք այստեղ: Եւ սա յոյժ ծանր եղաւ մեզ, որովհետեւ երկու տարի է, որ բազում աշխարհներում եղանք եւ չընթերցեցինք գրքերը, որովհետեւ բուռն է մարմնի կարիքը, երբ պակասում է: Որովհետեւ հալածուեցինք մեր հայրենի կալուածքից՝ Կիւրիսի երկրից եւ Տլուք գաւառից, ու եկանք Այգեկ: Իսկ Աստուած բարի յաջողեց մեր բոլոր գործերն ու մարմնի պէտքերը: Այս ամէնը հաւաքեցի նախկինում սերտածից: Եւ սկսեցինք այս գործը եւ աւարտեցինք աստուածաբնակ եւ ցանկալի Այգեկ անապատում, աստուածընկալ եւ հրաշազան սուրբերի՝ սուրբ Սիոնի եւ սուրբ Կարապետի հովանու տակ եւ սուրբ ուխտիս առաջնորդ տէր Կոստանդին սրբասուն եպիսկոպոսի առաջնորդութեամբ, որը թէպէտ երիտասարդ էր, սակայն ստացել էր առաքելական աստիճանը: Սա հայոց թուականի ՈԿԱ (1212) տարին էր: Եւ Կիլիկիայում հայոց թագաւորն էր Լեւոն Ռուբինեանցը՝ քրիստոսապսակ եւ անարկու՝ անօրէնների վրայ եւ անուանի էր Վերին Հայքում, նաեւ զօրաւոր հալածող էր անօրէնների: Եւ ԻԴ (24) տարի է, որ անօրէնները գերել են Երուսաղէմը, եւ վերացել է յոյների թագաւորութիւնը, եւ արիական ազգը Կոստանդնուպոլսի մօտ է: Նաեւ այս տարի վախճանուեց տէր Դաւիթը, որը քիչ տարիներ կաթողիկոս եղաւ Արքակաղնում:

Եւ արդ, աղաչո՜ւմ եմ բոլորիդ, ովքեր կարդաս այս, աղօ՛թք արէք աստուածասէր իշխան պարոն Պաղտինի համար, որպէսզի Աստուած խաղաղութեամբ պահի նրան իր հարազատ եղբայրներով հանդերձ, եւ թողութի՛ւն շնորհէք նրա բոլոր ընջեցեալներին, որպէսզի Աստուած ների նրանց յանցանքները:

Յիշեցէ՛ք նաեւ ողորմելի Վարդանիս, որը շարադրեց այս, եւ իմ ծնողներին ու եղբայրներին եւ ազգականներին. եւ ովքեր յիշեն մեզ, ովքեր այստեղ յիշատակուեցին, Աստուած թող բարի յիշի նաեւ ձեր ընջեցեալներին, եւ Նրան փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՅՂՈՒՄՆԵՐ

1. *Սաղմ. ՃԹ 3*
2. *Սաղմ. ԼԲ 8*
3. *Յովհ. Է 38*
4. *Սաղմ. ՁԹ 17*
5. *Ղուկ. Ը 8*
6. *Ես. ԺԱ 9*
7. *Առակ. Թ 9*
8. *Առակ. Գ 16*
9. *Սաղմ. ՃԺԸ 127*
10. *Սաղմ. ԺԸ 11*
11. *Սաղմ. ՃԺԸ 130*
12. *Յովհ. Զ 64*
13. *Մատթ. Դ 4, Բ Օր. Ը 3*
14. *Սաղմ. ՃԼԸ 11*
15. *Յովհ. Ե 30*
16. *Մատթ. ԺԸ 10*
17. *Ես. Զ 3*
18. *Յայտն. ԺԶ 1-5*
19. *Յայտն. ԺԴ 1-5*
20. *Յայտն. ԻԱ 1-27 Յայտն. ԻԲ 1-3*
21. *Յայտն. ԻԱ 4*
22. *Սաղմ. ԽԱ 3 Սաղմ. ԻԶ 13*
Սաղմ. ՃԽԱ 8 Ղուկ. Բ 29
23. *Մարկ. ԺԴ 42, Յովհ. ԺԴ 31*
24. *Յովհ. ԺԷ 18, Յովհ. ԺԴ 31*
25. *Ղեւտ. Ի 24, Թիւք ԺԳ 28*
26. *Յովհ. ԺԲ 26*
27. *Յովհ. Ե 24*
28. *Յովհ. ԺԷ 24*
29. *Յովհ. ԺԶ 27*
30. *Ղուկ. ԺԲ 37*
31. *Ա Կոր. ԺԳ 9*
31ա. *Ա Կոր. Բ 9*
32. *Բ Կոր. Ե 4*
33. *Ա Յովհ. Դ 5-16*
34. *Մատթ. Ե 8*
35. *Յայտն. ԻԱ 3*
36. *Մատթ. ԻԲ 30*
37. *Իմաստ. Գ 1*
38. *Յովհ. ԺԷ 24*
39. *Սաղմ. ՀԷ 39*
40. *Յայտն. Զ 9*
41. *Յակ. Ա 17*
42. *Յակ. Բ 26*
43. *Մատթ. Է 22, 23*
44. *Մատթ. ԻԶ 41*
45. *Մարկ. Զ 46*
46. *Հռոմ. ԺԲ 12, Կող. Դ 2*
47. *Սաղմ. ՃԺԸ 62*
48. *Ղուկ. ԻԲ 46*
49. *Մատթ. Զ 7*
50. *Մատթ. ԻԷ 46, Մարկ. ԺԶ 34*
51. *Եբր. Ժ 28*
52. *Մարկ. ԺԳ 13*
53. *Ծննդ. Բ 17*
54. *Մարկ. Է 18*

55. Ա Կոր. Ը 8
56. Փիլիպ. Գ 18, 19
57. Փիլիպ. Գ 2
58. Ծննդ. Բ 17
59. Մարկ. Է 18
60. Ա Կոր. Ը 8
61. Մատթ. Է 18
62. Բ Կոր. ԺԱ 27
63. Սաղմ. ԼԱ 9
64. Սաղմ. ԼԸ 4
65. Ա Կոր. Զ 13
66. Ղուկ. Զ 24
67. Ղուկ. ԺԸ 25
68. Բ Կոր. Ը 9
69. Մատթ. ԻԳ 12
70. Մատթ. ԺԱ 29
71. Մատթ. Զ 15, 16
72. Եփես. Դ 26
73. Եբր. Ժ 30
74. Սաղմ. ՂԳ 1, 2
75. Հռոմ. ԺԲ 17-20 Ղուկ. ԺԶ 26
76. Յովհ. Ե 30
77. Սաղմ. ԺԴ 5
78. Ամբակ. Ա 13-17 Բ 1-7
79. Մատթ. Ե 8
80. Մատթ. ԺԹ 12
81. Ա Կոր. Է 25
82. Ա Տիմ. Զ 8
83. Մատթ. Զ 20
84. Մատթ. ԺԲ 50 Մարկ. Գ 35
85. Ա Յովհ. Դ 9
86. Մարկ. ԺԲ 31
87. Յովհ. ԺԳ 34
88. Ղուկ. Զ 36
89. Կող. Գ 12
90. Ես. ԾԸ 7-8
91. Սաղմ. Խ 2
92. Մատթ. Ե 7
93. Ղուկ. ԺԶ 9
94. Ղուկ. ԺԲ 33
95. Ղուկ. ԺԶ 11
96. Ղուկ. ԺԸ 13
97. Ղուկ. ԻԳ 42
98. Ղուկ. ԺԵ 18
99. Սաղմ. ԺԲ 2
100. Մատթ. ԺԱ 28
101. Ժողով. ԺԲ 1
102. Բ Կոր. Զ 2
103. Եզեկ. ԺԸ 32
104. Ես. ԽԳ 26
105. Սաղմ. ԼԷ 5, 6
106. Սաղմ. Զ 7
107. Սաղմ. Զ 3
108. Սաղմ. Ծ 1
109. Սաղմ. ԾԵ 3
110. Ղուկ. ԺԷ 4
111. Սաղմ. ՁԸ 43
112. Մատթ. ԻԲ 13
113. Յայտ. ԺԴ 20
114. Ղուկ. ԺԸ 26
115. Ես. ԼԳ 14
116. Ես. ԿԶ 24

117. Ա Կոր. Գ 15
118. Սաղմ. Թ 18
119. Բ Օր. Ը 11
120. Յեսու Զ 26
121. Մատթ. ԻԵ 41
122. Ծննդ. Ա 31
123. Իմաստ. Ա 13
124. Յայտն. ԺԲ 9
124 ա.Եզեկ. ԻԸ 17
125. Ծննդ. Գ 5
126. Ծննդ. Զ 2
127. Ես. Գ 16-26
128. Ա Տիմ. Բ 3
129. Ա Տիմ. Բ 14-15
129 ա.Մատթ. ԺԶ 27
130. Գաղ. Ա 10
131. Յովհ. ԺԲ 43
132. Սաղմ. Ե 7
133. Ծննդ. Գ 4-5
134. Ելք ԼԲ 4-6
135. Ես. Ե 22
136. Մարկ. ԺԴ 25, Ղուկ. ԻԲ 18
136 ա. Ելք ԼԲ 6
137. Եփես. Ե 5
138. Եփես. Ե 18
139. Ղուկ. ԻԱ 34-36
140. Ժող. ԺԲ 4
141. Ժող. Է 3
142. Ես. Ե 8
143. Կող. Գ 5
144. Մարկ. Ը 36
145. Ղուկ. ԺԲ 20
146. Մատթ. ԺԱ 28
147. Սաղմ. ԺԳ 1
148. Սաղմ. ԼԵ 2
149. Երեմ. Զ 17
149 ա. Երեմ. Գ 9
150. Ա Կոր. Զ 18
151. Ա Կոր. Զ 15
152. Ելք ԻԲ 19
153. Ղեւտ. ԺԸ 29
154. Ես. Ե 8-9
155. Սաղմ. ՃԲ 6
156. Ես. Ա 22-23
157. Զաւք. Ե 1-4
158. Յեսու Է 1-26
159. Եզեկ. ԺԸ 13
160. Ա Տիմ. Ե 24
161. Ղուկ. ԺԹ 1-9
162. Յովհ. Զ 34
163. Մատթ. ԺԲ 36
164. Մատթ. Ե 22
165. Ա Յովհ. Գ 15
166. Թիւք ԺԲ 1-10
167. Մատթ. Ե 34-37
168. Սաղմ. Ծ 16
168 ա. Սաղմ. Ծ 16
168 բ. Սաղմ. Ծ 16
169. Ծննդ. Թ 5
170. Ղուկ. Ժ 16

171. Յովհ. Զ 57
172. Գաղ. Գ 27
173. Մատթ. Ե 37
174. Բ Կոր. Դ 16
175. Ծննդ. Խթ 3-9
176. Սաղմ. ՃԺԸ 103
177. Սաղմ. ԿԲ 6
178. Սաղմ. ԻԷ 2
179. Սաղմ. ԻԱ 7
179 ա. Հռոմ. Ա 25
179 բ. Ժող. ԺԱ 2
180. Ծննդ. Բ 2
181. Դան. Է 9-11
182. Մատթ. ԻԴ 30
183. Դան. Է 9
184. Դան. Է 13
185. Մարկ. Թ 48
186. Ա Թես. Դ 16
187. Մատթ. ԻԴ 31
188. Մատթ. ԺԳ 43
189. Մատթ. ԻԵ 30
190. Ղուկ. ԻԲ 30
191. Հմմտ. Յայտն. Ի:12
191 ա. Դան. Է 10
192. Յովհ. ԺԹ 34
193. Յայտն. ԺԹ 20
194. Յոբ Գ 4
195. Յոբ ԼԱ 6
196. Մատթ. ԺԲ 36
197. Յովհ. Ե 30
198. Ղուկ. ԺԲ 59
199. Սաղմ. ՀԱ 7
200. Յայտն. Թ 3
201. Դան. Է 8
202. Բ Թես. Բ 7-8
203. Ղուկ. Ժ 13
204. Ղուկ. Ժ 15
205. Յայտն. ԺԳ 18
206. Բ Թես. Բ 4
207. Դան. Է 8
208. Բ Տիմ. Գ 13
209. Դան. ԺԱ 15-19
210. Յայտն. ԺԶ 19
211. Ղուկ. ԺԸ 8
212. Մատթ. ԺԳ 22
213. Յայտն. ԺԳ 18
214. Յայտն. Է 4-8
215. Մատթ. ԻԴ 29-30
216. Սաղմ. Ա 5
217. Բ Թես. Բ 8
218. Եփես. Ա 4
219. Սաղմ. ՁՁ 5
220. Յակ. Բ 20, 26
221. Ա Թագ. ԺԳ 1
222. Ղուկ. ԺԲ 48
223. Սաղմ. ՃԽԲ 2
224. Ծննդ. ԺԷ 6
225. Սաղմ. ԼԶ 30
226. Առակ. ԻԹ 18
227. Բ Օր. ԼԲ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն 2

Ա. Սուրբ Երրորդության ուղիղ դաւանութիւն գոհաբանական խօսքով
եւ աղաչանք-աղերսանքով՝ մեր գործերի յաջողության եւ անթերի
ու կատարեալ ուղղությամբ [նպատակին] հասնելու համար 9

Բ. Թագաւորազն եւ քրիստոսակիր մեծ իշխան պարոն Պաղտինի
նամակը՝ ուղղված ի պատասխան գերիմաստ
Վարդան վարդապետի թղթի 10

Գ. Նոյն Վարդանի թուղթը. գովաբանական խօսք
իշխանի խոնարհության մասին 11

Դ. Վերին Երուսաղէմի եւ արդարների անճառելի խնդության
ու հանգստի մասին 15

Ե. Հոգիների մասին, թէ ինչպէս են ապրում,
եւ կամ ինչպիսին է նրանց հանգիստը 29

Զ. Բարի գործերի մասին, թէ որոնք են եւ որքան 36

Է. Աղօթքի մասին, որովհետեւ յոյժ ընդունելի է Աստծուն 38

Է. Աղօթքի մասին, որովհետեւ յոյժ ընդունելի է Աստծուն 46

Թ. Աղքատության եւ խոնարհության մասին 52

Ժ. Ողորմության, սիրոյ եւ գթության մասին 64

ԺԱ. Խոստովանության, զղջման եւ ապաշխարության մասին 71

ԺԲ. Դժոխքի եւ նրա չար ու դառը տանջանքների մասին 77

ԺԳ. Մեղքերի մասին, թէ որոնք են եւ որքան 85

ԺԴ. Որովայնամոլության, արբեցողության, ագահության,

արծաթասիրութեան, անյուսութեան, ուրացութեան,
անհաւատութեան ու թովչութեան մասին 95
ԺԵ. Կռապաշտութեան եւ կախարդութեան մասին 103
ԺԶ. Շնութեան, պոռնկութեան, արուամոլութեան
եւ անասնապղծութեան մասին 112
ԺԷ. Զրկանքի, գողութեան եւ վաշխառութեան մասին 121
ԺԸ. Ոխակալութեան, ատելութեան, մախանաքի, բարկութեան,
նախանձի եւ այլ բազում մանր մեղքերի մասին,
որոնք Սուրբ Գրքերում կոչւում են չնչական 127
ԺԹ. Պխծախօսների մասին, որոնք հայհոյում են Աստծուն 133
Ի. Տասը թուի մասին, որ կատարեալ եւ խորհրդաւոր թիւ է՝
լցուած աստուածային գերակատար իմաստութեամբ 137
ԻԱ. Աստուծոյ Որդու՝ երկնքի ամպերով փառաւոր գալստեան, նրա
ահեղ եւ անաչառ Դատաստանի եւ աշխարհի վախճանի մասին 152
ԻԲ. Նեռի ծննդեան, գալիք դառը
ժամանակների եւ նրա սատակման մասին 161
ԻԳ. Ծուլութեան, մեղքերի համարձակութեան ու
բարու նուազութեան մասին 176
ԻԴ. Աղերս եւ պաղատանք առ Աստուած ողջ աշխարհի համար 191
Յիշատակարան 199